

Գարգանտյուն և Պանտագրյուներ

հեղինակ՝ [Ֆրանսուա Ռարել](#)
թարգմանիչ՝ Ե. Թադիանոսյան (ռուսերենից)
աղբյուր՝ [«Գարգանտյուն և Պանտագրյուներ»](#)

Բովանդակություն

- [1 Նախերգանք](#)
 - [1.1 Առաջին մաս](#)
- [2 Գլուխ I](#)
- [3 Գլուխ II](#)
- [4 Գլուխ III](#)
- [5 Գլուխ IV](#)
- [6 Գլուխ V](#)
- [7 Գլուխ VI](#)
- [8 Գլուխ VII](#)
- [9 Գլուխ VIII](#)
- [10 Գլուխ IX](#)
- [11 Գլուխ X](#)
- [12 Գլուխ XI](#)
- [13 Գլուխ XII](#)
- [14 Գլուխ XIII](#)
- [15 Գլուխ XIV](#)
- [16 Գլուխ XV](#)
- [17 Գլուխ XVI](#)
- [18 Գլուխ XVII](#)
- [19 Գլուխ XVIII](#)
- [20 Գլուխ XIX](#)
- [21 Գլուխ XX](#)

- [22 Գլուխ XXI](#)
- [23 Գլուխ XXII](#)
- [24 Գլուխ XIII](#)
- [25 Գլուխ XXIV](#)
- [26 Գլուխ XXV](#)
- [27 Երկրորդ մաս](#)
- [28 Գլուխ I](#)
- [29 Գլուխ II](#)
- [30 Գլուխ III](#)
- [31 Գլուխ IV](#)
- [32 Գլուխ V](#)
- [33 Գլուխ VI](#)
- [34 Գլուխ VII](#)
- [35 Գլուխ VIII](#)
- [36 Գլուխ IX](#)
- [37 Գլուխ X](#)
- [38 Գլուխ XI](#)
- [39 Գլուխ XII](#)
- [40 Գլուխ XIII](#)
- [41 Գլուխ XIV](#)
- [42 Գլուխ XV](#)
- [43 Գլուխ XVI](#)
- [44 Գլուխ XVII](#)
- [45 Գլուխ XIII](#)
- [46 Գլուխ XIX](#)
- [47 Գլուխ XX](#)
- [48 Գլուխ XXI](#)
- [49 Գլուխ XXII](#)
- [50 Գլուխ XXIII](#)
- [51 Գլուխ XXIV](#)
- [52 Գլուխ XXV](#)

- [53 Գլուխ XXVI](#)
- [54 Գլուխ XXVII](#)
- [55 Գլուխ XXVIII](#)
- [56 Գլուխ XXIX](#)
- [57 Գլուխ XXX](#)
- [58 Գլուխ XXXI](#)
- [59 Գլուխ XXXII](#)
- [60 Գլուխ XXXIII](#)
- [61 Գլուխ XXXIV](#)
- [62 Գլուխ XXXV](#)
- [63 Գլուխ XXXVI](#)
- [64 Գլուխ XXXVII](#)
- [65 Գլուխ XXXVIII](#)
- [66 Գլուխ XXXIX](#)
- [67 Գլուխ XL](#)
- [68 Գլուխ XLI](#)
- [69 Գլուխ XLII](#)
- [70 Գլուխ XLIV](#)
- [71 Գլուխ XLV](#)
- [72 Գլուխ XLVI](#)
- [73 Գլուխ XLVII](#)
- [74 Գլուխ XLVIII](#)
- [75 Գլուխ XLIX](#)
- [76 Գլուխ L](#)

Նախերգանք

Սիրելի բարեկամներ, գիտե՞ք արդյոք, թե ով էր Սոկրատը: Սոկրատը նշանավոր հույն իմաստուն էր: Ասում են, որ նա արտաքուստ նման է եղել սիլենի:¹ Իսկ սիլենն հին ժամանակ կոչվում էին այն տուփերը, որոնց մեջ հարուստները պահում էին իրենց թանկարժեք իրերը: Այս տուփերը զարդարված էին լինում զանազան նկարներով՝ կոտորավոր նապաստակներով, թամբած բաղերով, թևավոր այծերով... Եվ այնքան ծիծաղաշարժ էին այդ նկարները, որ տեսնողը չէր կարողանում ծիծաղը զսպել: Ոչ որի մտքով անգամ չէր անցնի, որ այդ տուփերում պահված են հազվագյուտ և թանկարժեք իրեր: Եվ իրոք, դրանց մեջ պահում էին մատանիներ, մանյակներ, թանկագին քարեր ու զանազան անուշահոտ համեմունքներ, ինչպես անանուխ, հեյ, մուշկ:

Ասում են, որ Սիլենի նման է եղել և Սոկրատը: Արտաքուստ նա մի ծիծաղելի ու անճոռնի ծերուկ է եղել: Քիթը կարտոֆիլի նման, աչքերը՝ եզան աչքերի, հագնվել է, ինչպես պատահի, բանն ու գործն էլ ուրիշին ծաղրելն է եղել: Կարճ ասած՝ ցանցառ մարդ է եղել նա, իսկ հայտնի է, թե ցանցառից ինչ խելոք բան կարելի է սպասել:

Բայց այդպես թվացել է միայն նրան առաջին անգամ տեսնելիս: Սոկրատը, իրոք, ամենաիմաստուն մարդն է եղել իր ժամանակի բոլոր իմաստունների մեջ: Ծաղր ու կատակով նա այնպիսի խոր մտքեր է արտահայտել, որոնք մինչ այդ ոչ որի մտքով չէին անցել: Բացի այդ, Սոկրատը միշտ ուրախ է եղել, միշտ անվրդով և միանգամայն դատարկ ու անարժեք է համարել շատ ու շատ այնպիսի բաներ, որոնց համար մարդիկ այնքան չարչարվում են, ծովեր են կտրում-անցնում, պատերազմներ են մղում...

Երևի դուք կմտածեք, թե ինչի՞ համար են իմ այսքան երկար ու բարակ դատողությունները: Նպատակս այն է, սիրելի բարեկամներ, որ այս գիրքը կարդալիս չկարծեք, թե գրածներս լոկ կատակ են ու զանազան զվարճալի հեքիաթներ: Դուք էլ անշուշտ կասեք, թե «մարդուն հագուստով չեն ճանաչում»: Իմ գրքի մասին էլ մի դատեք, միայն նրա զվարճալի արտաքինով: Հեքիաթ-հեքիաթ, բայց հեքիաթներից բացի դուք այս գրքում ուրիշ ավելի լուրջ բան էլ կգտնեք:

Տեսած կա՞ք արդյոք, երբ շունն աղբանոցում լավ ոսկոր է գտնում: Տեսեք, թե ինչպես է շունն այդ ոսկորը պահում, պահպանում, ինչպես է պինդ բռնում ատամներով, ինչպիսի զգուշությամբ է կծում, ծակում ու համբերությամբ կրծում այդ ոսկորը և ինչպես մաքուր է ծծում նրա միջի ծուծը: Ինչո՞ւ է շունն այդպես վարվում: Ի՞նչ է ուզում ստանալ այդ կեղտոտ ու բոլորի համար անպետք ոսկորից: Պարզ է, թե ինչ, շունն ուզում է ծծել ոսկորի միջի ծուծը: Ամենքին հայտնի է, թե դա որքան համեղ բան է:

Ես էլ ահա կուզեի, սիրելի բարեկամներ, որ դուք նմանվեիք այդ խելացի, կռահող ու համբերատար շանը: Դուք պետք է նախ լավ հոտոտեք իմ գիրքը, որպեսզի զգաք նրա ներքին իմաստը: Հետո, ազատ ժամերին, մտածեք նրա մասին, ջարդեք ոսկորը և ծծեք միջի ուղեղը: Իմացեք, որ ես միայն ձևի համար եմ ձեզ զանազան զվարճալի հեքիաթներ պատմում, իսկ իրոք խոսքս տերտերների, վարդապետների, թագավորների, դատավորների և ուրիշ շատ ու շատ բաների մասին է:

Դեհ, գործի անցնենք, սիրելի բարեկամներ: Կարդացեք իմ գիրքը և զվարճացեք որքան քեֆներդ կուզի: Միայն լսեցեք, չարաճճիներ, թե ինչ եմ ասում. երբ կարդալիս կլինեք գրքիս վերջին էջը, չմոռանաք հիշել ինձ և մի բարի խոսք ասել իմ մասին:

Առաջին մաս

Պանտագրյուելի Հայր Մեծ Գարգանտյուայի զարմանալի սխրագործությունների մասին

Գլուխ I

Այն մասին, թե ինչպես է ծնվում Գարգանտյուան

Կար ժամանակ, երբ հսկա Գրանգուզիեն^[2] շատ ուրախ մարդ էր և լավ ուտող: Նրա մառաններում միշտ անպակաս էին լինում խոզապուխտը, տեսակ-տեսակ երշիկներ, աղը դրած և մանանեխով համեմված միսը, խավիարը և յուղալի նրբերշիկները: Գրանգուզիեն հասակն առած էր, երբ պսակվեց Գարգամելի հետ, որ մի սիրուն ու առողջ աղջիկ էր, իսկ մի տարի հետո ծնվեց Գարգանտյուան, հենց այն Գարգանտյուան, որը հետագայում փախցրեց Փարիզի Աստվածամոր տաճարի զանգը և մի զարհուրելի կովում հաղթեց Պիկրոշոլ թագավորին:

Արու զավակ ունենալու առթիվ Գրանգուզիեն մի այնպիսի խնջույք է սարքում, որի նմանը վաղուց չէին տեսել այդ կողմերում: Հենց այդ ժամանակ մորթում են 367014 չաղ արջառ, որոնց միսը պետք է աղեին ու պահեին մինչև գարուն: Հնարավոր չէ նկարագրել, ինչքան շատ փորոտիք, երիկամներ ու լյարդ էր ստացվել, այն էլ այնքան լավ ու յուղալի, որ մարդ մատները հետը կուտեր: Բայց որտե՞ղ և ինչպես պահեին այդքան հարստությունը, որ չհոտեր: Մի ճար կար միայն՝ բոլորը միանգամից խժռել վերջացնել: Դրա համար հրավիրում են շրջակայքի կտիճներին, որոնք բոլորն էլ ուտող-խմող և աննման կեզլի խաղացողներ էին:

Խնջույքն իսկապես որ փառահեղ էր: Եշերը ձեռքից ձեռք էին անցնում, խոզապուխտները խլիպում միմյանց ձեռքից, բաժակները տեղներում չէին մնում, և գավաթները գնզգնզում էին: Ի՛նչ ասել կուզի, որքան երիկամ ու թոք կար, բոլորը փառավորապես մաքրագարդեցին-պրծան: Ինքը՝ Գրանգուզիեն, քեֆի ժամանակ կերավ տասնհինգ տակառ, երկու դույլ և վեց թաղար երիկամ ու թոք: Փորն այնպես էր ուռել, որ քիչ էր մնում պայթի:

Ճաշից հետո գնացին անտառ և այստեղ դալար ու թավ խոտի վրա պարում էին պարկապուկների ու սրինգների նվազի տակ, և այն էլ այնպիսի էշխով, որ տեսնողի քեֆն էր գալիս:

Քեֆի ամենաթունդ պահին Գրանգուզիեի ականջին հասավ նորածին տղայի ճիչը:

— Խմե՛լ, խմե՛լ, խմե՛լ, — ճչում էր մանուկը:

— Գը գրան տյուա՛, — բացականչեց բարեսիրտ Գրանգուզիեն, — այդ ինչ մեծ կոկորդ ունես:^[3]

— Ինչ եմ ասել ճշմարիտ խոսքին, — ասացին հյուրերը, — թող ուրեմն այսուհետև տղան կոչվի «Գարգանտյուա»՝ նրա հոր առաջին խոսքի համաձայն:

Գրանգուզիեին այդ անունը շատ դուր եկավ: Երեխան հանգստացնելու համար նրան մի կուշտ գինի խմեցրեց, հետո տարավ եկեղեցի և մկրտեց քրիստոնեական օրենքի համաձայն:

Երբ Գարգանտյուան մի փոքր մեծացավ, նրա համար պատրաստել տվին մի գեղեցիկ սայլակ: Այդ սայլակով երկու եզներ ման էին անում նրան և բոլոր մարդիկ զարմանում էին, երբ տեսնում էին այդ սքանչելի երեխային: Եվ պատճառ էլ կար զարմանալու: Գարգանտյուայի դեմքը իր տասը ծայքանի կզակով իսկապես որ զարմանալի էր: Բացի այդ, այն էլ պետք է ասել, որ նա շատ քիչ էր ճչում, բայց ուտում էր յուրաքանչյուր բոպե:

Երբ Գարգանտյուան մի քիչ մեծացավ, նրա համար շքեղ հագուստ կարեցին: Գուցե դուք ուզենայիք իմանալ, որքան կտոր պետք եղավ նրա հագուստի համար: Դա ես ճշգրիտ կերպով կարող եմ ասել, որովհետև այդ մասին մանրամասն գրված է հին գրքերում:

Նրա համար որպես շապկացու հարկավոր եղավ 900 կանգուն լավագույն ֆրանսիական քաթան, բացի այդ հարկավոր եղավ ևս 200 կանգուն քաթան քառակուսի կտորներ դարձնելու և որպես ուսաստառ օգտագործելու համար: Բանկոնի համար վերցրին 813 կանգուն սպիտակ ատլաս, իսկ վարտիքի համար՝ 1105 կանգուն բրդե սպիտակ կտոր: Վարտիքները կարված էին այունանման, ետևի կողմից շերտավոր էին և ատամնավոր, և պետք է ասել որ երեխան շատ գեղեցիկ ոտքեր ուներ, որոնց երկարությունը միանգամայն համապատասխանում էր նրա հասակին: Նրա կոշիկների համար հարկավոր եղավ 406 կանգուն բաց կապտավուն թավիշ: Ներբանների համար հագիվ հերիքեց հազարավոր կովերի կաշին: Կոշիկները կարված էին սրածայր:

Վերնագգեստի համար օգտագործեցին 1800 կանգուն վառ կապույտ թավիշ՝ եզրերը ասեղնագործած ոսկեթել տերևներով, իսկ գոտու համար՝ 300 ½ կանգուն կերպաս, որի կեսը սպիտակ էր, կեսը բաց կապույտ:

Նրա քսակը շինված էր փղի կաշվից, իսկ գլխարկը կարված էր թավշից: Գլխարկի վրա փողփողում էր փետուրների մի հրաշալի փունջ, որ կազմված էր ջրային թռչունների փետուրներից:

Որպեսզի Գարգանտյուայի համար ձեռնոցներ կարեն, քերթեցին տասնհինգ չարքերի կաշին, և այդ նյութից պատրաստեցին ձեռնոցները՝ ընդունված կանոնների համաձայն:

Ինչպես տեսնում եք, Գարգանտյուայի զգեստը երկու գույնի էր՝ սպիտակ և բաց կապույտ: Գրանգուզիեն դրանով ուզում էր ցույց տալ, որ տղայի ծնունդը երկնային ուրախություն է իր համար, որովհետև սպիտակ գույնը նշան է բերկրանքի, զվարթության ու բախտավորության, իսկ բաց կապույտ գույնը նշան է մի ինչ-որ երկնային բանի: Ես շատ լավ եմ հասկանում, որ այս տողերը կարդալիս դուք ծիծաղելիս կլինեք ինձ վրա ու կասեք. «Ինչեր է դուրս տալիս գլխից այս ծերուկը, ինչո՞ւ պետք է սպիտակ ու բաց կապույտ գույները նշան լինեն երկնային բերկրության»: Ինչ արած, որքան ուզում եք ծիծաղեցեք: Իմ այս բոլոր պատմությունները զուտ ճշմարտություն են:

Գիտե՞ք արդյոք, որ հին ժողովուրդների կյանքում սև գույնը նշան էր վշտի, իսկ սպիտակը՝ ուրախության: Հին հույները իրենց երջանիկ օրերը նշում էին սպիտակ քարերով, իսկ տխուր օրերը՝ սև քարերով: Երբ հռոմեացի զորավարները հաղթանակած

տուն էին վերադառնում, նրանք նստած էին լինում սպիտակ ձիեր լծած հաղթակառքում: Այս բոլորից հետո մի՞թե պարզ չէ, որ սպիտակ գույնը նշան է ուրախության: Իսկ ինչ վերաբերում է բաց կապույտ գույնին, մի լավ նայեցեք երկնքին, մի՞թե նրա գույնը բաց կապույտ չէ: Տեսնում եք, ուրեմն, որ բաց կապույտը երկնային է, իսկ սպիտակն ու բաց կապույտը նշանակում են երկնային ուրախություն:

Երեքից մինչև հինգ տարեկան հասակը Գարգանտյուային սնում ու դաստիարակում էին ինչպես կարգն է: Անց էր կացնում նա իր ժամանակն այնպես, ինչպես բոլոր փոքր երեխաները՝ խմում էր, ուտում ու քնում. ուտում էր, քնում ու խմում. քնում էր, խմում և ուտում: Կուզե՞ք իմանալ, թե ուրիշ էլ ինչ էր անում նա: Լսեցեք ասեմ ձեզ:

Թավալվում	էր	ցելխի	մեջ	օրնիբուն,
Քիթն	ու	պռունկը		կեղտոտում,
Պարապ-սարապ		օրն		անցկացնում,
Ամեն	ծակ	ու	ծուկ	մտնում:
Փայտե	կոշիկով		ատամները	սրում,
Ձեռքերը		ապուրով		լվանում,
Բաժակով		մարմինը		քորում,
Երկու	աթոռների		միջև	նստում,
Օճառի	պղպջակներ		բաց	թողնում,

Քիթն էլ ամեն տեղ խոթում:

Մի խոսքով՝ ապրում էր քեֆով: Էլի ասե՛մ:

Դատարկապորտ		կյանք	էր	վարում,
Ինքն	իրեն		խուտուտ	ածում,
Մաղով	ջուր		էր	վերցնում,
Կռունկ		որսում		երկնքում:
Կարպետի	չափ	ոտն	էր	մեկնում,
Կացնից	իր	համար	ապուր	եփում,

Ոչ մի հոգս ու դարդ չէր իմանում:

Որպեսզի երեխան ձի հեծնել սովորի, նրան փայտե մի մեծ ձի նվիրեցին: Գարգանտյուան քշում էր իր ձին համրաքայլ, վարգաքայլ, ստիպում էր ընթանալ սրարշավ, գնալ իշատերիշ կամ ուղտի նման: Ժամանակ առ ժամանակ նա ներկում էր իր ձին զանազան գույներով՝ մեկ նրա ձին աշխետ գույն էր ունենում, մեկ շիկակարմիր, մեկ մոխրագույն, մեկ խայտաբղետ կամ բաց դեղին...

Նա իր համար մի որսի ձի շինեց հաստ կոճղից, իսկ զբոսանքի ձի՝ դատարկ տակառից: Բացի այդ, նա ուներ յոթ պահեստի ձի և յոթ փոստային ձի: Եվ այդ բոլոր ձիերին գիշերը կանգնեցնում էր իր մահճակալի մոտ:

Մի օր պարոն Պենանասակը^[4] շքեղ շքախմբով այցելության եկավ նրա հորը: Նույն օրը եկան նաև դուքս դը Ֆրանրեպան^[5] և կոմս դը Մույլանը: Ճիշտն ասած՝ այդքան մարդկանց դժվար էր տանը տեղավորել, շատ նեղվածք էր, մանավանդ ախոռներում: Պարոն Պենանասակի ավագ սպասավորն ու ախոռապետը չէին իմանում, որտեղ կապեն իրենց ձիերը:

— Չկա՞ արդյոք ձեզ մոտ մի ուրիշ ազատ ախոռ, — հարցրին նրանք Գարգանտյուային:

— Կա, — պատասխանեց Գարգանտյուան, — հետևեցեք ինձ, ես ձեզ ցույց կտամ տեղը:

Նա տարավ նրանց մեծ սանդուղքով դեպի վեր, անցկացրեց դահլիճով մեծ սրահը, որ տանում էր ուղիղ դեպի աշտարակը:

— Այս լակոտը, երևի, մեզ խաբում է, — ասաց ախոռապետը աշտարակի սանդուղքով վեր բարձրանալիս, — ո՞վ է տեսել, որ վերին հարկերում ախոռ լինի:

— Գուցե մյուս կողմից իջնելու տեղ կա, — պատասխանեց ավագ սպասավորը, — բայց ավելի լավ է հենց իրեն՝ երեխային հարցնենք:

— Տղաս, — ասաց նա Գարգանտյուային — մեզ ո՞րն ես տանում:

— Ախոռ, — պատասխանեց Գարգանտյուան, — այնտեղ են գտնվում իմ մեծ ձիերը: Մենք շուտով կհասնենք, պետք է միայն այս սանդուղքով վեր բարձրանանք:

Եվ տարավ նրանց իր սենյակը, որտեղ գտնվում էին փայտե ձիերը:

— Սա է ախոռը, — ասաց Գարգանտյուան, — այ սա իմ իսպանական երիվարն է, սա էլ հունգարականը, սա էլ իմ արագավագ ձին է:

Հետո մեծ կոճղը մոտեցրեց նրանց ու ասաց.

— Ձեզ եմ նվիրում այս որսի ձին, որը ստացել եմ Ֆրանկֆուրտից:

— Մուրը Հովհաննեսը վկա, սա մեզ հիմարի տեղ է դնում, — ծիծաղելով ասաց ավագ սպասավորը:

— Հիմար մարդը մի վերստից կերևա, — ասաց Գարգանտյուան:

— Մրան տես է, — ասաց ավագ սպասավորը, — լեզուն կարծես ածելի լինի: — Տերը ձեզ հետ, լեզվանիկ պարոն, երևում է խոսքի տակ մնացող չեք:

Այսպես խոսելով նրանք ցած իջան ներքևի դահլիճը, որտեղ ընթրում էր շքախմբի մի մասը: Այնտեղ պատմեցին իրենց գլխին եկածը և այնպիսի ծիծաղ բարձրացրին, որ քիչ էր մնում խեղճ հյուրերի փորը ծիծաղից պայթեր:

Գլուխ II

Այն մասին, թե ինչպես էր մետր^[6] Տյուբալ Օլոֆերնը Գարգանտյուային գրել-կարդալ սովորեցնում

Մինչև հինգ տարեկան դառնալը Գարգանտյուան իր հորը շատ քիչ էր տեսնում. այդ ժամանակ Գրանգուզիեն պատերազմ էր մղում հարևանների դեմ: Երբ պատերազմից տուն վերադարձավ, նա այցելեց իր տղային: Երեխային համբուրելիս Գրանգուզիեն հարցնում էր դայակներին, սովորեցրե՞լ են արդյոք նրան մաքրասիրություն: Այդ հարցին պատասխանեց ինքը Գարգանտյուան, թե ինքը լավ կարգեր է հաստատել և այժմ ամբողջ երկրում իրենից ավելի մաքուր տղա չկա:

— Ինչպե՞ս թե չկա, — հարցրեց Գրանգուզիեն:

— Որովհետև, — պատասխանեց Գարգանտյուան, — ես հնարել եմ քիթ սրբելու ամենից հարմար ձևը:

— Իսկ այդ ի՞նչ ձև է, — հարցրեց Գրանգուզիեն:

— Այս բոլորիս բացատրեմ, — ասաց Գարգանտյուան: Մի անգամ քիթս սրբեցի մի օրհորդի շարֆով և դա շատ հաճելի էր, որովհետև շարֆը գործված էր շատ նուրբ ու փափուկ մետաքսից: Երկրորդ անգամ ցանկացա գլխարկով սրբել քիթս, սակայն գլխարկի վրա կարված ոսկե գնդակները քերծեցին դեմքս: Բայց ինչքան դուր եկավ, երբ քիթս սրբեցի մի ուրիշ գլխարկով, որ զարդարված էր փափուկ փետուրներով:

— Բայց այդ ձևերից ո՞րն է ամենահարմարը, — հարցրեց Գրանգուզիեն:

— Հենց հիմա կասեմ, — պատասխանեց Գարգանտյուան: — Ես սրբել եմ քիթս թասակով, բարձով, հողաթափով, զամբյուղով: Հետո պատահել է, որ քիթս սրբել եմ հավով, աքլորով, հավի ճուտով, հորթի կաշվով, աղավնիով ու նապաստակով: Բայց պետք է ձեզ ասեմ, որ քիթը սրբելու համար ամենալավ բանը աղվամազով ծածկված սագի ճուտն է: Երբ նրան կպցնում ես քթիդ, ինչքան էլ քիթդ սառած լինի, իսկույն տաքանում է:

Երբ տղայի այս խոսքերը լսեց, բարի Գրանգուզիեն հիացավ ու ասաց Գարգանտյուայի դայակներին.

— Իսկ դուք գիտե՞ք, թե ինչպես է Մակեդոնիայի թագավոր Ֆիլիպը իմացել, որ իր որդի Ալեքսանդրը^[2] զարմանալի խելքի տեր է: Լսեցեք, ես ձեզ պատմեմ այդ պատմությունը:

«Թագավորը մի ձի ուներ, բայց այդ ձին այնքան անզուսպ էր ու սարսափելի, որ ոչ ոք սիրտ չէր անում հեծնելու: Շատ շատերին էր ոտնատակ տվել ու հաշմանդամ դարձրել այդ ամեհի երիվարը: Մեկի վիզն էր կտորել, մյուսի ոտքերը, երրորդի՝ գանգը, չորրորդի՝ ծնոտը: Մի անգամ, երբ դաշտում վարժեցնելիս էին լինում ձիերին, Ալեքսանդրը նկատում է, որ այդ ձիու կատաղելու պատճառն այն է, որ վախենում է իր սեփական սովերից: Ալեքսանդրը թռչում հեծնում է ձին և քշում երեսը դարձրած դեպի արեգակը, այնպես որ սովերը ոչ թե առաջից, այլ ետևից է լինում: Չին միանգամից հնազանդում է: Երբ Ֆիլիպն իմանում է այդ, վճռում է, որ Ալեքսանդրը շատ ավելի խելոք է, քան պիտի լիներ իր տարիքի համեմատ, և նրա համար ուսուցիչ է հրավիրում Արիստոտելին,^[8] որն ամենաիմաստունն էր բոլոր իմաստուններից»:

— Այսօր, — շարունակեց բարի Գրանգուզիեն, — մենք բոլորս տեսանք, թե որքան խելոք ու սրամիտ երեխա է իմ Գարգանտյուան: Կարծում եմ, որ եթե ինչպես հարկն է դաստիարակենք ու գիտություններ սովորեցնենք նրան, այս երեխան, անշուշտ,

ժամանակին նշանավոր մարդ կդառնա: Այսպես ուրեմն, ես ցանկանում եմ նրա համար ուսուցիչ հրավիրել մի որևէ գիտնական մարդու:

Շուտով գտնվեց մի այդպիսի գիտնական մարդ: Դա նշանավոր մետր Տյուբալ Օլոֆերնն էր: Տյուբալ Օլոֆերնը այնպես լավ սերտել տվեց Գարգանտյուային այբուբենը, որ նա կարող էր բերանացի ասել, առանց կանգ առնելու, սկզբից մինչև վերջ, վերջից մինչև սկիզբը և ինչպես կուզեք: Դրա վրա Գարգանտյուան հինգ տարի ու երեք ամիս ժամանակ կորցրեց: Այդ դա գիտություն է:

Հետո նույն ձևով Գարգանտյուան բերանացի սերտեց լատիներեն քերականությունը, աղոթագիրքը և եկեղեցական օրացույցը. դրա վրա էլ նա տասներեք տարի, վեց ամիս ու երկու շաբաթ ժամանակ կորցրեց:

Պետք է ասել, որ այն ժամանակներում չգիտեին գիրք տպագրել, այդ պատճառով էլ Գարգանտյուան գրագիտություն սովորելուց հետո պետք է ինքը իր ձեռքով արտագրեր իր համար բոլոր գրքերը, այն էլ շատ գեղեցիկ ձեռագրով:

Գարգանտյուան գրենական բոլոր պիտույքները մի տուփի մեջ պահած՝ սովորաբար ման էր ածում հետը իր գոտուց կախ: Այդ տուփն այնքան մեծ էր, որ կարծես եկեղեցու սյուն լիներ: Երկաթե հաստ շղթայով կախված թանաքամանը նման էր ահագին տակառի:

Երբ Գարգանտյուան ուրիշ շատ իմաստուն գրքեր էլ բերանացի արեց, Գրանգուզին վերջապես գլխի ընկավ, որ նրա սովորելուց բան դուրս չի գալիս: Գարգանտյուան ինչքան շատ էր սովորում, այնքան ավելի էր հիմարանում:

Այդ հանգամանքն ստիպեց նրան գանգատվելու իր բարեկամ դոն Ֆիլիպին:

— Դա ամենևին զարմանալի չէ, — ասաց դոն Ֆիլիպը, — նրա դաստիարակն ինքը հիմարների թագավորն է: Նրա իմացած ամբողջ գիտությունը հիմարություն է, իսկ բոլոր գրքերը տխմար բաներ են: Եթե ինձ չեք հավատում, կաչեցեք այն երեխաներից մեկին, որոնք սովորում են մեր ուսուցիչ Պոնոկրատի¹⁹¹ մոտ և համեմատեցեք նրան ձեր տղայի հետ, այն ժամանակ կտեսնեք, թե նրանցից որն է ավելի խելոք:

Գրանգուզիեին այդ խորհուրդը դուր եկավ, և նա հրամայեց, որ այդպես էլ անեն:

Երեկոյան ընթրիքի ժամանակ դոն Ֆիլիպն իր հետ բերեց մանկլավիկ Եվդեմոնին:¹⁹⁰ Եվդեմոնի գլուխը այնպես լավ էր սանրված, նա այնպես լավ էր հագնված, այնպես քաղաքավարի էր բարևում ու ժպտում, որ ավելի շատ նման էր հրեշտակի, քան մարդու:

— Տեսնո՞ւմ եք այս տղային, — ասաց դոն Ֆիլիպը, — նա տասներկու տարեկան է: Իսկ հիմա կտեսնենք, թե ինչ է սովորել: Պոնոկրատի մոտ ընդամենը երկու տարվա ընթացքում:

Գրանգուզիեն տվեց իր համաձայնությունը լսել Եվդեմոնին և պատվիրեց նրան սկսել իր ճառը:

Այն ժամանակ Եվդեմոնը վեր կացավ, գլխարկը ձեռքին բռնեց և քաղցր ժպտալով իր վարդակարմիր շրթունքներով, սկսեց ճառել: Դարձնելով հայացքը դեպի Գարգանտյուան, սկսեց գովել ու գովաբանել նրան նախ՝ որ բարեհամբյուր է, երկրորդ՝ որ խելոք է, երրորդ՝ որ ազնիվ է, չորրորդ՝ որ գեղեցիկ է, հինգերորդ՝ Եվդեմոնը քաղցրությամբ ու հեզությամբ սկսեց համոզել նրան ավելի ևս սիրել ու հարգել իր հորը, որը ոչ մի ջանք չի խնայում որպեսզի լավ կրթություն տա իր որդուն: Եվդեմոնը վերջացրեց իր խոսքը, հայտնելով

Գարգանտյուային, որ իրեն համարում է նրա խոնարհ ծառան և ոչ մի բան այնքան չի ցանկանում, որքան այն, որ իր նոր տիրոջ առաջ սևերես չմնա:

Եվ այս բոլորը նա արտասանեց այնպիսի հաճելի շարժումներով, այնպիսի զարմանալի պերճախոսությամբ և այնպիսի գեղեցիկ լատիներենով, որ ավելի նմանվեց Ցիցերոնին,^[11] քան ժամանակակից ֆրանսիացի պատանու:

Իսկ երբ հերթը հասավ Գարգանտյուային, նա գլուխը կախեց իր գլխարկի մեջ և իշի գոռոց գցեց: Եվ ինչ արեցին-չարեցին, նրա բերանից ոչ մի խոսք դուրս չեկավ:

Հայրն այնքան էր բարկացել, որ ուզում էր Տյուբալ Օլոֆերնին տեղն ու տեղը սպանի: Բարեբախտաբար, դոն Ֆիլիպը ժամանակին միջամտեց և հանգստացրեց խեղճ Գրանգուզիեն: Գրանգուզիեն հրամայեց լրիվ վճարել Տյուբալ Օլոֆերնի ոռճիկը և դուրս արեց նրան իր տնից:

Երբ Տյուբալ Օլոֆերնը հեռացավ, Գրանգուզիեն վճռեց իր տղայի համար ուսուցիչ նշանակել Պոնոկրատին, այն ուսուցչին, որի մոտ սովորել էր Եվդեմոնը: Բացի այդ, նա վճռեց Գարգանտյուային Եվդեմոնի և նոր ուսուցչի հետ Փարիզ ուղարկել, որ տեսնեն, թե այնտեղ ֆրանսիացի պատանիներին ինչպիսի կրթություն են տալիս:^[12]

Գլուխ III

Այն մասին, թե ինչպես Գարգանտյուային ուղարկեցին Փարիզ:

Հենց այդ ժամանակ Գրանգուզիեն Աֆրիկայից նվեր է ստանում մի ահագին ձի: Այդ ձիու նման մեծ ձի՝ աշխարհում ոչ ոք չէր տեսել:

Նա վեց փղի չափ կլիներ: Նրա ոտքերը մատներ ունեին, ականջները Լանգեդոկի այծերի^[13] ականջների նման կախ էին ընկած, իսկ ետևից մի փոքրիկ եղջյուր ուներ: Գույնը գորշակարմրավուն էր, տեղ-տեղ մոխրագույն բծերով: Բայց ամենից սարսափելին նրա պոչն էր, որը սյան պես հաստ էր և ամբողջովին ծածկված էր փշերով:

Ձին բերել էին ծովով՝ երեք լաստանավերով և մի նավով: Ձիուն տեսնելիս Գրանգուզիեն բացականչել էր.

— Լավ ժամանակին հասավ այս ձին, իմ տղային Փարիզ կտանի: Հիմա որ գործը հաջող կգնա ու ժամանակին տղաս մեծ գիտնական կդառնա:

Մյուս օրը կուշտ ուտելուց հետո Գարգանտյուան ճանապարհ ընկավ իր նոր ուսուցիչ Պոնոկրատի, մանկավիճի Եվդեմոնի և ուրիշ ուղեկիցների հետ: Եղանակը հիանալի էր, և մեր ճամփորդները ուրախ ու զվարթ, լավ ուտելով ու խմելով, գնում էին իրենց ճանապարհով մինչև Օռլեան հասնելը: Այնուհետև ճանապարհն անցնում էր մի խիտ անտառով, որի երկարությունը երեսունհինգ վերստ էր, լայնությունը՝ մոտ տասնյոթ վերստ: Անտառում անչափ բոռ ու բորելի կար, որոնք կատարյալ պատիժ են ձիերի համար: Բայց Գարգանտյուայի ձին վճռել էր բոռերի հախից գալ իր ուզած եղանակով: Եվ նա իրոք իր կծոտված ցեղակիցների վրեժը հանեց բոռերից:

Հենց որ մեր ճամփորդները անտառ մտան և նրանց վրա հարձակվեցին բռռերը, Գարգանտյուայի ձին այնպես էր շարժում պոչը, որ բռռերը կույտերով վայր էին գորվում: Ձին շարժում էր պոչը աջ ու ձախ, այս ու այն կողմ, և այնպես էր հնձում ծառերը, ինչպես խոտհատը հնձում է խոտը: Քիչ ժամանակ անց անտառի բոլոր ծառերը գետին էին տապալվել: Չորս կողմը ջարդված ծառեր էին ընկած: Հասկանալի է, իհարկե, որ դրանից հետո ոչ մի բռռ չմնաց անտառում:

Ճամփորդները շարունակեցին իրենց ճանապարհը և մի քանի օր հետո ողջ և առողջ հասան Փարիզ:

Գլուխ IV

Այն մասին, թե ինչպես է Գարգանտյուան փախցնում Փարիզի Աստվածամոր տաճարի զանգը

Մեր բարեկամները լավ հանգստանալուց հետո գնացին քաղաքը դիտելու: Բայց հենց փողոց դուրս եկան թե չէ, պարապ-սարապ մարդկանց ահագին խմբեր շրջապատեցին Գարգանտյուային: Ոմանց զարմացնում էր նրա բարձր հասակը, մյուսներին՝ նրա տարօրինակ հաստությունը, ուրիշներին՝ նրա գեղեցիկ հագուստը: Հայտնի է, որ փարիզեցիք ամենաթեթևամիտ մարդիկ են աշխարհում: Նրանց, ինչպես ասում են, կարելի է զրկել հացից, բայց ոչ երբեք որևէ ձեռնածուխ կամ փողոցային երգչի նայելու բավականությունից: Նրանց շատ դուր եկավ Գարգանտյուայի նման կտրիճը: Եվ մի այնպիսի համառությամբ էին հետապնդում Գարգանտյուային, որ նրանցից ազատվելու համար Գարգանտյուան ստիպված եղավ բարձրանալ Փարիզի Աստվածամոր տաճարի աշտարակը:

Աշտարակից նայելով ժողովրդի ահագին բազմությանը, Գարգանտյուան ասաց ինքն իրեն.

— Երևի այդ պորտաբույծները ցանկանում են, որ ես նրանց ինչպես հարկն է ողջունեմ: Շատ լավ: Այժմ ես նրանց այնպես կողջունեմ, որ քանի կենդանի են, չմոռանան ինձ:

Այդ ասելով նա այնքան օդ ներշնչեց և հետո այնպես ուժգին փչեց դեպի ներքև, որ քաղաքում չտեսնված մրրիկ բարձրացավ: Այդ մրրիկը գետին տապալեց 260.418 մարդ, չհաշված կանանց ու երեխաներին:

Բոլորը շնչասպառ փախան: Նրանք քրտնաթաթախ ու հագալով՝ վազեվազ մի կերպ հասան մինչև համալսարան և այնտեղ սկսեցին ամեն տեսակ հայիոյանքներ թափել բերաններից:

— Կարիմարի՛-կարիմարա՛, — գոչում էին նրանք, — քիչ էր մնում այդ սրիկան մեզ բոլորիս հաշմանդամ դարձնի:

Իսկ Գարգանտյուան ժողովրդին փախցնելուց հետո պարապությունից դիտում էր տաճարի աշտարակներում կախած ահագին զանգերը և ապա սկսեց ձգել դրանցից կապած պարանները: Չանգերի դողանջը տարածվեց ամբողջ քաղաքում: Հենց այդ

Ժամանակ Գարգանտյուայի գլխում միտք է ծագում զանգերը վերցնել տանել և բոժոժների փոխարեն կահել իր ձիուց: Այդպես էլ անում է:

Մեկը մյուսի ետևից արձակում է զանգերը ու տանում:

Ամբողջ քաղաքն իրար է անցնում: Քաղաքացիք հավաքվում են Նել¹⁴⁴ աշտարակի մոտ և խորհուրդ անում, թե ինչպես ետ ստանան զանգերը: Երկար վիճաբանությունից հետո վճռում են պատգամավորություն ուղարկել Գարգանտյուայի մոտ՝ մետր Յանոտուսի գլխավորությամբ, որը հայտնի գիտնական էր ու ճոռոմաբան:

Մետր Յանոտուսը կուշտ նախաճաշելուց և մի կերպ սափրվելուց հետո գնում է Գարգանտյուայի մոտ: Նրան ուղեկցում էին երկու կարմրադեմ տիրացուներ և թուղթ մրոտող ու երեսները թանաքոտած հինգ-վեց գրչակներ:

Տան դարպասի առաջ նրանց դիմավորեց Պոնոկրատը: Սկզբում նա կարծեց, թե դրանք ծպտյալներ են: Բայց երբ իմացավ, որ ծպտյալներ չեն, այլ քաղաքացիների կողմից ուղարկված պատգամավորություն, վազեց Գարգանտյուայի մոտ և հայտնեց նրան:

Մեր բարեկամները խորհրդակցեցին, թե ինչ անեն: Բոլորն այն կարծիքին էին, որ նախ և առաջ Յանոտուսին պետք է տանել բուժետ և այնտեղ լավ խմեցնել նրան: Իսկ որպեսզի այդ անվերջ հազացող ծերուկը հետո չկարծի, թե հափշտակված զանգերը ինքն է վերադարձրել Փարիզին, վճռվեց մարդ ուղարկել քաղաքապետի, ֆակուլտետի ռեկտորի և եպիսկոպոսի ետևից ու նրանց հանձնել զանգերը, նախքան հանդես կգա Յանոտուսը իր ճառով:

Ինչպես վճռեցին, այնպես էլ արին: Չանգերը սուսուփուս դուրս տարան, իսկ հրավիրվածներին ներս տարան դահլիճ, որտեղ Յանոտուսը հազալուց ու կոկորդը մաքրելուց հետո արտասանեց հետևյալ ճառը.

— Ը՛ր՛ պարոն, ը՛ր՛ պարոններ, շատ լավ կլիներ, որ վերադարձնեիք մեր զանգերը, որովհետև դրանք մեզ շատ հարկավոր են: Մի ժամանակ դրանց համար մեզ մեծ գին էին տալիս, նկատի ունենալով դրանց տարրական էության հնչունային բնույթը:¹⁴⁵ Այդ պատճառով դրանց բաղադրյալ մասերի հնչունային բնույթն այնպես է, որ ետ է մղում ամեն տեսակ փոթորիկներ ու վատ եղանակներ մեր, այսինքն ոչ թե մեր, այլ ընդհանրապես շրջակա այգիներից:

— Ը՛ր՛, ը՛ր՛, էխե՛նյ, եթե դուք վերադարձնեք զանգերը, հարգելով իմ խնդիրքը, ես պարզև կստանամ վեց կապոց երշիկ և մի հատ էլ լավ վարտիք, որը իմ ոտքերը կպաշտպանի մրսելուց: Ա՛խ, աստված վկա, պարոն, լավ վարտիքը շատ լավ բան է: Ամեն կարիք ունեցող վարտիքի տեր չի դառնում: Այդպիսի բաները խելքս լավ է կտրում: Պետք է իմանաք, պարոն, որ տասնութ օր է, ինչ ես պատրաստում եմ իմ այս գեղեցիկ ճառը: «Տվեք կայսրինը կայսրին և աստծունը՝ աստծուն»:¹⁴⁶ Ազնիվ խոսք եմ ասում, պարոն, եթե ինձ հետ ընթրել եք ցանկանում, մենք մի լավ քեֆ կանենք: Ես խոզ եմ մորթել և մի փոքր տակառ էլ ձեր ճաշակի գինի ունեմ: Ուրեմն, վերադարձրեք մեր զանգերը: Լսեք ինչ եմ ասում, ես խոստանում եմ ձեզ մեր ֆակուլտետի կողմից եկեղեցական քարոզների մի հրաշալի գիրք, միայն թե դուք վերադարձնեք մեր զանգերը: Կուզե՛ք ձեր բոլոր մեղքերի համար թողություն ստանալ: Երդվում եմ աստծու անունով, որ դուք թողություն կստանաք և դա ձեզ վրա ոչ մի կոպեկ չի նստի:¹⁴⁷ Ը՛ր՛, ը՛ր՛, հիմա ես կապացուցեմ ձեզ, որ դուք պարտավոր եք վերադարձնել մեզ մեր զանգերը: Տեսեք ինչ եմ ասում. զանգակատան

ամեն մի լավ գնագոյող զանգ իր գնոգոցով ստիպում է գնագնողին ավելի լավ գնագնել: Հա՛, հա՛, հա՛: Հույս ունենա՛, վերջին ասածս ձեզ լրիվ համոզեց: Համա՛ ինչ հրաշալի եմ խոսում: Ազնիվ խոսք, պարոն, կար ժամանակ, երբ բան ու գործս միայն ճաշելն էր: Իսկ հիմա կուզեի լավ գինի, կուզեի մեջքս դեմ արած լինի կրակին, որ տաքանա, իսկ փորս կպած լինի սեղանին, որի վրա դրած կերակուրների գոլորշին քուլա-քուլա բարձրանա: Է՛հ, պարոն, դեհ վերադարձրեք զանգերը վերջանա գնա: Չէ՞ որ քաղաքն առանց զանգերի նույնն է, ինչպես կովն առանց բոժոժների: Ես վերջացրի: Ողջ լինեք:

Այդ փառապանծ գիտնականը հենց իր ճաշը վերջացրեց, Պոնոկրատն ու Եվդեմոնը ծիծաղից թուլացան: Նրանց հետ ծիծաղում էր ինքը մետր Յանտոուսը: Եվ նրանք երեքով այնքան ծիծաղեցին, որ հալից ընկան:

Երբ դադարեցին ծիծաղելուց, Պոնոկրատն առաջարկեց մեկ էլ հյուրասիրել այդ փառավոր ճարտասանին, որ այդպես զվարճացրել էր իրենց, և պարգև տալ նրան:

Տասը	կապոց	երշիկ,
մի		վարտիք,
երեք	հարյուր	փայտ,
քսանհինգ	տակառ	գինի,

անկողին՝ սագի փետրից պատրաստած երեք ներքնակով, և մի մեծ ապուրաման:

Այդ բոլորը կատարվեց, միայն վարտիքի փոխարեն Գարգանտյուան հրամայեց տալ մետր Յանտոուսին յոթ արշին սև մահուդ և երեք արշին աստառացու կտոր: Դրա պատճառն այն էր, որ Գարգանտյուան չգիտեր, թե ինչպիսի վարտիք է սիրում գիտնական ճարտասանը՝ ժապավենը ետևի՛ց, թե առաջից, այնպիսի՛ վարտիք, որ հագնում են նավորդները, թե փողկապով, կամ պոչով՝ ձողածկան պոչի նման, որպեսզի երիկամուկները շատ չտաքանան:

Եվ այդպես՝ այդ ամբողջ գիտական պատգամավորությունը պարգևներով ծանրաբեռնված տուն վերադարձավ:

Սակայն դրանով գործը չվերջացավ: Բանից պարզվեց, որ մետր Յանտոուսը, այդ հազագոյ ծերունին, որն այնքան ճոխ պարգևներ էր ստացել Գարգանտյուայից, չբավականացավ դրանով և պահանջեց, որ տան իրեն խոստացած պարգևները: Երբ քաղաքային իշխանությունը մերժեց նրա պահանջը, Յանտոուսը դիմեց դատարանին:

— Ա՛յ դուք, խաբեբաներ, — աղաղակում էր Յանտոուսը, — ուզում եք իմ գլխին խաղ խաղալ, ինչպես մի ժամանակ ես էլ ձեզ հետ ուրիշների գլխին էի խաղեր խաղում: Երդվում եմ աստծով, որ ձեր արաքների մասին կհայտնեմ թագավորին: Եվ թող ես երկու ասքով կուրանամ, եթե նա չհրամայի ձեզ որպես խաբեբաների, դավաճանների և աստծու թշնամիների ողջ-ողջ այրել:

Այդ խոսքերի համար քաղաքային իշխանությունը զանգատվեց Յանտոուսի դեմ: Կարճ ասած՝ դատական այդ գործը այնպիսի խճճված մի բան դարձավ, որ մինչև օրս դեռ չի վերջացել: Յանտոուսն ու նրա օգնականները երդվել են չվացվել ու քթները չարբել, մինչև չստանան իրենց խոստացած պարգևները: Եվ նրանք մինչև այսօր ման են գալիս կեղտոտ ու փվնքոտ:

Գլուխ V

Այն մասին, թե ինչպես էր Գարգանտյուան ապրում Փարիզում

Երբ զանգերն իրենց նախկին տեղը կախվեցին, Գարգանտյուան ցանկացավ աշխատանքի կաշել: Բայց Պոնոկրատը վճռեց նախ իմանալ, թե ինչ է սովորեցրել նրան առաջվա դաստիարակը, և պատվիրեց Գարգանտյուային ապրել այնպես, ինչպես առաջ: Գարգանտյուան այդպես էլ արեց:

Եվ ահա, թե ինչպես էր անցկացնում նա իր ժամանակը: Առավոտները զարթնում էր ժամը ութին-իննին, մի կես ժամ մնում էր անկողնում պառկած, հետո հագնվում էր և սանրվում իր սեփական հինգ մատներով: Այդպես էր սովորել նա մանկությունից, որովհետև նրա նախկին ուսուցիչը այն կարծիքին էր, որ զույս սանրելը, լվացվելը և մաքրվելը թանկագին ժամանակի ապարդյուն կորուստ է:

Դրանից հետո Գարգանտյուան հորանջում էր, թքում, հագում, փռշտում, խնչում, ճիշտ ավագ սարկավագի պես, հետո նախաճաշին ուտում էր տապակած երիկամներ ու միս, խոզապուխտ և որևէ ջրայի ու յուղայի կերակուր:

Կուշտ նախաճաշելուց հետո Գարգանտյուան գնում էր եկեղեցի, և նրա ետևից տանում էին մի ահագին զամբյուղի մեջ դրած աղոթագիրքը, որը կազմի ու ճարմանդների հետ միասին կշռում էր տասնմեկ փութ ու վեց գրվանքա: Եկեղեցում Գարգանտյուան քսանվեց կամ երեսուն պատարագ էր լսում: Նրա հետ միասին եկեղեցի էր գալիս նաև տնային քահանան, որը հագնված էր լինում ինչպես հոպոպ և նրանից սաստիկ գինու հոտ էր փչում:

Նրա հետ Գարգանտյուան քթի տակ մոթմոթում էր իր աղոթքները և դա այնպիսի խնամքով էր անում, որ ոչ մի խոսք բաց չէր թողնում:

Երբ Գարգանտյուան դուրս էր գալիս եկեղեցուց, եզները նրա ետևից բերում էին սայլի վրա բարձած սուրբ Կլավդիոսի ահագին տերոդորմյաները: Այդ տերոդորմյայի յուրաքանչյուր հատիկը մարդու գլխի չափ կլիներ: Գարգանտյուան տերոդորմյան ձեռքն էր առնում և ջերմեռանդությամբ տերոդորմյա զցելով զբոսնում էր վանքի պարտեզում, ու սրահներում: Այդ ժամանակ նա ավելի շատ աղոթքներ էր կարդում, քան տասնվեց ճգնավորներ կարող էին կարդալ:

Հետո նա մոտ կես ժամ սովորում էր՝ աչքերը գրքի էջերին հառած, բայց նրա ուշքն ու միտքը խոհանոցում էր, որտեղ այդ ժամանակ նախաճաշ էին պատրաստում: Նախաճաշին Գարգանտյուան ուտում էր մի քանի դյուժին խոզապուխտ և երշիկ: Խոզապուխտը Գարգանտյուան ուտում էր մանանեխով, որը չորս աժդահա խոհարարներ ահագին գդալներով լցնում էին նրա բերանը: Շատ չանցած ճաշն էր սկսվում, և Գարգանտյուան ինչքան ասես ուտում էր ամեն տեսակ մսեղեն ու ջրայի կերակուրներ և ուտելը վերջացնում էր այն ժամանակ միայն, երբ փորն սկսում էր ուռչել:

Ճաշից հետո Գարգանտյուան մեկնվում էր ու խոմփացնում, իսկ երբ զարթնում էր, մի տակառ գինի էր դնում մոտը և խմում էր, որքան քեֆն ուզում էր:

Այդպես էր անցնում նրա օրը մինչև երեկո: Ընթրելիս էր Գարգանտյունան այնքան էր ուտում, որ քիչ էր մնում պայթի: Հետո գառ էր խաղում և ապա պառկում քնում էր մինչև առավոտվա ժամը ութը:

Գարգանտյունայի կյանքը լավ ուսումնասիրելուց հետո Պոնոկրատը հասկցավ, թե ինչու է նա այդպես հիմար ու անպետք մարդ դարձել, և վճռեց նոր սովորություններ մշակել:

Պոնոկրատը իր սանին արթնացնում էր առավոտյան ժամը չորսին և դեռ չնախանաշած՝ նրա հետ գնում էր զբոսնելու: Չբոսանքից հետո Գարգանտյունային հագցնում ու գլուխը սանրում էին, և այդ ժամանակ Պոնոկրատը կրկնում էր նրա հետ նախորդ օրվա դասերը: Այդպես պարապում էին նրանք երկու-երեք ժամ անընդհատ, որից հետո Պոնոկրատը նրան նոր դաս էր տալիս: Այնուհետև նրանք դարձյալ գնում էին զբոսնելու: Մտնում էին հրապարակը, այնտեղ գնդակ էին խաղում, գնդաթի և ուրիշ խաղեր, որպեսզի զարգացնեն իրենց մկանները: Երբ վերադառնում էին տուն, շփում էին իրենց մարմինները, փոխում շապիկները և նստում ճաշելու: Ծաշելիս բարձրաձայն մի քանի զվարճալի պատմություններ էին կարդում հին դյուցազունների սխրագործությունների մասին և ուրախ զրուցում միմյանց հետ:

Ծաշից հետո Գարգանտյունան քնար էր նվագում, տավիղ և գերմանական սրինգ, հետո նորից սկսում էր սովորել, այսինքն կրկնում էր առավոտվա դասը, կարդում որևէ գիրք, գրում էր և գրելիս աշխատում էր ամեն մի տառը որքան կարելի է գեղեցիկ գրել:

Հետո Գարգանտյունան Գիմնաստի հետ միասին գնում էր ձի հեծնել սովորելու: Նա ձի էր նստում ոտից մինչև գլուխ զինված և զանազան ռազմական վարժություններ էր անում: Շուտով նա այնպես սովորեց ձի կառավարել, նիզակ խաղացնել և անհրաժեշտ դեպքում սուսերամարտել, որ նմանը չկար Փարիզում:

Բացի այդ, Գարգանտյունան հաճախ որսի էր գնում, գնդակ էր խաղում, մենամարտում էր, վագում, ցատկում, լողում էր փորի վրա, մեջքի վրա, մի կողքի վրա: Նա այնպես լավ էր լողում, որ կարողանում էր անցնել գետի մի ափից մյուսը միայն ոտնալող տալով և մի ձեռքը բարձր գլխավերևում պահած: Հաճախ նա ձեռքին բռնած մի որևէ գիրք էր անցկացնում մյուս ափը և գրքի վրա ոչ մի կաթիլ ջուր չէր լցնում:

Մարմնամարզության մեջ նա առաջնակարգ վարպետ էր: Պատահում էր, որ մի բարձր աշտարակի ծայրից թոկ էին կապում, որի մյուս ծայրն իջեցնում էին մինչև գետին: Գարգանտյունան թոկից բռնած բարձրանում էր աշտարակի ծայրը, հետո իջնում էր ներքև ու թռչում խոտի վրա: Կամ երկու միմյանցից քիչ հեռու ծառերի վրա մի հաստ փայտ էին դնում, և Գարգանտյունան այդ փայտից կախ ընկած ու առանց ոտքերը գետնին կայցնելու մի ծառից մյուսն էր անցնում այնպիսի արագությամբ, որ ոչ մի արագավազ չէր կարողանում հասնել ետևից:

Մարմնամարզական վարժություններից հետո Գարգանտյունան լվացվում էր, մարմինը շփում, շորերը փոխում և նստում էր ընթրելու: Պետք է ասել, որ Գարգանտյունայի ճաշն այժմ շատ համեստ էր լինում, նա այնքան էր միայն ուտում, որ սովածություն չզգա, բայց ընթրիքը լինում էր շատ ճոխ ու համեղ: Ընթրիքից հետո նախքան քնելը Գարգանտյունան իր ուսուցչի հետ դուրս էր գալիս պատշգամբ՝ ուսումնասիրելու աստղագարդ երկինքը:

Այնտեղ նրանք դիտում էին գիսավոր աստղերը, ընկնող աստղերը և ուսումնասիրում էին լուսատուների տեղադրությունը: Հետո Գարգանտյուան մի անգամ ևս կրկնում էր այն բոլորը, ինչ սովորել էր այդ օրը և պառկում էր քնելու:

Ժամանակ առ ժամանակ Պոնոկրատն իր աշակերտին տանում էր գրասանքի: Գարգանտյուան մտնում էր այն արհեստանոցները, որտեղ մետաղ էին հալում և թնդանոթներ ձուլում, ալքիմիկոսների աշխատանոցները, դրամահատարանը, մանածագործական գործարանները, որտեղ մետաքսե կտորներ ու թավիչ էին գործում, և ամեն տեղ դիտում, ուսումնասիրում էր աշխատանքները: Գնում էր նաև նայելու լարախաղացներին և ձեռնածուներին, իսկ երբեմն պարզ և լավ եղանակին գնում էր քաղաքից դուրս և ամբողջ օրն անցկացնում այնտեղ՝ երգեր ասելով և խոտերի վրա թավալվելով: Պանոկրատը հասկանում էր, որ երբ մարդ եռանդուն աշխատանքներ է կատարում, ժամանակ առ ժամանակ պետք է լավ հանգստանա, ուստի չէր խանգարում իր աշակերտին որոշ օրեր իր ուզածի պես զվարճանալ:

Գլուխ VI

Այն մասին, թե ինչպես Լերնե քաղաքի կարկանդակագործներն ընդհարվեցին Գրանգուզիեի հովիվների հետ

Գարգանտյուայի հայրենիքում մոտենում էր խաղողաքաղի ժամանակը: Գրանգուզիեի հովիվները պահպանում էին խաղողը, որ սարյակները չկտցահարեն: Մի օր էլ, երբ հովիվները այգու մոտ նստած գրույց էին անում, մեկ էլ տեսնում են, սայլեր են անցնում ճանապարհով, իսկ սայլերի ետևից քայլում էին հարևան Լերնե քաղաքի կարկանդակագործները: Պետք է ասել, առաջին անգամը չէր, որ կարկանդակագործներն անցնում էին այդ ճանապարհով, նրանք հաճախ ապրանք էին տանում քաղաք՝ ծախելու: Այս անգամ էլ տասներկու սայլ էր անցնում կարկանդակներով բեռնված, այն էլ ինչ կարկանդակ՝ թարմ, համեղ, փռից նոր հանած ու բոլորովին տաք:

— Մենք ումից ենք պակաս, — ասացին հովիվները, — որ այդ կարկանդակի համը չտեսնենք: Է՛յ, կարկանդակագործնե՛ր, ձեր ապրանքից մի քիչ ծախեցեք մեզ:

— Ձե՛զ ծախենք: Դուք ո՞վ եք, որ ձեզ ապրանք ծախենք: Դուք ի՞նչ կարկանդակ ուտողներ եք, շատախոսներ, ծուլյեր, տգետներ, մուրացկաններ: Մի սրանց շնորհքին նայեք: Ձերպետների համար չեն մեր կարկանդակները: Ավելի լավ է գնացեք ձեր գարու հացը կրծեցեք, այդ էլ ձեզ շատ է:

— Ա՛յ մարդիկ, այդ ինչ է պատահել ձեզ, որ մեզ այդպես կոպիտ խոսքեր եք ասում, — զարմացած հարցրեց հովիվ Ֆորժյեն, որ մի բարեսիրտ ու շատ ազնիվ մարդ էր, — առաջներում դուք ուրախությամբ մեզ կարկանդակ էիք ծախում, իսկ հիմա այդպես կոպիտ ձևով մերժում եք: Չէ՛ որ դուք էլ մեզ մոտ ցորեն գնելու եք գալիս, պատահե՛լ է, որ մենք ձեզ մերժենք: Իսկ եթե դուք վճռել եք, որ մենք թշնամիներ դառնանք, շատ լավ, ժամանակին մենք էլ ձեզ հետ այդպես կվարվենք: Լավ հիշեցեք ասածներս:

— Դու ինչո՞ւ կռվարար արքորի պես մեջտեղ ընկար, Ֆորժյե, — ծիծաղելով ասաց Մարկեն, որ կարկանդակագործների գլխավորն էր, — չլինի՞ կոնծել ես: Դե լավ, մոտ արի, ես քեզ կարկանդակ կտամ:

Բայց երբ Ֆորժեն միամտաբար մոտեցավ կարկանդակագործին և ուզում էր գոտու տակից հանել դրամը, Մարկեն մտրակով այնպիսի հարված հասցրեց Ֆորժեին, որ խեղճի մարմինը կապտեց:

— Օգնեցե՛ք, այստեղ մարդ են սպանո՛ւմ, — աղաղակեց Ֆորժեն և ձեռքի մահակով որքան ուժ ուներ հարվածեց Մարկեին: Հարվածը կաավ Մարկեի գլխին, և տմարդի կարկանդակագործը տապալվեց գետնին:

Աղմուկի ձայնը լսելով՝ չորս կողմից վրա հասան ագարակատերերը, որոնք մոտերքում աշխատում էին. նրանք երկար ձողերով ընկույզ էին թափ տալիս: Ագարակատերերը մի կողմից սկսեցին ծեծել կարկանդակագործներին, հովիվները՝ մյուս կողմից: Կարկանդակագործները տեսան, որ իրենց բանը բուրդ է: Հովիվները նրանցից գոռով հինգ դյուժին կարկանդակ առան: Բայց դա ամենևին կողոպուտ չէր, որովհետև տերերին վճարեցին վերցրած կարկանդակների գինը և որպես վերադիր տվեցին հարյուր հատ ընկույզ և երեք կողով սպիտակ խաղող: Կարկանդակագործներն օգնեցին Մարկեին ձին հեծնելու և վերադարձան Լերնե: Ամբողջ ճանապարհին ինչ հայիոյանք ասես, որ չէին թափում հովիվների գլխին և սպառնում, որ շուտով նրանց հախիցը կգան:

Իսկ հովիվներն իրենց հերթին անուշ էին անում կարկանդակները, հետո ճաշակում հիանալի խաղողը և սրտանց ծիծաղում մեծախոս ու պարծենկոտ կարկանդակագործների վրա: Ֆարժեն ինքը խաղողի հյութով տրորեց մտրակի հարվածից կապտած տեղը, և շատ շուտով ցավը բոլորովին անցավ:

Գլուխ VII

Այն մասին, թե ինչպես Պեկրոշով^[18] թագավորը պատերազմ է հայտարարում Գրանգուզիեին

Երբ կարկանդակագործները վերադարձան Լերնե, սոված-ծարավ վազեցին դոյակը՝ Պիկրոշով թագավորի մոտ: Նրանք գանգատվում էին, լաց էին լինում, ցույց էին տալիս իրենց ջարդված գամբյուղները, պատառոտված շորերը, տրորված կարկանդակները, իսկ որ գլխավորն է, վիրավորված Մարկեին, և ասում էին, որ այդ բոլորը Գրանգուզիեի հովիվների ու ագարակատերերի գործն է:

Թագավորը կատաղությունից խելքը կորցրեց և առանց քննելու, թե ով է արդար և ով մեղավոր, հրաման տվեց հայտարարել ամբողջ երկրում, որ բոլոր տղամարդիկ պարտավոր են ուղիղ կեսօրին զինված գալ քաղաքի հրապարակը, չեկողները մահապատժի կենթարկվեն:

Թագավորի հրամանը դուրս գալուն պես ամբողջ քաղաքում տարածվեց թմբակահարության ձայնը: Ինքը՝ արքա Պիկրոշովը, մինչև ճաշի պատրաստ լինելը, գնաց կարգի բերելու իր հրետանին: Ամիջապես թնդանոթները դրեցին սայլերի վրա, պաշար ու ռազմամթերք բարձեցին բազմաթիվ սայլերի վրա, փողոցներում սկսեցին ծածանվել դրոշակները:

Ճաշի ժամանակ թագավորը նշանակեց հրամանատարներ: Առաջապահ գորագնդի հրամանատար նշանակվեց պարոն Տրեպեյուն:^[19] Պարոն Տրեպեյունի գորագնդում հաշվվում էին մինչև 16014 հրացանակիրներ և 30011 վարձկան զինվորներ: Հրետանու

հրամանատար նշանակվեց պարոն Տուկդիլիոնը,^[20] և նրա հրամանատարության ներքո կար 914 թնդանոթ, բոմբարդ^[21] մորտիր,^[22] բազիլիկներ^[23] և այլ ծանր թնդանոթներ:

Ինքը թագավորը և իշխանագույնները նույնպես միացան զորքին: Երբ ամբողջ զորքը հավաքվել և պատրաստ էր արշավելու, թեթև հեծելագործի մի ջոկատ ուղարկեցին հետախույզության, թե չկա՞ն արդյոք մոտերքում դարանակալ թշնամիներ: Հետախույզները եկան հայտնեցին, որ ոչ մի տեղ դարանակալություն չկա և չորս կողմը կատարյալ հանգատություն է տիրում:

Այն ժամանակ Պիկրոշոյը հրամայեց զորքին շարժվել: Եվ ահա այդ ամբողջ զորաբանակը առանց որևէ կարգ ու կանոնի, ցաք ու ցրիվ առաջ շարժվեց, ջարդելով ու փչացնելով այն ամենը, ինչ որ ճանապարհին պատահում էր: Ոչ մի բան չէին խնայում զինվորները: Կով էր պատահում նրանց, կովն էին մորթում, ոչխար էր պատահում՝ ոչխարն էին քաշ տալիս տանում: Հավ, ճուտ, բադ, սագ, խոզ, խոճկոր. ինչ պատահում էր, բոլորը բռնում տանում էին: Ամեն ծառապտուղ՝ ընկույզ, խաղող, տանձ, խնձոր, բոլորը պոկոտում, ուտում, փչացնում էին, իսկ ծառերը ջարդում:

Բնակիչները ոչինչ չէին կարողանում անել թալանողների ու ավերողների դեմ: Նրանք անձնատուր էին լինում առանց դիմադրության և միայն խնդրում, աղաչում էին այդքան ավազակություն չանել:

— Մենք ձեզ ոչ մի վատություն չենք արել, — ասում էին նրանք զինվորներին, — ինչո՞ւ էք այդքան վնասներ հասցնում:

Իսկ զինվորները պատասխանում էին նրանց միայն ծիծաղով:

— Մենք ձեզ ցույց կտանք, թե ինչպես պետք է ուտել մեր կարկանդակները, — պատասխանում էին նրանք և շարունակում իրենց կողոպուտը:

Գլուխ VIII

Այն մասին, թե ինչպես է մի վարդապետ խաղողի այգին ազատում թշնամիների հարձակումից

Այդպիսի բարբարոսություններ կատարելով՝ զորքը հասավ մինչև Սելիե քաղաքը: Սելիիե քաղաքն էլ նրանք հիմնահատակ կործանեցին և առաջ գնացին ու հասան մի վանքի: Բայց վանքի դռները փակ էին և պարիսպները լավ պահպանված:

Այն ժամանակ զորաբանակի գլխավոր մասը առաջ շարժվեց դեպի Վեդի հունը, իսկ վանքի մոտ թողեցին յոթ հետևակ ջոկատ և երկու հարյուր տեզավորներ: Չինվորներն իսկույն սկսեցին քանդել այգին շրջապատող քարե պատերը:

Խեղճ վարդապետները չէին իմանում, սրբերից որին խնդրեն, որ ազատի իրենց այս փորձանքից և, համենայն դեպս, այնպիսի ուժով սկսեցին խփել վանքի զանգերը, որ բոլոր ազոավներին խրտնեցրին: Դրանից հետո նրանք սաղմոս ու շարական երգելով հանդիսավոր թափոր կազմեցին:

Այդ ժամանակ վանքում ապրում էր մի վարդապետ, որի անունը Խորտակող Ժան էր: Դա մի առողջ ու ամրակազմ մարդ էր, միշտ ուրախ, ժիր ու ճարպիկ և այնպիսի ուժեղ ձայն ուներ, որ մարդու ականջ էր խլացնում, իսկ որ գլխավորն է, ձեռքից ամեն

սատանայություն գալիս էր: Նա այնպիսի արագությամբ էր պատարագ մատուցում և երեկոյան հսկում կատարում, որ վարդապետները, մի անգամ երեսները չխաչակնքած, ժամերգությունն արդեն վերջացած էր լինում: Կարճ ասած՝ դրա նման վարդապետ աշխարհում չէր եղել:

Ահա հենց այդ վարդապետը, երբ լսում է խաղողի այգուց եկող աղմուկը, բակ է դուրս գալիս իմանալու, թե ինչ է կատարվում: Իսկ գինվորներն այդ ժամանակ պատը քանդել և մտել էին այգին, ուր մեծ ավերածություններ էին կատարում և փչացնում այն խաղողը, որից վարդապետները իրենց համար գինի էին պատրաստում: Միաբան ժանր, տեսնելով, որ գործերը վատ են, իսկույն վազեց մտավ եկեղեցին, որտեղ վարդապետները աղոթում էին ու ծոր տալով երգում:

— Տո կորե՛ք, գնացե՛ք դուք էլ, ձեր աղոթքներն էլ, — գոչեց հայր ժանր, — ավելի լավ չէր լինի, որ երգեիք՝ «Մնաք բարով կողովներ, խաղողաքաղը վերջացավ»: Ով գիտի թշնամին արդեն քարուքանդ է արել մեր այգին: Մենք մե՛ղք չենք, հապա մենք ի՞նչ ենք խմելու: Մնաս բարով հավիտյան, իմ բարի գինու գավաթ:

— Այդ ինչեր է գլխիցը դուրս տալիս այս գինեմոլը, — ասաց վանահայրը, — շտապ հեռացրեք դրան այստեղից և մութ սենյակում փակեցեք, որ չխանգարի ժամերգությանը:

— Իսկ որ գինի չլինի, ի՞նչ անենք, — առարկեց հայր ժանր, — չէ՞ որ դուք էլ, պատվարժան վանահայր, ինձնից պակաս չեք խմում կուշտ ճաշելուց հետո: Ոչ մի կարգին մարդ չպետք է հրաժարվի կոնծաբանելուց, երբ լավ գինի կա՝ այդպես է մեր վանքի կանոնը: Թողեք ձեր աղոթքը և լսեցեք՝ ինչ եմ ասում. ով գինու սիրահար է, թող գա իմ ետևից: Երդվում եմ սուրբ Անտոնիոսի անունով, մենք էլ գինու համ չենք տեսնի, եթե չփրկենք մեր այգին:

Այս ասելուց հետո հայր ժանր մի կողմ շարտեց իր վերարկուն, մի ահագին խաչափայտ առավ ձեռքը, որ մարդու բռունցքի հաստություն ուներ և նիզակի չափ երկար էր: Այդ փայտը ձեռքին դուրս վազեց եկեղեցուց և այնպիսի հարվածներ սկսեց տեղալ գինվորների գլխին, որ նրանք գլուխները բոլորովին կորցրին: Չարմանալու բան չկա այստեղ: Չհնվորները իրենց գենքերը վայր էին դրել, որ կարողանան որքան կարելի է շատ խաղող քաղել և ուտել: Թմբկահարները ծակել էին իրենց թմբուկները և լիքը լցրել քաղցր խաղողով: Նույն էին արել շեփորահարները, իրենց շեփորները լիքը լցնելով հասած ու համեղ խաղողով:

Այսպես ուրեմն, մեր հայր սուրբը, ըստ հին սովորության, աջ ու ձախ գանակոծելով ջարդում էր կողոպտիչների գլուխները և նրանց հարյուրներով գետին տապալում:

Խաղողի վազերի տակ թաքնվածները հարված էին ստանում վզակոթերին, փախչողներին հարված էր հասցնում մեջքներին, ծառերը բարձրացողներին հարվածում էր փայտի ծայրով, և ոչ մի մարդու չէր խնայում: Իսկ եթե մեկը գոչում էր՝ «Հայր սուրբ, ես անձնատուր եմ լինում, խնայի՛ր ինձ», — նա պատասխանում էր՝ «Անձնատուր եղիր, բայց էլի ես քո հոգին սատանի փայ կանեմ», և վերջացնում էր նրա հետ իր հաշիվները:

Դա իսկապես որ մի սարսափելի և նմանը չունեցող տեսարան էր:

Մեկը գոռում էր՝ «Սուրբ Վառվառե՛», մյուսը՝ «Գևո՛րգ», երրորդը՝ «Աստվածամայր, ազատի՛ր մեզ սրա ձեռքից: Եվ այնպիսի մի աղաղակ էր բարձրացել չորս կողմը, որ վարդապետները վազեվազ դուրս եկան եկեղեցուց և սկսեցին խոստովանեցնել

վիրավորներին: Իսկ միաբանության ավելի ստորին անդամները և արեղաները վերարկուները հանեցին, կախ արին ցանկապատից, մի-մի մեծ դանակ առան ձեռքները և առանց երկար մտածելու ժամ վարդապետին օգնության հասան: Դրանք էլ ետևից հարձակվեցին զինվորների վրա: Շուտով թշնամի գորքերը ջախջախվեցին: Այսպիսով շնորհիվ հայր սուրբ ժամի զարմանալի քաջության, այդ օրը թշնամի զինվորներից կոտորվեցին 13.622 հոգի, և վանքի այգին ազատվեց ավերումից:

Գլուխ IX

Այն մասին, թե ինչպես է Գրանգուզիեն պատրաստվում պատերազմելու Պիկրոշոյի հետ

Այդ նույն ժամանակ անեն բանից բոլորովին անտեղյակ բարեսիրտ Գրանգուզիեն, բուխարու մոտ նստած, խանձված փայտի ծայրով խզբզում էր հատակի վրա և, տասներորդ անգամ պատմելով իր կնոջն ու տնեցիներին անցած-գնացած ժամանակի պատմությունները՝ սպասում էր, որ շագանակները բուխարիում խորովվեն:

Հանկարծ ներս է մտնում Պիլո անունով մի հովիվ և ամեն բան պատմում նրան: Ասում է, թե Պիկրոշոյ թագավորը ավերել է ամբողջ երկիրը, անվնաս է մնացել միայն մի այգի, որ փրկել է հայր սուրբ ժամը: Այժմ Պիկրոշոյ թագավորը անցել է արդեն Վեդու հունը, գրոհ տալով վերցրել է Լայ-Ռոշ-Կլերմո քաղաքը, որտեղ և ամրացել է իր գորքով:

— Այ, այ, բարի մարդիկ, այդպես էլ բան կլինի, — ասաց Գրանգուզիեն, — Պիկրոշոյը՝ իմ հին բարեկամն ու դաշնակիցը, հարձակվում է ինձ վրա, դա հնարավոր բան է: Ո՛ւմ խորհրդով է նա դա անում: Ո՛հ, տեր իմ, օգնիր ինձ, մի ճանապարհ ցույց տուր, ի՞նչ անեն: Ախր Պիկրոշոյին ես ոչ մի վատ բան չեմ արել, ընդհակառակը, միշտ օգնել եմ նրան թե՛ փողով, թե՛ խորհրդով և թե՛ գորքով: Մի՞թե ես պետք է այժմ իմ ծերության օրոք պատերազմի դուրս գամ: Մի՞թե ես պետք է այժմ իմ հոգնած մարմինը գրահով պատեմ և դողդոջուն ձեռքս նիզակ առնեմ իմ երկիրը պաշտպանելու համար: Ո՛չ, ո՛չ, պետք է ամեն միջոց գործ դնել, որ այս գործը խաղաղությամբ վերջանա, այսպես է իմ հաստատուն վճիռը:

Այնուհետև Գրանգուզիեն խորհրդի նիստ հրավիրեց և հայտնեց վիճակը: Վճռվեց մի բանիմաց և զգույշ մարդ ուղարկել Պիկրոշոյի մոտ՝ իմանալու՝ ինչու է նա այդպես անակնկալ խախտել խաղաղությունը և ներխուժել ուրիշի երկիրը: Բացի այդ, որոշեցին Փարիզից ետ կանչել Գարգանտյուային, որ հարկ եղած դեպքում օգնի Պիկրոշոյի հախից գալու:

Գարգանտյուային մի երկար նամակ գրեցին, իսկ Պիկրոշոյի մոտ որպես դեսպան ուղարկեցին Ուլրիխ Գալլեին, որ մի իմաստուն ու համեստ մարդ էր և որին շատ անգամ էր ապավինել Գրանգուզիեն իր կյանքի ամենադժվար ընթացքներին: Այդ բարի մարդը անմիջապես ճանապարհ ընկավ, բարեհաջող անցավ գետն ու հարցուփորձ արավ այնտեղի ջրաղացպանին, թե ինչ է պատահել այդ կողմերում:

— Ինչ ասեմ, — պատասխանեց ջրաղացպանը, — վայն եկել է մեզ տարել, այդ անիծվածները ինձ մոտ ոչ աղ են թողել, ոչ մաղ, ինչ կար չկար, բոլորը տարել են: Հիմա նրանք փակվել նստել են Լյա-Ռոշ-Կլերմո քաղաքում և ձեզ խորհուրդ չեի տա գիշերով գնալ այնտեղ: Կարող եք պահակի հանդիպել և ձեր գլխին մեծ փորձանք բերել:

Գալլեն գիշերեց ջրադացպանի մոտ և առավոտյան իր փողհարի հետ միասին մոտեցավ բերդի դարպասին: Փողհարը փչեց փողը, և Գալլեն պահանջեց, որ իրեն թույլ տան գնա Պիկրոշոլի մոտ մի շատ կարևոր գործով: Թագավորը, սակայն, թույլ չտվեց, որ բերդի դարպասը բանան, նա ինքը դուրս եկավ պարսպի վրա և հարցրեց դեսպանից:

— Ի՞նչ նոր բան կա, ի՞նչ եք ուզում ինձ ասել, ասացեք:

Դեսպանը պատասխանեց թագավորին մի երկար ճառով, որի մեջ համոզում էր Պիկրոշոլին խելքի գալ և վերջ դնել իր տմարդի վարմունքին: Դեսպանը հավատացնում էր Պիկրոշոլին, որ Գրանգուզիեն ո՛չ խոսքով և ո՛չ էլ գործով նրան ոչ մի վնաս չի հասցրել, եղել է միշտ լավ բարեկամ ու լավ հարևան և նրա համար չի խնայել ոչ մի բան: Դեսպանը վերջացրեց իր խոսքը պահանջելով, որ Պիկրոշոլը անմիջապես վերադառնա իր երկիրը, իսկ պատերազի պատճառած վնասների համար վճարի Գրանգուզիեին հազար ոսկի: Հինգ հարյուր ոսկին դեսպանն առաջարկում էր վճարել վաղը, իսկ մնացած հինգ հարյուրը՝ եկող մայիսին: Որպես պատանդ Գալլեն պահանջում էր դուրս դը Տուրնեմուլին^[24] և իշխան դը Գրատելին:^[25]

Երբ Ուլրիխ Գալլեն լռեց, նրա ամբողջ ճառին Պիկրոշոլը միայն մի պատասխան տվեց:

— Շատ լավ, եկեք ստացեք, եկեք ստացեք, ձեզ այնպես ստանալ ցույց կտանք, որ եկած ճամփաներդ մոռանաք, և այնպիսի կարկանդակ ուտեցնենք, որ կոկորդներումդ կմնա:

Գալլեն դատարկաձեռն վերադարձավ իր թագավորի մոտ:

— Ի՞նչ կասես, բարեկամ, ի՞նչ լուր ես բերել ինձ համար, — հարցրեց նրան Գրանգուզիեն:

— Դժվար է նրան բան հասկացնել, — պատասխանեց Գալլեն, — կարծես խելքը կորցրել է:

— Երևում է, որ կորցրել է, — տրտում ու տխուր ասաց Գրանգուզիեն, — բայց իմացա՞ք գոնե, ինչու է մեզ վրա հարձակվել:

— Դրա մասին նա ոչինչ չասաց, — պատասխանեց Գալլեն, — միայն ինչ-որ կարկանդակների մասին մի բան ասաց: Չլինի՞ թե մեկն անպատվել է նրա կարկանդակագործներին:

— Այդ մենք պետք է պարզենք, — մտախոհ ասաց Գրանգուզիեն, — անկարելի բան է, որ առանց պատճառի նա հարձակվեր մեզ վրա:

Քննությունն սկսեցին, և պարզվեց, որ իսկապես Պիկրոշոլի կարկանդակագործներից գոռով հինգ դյուժին կարկանդակ են առել, թեև այն էլ պետք է ասել, որ կարկանդակների գինը վճարել են և Մարկեն առաջինն ինքն է մտրակով հարվածել խեղճ Ֆորժիեին:

Խորհուրդը վճռեց, որ Գրանգուզիեն պետք է պաշտպանվի:

Բայց Գրանգուզիեն պատասխանեց.

— Քանի որ հարցը մի քանի կարկանդակների մասին է, ես կաշխատեմ գործը խաղաղությամբ վերջացնել: Ոչ մի ցանկություն չունեմ ծերությանս հասակում պատերազմ վարել:

Նույն այդ գիշեր Գրանգուզիեն հրամայեց հինգ սայլ շատ լավ կարկանդակ պատրաստել և դրա համար գործածել ամենալավ յուղը և ուզածի չափ ձվի դեղնուց ու շաքար:

Մարկեի վերքերն կապող սափրիչներին վարձատրելու համար Գրանգուզիեն հատկացրեց 700.003 ոսկի, իսկ իրեն՝ Մարկեին, պարգևեց Լյա-Պոմարդիեր ավանը, որպես մշտական սեփականություն:

Գալլեն էլ նորից հրաման ստացավ կարկանդակները հետն առած գնալ Պիկրոշոլի մոտ, որպեսզի գործը խաղաղությամբ վերջացնի:

Ճանապարհին Գալլեն կարգադրեց ծառի կանաչ ճյուղեր կտրտել և յուրաքանչյուր սայլապանի ձեռքը մի-մի ճյուղ տալ: Մի ճյուղ էլ ինքը Գալլեն վերցրեց: Դրանով նա ուզում էր ցույց տալ, որ եկել են խաղաղություն խնդրելու և ոչ մի ցանկություն չունեն պատերազմելու:

Երբ հասան քաղաքի դարպասի մոտ, Գալլեն նորից խնդրեց, որ իրեն թույլ տան գնալ Պիկրոշոլի մոտ:

Բայց այս անգամ Պիկրոշոլն ամենևին չցանկացավ խոսել Գալլեի հետ և հրամայեց ասել նրան, որ ինչ ասելիք ունի թող ասի կապիտան Տուկդիլիոնին, որն այդ ժամանակ պարսպի վրա թնդանոթներ էր լցնում:

— Պարոն, — ասաց Գալլեն Տուկդիլիոնին, — իմ տերը, Գրանգուզիեն, չի ցանկանում, որ կարկանդակների պատճառով մեր և ձեր մեջ թշնամություն լինի: Այն հինգ դյուժին կարկանդակների փոխարեն, որ մեր հովիվները զոռով առել են ձեզանից, մենք վերադարձնում ենք ձեզ ամբողջ հինգ սայլ ամենալավ տեսակի կարկանդակներ: Ահա այս կարկանդակները, բարեհաճեցեք ընդունել: Բացի այդ, մենք առաջարկում ենք ձեզ 700.003 ոսկի, իսկ վիրավորված կարկանդակագործին պարգևում ենք Լյա-Պոմարդիեր ավանը: Եկեք հաշտվենք ու խաղաղ սպրենք: Թողեք մեր բերդը և գնացեք ձեր տները, մենք առաջվա պես լավ բարեկամներ կլինենք:

Տուկդիլիոնը զեկուցեց Պիկրոշոլ թագավորին Գալլեի ասածը:

Չեկուցելիս Տուկդիլիոնը բարձր ծիծաղելով ասում էր.

— Այդ ողորմելի ռամիկները, աստված վկա, վախից սրտանաք են եղել, իսկ Գրանգուզիեն՝ այդ խղճուկ հարբեցողը, ահ ու սարսափից գլուխը բոլորովին կորցրել է: Կոնծելում նա շատ քաջ է, բայց երբ բանը հասնում է կռվի, շատ է խեղճանում: Չգիտեմ՝ դուք ինչպես կհրամայեք, տե՛ր արքա, իսկ ես այն կարծիքին եմ, որ կարկանդակները պետք է վերցնենք, իսկ պատերազմը իր կարգով շարունակենք: Մի՞թե նրանք իսկապես կարծում են, թե կարող են մեզ խաբել իրենց մի քանի կարկանդակներով: Ինչպես երևում է, նրանք ոչ մի հարգանք չունեն ձեր նկատմամբ:

— Այդպես հա՛, — պատասխանեց թագավորը, — սուրբ Հակոբը գիտենա, ես նրանց փոշին քամումն կտամ: Ինչպես ասացիք, այնպես էլ արեք:

— Բայց ես պետք է ձեզ նախազգուշացնեմ, տե՛ր արքա, — ասաց Տուկդիլիոնը, — որ պարեն քիչ ունենք, եթե Գրանգուզիեն բերդը պաշարի, գործներս շատ վատ կլինի:

— Եղած պարենը բավական է, — պատասխանեց Պիկրոշոլը, — մենք այստեղ պատերազմելո՛ւ ենք ելել, թե ուտելու:

— Իհարկե, պատերազմելու, — ասաց Տուկդիլիոնը, — բայց սոված փորով պատերազմել չի լինի:

— Վերջ տվեք ձեր շատախոսությանը, — ասաց Պիկրոշուրը, — գնացեք, ինչ բերել են, վերցրեք:

Եվ այսպես էլ արեցին: Հինգ սայլի բեռները ամբողջապես վերցրին, վերցրին նաև ոսկին, իսկ մարդկանց ազատ արձակեցին՝ խստորեն պատվիրելով մյուս անգամ բերդին չմոտենալ: Այսպես ուրեմն, Ուրիխ Գալլեն երկրորդ անգամ լուր բերեց Գրանգուզիեին, թե ոչ մի հույս չկա խաղաղությունը վերականգնելու և թե անհրաժեշտ է Պիկրոշուրի դեմ կյանքի ու մահու պատերազմի դուրս գալ:

Գլուխ X

Այն մասին, թե ինչպես Պիկրոշուր թագավորը որոշում է տիրել ամբողջ աշխարհը

Երբ կարկանդակները սայլերից իջեցրին, Պիկրոշուրին մոտեցան դուքս դը Տերնեմուլը, արքայազն դը Գրատելն ու կապիտան Մերդայլը և ասացին.

— Տեր արքա, մենք ուզում ենք ձեզ դարձնել աշխարհի ամենաբախտավոր և ամենաքաջ թագավորը:

— Խնդրեմ, խնդրեմ, միայն գլուխներդ ծածկեցեք:^[26]

— Մեծապես շնորհակալ ենք, — պատասխանեցին նրանք: — Ահա թե ինչ ենք ուզում առաջարկել ձեզ: Այս բերդը պահպանելու համար այստեղ մի փոքր զորամաս թողեք որևէ կապիտանի հրամանատարությամբ, իսկ մնացած բանակը բաժանեցեք երկու մասի: Մի մասը կարշավի Գրանգուզիեի վրա և, իհարկե, առանց դժվարության նրա դատաստանը կտեսնի: Մենք այդ ստոր արարածից շատ փող կառնենք: (Մենք նրան «ստոր արարած» ենք անվանում, որովհետև միայն ստոր արարածներն են կարողանում փող դիզել, իսկ ազնվագարն թագավորները սովորաբար ոչ մի կոպեկ չեն ունենում): Չորաբանակի մյուս մասը կմոտենա ծովին և առանց մի որևէ դիմադրության հանդիպելու կվերցնի բոլոր քաղաքները, ամրոցներն ու բերդերը: Հետո նավ կնստեն և նավարկելով Պորտուգալիայի ափերի երկարությամբ՝ կկողոպտեն բոլոր ծովափնյա քաղաքները մինչև Լիսաբոն: Ո՛վ սիրտ կանի մեր դեմ դուրս գալ: Իսպանիան էլ մեզ պետք է հպատակվի, որովհետև նրա բնակիչները բոլորը ապուշներ են: Հետո դուք կանցնեք Ջիբրալտարի նեղուցով, որը, ի հիշատակ ձեր քաջագործության, այնուհետև կկոչվի Պիկրոշուրի ծով: Դրանից հետո Աֆրիկայի ավազակապետ Բարբարոսսան^[27] ձեր գերին կդառնա:

— Ես նրան կներեմ, — ասաց Պիկրոշուրը:

— Շատ լավ կանեք, — ասացին նրանք, — այն դեպքում միայն, եթե նա համաձայնի մեր հավատն ընդունել: Այնուհետև դուք կտիրեք Ալժիրը, Թունիսը, Կորսիկա և Սարդինիա կղզիները, կվերցնեք Չենովան, Ֆլորենցիան, հետո հերթը կհասնի և Հռոմին: Երևի խեղճ պապը երկուդից լեղապատառ կլինի:

— Ազնիվ խոսք եմ ասում, ես նրա հողաթափերը^[28] համբուրողը չեմ, — ասաց Պիկրոշուրը:

— Երբ ամբողջ Իտալիան տիրած կլինեք, — շարունակեցին նրանք, — մենք մեր ձեռքը կզցնեք Միջերկրական ծովի բոլոր կղզիները և հետո կանցնենք Ասիա: Այն ժամանակ, տե՛ր, դու պահպանես Երուսաղեմը, — Սուլթանը ստիպված կլինի ընդմիջտ հրաժեշտ տալու Երուսաղեմին:

— Ես այնտեղ կկառուցեմ Սողոմոնի^[29] տաճարը, — ասաց Պիկրոշոյը:

— Ոչ, դեռ դրա ժամանակը չէ, — պատասխանեցին նրանք: — Նախ մենք պետք է տիրենք ամբողջ Փոքր Ասիան և հասնենք մինչև Եփրատ գետը:

— Ազնիվ խոսք, դուք բոլորովին խելքներդ թոցրել եք, — ասաց Պիկրոշոյը:

— Ինչո՞ւ, — հարցրին նրանք:

— Չէ՞ որ այնտեղ անապատից զատ ուրիշ բան չկա, և մենք բոլորս ծարավից կկոտորվենք:

— Մենք դրա մասին էլ ենք մտածել, — ասացին նրանք: — 9014 մեծ-մեծ նավեր, որոնք բարձված կլինեն ամենալավ և աշխարհումս նմանը չունեցող գինով, Միջերկրական ծովով կգան Յավա, որտեղ սպասելիս կլինեն 220.770 ուղտ և 1600 փիղ: Փղերին կբռնենք որս անելիս: Փղերը և ուղտերը գինին կբերեն մեր ետևից: Մի՞թե այդքան գինին չի բավականացնի ձեզ:

— Իհարկե ոչ, — պատասխանեց Պիկրոշոյը, — չէ՞ որ այնտեղ սաստիկ շոգ է:

— Էհ, ինչ եք ասում, — պատասխանեցին նրանք, — այնպիսի մի աշխարհակալ, ինչպիսին դուք եք, մի՞թե չի կարող իր համար ամեն տեսակ հարմարություններ ստեղծել:

— Ասենք այդ էլ ճիշտ է, — պատասխանեց Պիկրոշոյը: — Բայց ի՞նչ պիտի անի այդ ժամանակ մեր այն զորքը, որ արդեն հաղթած կլինի այդ գարշելի գինեմոլ Գրանգուզիեին:

— Ինչ ասել կուզի, որ նրանք էլ ձեռները ծալած, պարապ չեն նստի: Մենք շատ շուտով նրանց կհանդիպենք: Նրանք այդ ժամանակ նվաճած կլինեն Ֆրանսիան, Հոլանդիան, անցած կլինեն Հռենոս գետը, և մենք այդտեղ կհանդիպենք իրար, որովհետև ծովային հաղթանակներից հետո արդեն վերադարձած կլինենք: Այնուհետև միացյալ ուժերով հարձակում կգործենք Պրուսիայի, Լեհաստանի, Լիտվայի ու Ռուսաստանի վրա, ու այդ բոլոր երկրները մինչև Սառուցյալ օվկիանոսը մեր ձեռքում կլինեն:

— Պրուսիան, Լիտվան և Լեհաստանը ես ձեզ կտամ ձեր կատարած ծառայությունների համար, — ասաց Պիկրոշոյը:

— Ախ, տե՛ր արքա, որքան վեհանձն եք: Ընդունեցեք մեր անհուն երախտապարտությունը: Աստված ձեզ երկար կյանք տա:

Այս խոսակցությանը ներկա էր մի հին ռազմիկ Եխեֆրոն^[30] անունով:

— Վախենում եմ, որ դուք արջին չսպանած՝ նրա կաշին բաժանելու մասին եք խոսում այժմ: Ձեր ինչի՞ն է պետք այդքան երկրներ տիրելը և ի՞նչ պիտի լինի դրա վերջը:

— Այն կլինի, — պատասխանեց Պիկրոշոյը, — որ երբ տուն վերադառնանք, փառավորապես կհանգստանանք:

— Այո, եթե վերադառնաք, — ասաց Եխեֆրոնը, — բայց չմոռանաք, որ ձեր ծրագրած ճանապարհը և՛ երկար է, և՛ վտանգավոր:

— Գայլերի երկյուղից անտառ չմտնենք, ի՞նչ է, — ասացին զորավարները, — ուրեմն ձեռքներս ծալած տանը նստենք ու բուխարու մոտ տաքանանք: Փառք աստծո, մենք պառավ տատիներ չենք:

— Բավական է, — ասաց Պիկրոշոյը, — վերջ տվեք վեճերին: Մի բան միայն ինձ մեծ երկյուղ է պատճառում՝ որ այդ անիծված Գրանգուզին մեզ թիկունքից չխփի, երբ մենք Ասիայում լինենք:

— Այդ ցավին հեշտ է դարման անել, — ասաց կապիտան Մերդայը: — Մենք խիստ հրաման կուղարկենք մոսկովցիներին,^[31] և նրանք մեզ օգնության կուղարկեն 450.000 ընտիր զորք: Եթե միայն ինձ փոխարքա նշանակեք, այն ժամանակ ես ցույց կտամ, թե ով եմ: Ես բոլոր թշնամիներին ատամներով կկրծոտեմ, ոտնատակ կտամ, կկոտորեմ, թոզը քամուն կտամ, բոլոր բոլորին ջարդուփշուր կանեմ:

— Լավ, լավ, բավական է, — ասաց Պիկրոշոյը: — Այլևս չհետաձգենք գործը, ով սիրում է ինձ, թող զա իմ ետևից:^[32]

Գլուխ XI

Այն մասին, թե ինչպես է Գարգանտյուան շտապում օգնելու իր հորը

Ուղիղ նույն ժամին, երբ Պիկրոշոյ թագավորը ծրագրում էր տիրել ամբողջ աշխարհը, Գարգանտյուան հոր նամակը կարդալուց հետո Փարիզից մեկնեց հայրենիք: Գարգանտյուան գնում էր իր մեծ ձին հեծած, իսկ Պոնոկրատը, ախոռապետ Գիմնաստը, Եվդեմոնը և մնացած ամբողջ շքախումբը գնում էին նրա ետևից սովորական ձիեր հեծած և սայլերի վրա բարձած հետները տանում էին իրենց տիրոջ գրքերն ու գիտական պարագաները:

Նրանք շուտով հասան Պարիյի: Այստեղ ազարակատիրոջից իմացան, որ Պիկրոշոյը Լյա-Ռոշ-Կլերմոնն ամրացրել է ու այնտեղ նստել, իսկ կապիտան Տրիպեն շրջակայքում ինչ ուզում անում է և պատահողին կողոպտում:

Որպեսզի իմանա մոտերքում թշնամիներ կան թե ոչ, Գարգանտյուան հետախույզներ ուղարկեց: Գիմնաստն էլ ցանկացավ հետախույզության գնալ: Գարգանտյուան թույլ տվեց: Եվ Գիմնաստը ճանապարհ ընկավ տեղացիներից մեկի հետ, որ այդ կողմերին շատ լավ ծանոթ էր:

Երկու վերստ հազիվ գնացած լինեին, երբ հանկարծ նրանց շրջապատեցին թշնամիները:

— Կանգնի՛ր, — ձայն տվեցին նրանք Գիմնաստին:

— Պարոններ, — ասաց Գիմնաստը, մոտենալով զինվորներին, — ես մի խեղճ սատանա եմ, խնդրում եմ խնայեք ինձ: Մոտս մի քիչ փող կա, եկեք գնանք միասին կոնձենք, բացի այդ, իմ ձին էլ ծախսենք ու փողը մեր մեջ հավասար բաժանենք: Լավ կլիներ ինձ էլ ընդունելիք ձեր ջոկատի մեջ: Ես էլ ձեզանից պակաս չեմ: Ոչ ոք ինձանից լավ չի կարող հավ բռնել, փետրահան անել, տապակել և ուտել: Ուրեմն, խմում եմ ձեր կենացը:

Այս ասելով նա իր ուղեւորակի բերանը բաց արեց և սրվակը մոտեցրեց բերանին:

Չինվորները բերանը բաց նայում էին Գիմնաստին, բայց հենց այդ բուպեին վազելով մոտեցավ կապիտան Տրիպեն տեսնելու, թե ինչ է պատահել:

— Խմեցեք, պարոն կապիտան, — ասաց Գիմնաստը, առաջարկելով նրան իր ուղեւորականը, — ես արդեն համը տեսա, հիանալի գինի է:

Այս ի՞նչ բան է, — գոչեց Տրիպեն, — այս սրիկան մեզ վրա ծիծաղո՞ւմ է, ինչ է: Ասա ի՞նչ մարդ ես:

— Ես մի խեղճ սատանա եմ, — պատասխանեց Գիմնաստը:

— Առաջին անգամն եմ տեսնում, — ասաց կապիտան Տրիպեն, — որ խեղճ սատանան այսպիսի գեղեցիկ ձի հեծած լինի: Ուստի, պարոն խեղճ սատանա, ձիուցդ վար իջիր, ձիդ պետք է ես վերցնեմ: Իսկ եթե ձիդ չուզենա, որ հեծնեմ իր վրա, այն ժամանակ քեզ կթամբեմ ու քեզ վրա կնստեմ: Ես առհասարակ շատ եմ սիրում, որ սատանաները ինձ ման ածեն:

Երբ զինվորները այդ խոսքերը լսեցին, կարծեցին, որ նա իրոք սատանա է, միայն ծպտված, քանի որ ինքը կապիտանը նրան սատանա էր կոչում: Նրանցից շատերը սկսեցին երեսները խաչակնքել, իսկ ազատ հրաձիգների կապիտան բարեսիրտ Ժակը հանեց գրպանից աղոթագիրքը և որքան կարող էր բարձր գոռաց:

— Դե, չքվի՛ր, կեղտոտ արարած:

Բայց Գիմնաստը չքվեց: Չինվորները շշկվեցին և նրանցից շատերը փախան:

Այդ ժամանակ Գիմնաստը վեր ցատկեց, շուռ եկավ ու կանգնեց ձիու թամբի վրա՝ ետևն արած դեպի թշնամիները:

— Վայ՛-վայ՛-վայ՛, — ասաց նա, — վատ են գնում գործերս, վատ են գնում գործերս:

Այդ ասելուց հետո սկսեց պտտվել մի ոտի վրա առանց հավասարակշռությունը կորցնելու:

— Իսկապես որ սրա արածը մարդու գործ չի, — ասաց Տրիպեն:

— Իսկ ես էի սխալվեցի, — պատասխանեց Գիմնաստը:

Այդպես խոսելով նա աջ ձեռքի բուրձ մատով հենվեց թամբին, միանգամից ոտները վեր բարձրացրեց և մնաց գլխի վրա կանգնած: Այդ դիրքով նա երեք անգամ պտույտ եկավ իր շուրջը, ապա հանկարծ նորից շուռ եկավ և կնավարի նստեց ձիու վրա: Այնուհետև ոտքը գցեց ձիու մյուս կողմը, գլուխկոնձի տվեց և նստեց թամբին: Դրանից հետո նա նորից կանգնեց թամբի վրա, թևերը պարզեց երկու կողմ, սկսեց պտույտ գալ և որքան ուժ ուներ գոռալ:

— Ես դիվոտել, կատաղել եմ, հեյ սատանաներ, կատաղել եմ, բռնեցեք, բռնեցեք ինձ:

Իսկ նրա շուրջը կանգնած հիմարներն ասում էին միմյանց.

— Ազնիվ խոսք, սա անպատճառ կամ սատանայի ծնունդ է, կամ ծպտված սատանա: Տեր, դու ներիր մեզ, մեղավորներիս:

Սրանք էլ մեկը մյուսի ետևից ծկում գնում էին զանազան կողմեր:

Գիմնաստն այս որ տեսավ, հանկարծ ձիուց ցած թռավ, սուրը պատյանից հանեց և հարձակվեց թշնամիների վրա: Որին տեսավ խփեց, գետին տապալեց: Ոչ որ սիրտ չէր անում նրա վրա հարձակվել, կարծելով, որ նա մարդ չէ, այլ կատաղած դև: Միայն Տրիպեն փորձեց թրի հարվածով նրա գլուխը մեջտեղից կես անել, բաց Գիմնաստի սաղավարտն այնքան ամուր էր, որ թրի հարվածը միայն նրա գլուխը ցնցեց առանց որևէ վնաս հասցնելու: Գիմնաստը ետ դարձավ և լախտով անպես խփեց Տրիպենի գլխին, որ սա անշնչացած գետին գորվեց:

Այնուհետև Գիմնաստը թռավ ձիու վրա և ընկերոջ հետ սրարշավ վերադարձավ Գարգանտյուայի մոտ:

Գլուխ XII

Այն մասին, թե ինչպես Գարգանտյուան կործանեց Վեդի ամրոցը

Հենց որ Գարգանտյուան իմացավ, որ թշնամու ամբողջ զորքը բաղկացած է ավազակներից ու կողոպտիչներից, որոնց մեջ ոչ մի կարգ ու կանոն չկա, իսկույն նստեց իր ձին և համարձակ առաջ գնաց թշնամիների դեմ: Ճանապարհին տեսավ մի կաղնի, որ անել էր անհիշելի ժամանակներից և չորս կողմի բոլոր ծառերից ամենաբարձրն էր:

— Այ, իմ ուզածն էլ հենց սա էր, — ասաց Գարգանտյուան և առանց դժվարության դուրս քաշեց կաղնին ու հանեց գետնից իր արմատներով: Հետո ճյուղերն ու արմատները պոկեց դեմ գցեց և իր համար մի լավ մահակ շինեց:

Այդ ժամանակ նրա ձին այնպես միզեց, որ չորս կողմը յոթ վերստանոց մի ահագին լիճ գոյացավ: Այդ բոլորը գնաց թափվեց Վեդի հունը, որից գետը վարարեց, դուրս եկավ ափերից, և թշնամիների ամբողջ ոհմակը ջրասույզ եղավ: Կարողացան ազատվել միայն նրանք, ովքեր մի կերպ փախան դեպի ձախակողմյան բլուրները:

Գարգանտյուան մոտեցավ Վեդի անտառին և իմացավ, որ ամրոցում մնացել են թշնամիների երկու ջոկատ:

— Է՛յ, ովքե՛ր կաք այդտեղ, — գոչեց նա ամբողջ կոկորդով մեկ, — ամրոցում մարդ կա թե ոչ, թե կա, դուրս եկեք ջհանդամի ծոցը կորեք, քանի ուշ չէ, թե չէ վայն եկել է ձեզ տարել:

Այդ ժամանակ թնդանոթաձիգ ավազակներից մեկը նշան բռնեց և կրակեց: Արկը կպավ ուղիղ Գարգանտյուայի քունքին:

— Այս ի՞նչ բան է, — զարմացած հարցրեց Գարգանտյուան, — այս ո՞վ է խաղողի կորիզներ շարտում ինձ վրա: Ես հիմա ցույց կտամ, թե ում հետ ինչպիսի կատակ կարելի է անել:

Բայց այդ ժամանակ բոլոր թնդանոթաձիգները կանգնած էին արդեն իրենց թնդանոթների մոտ և այնպիսի կրակ բաց արին, որ կարճ ժամանակում 9025 անգամ թնդանոթ արձակեցին: Եվ նրանք բոլորը նշան էին բռնում Գարգանտյուայի գլխին:

— Պոնոկրատ, սիրելի բարեկամ, — գոչեց Գարգանտյուան երկու ձեռքով պաշտպանվելով ամեն կողմից իր վրա թռչող արկերից, — որտեղի՞ց են գալիս այս անիծված ճանճերը: Այդ ուռենուց մի ոստ կտրիր, տուր, որ դրանց քշեմ, թե չէ դրանց հախից ոչ մի կերպ չեմ կարողանում գալ:

Բայց երբ Պոնոկրատը նրան ասաց, որ դրանք ճանճեր չեն, այլ թնդանոթներից արձակված արկեր, Գարգանտյուան սաստիկ զայրացավ և իր մահակով այնպիսի ուժով խփեց ամբողջ պատերին, որ հենց առաջին հարվածից երկու աշտարակ հիմնովին կործանվեց: Այնուհետև Գարգանտյուան սկսեց աջ ու ձախ հարվածել իր մահակով, մինչև որ ամբողջ ամբողջը վերածեց ավերակների, և բոլոր թշնամիները ոչնչացան ավերակների տակ:

Թշնամիներին այդպիսի դաս տալուց հետո նրանք անարգել անցան Վեդի հունով գետի մյուս ափը և շտապ շարունակեցին իրենց ճանապարհը դեպի Գրանգուզիեի դոյակը:

Գլուխ XIII

Այն մասին, թե ինչպես էին Գարգանտյուայի մագերից թնդանոթի արկեր թափվում

Հոր հետ ողջագուրվելուց հետո Գարգանտյուան գնաց իր սենյակը ճանապարհի շորերը փոխելու և գլուխը սանրելու: Սանրվելու համար Գարգանտյուան գործ էր ածում մի ահագին սանր, որի երկարությունը կլիներ մոտ հարյուր սաժին, իսկ ատամները շինված էին փղի ամբողջական ժանիքներից: Գարգանտյուան գլուխը սանրեց թե չէ, թնդանոթի արկերն սկսեցին թափվել սեղանի վրա: Գրանգուզիեն սարսափեց, կարծելով թե դրանք միջատներ են:

— Աստված իմ, — գոչեց նա, — որդիս, ջիհի թե այդ թռչունները դու Մոնտեգյուից ես բերել մեզ մոտ: Ես չէի էլ մտածում, որ Պոնոկրատը այդ զգվելի դպրոցն է տվել քեզ:

— Տեր իմ, արքա, — ասաց Պոնոկրատը, — մի՞թե կարծում եք, ես թույլ կտայի, որ իմ սանը մտնի մի այդպիսի զագրելի տեղ: Այն ժամանակ ավելի լավ կլիներ, որ նա ժամանակն անցկացներ ամենակեղտոտ մուրացիկների շրջանում, քան հաճախեր Մոնտեգյուի դպրոցը: Պետք է իմանաք, որ այդ դպրոցում ուսուցիչները աշակերտների հետ շատ ավելի վատ են վարվում, քան դուք ձեր շների հետ: Ճշմարիտն ասած՝ այդ դպրոցն ավելի բանտի է նման, քան դպրոցի: Ես որ Փարիզի թագավորի տեղը լինեի, այդ դպրոցի բոլոր ուսուցիչներին իրենց դիրեկտորի հետ միասին կկախեի միևնույն գերանից՝ նրանց գործած դաժանությունների համար:

Այս ասելուց հետո Պոնոկրատը բարձրացրեց արկերից մեկն ու ավելացրեց՝

— Այս այն ռումբերն են, որոնցով մըբակոծել են ձեր որդուն Վեդի անտառում: Թշնամու վրա, ճիշտ է, դա շատ թանկ է նստել, բայց նա վերջնականապես դեռ հաղթված չէ: Մենք պետք է հալածենք թշնամուն և թույլ չտանք, որ նա շունչ քաշի, եթե ոչ նա շուտով կարող է նորից ուժեր հավաքել և մեր դեմ դուրս գալ:

— Դա շուտ լինելու բան չէ, — ասաց Գրանգուզիեն, — այդ պատճառով ես ուզում եմ ձեզ հյուրասիրել, չէ՞ որ դուք իմ ամենացանկալի հյուրն եք:

Եվ ահա թե ինչ պատվիրեց Գրանգուզիեն խորովել ընթրիքի համար.

16 եգ, 3 երինջ, 32 հորթ, 63 ուլ, 96 ոչխար, 300 խոճկոր, 320 կաքավ, 700 կոցար, 400 աքլոր, 1700 հավ, 6000 հավի ճուտ, 6000 աղավնի, 600 սալամբ, 1400 նապաստակ, 300 բադ, 1700 լոր:

Բացի այդ պատրաստել էին նաև բազմաթիվ զանազան ապուրներ, իսկ գինին մատակարարում էին Ժանոն, Միքելը և Վերենեն, որոնք իրենք էլ պակաս կոնծողներ չէին, թեև այդ նրանց չէր թույլատրվում ի պաշտոնե:

Գլուխ XIV

Այն մասին, թե ինչպես Գարգանտյուան սալաթի հետ վեց ուխտավոր է կուլ տալիս

Հիմա պետք է պատմենք, թե ինչ փորձանք եկավ Սեն-Սեբաստիանից^[33] եկած վեց ուխտավորների գլխին: Այդ ուխտավորները դուրս են գալիս Սեն-Սեբաստիան գյուղաքաղաքից, որտեղ ուխտ էին գնացել, և հանկարծ բոլորովին անսպասելի գերի են ընկնում Պիկրոշոլ թագավորի հետախույզների ձեռքը: Թշնամի զինվորների ձեռքից ազատվելու համար նրանք փախչում մտնում են Գրանգուզիեի պարտեզը և թաքնվում սալաթի, սիսեռի և կաղամբի արանքում: Պետք է այն ասել, որ Գրանգուզիեի պարտեզում բուսած սալաթը սալորենու մեծության կլիներ:

Ընթրիքից առաջ Գարգանտյուան գնում է պարտեզ սալաթ բերելու: Նա քաղում է, որքան հարկավոր է լինում, և սալաթի տերևների հետ միասին տուն է բերում նաև դժբախտ ուխտավորներին: Խեղճերը ահից ու սարսափից ձեն-ծպտուն չեն հանում:

Երբ Գարգանտյուան ջրհորի մոտ սալաթ էր լվանում, ուխտավորերը իրար ականջի փափսալով ասում էին.

— Այս ինչ փորձանք են բերում մեր գլխին, մենք կխեղդվենք այս սալաթի մեջ: Իսկ եթե ձայն հանենք, նա կարող է կարծել, որ մենք թշնամու հետախույզներ ենք, և բոլորիս կսպանի:

Այն ժամանակ, երբ նրանք այսպիսի դատողություններ էին անում, Գարգանտյուան նրանց էլ սալաթի հետ միասին լցրեց սկուտեղի մեջ, ձիթենու յուղ և քացախ ածեց վրան, աղ զցեց և ապա լրիվ կերավ այդ սալաթը ընթրիքից առաջ, որպեսզի ախորժակը բացվի: Արդեն հինգ ուխտավորները անհետացել էին Գարգանտյուայի կոկորդում, երբ Գրանգուզիեն նկատեց, որ սալաթի տերևի տակից մի բան է ցցված: Դա գավազանն էր վեցերորդ դժբախտի, որ լուռումունջ սպասում էր իր վախճանին:

— Որդի, — ասաց Գրանգուզիեն, — կարծեմ սրանք խխունջի պոզեր պիտի լինեն, չուտես:

— Ինչո՞ւ որ, — պատասխանեց Գարգանտյուան, — խիտունջները այս ամսին շատ համեղ են լինում, — և ուխտավորին դուրս քաշելով սալաթի տակից, դրան էլ գցեց բերանը գավազանի հետ միասին: Հետո մի մեծ կում զինի կուլ տվեց և ապա սպասեց, մինչև որ ընթրիքը պատրաստվի:

Նրա ատամների արանքում մնացած ուխտավորները կարծում էին, որ մի գետնահոր են ընկել: Երբ Գարգանտյուան զինի խմեց, քիչ էր մնում նրանք խեղդվեին: Գինին նրանց քշեց տարավ ուղիղ դեպի կոկորդը, բայց նրանք ուստոստալով և գավազաններով միմյանց օգնելով, կարողացան մնալ բերանում և բարձրացան մինչև նրա ատամների եզրը:

Բայց, դժբախտաբար, ուխտավորներից մեկը իր գավազանով խփեց ցավող ատամին: Ատամի սաստիկ ցավից Գարգանտյուան բարձրաձայն աղաղակեց: Նրան ատամի փորիչ տվեցին, ու Գարգանտյուան պարտեզում զբոսնելիս ատամները քշվորում էր և ուխտավորներին մեկ-մեկ հանում բերանից: Մեկին նա բռնեց ոտքերից, մյուսին՝ պայուսակից, երրորդին՝ գրպանից, չորրորդին՝ գավազանից, իսկ այն դժբախտին, որ խփել էր գավազանով, բռնեց օձիքից և մի լավ հասցրեց վզակոթին: Ազատված ուխտավորներից ամեն մեկը մի կողմ փախավ, իսկ Գարգանտյուայի ատամի ցավը միանգամից կտրվեց:

Ուխտավորներն այնպես էին փախչում, որ ոչինչ չէին նկատում, մինչև ընկան գայլի համար պատրաստած մի թակարդի մեջ: Թակարդը փակվեց և խեղճերը դարձյալ գերի ընկան: Նրանց բախտից վեցերորդ ուխտավորը, որի անունը Ֆուրնիլիե էր, մի շատ ճարպիկ մարդ էր: Նա կարողացավ բոլոր թոկերը կտրատել և ազատել իր ընկերներին: Թակարդից ազատվելուց հետո ուխտավորները մի կերպ հասան մինչև Կուդրե և գիշերեցին մի լքված խրճիթում:

Գլուխ XV

Այն ամսին, թե ինչպես էր Գարգանտյուան քեֆ անում իր բարեկամների հետ

Երբ բոլորը սեղան նստեցին և իրենց քաղցը մի քիչ հագեցրին, Գրանգուզիեն պատմեց տղային այն անցուդարձը, որ կատարվել էր նրա բացակայության ժամանակ: Առանձնապես շատ խոսեցին հայր ժանի սխրագործությունների մասին, և դա այնքան դուր եկավ Գարգանտյուային, որ հրամայեց այդ քաջարի վարդապետին անմիջապես հրավիրել իր մոտ:

Եվ երբ հայր ժանը եկավ, բոլորը վրա պրծան գրկելու, գովելու ու գովաբանելու այդ ստահակին:

— Ախ, հայր ժան, սիրելի ժան, — ասում էր Գարգանտյուան, — մոտ արի, անիծված, քեզ մի լավ գրկեմ, իմ ազնիվ բարեկամ:

— Թող ես էլ քեզ մի լավ գրկեմ, — գոչում էր Գիմնաստը:

— Ես էլ եմ ուզում գրկել, — գոչում էր Պոնոկրատը, — և այնպես հուպ տամ, որ հոգին դուրս գա:

Իսկ հայր Ժանը բլբուլ էր դարձել, սոււմ, խոսում էր անվերջ: Շատ ճարպիկն էր անհիծվածը:

— Դեհ լավ, լավ, — ասաց վերջապես Գարգանտյուան, — այժմ վերցրու աթոռդ և դիր իմ կողքին, նստենք մի բան ուտենք:

— Ուրախությամբ, — պատասխանեց վարդապետը: — Այ տղա, մի ջուր տուր ինձ: Լցրու, լցրու տղաս, որ կոկորդս ողողեմ:

— Ափսոս չի, որ քեզ պես հրաշալի տղամարդը փարաջա հագնի, — ասաց Գիմնաստը, — դեն գցիր այդ հիմար հագուստը:

— Ինչպես կարելի է, պարոն, — պատասխանեց վարդապետը, — վանական կանոնները այդ թույլ չեն տալիս:

— Թքել եմ ես ձեր կանոնների վրա, — ասաց Գիմնաստը, — հանի վրայիցդ այդ փարաջան: Դա մարդու ուսերից կախված ավելորդ ծանրություն է:

— Միրելի բարեկամ, — պատասխանեց վարդապետը, — թող ես մնամ իմ հագուստով: Աստված վկա, այդ փարաջան ինձ ամենևին չի խանգարում, որ ուզածի պես կոնծեմ: Դեհ, սկսենք մեր ընթրիքը: Ես թեև արդեն ընթրել եմ, բայց էլի լավ կուտեմ: Ես այնպիսի ստամոքս ունեմ, որ միշտ մի պարզ և պահանջում, ճիշտ այնպես, ինչպես մեր քաղաքային դատավորը: Էյ, բարեկամ, այդ խոզի միսը դեսը տուր: Թող ես գայլի փայ դառնամ, թե սուտ եմ ասում, որ ծարավից մեռնում եմ: Օհո, այս գինին վատ գինի չի երևում: Ձեր կենացը, պարոններ:

— Չարմանում եմ, — ասաց Եվդեմոնը, — ինչքան ուրախ և զվարթ մարդ է այս վարդապետը: Բայց ինչո՞ւ են մյուս վարդապետներին ամեն տեղից վռնդում և հայհոյում:

— Շատ հասկանալի պատճառով, — ասաց Գարգանտյուան: — Տանը պահած կապիկն էլ բոլորին զվարճացնում է և ուրախացնում: Բայց կապիկը ոչ տունն է պահպանում, ինչպես շունը, ոչ վար է անում, ինչպես եզր, ոչ կաթ է տալիս, ինչպես կովը, ոչ բուրդ, ինչպես ոչխարը, ոչ բեռներ է կրում, ինչպես ձին: Կապիկը միայն փչացնում և ապականում է, ինչ որ ձեռքն է ընկնում: Այդպես է նաև վարդապետը: Նա վար չի անում, ինչպես գյուղացին, երկիրը չի պահպանում, ինչպես զինվորականը, հիվանդներին չի բժշկում, ինչպես բժիշկը, երեխաներին չի սովորեցնում, ինչպես ուսուցիչը: Այդ է պատճառը, որ բոլորը անհիծում են վարդապետներին, բոլորը խորշում են նրանցից և չեն ուզում նրանց հետ ոչ մի գործ ունենալ:

— Դա այդպես է, — ասաց Գրանգուզիեն, — բայց չե՞ որ նրանք աղոթում են աստծուն մեզ համար:

— Իսկապես, — շարունակեց Գարգանտյուան, — նրանք օրը հարյուր անգամ քթների տակին «Հայր մեր», «Մայր աստվածածին» են փնթփնթում, բայց ի՞նչ օգուտ դրանից: Հայր Ժանի բանն ուրիշ է: Նա ոչ սուտ ճգնավոր է, ոչ ձրիակեր: Նա միշտ ուրախ է, զվարթ, քաղաքավարի և ամենքի համար բարի ու ցանկալի ընկեր: Նա աշխատում, չարչարվում է և պահպանում վանքապատկան այգին:

— Բացի այդ, — ասաց հայր Ժանը, — ես կարող եմ լար ոլորել աղեղի համար և ցանցեր հյուսել ճագարների համար: Դեհ, այժմ եկեք խմենք:

Չբուցելիս նրանք չէին մոռանում ուտելը: Նրանց ծնոտները չդադարեցին աշխատելուց, քանի դեռ սեղանի վրա մի կերակուր կար դրված: Առաջին օրինակը ինքը Գարգանտյուան էր տալիս: Նա իր փորը այնքան էր լցրել, որ գիշերը իրեն վատ զգաց:

Անմիջապես մի քանի բժիշկ կանչեցին: Բժիշկները քննեցին հիվանդին, խորիմաստ կերպով հոնքերը կիտեցին և պատվիրեցին, որ հիվանդն ընդունի 18 սայլ կասսիա^[34] և 11900 ֆունտ խավարձի: Հարկավոր էր մաքրել հիվանդի ստամոքսը: Դրա համար պատրաստեցին տասնյոթ պղնձե ահագին գնդեր: Այդ գնդերից մեկի մեջ մտավ մի մարդ՝ հետը վերցրած լապտեր և վառված ջահ: Գարգանտյուան գունդը դրեց բերանը և կուլ տվեց այնպես, ինչպես փոքրիկ մի դեղահաբ:

Հետևյալ հինգ գնդերի մեջ մտան հինգ հաղթանդամ տղաներ, որոնցից յուրաքանչյուրի ձեռքին կար մի-մի երկաթե թի: Երեք գնդերի մեջ մտան երեք գյուղացիներ՝ մի-մի ջահ դրած ուսերին: Վերջին ութ գնդերի մեջ մտան ութ արտաքնոց մաքրողներ՝ հետները վերցրած ահագին զամբյուղներ: Եվ այդ բոլոր գնդերը Գարգանտյուան հեշտությամբ կուլ տվեց:

Երբ բոլոր գնդերը Գարգանտյուայի փորում էին, գնդերի մեջ նստածները սեղմեցին զսպանակները, դռները բացվեցին, և նրանք դուրս եկան: Առաջինը դուրս եկավ նա, որի ձեռքին լապտեր կար: Նա առաջ ընկավ և լուսավորում էր իր ետևից եկողների ճանապարհը: Իսեղճերը ստիպված եղան կես վերստից ավել ճանապարհ գնալ մի գարշահոտ անդունդի միջով: Այնտեղ օդը այնքան անտանելի էր, որ նրանք բոլորը շնչասպառ կլինեին, եթե հետները մի-մի սրվակ անուշադրի սպիրտ վերցրած չլինեին: Երբ նրանց գլուխը պտույտ էր գալիս, հոտ էին քաշում սպիրտից, և այդ նրանց շատ էր օգնում: Նրանք, խարխափելով, վերջապես հասան այնտեղ, որտեղից գալիս էր այդ զզվելի հոտը: Դա չմարաված կերակուրների մի ահագին սար էր, որ նեխելով սարսափելի գարշահոտություն էր արձակում: Անմիջապես սկսեցին բահերով փորել այդ սարը և թիերով զամբյուղների մեջ լցնել այդ զզվելի աղբը: Երբ ինչպես հարկն է մաքրեցին, ամեն մեկը դարձյալ մտավ իր գնդի մեջ: Դրանից հետո Գարգանտյուան փսխեցնող դեղ ընդունեց և գնդերը բոլորը դուրս թափվեցին:

Երբ համոզվեցին, որ Գարգանտյուան բոլորովին առողջացել է, վճռեցին գիշերվա կեսին դուրս գալ հետախուզության, իմանալու համար, թե ինչ են անում իրենց հակառակորդները: Իսկ մինչ այդ վճռեցին մի փոքր հանգստանալ, որպեսզի գլուխները թարմանա:

Գարգանտյուան, սակայն, որքան աշխատեց, չկարողացավ քնել:

— Ես շատ խորն եմ քնում միայն այն ժամանակ, երբ քարոզ եմ լսում, — ասաց նրան հայր Ժանը: — Շատ եմ խնդրում, եկեք միասին սաղմոս կարդանք: Հաստատ խոսք եմ ասում, ձեր քունն իսկույն կտանի:

Գարգանտյուային այդ առաջարկը շատ դուր էկավ, և իրոք, սաղմոսից մի քանի տող չկարդացած՝ նրանք երկուսն էլ այնպես խոմփացրին, որ տան բոլոր ճրագները հանգան:

Գլուխ XVI

Այն մասին, թե ինչպես վարդապետը կախված մնաց ընկույզի ծառից

Կեսգիշերին մոտ վարդապետը գարթնեց և ըստ սովորության բղավեց.

Չարթնի՛ր, Ռենյո, գարթնի՛ր,
Վե՛ր կաց, Ռենյո, վե՛ր կաց:

Բոլորն արթնացան, սկսեցին հագնվել, որ արշավի գնան: Միայն վարդապետը չցանկացավ, ոչ սաղավարտ դնել գլխին, ոչ էլ զրահ հագնել: Սակայն նրան գոռով հազցրին, զինեցին և նստեցրին մի լավ ձիու վրա:

Եվ ահա գնում էին մեր ասպետները իրենց ճանապարհով ու խոսում այն մասին, թե ինչպես ավելի հեշտ կլինի թշնամուն հաղթել:

— Քանի ինձ հետ եք, ոչ մի բանից չվախենաք, — ասում էր վարդապետը, — ես մի այնպիսի աղոթք գիտեմ, որ երբ մարդ ասի, նրան գնդակ չի դիպչի: Այդ ախոթքը ինձ սովորեցրել է մի տիրացու: Ծիշտն ասած՝ ես ամենևին չեմ հավատում այդ աղոթքի գործողյանը, բայց քանի որ ձեռքումս դագանակ կա, դա ինձ միշտ կպաշտպանի: Իսկ եթե մեկն ու մեկն ուզենա ռազմադաշտից փախչել, աստված վկա, նրան կբռնեմ վարդապետ կձեռնադրեմ, գլխին էլ վարդապետական վեղար⁶⁵¹ կդնեմ: Լսած կա՞ք, թե ինչպես է մի որսորդ բժշկել իր վախկոտ շանը: Նա շան գլխին վեղար է դրել, և այնուհետև ոչ մի աղվես չի կարողացել նրանից իր գլուխն ազատել:

Այսպես խոսելով, վարդապետը խթանեց իր ձիուն, բայց հանկարծ նրա երեսկալը կաղնուտում կպավ մի հաստ ճյուղի, և նա ձեռքից սանձը բաց թողեց: Ձին առաջ վազեց, վարդապետը մնաց ծառիցը կախ և ինչքան ուժ ուներ գոռաց.

— Օգնեցե՛ք, օգնեցե՛ք ինձ:

— Ես իմ կյանքում, — ասաց Պոնոկրատը, — շատ եմ տեսել կախված մարդ, բայց ոչ որ այդպես գեղեցիկ կախված չի եղել, ինչպես այս վարդապետը:

— Գլխիցդ շատ դուրս մի տուր, — գոչեց վարդապետը, — շուտ օգնեցեք ինձ, գրողը ձեզ տանի:

— Մի շարժվիր, սիրելիս, — գոչեց Գիմնաստը, — ես իսկույն քեզ կազատեմ: Ինչքան ջլինի, էլի դու լավ վարդապետ ես:

Այսպես խոսելով Գիմնաստը ծառը բարձրացավ, մի ձեռքով վարդապետի օձիքից բռնեց, մի քիչ վեր բարձրացրեց, մյուս ձեռքով ազատեց երեսկալը և վարդապետին գետին իջեցրեց:

Վարդապետը հայհոյելով ու թքելով, զենք ու զրահը վրայից հանեց ու մի կողմ շարտեց և մնաց միայն մի հին փարաջայով: Դրանից հետո բոլորը դարձյալ հեծնեցին իրենց ձիերը և, վարդապետի վրա ծիծաղելով ու կատակ անելով, շարունակեցին ճանապարհը:

Գլուխ XVII

Այն մասին, թե ինչպես Գարգանտյուան ջարդում է Պիկրոշովի առաջապահ գունդը

Երբ Պիկրոշուն իմացավ, որ իր մարդկանց վրա հարձակում են գործել սատանաները, չափից դուրս վախեցավ: Իզուր էին անցնում Տուկդիլիոնի ջանքերը նրան հավատացնելու, որ ոչ մի սատանայից իրենք երկուդ չունեն: Պիկրոշուն չէր հավատում: Նա հրամայեց ամբողջ զորքը սրսկել օրինաձ ջրով և բոլորին գոտևորել սարկավագի ուրարով:^[36] Ուրարն ու օրինաձ ջուրը պետք է ցրեին ու հալածեին սատանաներին, եթե նրանք նորից փորձ անեին հարձակվելու թագավորի զորքի վրա:

Հետո Պիկրոշուն Տուկդիլիոնին ուղարկեց հետախուզության և նույն օրը սուրհանդակ ուղարկեց իր հորեղբորորդի Անարխի մոտ՝ նրանից օգնություն խնդրելու: Անարխն այդ ժամանակ Դիպտոդիեի^[37] թագավորն էր, և նրա զորքի մեջ ծառայում էր արյունոտուշտ հսկաների մի ցեղ: Պիկրոշուն հույս ուներ, որ այդ հսկաների օգնությամբ շատ շուտով իր թշնամիների դատաստանը կտեսնի:

Տուկդիլիոնը իր զորքով հասավ Կուդրե, որտեղ ոչ մի մարդ չգտավ, միայն գերի վերցրեց այն հինգ ուխտավորներին, որոնք քնած էին այն լքված խրճիթում: Գերիների թևերը կապեցին և հետները տարան: Իզուր էին ուզում խեղճերն հավատացնել, որ իրենք լրտեսներ չեն, այլ սովորական ուխտավորներ են: Չինվորները նրանց լսել անգամ չցանկացան:

Այդ ժամանակ Գարգանտյունան նկատեց իր թշնամիներին և ասաց իր մարդկանց:

— Բարեկամներ, նրանք մեզանից տասն անգամ ավելի կլինեն: Պե՛տք է արդյոք հարձակվել նրանց վրա, թե ոչ:

— Այ քեզ չար սատանա, — պատասխանեց վարդապետը, — իհարկե, պետք է հարձակվել: Բանը քաջությունն է, և ոչ թե թիվը:

Եվ որքան ուժ ուներ բղավեց.

— Գրոհեցե՛ք, սատանաներ, գրոհեցե՛ք:

Երբ թշնամին լսեց, որ իրենց վրա հարձակվողները դարձալ սատանաներ են, փախուստի դիմեց: Միայն Տուկդիլիոնը իրեն չկորցրեց: Նա ձեռքն առավ նիզակը և մեծ ուժով խփեց վարդապետին: Բայց վարդապետը այնպիսի հաստ փարաջա էր հագել, որ նիզակը չծակեց և մեղրամոմի պես ծովեց: Այն ժամանակ վարդապետը իր մահակով Տուկդիլիոնին մահացու հարված հասցրեց, ու սա ձիու վրայից շնչասպառ գետին գորվեց:

Տեսնելով Տուկդիլիոնի մեջքին կապած ուրարը, վարդապետն ասած Գարգանտյունային.

— Երևի մեր թշնամիները տերտերներ են, բայց և այնպես նրանք դեռ շատ հեռու են վարդապետ լինելուց: Սուրբ Հովհաննեսը վկա, ես իսկական վարդապետ եմ և այդ բոլոր տերտերներին ճանճերի պես կկոտորեմ:

Եվ նա ձին սրարշավ քշեց թշնամիների ետևից:

Երբ հասավ թշնամու վերջին շարքերին, վարդապետը սկսեց աջ ու ձախ հարվածել և այնպիսի իրարանցում առաջացրեց, որ չէին իմանում, որ կողմը փախչեն:

Ինչ վերաբերում է Գարգանտյունային, նա վճռեց այս անգամ թշնամուն չհետապնդել և դա ավելի հարմար ժամանակ անել:

— Չպետք է երբեք թշնամուն ծայրահեղ հուսահատության հասցնել, — ասում էր Գարգանտյուան, — այդպես է սովորեցնում մեզ ռազմական գիտությունը: Երբ թշնամին տեսնում է, որ ազատվելու ճար չկա և կորուստն անխուսափելի է, այն ժամանակ նա կռվում է ինչպես առյուծ: Հուսահատությունը ավելացնում է թշնամու ուժը: Հաճախ է պատահում, որ հաղթվածները ջարդում են իրենց հաղթողներին, որովհետև հասած են լինում հուսահատության: Միշտ չէ, որ պետք է թշնամուն հնարավորություն տալ տալ նահանջելու:

— Բայց նրանց հետապնդում է վարդապետը, — ասաց Գիմնաստը:

— Մի՞թե, — զարմացած ասած Գարգանտյուան, — ուրեմն վարդապետը հետապնդո՞ւմ է նրանց: Այդ ժամանակ նրանց բանը բուրդ է: Որ այդպես է, սպասենք մինչև նա վերադառնա:

Իսկ վարդապետը ջարդում հա ջարդում էր նրանց իր մահակով, մինչև տեսավ մի ձիավորի, որի գավակին նստած էր խեղճ ու կրակ ուխտավորներից մեկը: Տեսնելով, որ վարդապետը մահակը բարձրացրեց, որ խփի, ուխտավորը գոռաց.

— Հայր սուրբ, հայր սուրբ, կաց աղաչում եմ, ազատիր ինձ:

Այդ ժամանակ թշնամիները տեսան, որ միայն մի վարդապետ է իրենց հետապնդողը: Վարդապետին բռնեցին, վզակոթին մի լավ հասցրին և հանձնեցին երկու պահակների, որ պահեն նրան: Այնուհետև զինվորները նորից ռազմաշար կազմեցին, ետ դարձան և գրոհեցին Գարգանտյուայի վրա:

Երբ վարդապետը տեսավ, որ թշնամիները հեռացան, սուրը քաշեց, իր երկու պահապաններին տեղնուտեղը սպանեց: Դրանից հետո թռավ ձիու գավակը և ընկավ թշնամիների ետևից: Իսկ Գարգանտյուան այդ ժամանակ արդեն ետ էր մղել թշնամիների հարձակումը, որոնք նրա դագանակի համն առնելուց հետո նորից դիմել էին փախուստի:

Ինչպես այն էշը, որի վրա հարձակվել են բռռերը և որը գլուխն առած փախչում է, առանց իմանալու թե ուր, ճիշտ այդպես էին վարվում այժմ այդ մարդիկ, որոնք սարսափից խելքները կորցրած փախչում էին առանց իմանալու թե ուր, և ոչ մի ուժ աշխարհում չէր կարող նրանց կանգնեցնել:

Երբ վարդապետը տեսավ սարսափահար թշնամիների փախուստը, բարձրացավ մի ժայռի վրա և այնտեղից սկսեց մոտով փախչողների գլուխը սրով թոցնել: Նա այդ գործը այնպիսի եռանդով էր կատարում, որ նրա սուրը երկու կտոր եղավ, իսկ թշնամիներից մի փոքրիկ խումբ մնաց: Այն ժամանակ վարդապետը զենքերը նրանց ձեռքից առավ, զենքերի հետ միասին և վեց ուխտավորներին, որոնք երկյուղից ոչ մեռած էին, ոչ կենդանի: Բացի այդ, նա գերի վերցրեց և կապիտան Տուկդիլիոնին:

Գլուխ XVIII

Այն մասին, թե ինչպիսի խոսակցություն ունեցավ Գրանգուզինն ուխտավորների հետ

Երբ Գարգանտյուան տուն վերադարձավ, նստեց ընթրելու: Բոլորը ներկա էին, չկար միայն հայր սուրբը:

— Երևի նա գերի է ընկել թշնամու ձեռքը, — ասաց Գարգանտյուան:

— Եթե այդպես է, այն ժամանակ վայ մեր թշնամիներին, — ասաց Գրանգուզին:

Հիանալի կերակուրներ կային սեղանին, բայց Գարգանտյուան չէր կարողանում ոչ ուտել և ոչ խմել, նա շատ տխուր էր, որ վարդապետը չկար:

Հանկարծ պատուհանի ետևից մի ձայն լսվեց.

— Լավ գինի տվեք, շուտ, լսում ես, սիրելի Գիմնաստ, լավ գինի լինի հա՛:

Գարգանտյուան դուրս նայեց պատուհանից: Իհարկե, դա հայր Ժանն էր, ինքը հայր Ժանը, ինչպես որ կա: Նա հետը բերել էր վեց ուխտավորներին և կապիտան Տուկդիլիոնին:

Այդ ժամանակ գավաթները ձեռքից ձեռք անցան, դանակների չխչկոցից մարդու ձայն չէր լսվում, մի խոսքով լավ քեֆ սկսվեց:

Գրանգուզին հարձուփորձ էր անում ուխտավորներին՝ ո՞րտեղացի են նրանք, ո՞րտեղ են եղել և ո՞ւր են գնում:

Բոլորի փոխարեն պատասխանում էր Ֆուրնիլին:

— Տեր արքա, ես Մեն-Ժենուից եմ, սա՛՝ Պալյուոյից, մյուսը՝ Օնգեից, այն մյուսը՝ Արժիից, իսկ այս մեկը՝ Վիլդերբեդենից: Մենք սկսել ենք Մեն-Մերաստիանից, իսկ այժմ վերադառնում ենք տուն:

— Լա՛վ, — ասաց Գրանգուզին, — բայց ինչո՞ւ էիք դուք Մեն-Մերաստիան գնացել:

— Մենք գնացել էինք, — պատասխանեց Ֆուրնիլին, — սուրբ Մերաստիանից խնդրելու, որ ժանտախտ չգցի մեր կողմերը:

— Ինչ հիմար բաներ եք ասում, — ասաց Գրանգուզին: — Ողորմելի մարդիկ, մի՞թե կարծում եք, որ ժանտախտը սուրբ Մերաստիանն է տարածում:

— Իհարկե, — պատասխանեց Ֆուրնիլին, — այդպես են ասում և մեր տերտերները:

— Տեր աստված, ինչպիսի՛ հիմար բաներ են դուրս տալիս գլխներիցը այդ տերտերները: Ես իմ ականջովս եմ լսել, ինչպես մի տերտեր Սինեում քարոզելիս ասում էր, թե կերցավը սուրբ Անտոնիուսի տվածն է, ջրդողությունը՝ սուրբ Եվտրոպիոսի, իսկ խելագարությունը՝ սուրբ Ժիլդայի: Ես այնպիսի խաղ խաղացի այդ տերտերի գլխին, որ այդ օրվանից սկսած բոլոր տերտեր-մերտերների ոտը բոլորովին կտրվեց իմ երկրից: Չարմանալի է, որ ձեր թագավորը ոչինչ չի անում դրա դեմ: Այդպիսի քարոզների համար տերտերներին պետք է այնպես պատժել, ինչպես կպատժեն կախարդությամբ պարապողներին: Այդ ցնդաբանություններով նրանք ձեր աչքին միայն թող են փչում:

Այնուհետև ուխտավորներին կերակրեցին, ճանապարհի պաշար տվեցին և թողեցին, որ գնան իրենց երկիրը, իսկ Գրանգուզիեի մոտ բերեցին գերի Տուկդիլիոնին:

Գրանգուզիեն սիրալիր ընդունեց իր գերուն և սկսեց հարցողփորձ անել Պիկրոշոյ թագավորի մասին:

— Ի՞նչ նպատակով է սկսել նա այս պատերազմը, — հարցնում էր Գրանգուզիեն, — ինչո՞ւ է գուր տեղը թափում իր հպատակների արյունը:

— Նա ուզում է տիրանալ ձեր բոլոր երկրներին, — պատասխանեց Տուկդիլիոնը:

— Նա իր գլխիցը մեծ գործ է բռնել, — ասաց Գրանգուզիեն, ով մեծ-մեծ բաների ետևից է ընկնում, նա փոքրն էլ է կորցնում: Անցել են այն ժամանակները, երբ հետևելով հին ազգերի օրինակին, կարելի է նվաճել բոլոր երկրները: Պետք է կարողանալ լավ կառավարել իր սեփական երկիրը, և ոչ թե ուրիշի երկրում ավագակություն անել: Կորեք, ի սեր աստծու, այստեղից, գնացեք ձեր թագավորի մոտ, հասկացրեք, խելքի բերեք նրան, որ տեսնի, թե ինչ մեծ սխալներ է գործում ինքը: Մեր միջև պատահած դեպքը բոլորովին դատարկ բան էր: Չարժեր ուշադրություն դարձնել հովիվների ու կարկանդակագործների միջև պատահած անմիտ կռվի վրա, մանավանդ որ ես համաձայն էի հատուցել բոլոր վնասները:

Գրանգուզիեն իր մոտ կանչեց վարդապետին և հարցրեց.

— Հայր ժան, իմ սիրելի բարեկամ, դո՞ւք եք այս կապիտանին գերի վերցրել:

— Ավելի լավ է թող ինքն ասի, — պատասխանեց վարդապետը:

— Միանգամայն ճիշտ է, — ասաց Տուկդիլիոնը, — ինձ այս վարդապետն է գերի վերցրել:

— Փրկանք նշանակե՞լ եք սրա համար, — հարցրեց Գրանգուզիեն վարդապետին:

— Ո՛չ, — պատասխանեց վարդապետը, — չեմ էլ մտածել այդ մասին:

— Ինչքա՞ն կուզեք սրա համար ստանալ:

— Ոչինչ չեմ ուզում, փողի համար չեմ վերցրել դրան գերի, — պատասխանեց վարդապետը:

Այդ ժամանակ Գրանգուզիեն կարգադրեց վճարել վարդապետին 62.000 ոսկի, իսկ Տուկդիլիոնին ազատ արձակել: Իրեն գերությունից ազատելու համար երախտապարտ Տուկդիլիոնը նախազգուշացրեց Գրանգուզիեին, որ Պիկրոշոյին շուտով օգնության պիտի գան Անարխ թագավորի հսկաները, որոնց դիմադրելը շատ էլ հեշտ չի լինի:

Երբ Տուկդիլիոնը գնաց, վարդապետը դրամը վերադարձրեց Գրանգուզիեին և ասաց.

— Տեր արքա, պարզևներ տալու ժամաակը չի այժմ: Սպասենք, մինչև պատերազմը վերջանա, այն ժամանակ կտեսնենք, թե ինչ ենք անելու: Պատերազմի ժամանակ միշտ դրամի պետք կլինի:

— Շատ լավ, — ասաց Գրանգուզիեն, — երբ պատերազմը վերջանա, այն ժամանակ ձեզ ինչպես հարկն է կվարձատրեմ:

Մինչ այս, մինչ այն, Տուկդիլիոնը վերադարձավ Պիկրոշոյ թագավորի մոտ և պատմեց նրան իր խոսակցությունը Գրանգուզիեի հետ:

— Տեր արքա, — ասաց Տուկդիլիոնը, — մենք պետք է անմիջապես խաղաղության դաշն կնքենք Գրանգուզիեի հետ: Ես եկել եմ այն համոզման, որ նա ամենալավ մարդն է աշխարհում: Անմտություն կլինի մեր կողմից նրան վիրավորելը, մանավանդ որ մենք նրանից ոչ մի վատ բան չենք տեսել: Բացի այդ, դուք պետք է իմանաք, որ նա մեծ գործ ունի: Մի գեղեցիկ օր նա կարող է մեզ բոլորովին ջարդուփշուր անել:

Տուկդիլիոնն իր ճառը վերջացրեց թե չէ, Պիկրոշոլի պալատականներից մեկը, որի անունը Գաստիվո էր, ասաց բարձրաձայն.

— Այդ բոլորը դավաճանի խոսքեր են: Տեր արքա, ուշադրություն մի դարձեք կապիտան Տուկդիլիոնի խոսքերին, նրան անշուշտ կաշառել են մեր թշնամիները: Դրա համար է, որ նա ուզում է ետ կանգնեցնել ձեզ պատերազմից: Գուցե ինքն էլ հենց շատ տրամադիր է թշնամիների կողմն անցնել և մեր դեմ պատերազմել, եթե իհարկե, Գրանգուզիեն ընդունի նրան:

Տուկդիլիոնին այդ խոսքերը կատաղության հասցրին: Նա սուրը քաշեց և խրեց Գաստիվոյի ուղիղ սրտի մեջ: Գաստիվոն գետին գլորվեց և շունչը փչեց: Տուկդիլիոնը սուրը դուրս քաշելով սպանվածի մարմնից և նայելով ուղիղ Պիկրոշոլի աչքերին ասաց.

— Այս վախճանին կարժանանա ամեն մարդ, ով կհամարձակվի գրպարտել կապիտան Տուկդիլիոնին:

Բայց Պիկրոշոլը սաստիկ կատաղած ու գայրացած գոչեց.

— Մի՞թե նրա համար են քո ձեռքը գենք տվել, որ դու սպանես իմ լավագույն բարեկամներին:

Եվ հրամայեց իր զինվորներին անմիջապես Տուկդիլիոնին կտոր-կտոր անել: Չինվորները հարձակվեցին քաջարի կապիտանի վրա և այնպիսի գազանությամբ նրան սպանեցին, որ ամբողջ սենյակը ներկվեց արյունով:

Այդ չարագործությունների լուրը հասավ գործի ականջին և շատերը տրտնջացին Պիկրոշոլի դեմ:

— Չգիտեմ, տեր արքա, ինչ վախճան կունենա այս պատերազմը, — ասաց մի անգամ Պիկրոշոլին կապիտան Գրիպմինոն:^[38] — Չինվորների մեջ մեծ անբավականություն կա: Նախ՝ պարենի պակասություն կա, երկրորդ՝ մեր գործը օրեցօր պակասում է, մինչդեռ Գրանգուզիեի մոտ գալիս են շարունակ օժանդակ գորքեր: Վախենում եմ, որ մեր գործը վատ վերջանա:

— Կորեք ջհանդամը, — գոչեց Պիկրոշոլը, — դուք նման եք փոքրիկ օձաձկան, որ դեռ մաշկելը չսկսած սկսում է ճվճվալ: Թող մի երևան, կտեսնեն, որ իրենց մեծ կտորը ականջը կմնա:

Գլուխ XIX

Այն մասին թե ինչպես ջախջախվեց Պիկրոշոլ թագավորը

Գրանգուզիեն ռազմական խորհուրդ գումարեց և այդ խորհրդում վճռվեց չսպասել մինչև հսկաների գալը, այլ անմիջապես հարձակվել Պիկրոշու թագավորի վրա: Գարգանտյուան նշանակվեց զորքի հրամանատար, իսկ հայրը մնաց իր ամրոցում:

Գարգանտյուան անմիջապես արշավեց Լա-Ռոշ-Կլերմոնի բերդի վրա, որտեղ ամրացել էր Պիկրոշուրը: Երբ զորքը բերդին մոտեցավ, Գիմնաստն ասաց Գարգանտյուային:

— Տեր, գիտե՞ս արդյոք, որ ֆրանսիացիք լավ են կռվում միայն առաջին անգամ գրոհելիս, նրանցից ամեն մեկը այն ժամանակ մի-մի առյուծ է դառնում: Բայց երբ ստիպված են լինում երկար սպասել, նրանք կնոջից էլ թույլ են: Դրա համար էլ ձեր զորքին մի փոքր հանգիստ տալուց հետո անմիջապես հրաման տվեք, որ գրոհեն:

— Ոչ, — պատասխանեց Գարգանտյուան, — այդպես վարվելով մեծ արյունահեղություն կլինի: Փորձենք թշնամուն հաղթել խորամանկությամբ:

Եվ նա հրամայեց բերել մի պարկ աֆարքի (բույս) և մի տակառ կարմիր պղպեղ: Երբ դրանք բերին, Գարգանտյուան հրամայեց խառնել թունդ օդու հետ և այդ խառնուրդից մուրաբա եփել: Խոհարարը կատարեց պատվերը: Մուրաբան լցրին մի մեծ ամանի մեջ և տարան բերդի պարսպի մոտ:

— Կանգնեցե՛ք, — վերևից գոռացին պահապանները, — այդ ի՞նչ է ձեր ձեռքին:

— Մա մուրաբա է, — պատասխանեց խոհարարը: — Իմ տեր Գարգանտյուան ընծա է ուղարկել ձեր թագավորին: Եթե ձեր թագավորը կարողանա գեթ մի գդալ ուտել այս մուրաբայից առանց վրայից մի բան խմելու, այն ժամանակ մենք անձնատուր կլինենք ձեզ:

Պահապանները վեր բարձրացրին մուրաբան և տարան մատուցեցին Պիկրոշու թագավորին: Բայց երբ Պիկրոշուրը այդ մուրաբայից մի գդալ կուլ տվեց, զգաց, որ կոկորդը սաստիկ այրվում է, քիմքի վրա ուռուցք է գոյացել, իսկ լեզվին պզուկներ են դուրս եկել: Պիկրոշուրը վազեց գինու տակառի մոտ և սկսեց անընդհատ խմել: Հենց որ գինու բաժակը շրթունքից հեռացնում էր, լեզուն սկսում էր անտանելի այրվել: Այդ ժամանակ նրա բերանի մեջ ձագար դրեցին ու սկսեցին անընդհատ գինի լցնել: Պիկրոշուրը բոլորովին հարբեց: Նա դուրս վազեց փողոց և հրամայեց փչել փողերը: Փողերը փչեցին, բերդի դարպասները բացվեցին, և Պիկրոշուրը զորքի գլուխն անցած հարձակվեց Գարգանտյուայի վրա:

Գարգանտյուան դիմավորեց նրան թնդանոթների կրակոցով: Պիկրոշուրի զորքը սարսափահար կանգ առավ, հետո բոլորը նորից վազեցին դեպի բերդը, բայց վարդապետը մեծաքանակ զորքով դուրս եկավ նրանց առջև: Չինվորները այս ու այն կողմ փախան: Վարդապետը նրաց չէր հետապնդում: Նա վախենում էր, որ քաղաքում մնացած զորքը կհարձակվի իրենց վրա թիկունքից:

Այն ժամանակ, երբ Պիկրոշուրը քաղաքից դուրս էր եկել թշնամու դեմ կռվելու, նրա կապիտանները և մյուս ռազմական պետերը ճանճների պես վրա էին տվել իրենց թագավորին ուղարկած մուրաբայի վրա: Դժվար է ասել, թե նրանք ինչ օրն ընկան: Սաստիկ ծարավից ամեն բան մոռացած՝ նրանք լցվեցին թագավորի մատանը և այնքան գինի կոնծեցին, մինչև որ մեռածի պես ընկան գետին:

Այդ ժամանակ Գարգանտյուան հրամայեց, որ թնդանոթներով ռմբակոծեն բերդը: Բերդի զորքերը, որոնք առանց հրամանատարի էին մնացել, պաշտպանվելով

Գարգանտյուայի հարձակումից, կամաց-կամաց հավաքվեցին բերդի մի կողմը: Այդ բանից օգուտ քաղեց վարդապետը: Թաքնվելով մացառուտի ետևում, աննկատելի կերպով անցավ բերդի մյուս կողմը և հարձակվեց բերդի չպաշտպանված մասի վրա: Երբ բարձրացան պարիսպների վրա, նրանց առաջին գործը եղավ կոտորել պահակներին և բաց անել դարպասը, որով արյունահեղ ներս խուժեց բերդը և սլացավ դեպի գլխավոր դարպասը, որտեղ ձեռնամարտը պաշտպանողների ու հարձակվողների միջև առաջացրել էր մի սարսափելի ժխոր, և հենց այդ ժամանակ ներս խուժած արյունահեղ թշնամու թիկունքին ու մեծ ջարդ տվեց նրան:

Երբ Պիկրոշուր տեսավ, որ քաղաքը անձնատուր է եղել, ինքն էլ գլուխն առավ փախավ: Դեպի գետը տանող ճանապարհին նրա ձին հանկած սայթաքեց: Դա Պիկրոշուին այնպիսի զայրույթ պատճառեց, որ թուրը քաշեց ու ձիուն տեղնուտեղը սպանեց: Բայց այլևս ուրիշ ձի չէր կարող ճարել, այդ պատճառով էլ Պիկրոշուր վճռեց մոտակա ջրաղացի էշը գողանալ և էշով շարունակել իր ճանապարհը: Բայց ջրաղացպանները շատ շուտով իմացան, թե էշն ով է գողացել, բռնեցին խեղճ Պիկրոշուին և մի լավ ծեծեցին: Հետո խլեցին նրա թագավորական զգեստը և նրա առաջ ինչ-որ ցնցոտիները շարտեցին:

Այդ ցնցոտիները հագած Պիկրոշուր մի կերպ հասավ Գյույո նավահանգիստը, որտեղ ապրում էր մի պառավ կախարդուհի: Այդ կախարդուհին Պիկրոշուին ասաց, թե նա իր թագավորությունը այն ժամանակ ետ կստանա, երբ աշուղի նեյնիմ-նեյնիմները ձի հեծած կգան նրան օգնության: Այդ օրվանից սկսած Պիկրոշուր թագավորը անհետ կորավ և հայտնի չէ, թե ինչ եղավ: Պատմում էին, թե նա Լիոնում է, ճակատի քրտինքով վաստակում է իր օրվա հացը և պատահողին միշտ միևնույն հարցն է տալիս, թե ձիավոր նեյնիմ-նեյնիմները երբ են գալու: Երևի, նա մինչև հիմա էլ դեռ հույս ունի, որ իր թագավորությունը ետ կստանա:

Գլուխ XX

Այն մասին, թե ինչպես են Գարգանտյուայի ընկերները կոտորում Անարխա թագավորի 660 ասպետներին

Մինչ այս, մինչ այն, Գարգանտյուային տեղեկություն բերին, թե հսկաներն արդեն եկել են և ճամբար խփել Ինչ-որ թագավորության մեջ: Գարգանտյուան որոշեց գնալ նրանց ընդառաջ: Եվ ահա մեր բարեկամները գալիս են Նանտ քաղաքը, նավ են նստում ու գնում են ճամբորդելու: Շուտով նրանք անցում են Ոչ-մի կղզու մոտով, որից հեռու չէր և Ինչ-որ թագավորությունը:

Երբ նրանք մոտեցան ափին, Գարգանտյուան ասաց.

— Տղերք, քաղաքը մեզնից մի քանի քայլ է հեռու: Բայց նախքան այնտեղ գնալը պետք է իմանանք, թե այնտեղ որքան թշնամիներ կան և ինչ ցեղի են պատկանում:

Այն ժամանակ Գիմնաստն ու վարդապետը խնդրեցին Գարգանտյուային, որ իրենց ուղարկի հետախուզության:

— Թողեք, որ մենք գնանք, — ասում էին նրանք, — իսկ դուք մեզ սպասեցեք նավահանատում: Հանգիստ եղեք, մենք հենց այսօր ամեն բան կիմանանք:

— Իտոսք եմ տալիս, — ասաց վարդապետը, — որ կմտնեմ նրանց բանակը, կդիտեմ նրանց հրետանին, կլինեմ նրանց հրամանատարների վրաններում, և ոչ ոք ինձ չի ճանաչի:

— Իսկ ես, — ավելացրեց Գիմնաստը, — թոչունի պես կթռչեմ նրանց խրամատների վրայով և ոտի տակ կտամ նրանց ամբողջ բանակը: Ես թեթև մարմին ունեմ, թշնամիները ինձ չեն նկատի:

Սակայն մինչ նրանք այստեղ դատում, խորհում էին, մոտակա բլրակի ետևից երևացին թեթևաշարժ ձիեր հեծած 660 ասպետներ, որոնք սրարշավ դիմում էին դեպի նավը, մտադրություն ունենալով գերի վերցնել մեր բարեկամներին:

Այն ժամանակ Գարգանտյուն ասաց.

— Տղերք, դուք վերադարձեք նավ, իսկ ես դուրս կգամ ընդառաջ և մեկ-մեկ կսպանեմ նրանց, ինչպես շների:

— Ոչ, դրան համաձայն չեմ, — ասաց վարդապետը, — դուք նավում մնացեք, իսկ դրանց դատաստանը մենակ ես կտեսնեմ:

— Հայր սուրբը ճիշտ է ասում, — պաշտպանեցին վարդապետին մյուսները, — լավ է դուք հեռանաք: Մենք կօգնենք հայր Ժամին, դուք այն ժամանակ կտեսնեք, թե մենք ինչ մարդիկ ենք:

Վարդապետը նավից քաշեց, դուրս գցեց ափ երկու ահագին պարան, որոնցից հանգույցներ շինեց և ծածկեց նրանցով ծովափը: Պարանների մի մասը ամրացրեց նավի տախտակամածին և ասաց Եվդեմոնին.

— Հենց որ ձայն տամ, դու նավը շրջիր և պարանները դեպի քեզ ձգիր:

Հետո վարդապետը Գիմնաստին ու Պոնոկրատին կանգնեցրեց ծովի ափին ու ասաց նրանց.

— Կանգնեցեք այստեղ և այնպես ցույց տվեք, թե դուք անձնատուր եք լինում թշնամուն, միայն զգուշացեք, որ հանգույցի մեջ չընկնեք, թե չէ բաններդ վատ կլինի:

Ասպետները հողմի արագությամբ սլանում էին դեպի ափը: Բայց ափի մոտ հողը ողորկ էր դարձել ծովի ջրից, այդ պատճառով առջևի շարքի ձիերը սյաթաքեցին ու վայր ընկան:

— Պարոններ, — ասաց վարդապետը, ասպետներին, — մենք մեղք չունենք, ափն է այդպես ողորկ: Մենք հանձնվում ենք ձեր զթասրտությանը:

— Անձնատուր ենք լինում, անձնատուր ենք լինում, — գոչեցին նույնպես Գիմնաստն ու Պոնոկրատը:

Ասպետները շարունակ մոտենում էին, իսկ վարդապետը շարունակ ետ-ետ էր գնում, մինչև նկատեց, որ բոլորը ասպետները հանգույցների վրա են:

Այն ժամանակ վարդապետը ձայն տվեց Եվդեմոնին.

— Ձգի՛ր, ձգի՛ր:

Եվդեմոնը նույն բուսակները շրջեց նավը, պարանները փաթաթվեցին ձիերի ոտքերին, և ասպետները դեռ չհասկացած, թե բանը ինչու՞մն է, իրենց ձիերով թափվեցին ծովը ու խեղդվեցին: Նրանցից միայն մեկն ազատվեց, որը տանկակալան ձի ուներ: Նրա ձին կարողացավ դուրս պրծնել հանգույցից և հեծյալի հետ միասին սլացավ դեպի ետ: Բայց Գիմնաստը հետապնդեց նրան և մի հարյուր քայլից թռավ ձիու գավակը: Ասպետին Գիմնաստը զինաթափ արեց ու գերի վերցրեց:

Գարգանտյուան շատ ուրախացավ հաղթանակի համար և գովեց վարդապետին, որ այդպիսի զարմանալի ճարակություն ցույց տվեց: Բոլորը ափ դուրս եկան մի բան ուտելու և մի փոքր հանգստանալու իրենց արդար վաստակից հետո: Նրանք հյուրասիրում էին և գերուն, որը մի բանից էր միայն վախենում՝ չլինի թե հանկարծ Գարգանտյուան իրեն ողջ-ողջ կուլ տա: Գարգանտյուայի համար դա ամենևին դժվար բան չէր: Նա կարող էր մարդուն նույնքան հեշտությամբ կուլ տալ, ինչպես դուք շաքարած նուշը:

Գլուխ XXI

Այն մասին, թե ինչպես Գարգանտյուան և Ժան վարդապետը երկու նշանավոր արձան են կանգնեցնում ծովափին

Նրանց քեֆի ժամանակ Պոնոկրատն ասաց.

— Մի՞թե մենք որսի միս չպիտի ուտենք: Հոգիներս դուրս եկավ մեր նավում աղ դրած միս ուտելով: Մի գնամ տեսնեմ, չի՞ կարելի արդյոք մի բան որսալ:

Եվ նա հենց տեղից վեր կացավ թե չէ, տեսավ անտառի եզրին մի մեծ ու գեղեցիկ այծամ: Պոնոկրատը նետի պես սլացավ նրա ետևից և իսկուն բռնեց. դրանից բացի նա օդի մեջ բռնեց 26 կաքավ, 9 կոցար և 32 վայրի աղավնի: Վերադարձին ոտքերով սպանեց մի դյուժին նապաստակ, տասնհինգ վարազ և երեք մեծ աղվես:

Այդքան բազմատեսակ որսով ծանրաբեռնված վերադարձավ իր բարեկամների մոտ և ինչքան ուժ ուներ գոռաց.

— Եղբայր Ժան, սիրելի բարեկամ, քացախ ճարիր, քացախ, քացախ:

Գարգանտյուան կարծեց, որ Պոնոկրատը իրեն վատ է զգում և պատվիրեց որ քացախ բերեն: Բայց վարդապետը գլխի ընկավ, որ նրա խոսքերից խորովածի հոտ է գալիս և իսկույն ինը շամփուր բերեց: Այնուհետև մեծ խարույկ վառեցին և ստիպեցին գերուն, որ որսած կենդանիները խորովի: Երբ ամեն բան պատրաստ էր, նրանց քեֆին այլևս քեֆ չէր հասնի: Շատ հաճելի էր տեսնել, թե ինչպես են աշխատում նրանց ծնոտները:

Ինչույքը վերջանալուց հետո Գարգանտյուան ասաց.

— Այստեղից հեռանալուց առաջ ես ուզում եմ մի հոյակապ արձան կանգնեցնել ի պատիվ մեր հաղթության:

Եվ ահա ուրախ երգելով ու կատակելով, նրանք հողի մեջ մի ահագին փայտե սյուն տնկեցին: Այդ սյունից կախեցին մարտական թամբ, զրահ, ասպանդակ, տապար, սուր և երկաթե ձեռնոցներ:

Իսկ Գարգանտյուան գրեց հետևյալ մակագրությունը.

Այստեղ աչքի ընկնող գործ են կատարել

Չորս Քաջարի Ասպետներ,

որոնք զինված էին, ոչ միայն զրահով,

այլև խելքով.

Թագավորներ, Դուքսեր, Գյուղացիներ և Չինվորներ

օրինակ վերցրեք նրանցից

և հիշեցեք,

որ մարդուս խելքը

ավելի ուժեղ է, քան բռունցքը:

Այն ժամանակ, երբ Գարգանտյուան հորինում էր այս մակագրությունը, վարդապետը մի ուրիշ սյուն տնկեց, որի վրա մեխեց երեք նապաստակների ականջներ, կաքավի մի թև, քացախով լիքը մի սրվակ, աղով լիքը մի փոքրիկ տուփ, մի հին ու ծակ կաթսա և անագե մի գավաթ: Եվ հետևելով Գարգանտյուայի օրինակին գրեց հետևյալը՝

Հենց նույն այս տեղում

Չորս Դատարկապորտներ

գետնին ուրախ նստած,

քեֆ էին անում ամբողջ օր ու գիշեր,

եվ հոգոցն հանգուցելոց եղավ

պարոն Նապաստակը,

որին բռնել և տապակել էին՝

քացախի մեջ դրած և աղած:

Թագավորներ, Դուքսեր, Գյուղացիներ և Չինվորներ,

հիշեցեք,

որ շոգ ժամանակ

նապաստակն առանց քացախ ուտելը

Շատ վնաս է:

Դե տղերք, բավական է որքան զվարճացանք, — ասաց Գարգանտյուան, երբ բոլորը սրտները ուզածին չափ ծիծաղեցին այս արձանագրությունը կարդալիս: — Այժմ պետք է մտածենք, թե ինչպես գանք Անարխի թագավորի հսկաների հախիցը:

— Այ ինչ եմ ասել խելոք խոսքին, — պատասխանեց վարդապետը և հանկարծ տեղիցը վեր ցատկելով գոչեց.

— Կեցցե՛ Գարգանտյուան:

Գարգանտյուան ուզում էր նույն եղանակով նրան պատասխանել, բայց հանկարծ այնպես փոշտաց, որ ամբողջ երկիրը դրոդաց նրանց չորս կողմը, և նրա այդ աշխարհասասան փոշտոցի հետ միառժամանակ երևան եկան 53000 հազար թզուկ տղամարդիկ, նույնքան էլ կանայք:

— Համա ինչ լավ փոշտալ գիտեք, — ասաց վարդապետը: — Աստված վկա, սրանք հրաշալի թզուկներ են, սրանց պետք է իսկույն պսակել միմյանց հետ:

Այդպես էլ արեց Գարգանտյուան: Նրանց բնակության համար հատկացրեց մի փոքրիկ կղզյակ, և թզուկներն այնտեղ աճեցին ու բազմացան: Սակայն ասում են, որ կռունկները նրանց հետ շարունակ համառ պատերազմ են մղում: Թզուկները քաջությամբ կռվում են կռունկների հետ և հավանորեն շուտով կհաղթեն նրանց:^[39]

Գլուխ XXII

Այն մասին, թե ինչպես է Գարգանտյուան կոտորում քարե զրահներ հազաց 300 հսկաների և նրանց կապիտան Վուրդալակին

Սակայն ո՛վ կարող է պատմել, թե ինչպես Գարգանտյուան այդ երեք հարյուր զարհուրելի հսկաների կյանքին վերջ տվեց: Օ՛, մեծ աստվածներ, դուք տվեք կարողություն իմ խելքին և աշխուժացրեք սիրտս: Ճիշտ եմ ասում, դա մի այնպիսի ահռելի կռիվ էր, որ ամեն անգամ հիշելիս լեզուս կապ է ընկնում:

Նախ և առաջ Գարգանտյուան ազատ արձակեց իր գերուն: Երբ գերին տուն վերադարձավ, պատմեց Գարգանտյուայի քաջագործությունների մասին:

— Գարգանտյուան հրամայեց ուղիղ կեսօրին իր համար ճաշ լինի պատրաստված, — ասաց գերին թագավորին, — այդ ժամին նա մտադիր է հաղթել մեր հսկաներին:

Եվ իրոք, ճիշտ կեսօրին Գարգանտյուան նավի մեծ կայմը ձեռքին մոտեցավ թշնամու բանակին: Նրա դեմ դուրս եկան 300 հսկաներ, որոնք բոլորը հագել էին քարե ամրակուռ զրահներ:

Հսկաներին տեսնելիս վարդապետն ասաց Գարգանտյուային.

— Դեհ, հասել է ժամը, որ ցույց տաք ձեր քաջությունը, դուք ձեր կայմով մի լավ հյուրասիրեք դրանց, մենք էլ ձեզնից ետ չենք մնա:

— Քաջուրջան կողմից անհոգ եղեք, — ասաց Գարգանտյունան, — միայն թե Հերկուլեսն էլ սիրտ չարեց երկուսի դեմ մենակ դուրս գալ:

— Դուք խելքի մոտ բան չեք ասում, — պատասխանեց վարդապետը, — չէ՞ որ դուք հարյուր անգամ Հերկուլեսից ուժեղ կլինեք:

Մինչ նրանք այդպես խոսում էին, հսկաների խմբից բաժանվեց և առաջ անցավ կապիտան Վուրդալակը՝ պողպատե գավազանը ձեռքին: Այդ հսկայի անունը Վուրդալակ էին դրել այն պատճառով, որ նա գայլի պես արյունարբու էր:

Երբ նա Գարգանտյուային տեսավ, հպարտացավ ու պարծենալով ասաց իր ընկերներին.

— Մուհամեդի անունով եմ երդվում, որ եթե ձեզնից մեկն ու մեկը մտքովն անցկացնի կռվի բռնվելու այս քաջի հետ, ես նրան ամենադաժան մահվան կդատապարտեմ: Թողեք մենք երկուսով միմյանց դեմ դուրս գանք, դուք կտեսնեք, թե ինչպես նրա բուրդը քամուն կտամ:

Երբ նրա հրամանը լսեցին, հսկաները քաշվեցին մի կողմ, որտեղ դրված էին գինով լիքը տակառներ: Այդ կողմը քաշվեց և վարդապետը իր զինակիրներով: Այդ սատանայի գավակը իրեն սուտ հիվանդ ձևացրեց՝ պտտում էր վիզը, թափահարում էր ձեռքերը և խռպոտ ձայնով ասում.

— Հայտնում եմ ձեզ, բարեկամներ, որ մենք ձեզ հետ չենք կռվում: Մեզ մի լավ հյուրասիրեք, քանի դեռ մեր տերերը կռվում են:

Հսկաբերը համաձայնեցին և նստեցրին նրանց իրենց կողքին, որ միասին քեֆ անեն:

Իսկ այդ ժամանակ Վուրդալակը կամաց-կամաց մոտենում էր Գարգանտյուային, ճոճելով իր ահռելի գավազանը:

Գարգանտյունան համարձակ գնաց նրա դեմ և ինչքան ուժ ուներ բղավեց.

— Մահ քեզ, մահ չարագործին:

Այս ասելով նա իր գոտուց կախված ապրանքատար նավակից վերցրեց աղով լիքը տասնութ տակառ ու շարտեց ուղիղ Վուրդալակի երեսին: Աղը լցվեց նրա կոկորդը, աչքերը և քիթը: Վուրդալակը կատաղությունից իրեն կորցրած՝ բարձրացրեց գավազանը և անշուշտ տեղնուտեղը կապաներ Գարգանտյուային, եթե ժամանակին նա մի կողմ չցատկեր: Նրա գավազանը սակայն կպավ նավակին, որ 4806 կտոր եղավ և ամբողջ աղը գետնին թափվեց:

Այն ժամանակ Գարգանտյունան կայմի հաստ ծայրով խփեց Վուրդալակի կրծքին և հետո շատ ճարպիկ կերպով մի ուժեղ հարված էլ հասցրեց նրա վզին և երկաթե կրծկակայի մեջտեղին: Դրանից հետո Գարգանտյունան ուզեց մի հարված էլ հասցնել Վուրդալակին, բայց վերջինս այնպես վրա բերեց իր գավազանը, որ մազ մնաց Գարգանտյուային մեջտեղից կես աներ: Գարգանտյունան նորից ճարպկորեն խուսափեց և Վուրդալակի գավազանը 73 արշին խորությամբ խրվեց հողի մեջ, որից 9006 տակառից ավելի կայծեր դուրս թռան:

Երբ Վուրդալակը ճիգ էր գործ դնում իր գավազանը գետնից հանելու, Գարգանտյունան վազեց նրա մոտ, որ գլուխը կտրի: Բայց այդ բոլորն մի դժբախտություն պատահեց: Գարգանտյուայի կայմը կպավ Վուրդալակի գավազանին և երկու կտոր եղավ:

Վուրդալակի գավազանը կախարդված էր: Գարգանտյուայի ձեռքին մնացել էր միայն մի փոքրիկ կտորը:

Գարգանտյուան իրեն այնպես կորցրեց, որ գոչեց.

— Հե՛յ, եղբայր Ժան, որտե՞ղ ես, սիրելիս:

Այս խոսքերը վարդապետը որ լսեց, հսկաներին ասաց.

— Աստված վկա, մեր տերերը այժմ միմյանց բոլորովին հաշմանդամ կդարձնեն, գնանք նրանց իրարից բաժանենք:

Հենց այն է ուզում էր գնալ իր տիրոջն օգնության, երբ հսկաներից մեկը բռնեց նրա փեշից և նստեցրեց տեղը:

— Եթե մեկ էլ տեղիցդ շարժվես, — ասաց հսկան, — քեզ այնպես կփակեմ վարտիքիս մեջ, որ ընդմիշտ այնտեղից դուրս չես գա:

Իսկ այդ ժամանակ Գարգանտյուան՝ կայմի մի կտորը ձեռքին բռնած, ամբողջ ուժով ծեծում էր Վուրդալակին: Սակայն Վուրդալակին վերջ ի վերջո հաջողվեց իր գավազանը դուրս քաշել գետնից և նորից հարձակվել թշնամու վրա:

— Չարագո՛րծ, — բացականչեց Գարգանտյուան, — ես քեզ հիմա ցույց կտամ:

Եվ նա ոտքով այնպես խփեց Վուրդալակի փորին, որ սա գետին գլորվեց և ոտքերը վեր ցցեց: Այն ժամանակ Գարգանտյուան բռնեց նրա ոտքերից ու գետնի վրա քարշ տալով տարավ:

— Մուհամե՛ղ, Մուհամե՛ղ, — աղաղակում էր Վուրդալակը: Նրա ձայնը լսելուն պես բոլոր հսկաները վեր թռան տեղներից և վազեցին իրենց տիրոջն օգնելու:

Երբ Գարգանտյուան տեսավ, որ հսկաները պիտի հարձակվեն իր վրա, նա Վուրդալակին բարձրացրեց գլխից վերև և չորս կողմը պտտեցնելով, ինքը հարձակվեց հսկաների վրա: Ահա այդ ժամանակ սկսվեց մի այնպիսի կոտորած, որի նմանը աշխարհում չէր եղել: Հսկաներն ահագին խմբերով գետնին էին գլորվում: Նրանց քարե գրահները հազար կտոր էին լինում, և չորս կողմը այնպիսի դողդոց էր բարձրացել, որ մեր քաղաքում, լավ հիշում եմ, բոլոր ապակիները կոտրատվեցին:

Երբ այլևս ոչ մի կենդանի հսկա չմնաց, Գարգանտյուան Վուրդալակի դիակը շարտեց քաղաքի մեջ: Վուրդալակը գորտի նման երեսի վրա փռվեց քաղաքի գլխավոր հրապարակում և վայր ընկնելիս տեղնուտեղը սպանեց մի հալից ընկած որձ կատու, մի ուրիշ թրջված կատու, մի փետրահան եղած բադ և մի սագ:

Գլուխ XIII

Այն մասին, թե ինչպես է վարդապետը Անարիս թագավորին դարձնում սոխաջուր ծախող

Այդ հրաշալի հաղթանակից հետո թշնամու ամբողջ գորքը կամովին անձնատուր եղավ Գարգանտյուային և իրենց թագավորին տվեց նրա ձեռքը:

Մի անգամ, երբ մեր բարեկամները խնջույք էին սարքել թշնամուց խլած ճամբարում, վարդապետը հարցրեց Գարգանտյուային.

— Իսկ թագավորին ի՞նչ անենք: Նա այլևս իր պետությունը չի կառավարելու, ուրեմն նրան պետք է մի արհեստ սովորեցնենք, որ գլուխը պահի, թե չէ քաղցից կմեռնի:

— Ճիշտ ես ասում, — ասաց Գարգանտյուան, — հանձնում եմ նրան քեզ, արա, ինչ ուզում ես:

Վարդապետը նրան հագրեց նավաստիական բաճկոն և վարտիք, բայց ոտնաման չտվեց:

— Այդպիսի զգեստին ոտնամանը սազ չի գա, — ասաց վարդապետը և թագավորին տարավ Գարգանտուայի մոտ:

— Այս մի հոգևորին ճանաչո՞ւմ եք, — հարցրեց վարդապետը:

— Ոչ, չեմ ճանաչում, — ասաց Գարգանտյուան:

— Մա այժմ երեք խորոված սոխի վրա իշխող թագավորն է: Ես ուզում եմ սրան կարգին մարդ դարձնել: Ուզում եմ սրան սոխաջուր ծախող դարձնել: Դեհ, գոռա՝ «սոխաջո՛ւր, լավ սոխաջո՛ւր առնող»:

— Սոխաջո՛ր, լավ սոխաջուր առնող, — գոռաց թագավորը:

— Չեղա՛վ, շատ կամաց ես գոռում, — ասաց վարդապետը:

Եվ բռնելով թագավորի ականջից ավելացրեց.

— Մի քիչ բարձր գոռա, գրողը քեզ տանի, կոկորդո ես խնայում, ի՞նչ է:

— Լավ սոխաջուր առնո՛ղ, — գոռաց թագավորն որքան ուժ ուներ:

Գարգանտյուան ծիծաղից թուլացավ:

Երկու օր հետո վարդապետը թագավորին պասկեց լապտերներ վառող մի պառավ կնոջ հետ: Հարսանիքին բոլորը լավ քեֆ արին: Ճաշին մի լավ կերան ոչխարի գլուխ, երշիկ՝ մանանեխով և թոք՝ սխտորով: Բացի այդ, վարձել էին մի կույր երաժիշտ, որը պարկապզուկ էր փչում, և հյուրերը մինչև կեսգիշեր պարեցին:

Մյուս օրը վարդապետը նորապսակներին տարավ պալատ և ներկայացրեց Գարգանտյուային: Գարգանտյուան նրանց մի սանգ նվիրեց, որ մեջը սոխի գլուխ ծեծեն, իսկ բնակության համար քաղաքի ծայրում մի տնակ հատկացրեց: Այդ օրվանից սկսած Անարխը^[40] դարձավ ամբողջ պետության մեջ ամենալավ սոխաջուր ծախողը: Բայց ինձ ասել եմ, որ կինը նրան անխնա ծեծում է, իսկ այդ ավանակն այնքան հիմար է, որ ամեն տեսակ ծեծ ու անարգանք տանում է և ինքն իրեն պաշտպանել չի կարողանում:

Գլուխ XXIV

Այն մասին, թե ինչպես է Գարգանտյուան իր լեզվով ծածկում մի ամբողջ բանակ, և ինչ է տեսնում հեղինակը նրա բերանում

Իր բոլոր քաջագործությունները կատարելուց հետո Գարգանտյուան նավը բարձել տվեց ամեն տեսակ բարիքներով, տուն ուղարկեց, իսկ ինքը իր բարեկամների հետ միասին վճռեց տուն վերադառնալ ցամաքային ճանապարհով: Թշնամու ողջ բանակը մեծ պատվով ճանապարհի դրեց նրան մինչև սահմանը: Ճանապարհին սաստիկ անձրև տեղաց: Չինվորները մրսում էին և միմյանց կաշում տաքանալու համար: Երբ Գարգանտյուան նկատեց զորքի մեջ առաջ եկած անկարգությունը, հրամայեց զինվորներին, որ խիտ շարքեր կազմեն: Հենց որ զինվորները շարքեր կազմեցին, Գարգանտյուան լեզվի կեսը բերանից հանեց և նրանով պատսպարեց ամբողջ զորքը:

Իսկ ես, այս պատմությունն անողս, որի մեջ ոչ մի սուտ կամ հնարովի բան չկա, անձրևից պատսպարվեցի մի ահագին կռատուկի տակ: Մի քիչ հետո նկատեցի, որ զինվորները ինձանից ավելի լավ են պատսպարված, այդ պատճառով էլ վազեցի նրանց մոտ: Բայց այլևս անհնար էր լեզվի տակ մտնել, զինվորներն այնպես էին սեղմվել այնտեղ, որ ասեղ գցելու տեղ չկար: Ես վճռեցի վեր բարձրանալ և մոտ երկու վերստ ճանապարհ անցա Գարգանտյուայի լեզվի վրայով, մինչև մտա նրա բերանը:

Տեր իմ աստված, ինչե՛ր տեսա այնտեղ: Թող երկնքի կայծակները գլխիս թափվեն, եթե սուտ եմ ասում: Կարծես մի ահագին քարանձավի մեջ էի ընկել, որտեղ կային հսկայական ժայռեր: Դրանք երևի Գարգանտյուայի ատամներն էին: Բացի դրանից, տեսնում էի այնտեղ ահագին մարգագետիններ, խիտ անտառներ և քաղաքներ, որոնք իրենց մեծությամբ պակաս չէին Լիոնից, կամ Օռլեանից: Ինձ առաջինը պատահեց մի կորած-մոլորած մարդ, որ կաղամբ էր տնկում:

— Բարեկամ, դու այստեղ ի՞նչ ես անում, — հարցրի ես զարմացած:

— Կաղամբ եմ տնկում, — պատասխանեց նա:

— Կաղամբ, — զարմացա ես: — Կաղամբը ինչի՞ համար ես տնկում:

— Էհ, պարոն, պատասխանեց այդ մարդը, — բոլոր մարդիկ էլ հո հարուստ չեն ծնվում: Ես, ինչպես տեսնում եք, կաղամբ եմ տնկում, հետո ծախում եմ քաղաքում և դրանով իմ օրվա ապրուստը հոգում:

— Տեր աստված, — բացականչեցի ես, — այստեղ նոր աշխարհի է, ինչ է:

— Ամենևին էլ նոր չի, — պատասխանեց այդ խեղճ մարդը: — Ասում են, մի ինչ-որ տեղ նոր աշխարհ կա: Ասում են, որ իբր այնտեղ էլ են լույս տալիս արեգակը, լուսինը, երկնքի աստղերը: Բայց դա նոր երկիր է, իսկ մեր երկիրը նրանից շատ ու շատ հին է:

— Թող քո ասածը լինի, — պատասխանեցի ես, — իսկ ինչպես է կոչվում այն քաղաքը, որտեղ դու տանում ես ծախելու քո կաղամբը:

— Կոկորդաքաղաք, — պատասխանեց նա: — Նրա բնակիչները լավ մարդիկ են և ձեզ լավ ընդունելություն ցույց կտան:

Վճռեցի գնալ այդ քաղաքը:

Ճանապարհին հանդիպեցի մի երիտասարդի, որ աղավնիներ էր որսում:

— Բարեկամ, — հարցրի նրանից, — որտեղի՞ց եք վերցնում այդ աղավնիները:

— Նրանք, տեր իմ, թռչում գալիս են այն աշխարհից:

Այժմ ես գլխի ընկա, որ աղավնիները թռչելով մոտում են Գարգանտյուայի բերանը, երբ նա հորանջելիս է լինում: Աղավնիները երևի այնպես են կարծում, որ դա ոչ թե բերան է, այլ աղավնարուն:

Վերջապես հասա քաղաքը: Բայց այստեղ ինձանից անցագիր պահանջեցին:

— Ի՞նչ անցագիր, — զարմացած հարցրի ես, — այստեղ ժանտա՞խտ կա ինչ է:

— Էհ, պարոն, — պատասխանեց պահապանը, — այս կողմերի ժողովուրդն այնպես է կոտորվում, որ հագիվ են կարողանում բոլորին թաղել:

— Ի՞նչ եք ասում, այդ որտե՞ղ, — հարցրի ես:

Պահապանները ցույց տվին ինձ մի ահագին վիհ, որից բարձրացող զարշահոտությունից մարդու շունչ էր կտրվում: Այդ ժանտահոտից էր առաջ եկել ժանտախտը, որից այդ երկրում վերջին շաբաթվա ընթացքում 2.260.016 մարդ էր կոտորվել: Լավ մտածելուց հետո գլխի ընկա, որ այդ ժանտախտը բարձրանում էր Գարգանտյուայի ստամոքսից, որը մի շաբաթ առաջ չափազանց շատ սխտոր էր կերել Անարխի թագավորի հարսանիքին:

Քաղաքից հեռանալուց հետո անցնում էի երկու շաբթ ժայռերի միջով, որոնք ատամներ էին: Երբ բարձրացա ատամներից մեկի վրա, տեսա աշխարհիս ամենագեղեցիկ վայրերը՝ մեծ-մեծ սենյակներ՝ գնդակ խաղալու համար, գեղեցիկ սրահներ, շատ այգիներ և իտալական ճաշակով կառուցված անթիվ, անհամար տներ: Այդ վայրերում մոտ չորս ամիս ապրեցի, հետո նրա ստորին ատամներով ցած իջա ներքև:

Ճանապարհին ինձ կողոպտեցին ավազակները: Այդ դեպքը պատահեց մի մեծ անտառում, ականջների մոտ: Մի կերպ ավազակներից ազատվելով, մտա մի գյուղ, որտեղ մի քիչ դրամ վաստակեցի: Եվ գիտե՞ք ինչպես՝ քնելով: Այդ վայրերում մարդկանց օրահաշվով վարձում են նրա համար, որ քնեն: Այդ սրիկաները օրական հինգից մինչև վեց սու են աշխատում: Իսկ նրանք, որոնք քնելիս կարողանում են լավ խոնփացնել, կարող են մինչև յոթուկես սու աշխատել:

Վերջ ի վերջո ես վերադարձա. Գարգանտյուայի մորուքի վրայով թռա նրա ուսերին, այդտեղից իջա գետնին և կանգնեցի նրա առաջ:

— Այդ որտեղի՞ց դուրս եկար, Ռարլե, — հարցրեց Գարգանտյուան:

— Ձեր կոկորդից, տեր իմ:

— Ինչա՞ն ժամանակ ես այնտեղ մնացել:

— Ամբողջ ժամանակ, երբ դուք հայրենիք էիք վերադառնում:

— Բայց մենք վեց ամսից ավելի ճանապարհ ենք գնացել, — ասաց Գարգանտյուան, — այդքան ժամանակ դու ի՞նչ էիր ուտում:

— Ամենալավ պատառները, որ դուք ձեր բերանն էիք դնում, — պատասխանեցի ես:

— Հա՛, հա՛, հա՛, — ծիծաղեց Գարգանտյուան, — երևում է, դու շատ ճարպիկն ես, Ռարլե: Դրա համար նվիրում եմ քեզ Մալմիգոնդեն⁴⁴¹ դոյակը:

— Մեծապես շնորհակալ եմ, տեր իմ, — պատասխանեցի ես, դուք ինձ վարձատրում եք այնպես, ինչպես վայել է արքային:

Այնուհետև մենք բաժանվեցինք, միմյանցից շատ գոհ լինելով:

Գլուխ XXV

Այն մասին, թե ինչպես է կառուցվել Տելեմի վանքը

Երբ Գարգանտյուան տուն վերադարձավ, նա իր գորքի համար մի այնպիսի խրախճանք սարքեց, որի նմանը չէր եղել Նոյի տարվանից սկսած: Հացկերույթը վերջանալուց հետո նա հրամայեց մասնակցողներից ամեն մեկին վճարել մեկ միլիոն երկու հարյուր հազար ոսկի: Բացի դրանից, նա իր զինակիցներից յուրաքանչյուրին պարգևեց մի-մի քաղաք: Պոնոկրատը ստացավ Լյա-Ռոշ-Կլերմոն քաղաքը, Գիմնաստը՝ Լյա-Կուդրե, Եվդեմոնը Մոնպանսիե: Միայն վարդապետը մնաց առանց քաղաքի:

Գարգանտյուան ոգևոծ էր Սելինում նրան վանահայր դարձնել, բայց վարդապետը հրաժարվեց:

— Եթե դուք ցանկանում եք ինձ մի պարգև տալ, — ասաց նա Գարգանտյուային, — այն ժամանակ թույլ տվեք ինձ իմ ճաշակով մի նոր վանք կառուցել:

— Ինչո՞ւ անպատճառ նոր վանք, — հարցրեց Գարգանտյուան:

— Նրա համար, — պատասխանեց վարդապետը, — որ իմ վանքը չպետք է կառուցվի այնպես, ինչպես մյուս վանքերն են, այլ դրանց բոլորովին հակառակ:

— Լա՛վ, — ասաց Գարգանտյուան, — բայց բոլոր վանքերը շրջապատված են պարիսպներով, ուրեմն քո վանքը առանց պարիսպի՞ պիտի լինի:

— Միանգամայն ճիշտ է, — պատասխանեց վարդապետը, — ինչի՞ համար են պարիսպները, պատերը: Որտեղ պատ կա, այնտեղ բանտ կա, գժտություն կա, ընդհարում կա: Ես ցանկանում եմ, որ իմ վանքում միշտ ուրախ լինեն, բոլորն էլ իրենց ազատ զգան:

— Երբ վանքը մի կին է մտնում, — շարունակեց Գարգանտյուան, — ամենքը նրա վրա այնպես են նայում, ինչպես մի հրեշի վրա և հետո երկար ժամանակ մաքրում են այն տեղը, որտեղ նա կանգնած է եղել:

— Իմ վանքում այդպես չի լինի, — ասաց վարդապետը: — Ես հարկադրված կլինեմ պաշտպանել իմ վանքը ոչ թե կանանցից, այլ ամեն տեսակ վարդապետներից ու կեղծ բարեպաշտներից, որովհետև նրանցից ավելի վատթար մարդ չկա աշխարհում:

— Դարեր շարունակ, — շարունակեց Գարգանտյուան, — վանք են մտնում կաղերը, կույրերը, սապատավորները, հոգեպես խեղաթյուրվածները և դատարկապորտները, որոնք փախչում են աշխատանքից:

— Ոչ, անհոգ եղեք, — ասաց վարդապետը, — այդպիսիների համար ինձ մոտ տեղ չի լինի: Իմ վանքը կընդունվեն միայն առողջ ու գեղեցիկ երիտասարդներ և աղջիկներ: Վանքում նրանք ուսում կառնեն, օգտակար գրքեր կկարդան, զանազան երաժշտական գործիքներ կնվագեն, կգրոսնեն ու կզվարճանան, մինչև որ կմեծանան ու չափահաս մարդիկ կդառնան: Դա նրանց համար լավ ուսումնարան կլինի:

— Թող քո կամքով լինի, — ասաց Գարգանտյուան և պարզեց նրան Տելեմի ամբողջ շրջանը մինչև Լաուրա գետը:

Այստեղ վարդապետը կառուցեց մի վանք, որ կոչեց Տելեմի վանք:

Դա մի մեծ, վեցանկյուն շինություն էր: Յուրաքանչյուր անկյունում կառուցված էր մի-մի բարձր ու գեղեցիկ աշտարակ: Բոլոր վեց աշտարակները միևնույն ձևով էին կառուցված:

Դա մի հոյակապ շինություն էր, որ բաղկացած էր վեց հարկից: Պատերը սվաղած էին ֆլամանդական գաջով: Կտուրը ծածկված էր թերթաքարով: Քիվերի վրա դրված էին մարդկանց ու կենդանիների ոսկեգօծ արձաններ: Կեղտաջրի խողովակները նախշված էին ոսկով և ապակիներով: Այդ խողովակներից կեղտաջուրը թափվում էր լայն փողրակների մեջ, որոնք գետնի տակով հասնում էին մինչև գետը:

Վանքում կար 9332 սենյակ, որոնց բոլորի դռները տանում էին դեպի մի մեծ դահլիճ: Ներքևից շատ գեղեցիկ սանդուղքով բարձրանում էին դեպի դահլիճ: Այդ սանդուղքը այնքան լայն էր, որ շարքով կանգնած վեց զինված տեգավորներ կարող էին բարձրանալ մինչև դահլիճ:

Աջ կողմից երկու աշտարակների միջև գտնվում էր անագին գրադարանը: Չափ կողմում ապրում էին դեռահաս աղջիկները, իսկ մնացած սենյակներում՝ երիտասարդները: Աղջիկների սենյակների պատուհանների առջև գտնվում էին թատրոնը և մի ավագան՝ լողանալու համար, այնտեղ էր նաև հոյակապ բաղնիքը իր հրաշալի խեժահոտ ջրով:

Շինության շուրջը գեղեցիկ ծառաստան էր զբոսանքի համար, իսկ ծառաստանի կողքին կար մի պտղատու այգի, որտեղ ծառերը տնկված էին շեղաշարք ձևով: Տղաներն ու աղջիկները շատ համերաշխ էին ապրում այնտեղ: Նրանք հետևում էին մի կանոնի՝ բոլորն անեն այն, ինչ ցանկանում է իրենցից մեկը: Օրինակ՝ եթե նրանցից մեկն ասում էր՝ «կարդանք», բոլորը կարդում էին: Եթե մեկն ասում էր «խաղանք», բոլորը խաղում էին: Եթե մեկն ասում էր՝ «գնանք ծառերի տակ մի փոքր վազվզենք», բոլորը համաձայնում էին ու գնում:

Հաճախ նրանք որսի էին գնում: Աղջիկները շորորածի էին նստում, ձեռնոց հագնում և պահում մատների վրա բազե կամ ճուռակ: Այդ թռչունները այնպես էին վարժեցված, որ որս անելիս բռնում էին բոլոր պատահած թռչուններին: Այդպես նրանք բազեներով որսի էին գնում և ուրախ ու զվարթ ժամանակ անցկացնում:

Եվ նրանք բոլորը այնքան կրթված էին, որ չկար մեկը, որ չկարողանար կարդալ, գրել, երգել, հինգ-վեց լեզվով խոսել և ոտանավորներ գրել...

Գարգանսյուան հաճախ այցելում էր Տելեմի վանքը և միշտ ասում էր, որ ինքը դեռ ոչ մի ուրիշ տեղ չի տեսել այդպես խելոք ու կրթված մարդկանց:

Երկրորդ մաս

Գարգանսյուայի որդի՝ բարի Պանտագրյուելի կյանքի պատմությունը

Գլուխ I

Մեծ Պանտագրյուելի մանկությունը

Այժմ պատմեմ ձեզ սքանչելի Պանտագրյուելի մանկության մասին: Պանտագրյուելի մայրը՝ հսկա Բադեբեկը մեռնում է, հենց որ որդուն լույս աշխարհ է բերում: Իսեղճ Գարգանսյուան չէր իմանում ինչ անի, լաց լինի՞, թե ուրախանա:

— Ի՞նչ անեմ, — ասում էր ինքն իրեն հուսահատված Գարգանսյուան: — Լա՞ց լինեմ: Շատ լավ, բայց ինչո՞ւ: Որովհետև մեռավ իմ լավ, իմ բարի կինը, և ես նրան այլևս երբեք չեմ տեսնի: Ա՛խ, Բադեբեկ, իմ հոգիս, իմ սիրելիս, իմ պստիկ Բադեբեկս (այդ պստիկ Բադեբեկի հասակը երկու սաժինից ավելի կլիներ), իմ հոգյակս, ջանիկս, սրտիս կտորը, ի՞նչ անեմ այժմ առանց քեզ: Իսե՛ղճ, իսե՛ղճ իմ Պանտագրյուել, դու գրկվեցիր քո մայրիկից, իմ աչքի լույս գավակս:

Եվ այդ ասելիս Գարգանսյուան բառաչում էր կովի պես: Մեկ էլ հանկարծ սկսում էր ծիծաղել, հիշելով Պանտագրյուելին:

Ա՛խ, իմ որդի, — ասում էր նա, — իմ թռչնիկ, իմ փոքրիկ կատու: Որքան շնորհակալ պիտի լինեմ ես բախտից, որ պարգևել է ինձ այդպիսի մի սիրունիկ, ուրախ ու սիրելի որդի: Ա՛խ, ա՛խ, ա՛խ: Բայց անձնատուր չլինենք վշտին, խմենք, որ վիշտը մոռանանք: Բերեք շուտով ամենալավ գինին, մաքրեցեք բաժակները, սեղան պատրաստեցեք, շներին դուրս քշեցեք, բուխարին վառեք, դռները փակեցեք, կերակուրները լցրեք ամանների մեջ: Մեկ էլ կանչեցեք աղքատներին և փող տվեք նրանց: Իսկ ես վերարկուս կհանեմ և միայն բանկոնով քե՛ֆ կանեմ: Դեհ, շուտ արեք, գինի հասցրեք:

Իսկ Պանտագրյուելն այդ ժամանակ օրորոցում պառկած սպասում էր, որ իրեն կաթ տան: Ամեն առավոտ նա խմում էր 4600 կովերի կաթը: Նա ծծմայր չուներ, իսկ կաթ հարկավոր էր անչափ, անսահման: Մի անգամ աղախինները կաթն ուշացրին, և Պանտագրյուելը բարուրի շորերը դեն շարտեց, մի կովի ոտքից բռնեց, քաշեց դեպի իրեն և այնպես կալավ նրա կրծքից, որ կովը սաստիկ բառաչեց, կարծեց թե գայլերն են իրեն հոշոտում: Բառաչոցը լսելով վրա հասան մարդիկ և մի կերպ կովին ազատեցին Պանտագրյուելի ձեռքից:

Այդ դեպքից հետո Գարգանայության հրամայեց իր տղային հաստ թոկերով կապել օրորոցից: Բայց մեկ անգամ մի ահագին արջ, որ Գարգանայության պահում էր իր տանը կապած, շղթան կտրեց և մոտենալով տղային, լիզում էր նրա երեսը: Դրանից քիչ առաջ դայակները երեխային շիլա էին տվել ուտելու և մոռացել էին բերանը մաքրել: Հենց այդ շիլան էլ գրավել էր արջին:

Եվ ի՞նչ եք կարծում, ի՞նչ արեց Պանտագրյուելը: Նա իրեն գոռ է տալիս, կտրատում թոկերը, բռնում է արջին երկու ձեռքով և պատառ-պատառ անում, ինչպես մի հավի ճուռի: Բայց գործը դրանով չի վերջանում, նա տաք-տաք ուտում է իր սպանած արջի միսը և չի թողնում, որ սառչի:

Տղայի այդ սարսափելի ուժը տեսնելով, Գարգանայության երկյուղ է կրում, որ նա մի օր ինքն իրեն կվնասի: Դրանից հետո Պանտագրյուելին չորս հաստ երկաթե շղթայով գամում են օրորոցին: Այդ շղթաներից մեկը մինչև այժմ էլ մնում է Լյա-Ռոշել քաղաքում: Շղթան կախված է այնտեղի նավահանգստում, երկու աշտարակների միջև: Երկրորդ շղթան այժմ Լիոնում է, երրորդը՝ Անժերեում, չորրորդի համար, ասում են, թե չարքերը գողացել են, որ Սատանային կապեն: Ասում են, նույնպես, որ այդ ժամանակ Սատանայի փորը ցավելիս է եղել, և չարքերը վախեցել են, որ դրանից իրենց բանը կարող է վատանալ: Այսպես, ուրեմն, Պանտագրյուելին կապել էին շղթաներով, և այդ ժամանակից սկսած նա հանգիստ պառկած էր օրորոցում:

Բայց մի անգամ, երբ Գարգանայության ինչ-որ տոնի առթիվ, շատ մեծ խնջույք էր սարքել, դայակների գլուխն այնպես է խառնված լինում, որ նրանք բոլորովին մոռանում են Պանտագրյուելին: Ի՞նչ է անում նա: Դեհ, լսեցեք, պատմեմ, բարի մարդիկ: Պանտագրյուելը նախ փորձում է շղթաները ձեռքով կտրտել: Բայց նրան չի հաջողվում, որովհետև շղթաները շատ ամուր են լինում: Այն ժամանակ նա, որքան ուժ ունի, ոտքերով խփում է օրորոցին և կոտրում օրորոցի մի ծայրը, թեպետ դրա հաստությունը մեկուկես արշինից պակաս չէր լինի: Պանտագրյուելը օրորոցից հանում է ոտքերը, մեկնում ու հասցնում մինչև գետին և կանգնում: Օրորոցն էլ նրա հետ միասին բարձրանում է և կախ ընկնում նրա մեջքին: Եթե դուք այդ ժամանակ տեսնեիք Պանտագրյուելին, ձեզ կթվար, թե դա ծովային մի ահագին նավ է, որ գլխի վրա կանգնած քայլում է սենյակում:

Իսկ Պանտագրյուելի համար դա շատ հասարակ բան էր: Այդ դրությամբ նա սանդուղքով իջնում է և մտնում այն դահլիճը, որտեղ քեֆ էին անում հյուրերը: Մարդիկ ծիծաղից ուշաթափ են լինում: Պանտագրյուելի ձեռքերը կապված էին, այդ պատճառով էլ նա կռանում է սեղանի վրա և ուտելիքը ատամով վերցնում:

Գարգանայության այլևս չկարողացավ համբերել և հրամայեց արձակել Պանտագրյուելին: Շղթաները բաց արին և երբ մեր չարաճճին իրեն ազատ զգաց, ջարդուփշուր արեց և 1500 կտոր դարձրեց իրեն ատելի օրորոցը: Դրանից հետո նա հանգիստ նստեց հյուրերի կողքին և մի կուշտ ընթրեց:

Գլուխ II

Այն մասին, թե ինչպես Պանտագրյուելը հանդիպում է Պանուրգին,^[42] որին նա սիրում էր մինչև իր կյանքի վերջը

Պանտագրյուելը մեծանում էր ոչ թե օրերով, այլ ժամերով: Ուսումնարանում նա ամենալավ աշակերտն էր: Երբ ուսումն այնտեղ ավարտեց, Պանտագրյուելը գնաց ուրիշ քաղաքներ, այնտեղ էլ խելք ու գիտություն ձեռք բերելու: Տուլուզում նա սովորեց պարել և սուսերամարտել: Այնտեղի ուսանողները սուսերամարտի լավագույն վարպետներն են: Բայց երկար չմնաց Տուլուզում: Նա մեկ անգամ տեսնում է, թե ինչպես են խարույկի վրա խորովում մի պրոֆեսորի, որը վարդապետների կամքով չէր գնացել:

— Աստված ինձ ազատի այս տեսակ մահից, — ասաց Պանտագրյուելը, — ես հո ապխտած ձուկ չեմ, և ամենևին չեմ ուզում, որ ինձ խորովեն:

Եվ հենց մյուս օրը նա մեկնեց Տուլուզից:

Մոնպելիեում նա ուզեց մտնել բժշկական ֆակուլտետ, բայց տեսավ, որ բոլոր բժիշկներից դեղի հոտ է գալիս: Այն ժամանակ նա որոշեց դատավոր դառնալ, իսկ դատավորներ այնտեղ միայն չորս հոգի կային, այն էլ նրանցից երեքը ոջլոտ էին, մեկը՝ ճաղատ:

Անժերեում էլ նրա գործը հաջող չգնաց: Այնտեղ ժանտախտ էր սկսվել, և Պանտագրյուելը ստիպված էր իսկույն մեկնել այդ քաղաքից:

Դրանից հետո Պանտագրյուելը երկար ժամանակ սովորում է Բուրժեում և այնուհետև գալիս է Փարիզ: Փարիզում նա սովորում է մի քանի տարի և այնպիսի հաջողությամբ, որ նշանավոր գիտնականի անուն է հանում:

Եվ ահա մի անգամ իր ընկերների հետ քաղաքի շրջակայքում զբոսնելիս Պանտագրյուելը պատահում է հանելի արտաքինով մի մարդու, որի մարմինն ամբողջապես ծածկված էր վերքերով և շորերն այնպես էին պատառոտված, կարծես քիչ առաջ շներն էին այդպես զգզել:

Հեռվից տեսնելով նրան՝ Պանտագրյուելը ասաց ընկերներին.

— Տեսնո՞ւմ եք այդ մարդուն: Գրագ կգամ, որ դա ոչ թափառաշրջիկ է և ոչ մուրացկան, թեկուզ առաջին հայացքից մուրացկանի նման է երևում:

Եվ երբ անձանոթը հավասարվեց նրանց, Պանտագրյուելը ասաց նրան.

— Բարեկամ, խնդրում եմ կանգնեցեք, մի բան եմ ուզում ձեզ հարցնել: Դուք չեք զոջա իմ հարցին պատասխանելու համար, որովհետև ես տեսնում եմ, որ դուք դժբախտ եք և ուզում եմ ձեզ օգնել: Նախ և առաջ ասացեք ինձ, ո՞վ եք դուք, ո՞րտեղից եք, ո՞ւր եք գնում, ի՞նչ եք փնտրում և ինչպե՞ս է ձեր անունը:

— Յունկեր, գոթ հեր էյիս գյուկ ունգ հելլ, — պատասխանեց անձանոթը գերմաներեն:

— Բարեկամ, — ասաց Պանտագրյուելը, — ես այդ լեզուն չեմ հասկանում, խնդրում եմ, ուրիշ լեզվով խոսեցեք:

— Այլբարիդիմ գոտֆանո դեշմին քրին ավաբո դորդիո ֆայլբրոտ ռինգվամ այլբարաս, — պատասխանեց անձանոթը:

— Դուք բան հասկացա՞ք, — հարցրեց Պանտագրյուելը իր ընկերներին:

— Երևի դա վայրերնինների լեզու է, — ասաց Պանտագրյուելի դաստիարակ Էպիտեմոնը,^[43] աստանան էլ այդ լեզուն չի հասկանա:

— Քավոր ջան, — ասաց Պանտագրյուելը անձանոթին, — գուցե այս պատերը ձեզ հասկանան, բայց մենք ձեր ասածից ոչինչ չենք հասկանում:

Դրան անձանոթը պատասխանեց:

— Լորդ, հեֆտ տուր բե սուա վիրտուս բե ինտելիջենս:^[44]

— Միրելի բարեկամ, — հարցրեց անձանոթին Էպիտեմոնը, — դուք ի՞նչ լեզվով եք խոսում, մարդո՞ւ, թե կապիկների:

— Իոնա անդիե, գուասա, գոուսի էտան, բեխորդա էրբեմեդիս,^[45] — պատասխանեց անձանոթը:

— Ոչ, տեսնում եմ, ձեզ բան հասկացնել չի լինի, — ասաց Պանտագրյուելը, — բայց մի՞թե դուք ֆրանսերեն չգիտեք:

— Այ թե ի՞նչ, — բացականչեց անձանոթը: — Ինչպես կարող եմ չիմանալ ֆրանսերեն, քանի որ դա իմ մայրենի լեզուն է, ինքս ծնվել ու մեծացել եմ Ֆրանսիայում:

— Դե որ այդպես է, — ասաց Պանտագրյուելը, — ասացեք մեզ, ի՞նչ է ձեր անունը և ո՞ր եք գնում: Ազնիվ խոսք, դուք այնպես դուր եք եկել ինձ, կարծում եմ, մենք միմյանցից երբեք չենք բաժանվի, եթե միայն դուք ցանկանաք դա:

— Պարոն, — ասաց անձանոթը, — իմ անունը Պանուրգ է: Ես այժմ գալիս եմ Տանկաստանից: Երկար ժամանակ թուրքերի մոտ գերի եմ եղել: Եթե ցանկանում եք, որ ձեզ հետ լինեմ, հաճույքով կգամ ուր կամենաք, և ազատ ժամանակ կպատմեմ ձեզ ինձ պատահած դժբախտ արկածների մասին: Իսկ այժմ ես սաստիկ ուտել եմ ուզում, փորս բոլորովին դատարկ է, կոկորդս չորացած, քաղցից ատամներս կափկափում եմ և սոված գայլի պես ուտել եմ ուզում: Եթե ուզում եք փորձել, թե ինչի եմ պետք, նախ և առաջ կարգադրեք, որ ինձ կերակրեն ինչպես պետք է:

Պանտագրյուելը հրամայեց Պանուրգին տուն տանել և կերակրել նրան, որքան սիրտն ուզում է:

Հրամանը կատարվեց: Պանուրգը այնքան կերավ, որ քիչ էր մնում պայթի, հավերի հետ պառկեց քնելու: Մյուս օրը զարթոնեց միայն ճաշի ժամանակ և մահճակալից երեք անգամ ոստնելով, նորից իրեն գտավ ճաշի սեղանի մոտ:

Գլուխ III

Այն մասին, թե ինչպես Պանուրգը փախավ տանկական գերությունից

Ճաշին Պանուրգի ուտելուն ու խմելուն ոչ չափ կար, ոչ սահման, որովհետև նա նիհարել էր և դարձել կատարյալ սոված մոզի:

— Ինչպես տեսնում եմ, բարեկամ, — ասաց նրան սեղանակիցներից մեկը, — խմելում դու բոլորին էլ կգերազանցես:

— Իսկ դու կարծում էիր, — ասաց Պանուրզը, — որ ես պիտի խմեմ, ինչպես մի ծիտ, և ուտեմ, ինչպես թռչնակ: Չէ, խնամի, ես դրանցից չեմ: Ես որքան շատ եմ խմում, այնքան շատ եմ ուզում խմել: Իմ բնավորությունն էլ այդպես է:

Հյուրերը ծիծաղեցին:

— Սիրելի Պանուրզ, — ասաց Պանտագրյուելը, — պատմեցեք մեզ, ինչպե՞ս կարողացաք ձեր գլուխն ազատել տանկական գերությունից:

— Ուրախությամբ, պարոն, — ասաց Պանուրզը, — ես կպատմեմ ձեզ ամեն բան, ինչպես եղել է, և թող աստծու պատժին արժանանամ, եթե պատմածներիս մեջ մի սուտ խոսք լինի: Այդ ավագակ թուրքերը վճռեցին ինձ գործածել որպես խորովածացու: Նրանք նախ ինձ ծակծկեցին և ծակերի մեջ ճարպ դրեցին, որպեսզի յուղալի լինեմ, հետո անցկացրին շամփուրին և սկսեցին խորովել կրակի վրա: Ես հենց այն է, պատրաստվում էի հրաժեշտ տալ կյանքին, երբ հանկարծ նկատեցի, որ խոհարարի քունը տանում է: Այն ժամանակ ես ատամներովս մի խանձող բարձրացրի և շարտեցի ինձ տանջողի գոգը: Երկրորդ խանձողը ես խրեցի հարդե ներքնակի մեջ: Հարդը բոցավառվեց և վառեց անկողինը: Անկողնուց կրակն անցավ հատակին, և ամբողջ սենյակը լցվեց ծխով: Բայց ամենալավն այն էր, երբ տեսա, որ ինձ տանջող խոհարարը այրված ծնկներով աթոռից վեր թռավ, վազեց պատուհանի մոտ ու ամբողջ ուժով գոռաց.

— Դայլ բարո՛տ, դայլ բարո՛տ, որ մեր լեզվով նշանակում է հրդեհ, հրդեհ:

Դրանից հետո նա կտրատեց այն պարանը, որով ես կապված էի, և դուրս թռավ սենյակից: Բայց նրա ետևից հասավ փաշան՝ այդ տան տերը: Փաշան իմ միջից դուրս քաշեց շամփուրը և նրանով տեղնուտեղն սպանեց ինձ տանջողին:

Երբ շամփուրն ինձանից հանեցին, ես վայր ընկա և ցավ զգացի, թեև ոչ այնքան խիստ: Դրա պատճառն այն էր, որ իմ մարմնի մեջ մտցրած ճարպն ինձ գիրացրել ու հաստացրել էր, հետևապես վայր ընկնելուց ստացած հարվածը ինձ համար այնքան էլ զգալի չէրավ:

Բայց հենց նոր էի ոտքի կանգնել, երբ մի նոր փորձանք եկավ գլխիս: Այս մեր փաշան, երբ տեսավ, որ իր բոցավառված տունը ամբողջապես այրվում է, աղաչանքով, պաղատանքով դիմեց բոլոր սատանաներին և օգնության էր կանչում սատանաների մեծավորին: Այդ որ լսեցի, սիրտս սաստիկ դող ընկավ: Սատանաների մեծավորը որ գար, իմ բանը պրծած էր: Ինձ արդեն կիսով չափ խորովել էին, մարմինս էլ ամբողջապես ճարպապատել: Իսկ այդ անիծված սատանաները, ինչպես հայտնի է, ճարպի սաստիկ սիրահար են:

Բարեբախտաբար, սատանաների մեծավորը չեկավ: Փաշան հուսահատությունից որոշեց վերջ տալ իր կյանքին, իր սրտի մեջ կոխելով շամփուրը: Փաշան դեմ տվեց շամփուրն իր կրծքին, բայց շամփուրը բութ էր և չէր կարողանում ծակել իր տիրոջ կուրծքը: Նա ամբողջ ուժով հուպ էր տալիս, բայց նրա ջանքերն ապարդյուն էին անցնում: Այն ժամանակ մոտեցա նրան ու ասացի.

— Պարոն այլակրոն, դուք միայն իզուր տեղը ժամանակ եք կորցնում: Այդ շամփուրով ծակել չի կարելի: Կուզեք ես ձեզ մի բռնեմ և սպանեմ, և այնպես, որ դուք նույնիսկ ոչ մի

ցավ չզգաք: Հավատացեք ինձ, որ ես շատերի կյանքին եմ այդպես վերջ տվել, և նրանք իրենց հիանալի են զգացել:

— Իմ բարեկամ, — ասաց ինձ փաշան, — խնդրում եմ, սպանեցեք ինձ, բայց որքան կարելի է շուտ: Որպես պարզև դու կարող ես վերցնել իմ շքեղ վարտիքը: Նրա մեջ հինգ հարյուր ոսկի կա կարած և մի քանի հրաշալի ադամադ:

— Իսկ այժմ որտեղ են այդ ադամանդները, — հարցրեց Էպիտեմոնը:

— Ավանդ, — հոգոց հանելով պատասխանեց Պանուրգը, — նրանք այժմ շատ հեռու տեղ են, կարճ ասած՝ այնտեղ, որտեղ անցյալ տարվա ձյունն էր: Դուք ինձ հասկանո՞ւմ եք:

— Խնդրում եմ շարունակեք ձեր պատմությունը, — ասաց Պանտագրյուելը: — Դուք ինչպե՞ս սպանեցիք փաշային:

— Հավատացնում եմ ձեզ, — ասաց Պանուրգը, — ասածներիս մեջ մի ավելորդ կամ սուտ խոսք չկա: Ես նրա ձեռքերը կապեցի, անցկացրի շամփուրի վրա և թողեցի, որ կրակի վրա խորովվի ապխտած ձկան պես: Հետո վերցրի նրա քսակն ու պատից կախ արած փոքրիկ տեգը և սենյակից դուրս թռա: Ա՛խ, եթե իմանայիք, ինչպես էր ցավում իմ խորոված ուսը:

Փողոցը լիքն էր մարկանցով: Բոլորը վազում էին դեպի հրդեհը՝ ձեռքներին բռնած ջրով լիքը տակառ, դույլ, կաթսա: Երբ տեսան, որ ինձ կիսով չափ խորովել են, մեղքները եկա, և ամբողջ ջուրը թափեցին վրաս: Այդ բանը շատ է ընդունված տաճիկների մեջ: Ջուրն ինձ թարմացրեց: Առհասարակ տաճիկ ժողովուրդը շատ լավ ժողովուրդ է: Նրանք ինձ կերակրեցին և ոչ մի վատ բան չարեցին: Միայն մի անպիտան տաճիկ իմ մարմնի միջից դուրս էր տալիս ճարպը, բայց ես այնպես խփեցի այդ սրիկայի ձեռքին, որ նա իսկույն չքացավ:

Մինչ տաճիկներն զբաղված էին ինձնով, հրդեհն անցավ հարևան տները: Հրդեհը բռնել էր արդեն մի ամբողջ թաղ: Երբ տաճիկները տեսան, որ բանը վատ է, յուրաքանչյուրը վազեց դեպի իր տունը, իսկ ես գնացի դեպի քաղաքի դարպասը: Բայց հենց նոր էի դուրս եկել դաշտ, մեկ էլ տեսնեմ քաղաքից դուրս են թափվել հարյուր, — բայց ոչ, ինչ եմ ասում, — հազար երեք հարյուր տասնմեկ, եթե ոչ ավելի, մեծ թե փոքր շներ: Երբ շներն իմ խորովված մարմնի հոտն առան, բոլորը միանգամից հարձակվեցին վրաս և, իհարկե, ինձ պատառ-պատառ կանեին, եթե իմ ճարակությունը չլիներ: Այդ ժամանակ ես հիշեցի ճարպի մասին և սկսեցի ճարպը շարտել շների ռիմակի ուղիղ մեջտեղը: Շները հարձակվեցին ճարպի վրա և ինձ հանգիստ թողեցին, ես էլ, իհարկե, նրանց թողեցի: Այդպես ահա ես ուրախ ու զվարթ ազատվեցի գերությունից: Կեցցե՛ շամփուրով խորովածը:

Գլուխ IV

Պանուրգի վարքն ու սովորությունները

Պանուրգը միջահասակ էր, ոչ շատ բարձր և ոչ էլ շատ ցածր: Նրա քիթը արծվաքիթ էր, մի

փոքր կեռ, ածելու կոթի նման: Նա թեև երեսունհինգ տարեկան էր, բայց նրա պես կռվարար ու կերուխումի սիրահար մարդ չկար ամբողջ Փարիզում: Ուշքն ու միտքը շարունակ ուրիշների գլխին զանազան խաղեր խաղալն էր: Առանձնապես նա սիրում էր կատակի առարկա դարձնել պահակներին ու պահապաններին:

Երեկոները նա հավաքում էր մի քանի երիտասարդ տղաների, խմացնում էր նրանց ու հետը տանում ճամփի խաչմերուկը: Գալիս էին նրանք այնտեղ և սպասում, մինչև որ լավում էր գիշերային պահակախմբի մոտենալը: Պանուրգը գիտեր, թե երբ է այդտեղից անցնելու պահակախումբը: Ինչպե՞ս էր նա այդ իմանում: Շատ հասարակ ձևով: Դնում էր իր սուրը գետնին, ականջը կայցնում սրին ու լսում: Եթե սուրը զրնգում էր, դա հաստատ նշան էր, որ պահակախումբը մոտենում է: Այն ժամանակ մեր տղաները բռնում էին մի բեռնասայլ, մի քանի անգամ առաջ ու ետ շարժում, հետո որքան ուժ ունեին հրում փողոցն ի վար, ուղիղ պահակների դեմ: Պահակները խոզերի պես գորվում էին ցեխի մեջ, իսկ մեր չարաճճիների ուզածն էլ հենց այդ էր: Արեցին, պրծան՝ իսկույն փախչում, ծլկում էին, թե կարող ես, գաիր:

Պանուրգը երբեմն այսպիսի բաներ էր անում: Մի տեղից քիչ վառող էր ճարում, շաղ էր տալիս այն ճանապարհի վրա, որով պիտի անցնեին պահակները: Հենց որ պահակները մոտենում էին, Պանուրգը վառողը վառում էր: Պահակները վախից փախչում էին, իսկ կրակը զավարվելով հետևում էր նրանց, այրում նրանց ոտները, իսկ Պանուրգի բոլորովին փուլթը չէր:

Պանուրգը գիտնական աստվածաբաններին նույնպես չէր սիրում: Դրանց նա ամենևին դադար չէր տալիս: Մեկի գլխարկի վրա թրիք էր դնում, մյուսի վերարկուից աղվեսի պոչ էր կապում:

Նրա բանկոնը քսանվեց մեծ ու փոքր գրպան ուներ, որոնց մեջ ինչ ասես կար: Մի գրպանում կար կապարաջրով լիքը սրվակ և մի սուր դանակ՝ ուրիշների քսակները կտրելու համար: Մյուսի մեջ՝ երեժնակի գլուխներ, որոնցով նա խփում էր անցորդներին: Երրորդի մեջ՝ արեթ, հրահան և կիզապակի: Երբ եկեղեցում մի ջերմեռանդ աղոթող էր տեսնում, իր կիզապակու այրող լույսը գցում էր նրա վրա: Աղոթողը մոռանում էր իր աղոթքը և եկեղեցում դես ու դեն վազվզում, իսկ Պանուրգը պահում էր ապակին, մնում տեղում կանգնած, որպես թե ոչ մի բանից տեղեկություն չունի:

Մի անգամ Պանուրգին շատ սսկված տեսա: Մտածեցի, որ երևի փող չունի և հարցրի.

— Պանուրգ, տեսնում եմ, որ դուք հիվանդ եք: Գուցե գրպանի բարակացավո՞վ եք հիվանդ, այն ժամանակ ես կարող եմ առաջարկել ձեզ իմ ունեցած վեց և կես սուն, որոնք չեն իմանում որտեղ խցկվեն:

— Ի՛նչ բան է փողը, — ասաց Պանուրգը, — շուտով ինքան ուզեմս, կունենամ: Մի՞թե չգիտեք, որ ես կախարդական քար ունեմ, որ փողն այնպես է ձգում դեպի ինքը, ինչպես մագնիսը ձգում է երկաթը: Դուք այն ասեք, չե՞իք ցանկանա արդյոք ինդուլգենցիա գնել:

— Աստված վկա, — պատասխանեցի ես, — ամենևին միտք չունեմ մեղքերս քավելու: Սակայն եթե ինդուլգենցիան մի դեմիեից թանկ չէ, այն ժամանակ դեմ չեմ, գնանք:

— Որ այդպես է, ինձ մի դեմի պարտք տվեք, ես պատրաստ եմ ձեզ հետ գնալու, — ասաց Պանուրգը:

Մենք ճանապարհ ընկանք դեպի Գերվասիա եկեղեցին, և ես առաջին պատահած վարդապետից գնեցի ամենաէժան հնդուլգենցիան: Ինչ վերաբերում է Պանուրգին, նա իր համար հնդուլգենցիաներ էր գնում բոլոր վարդապետներից, և շուտով ունեցավ մի մեծ կույտ այդ թղթերից:

Այնուհետև մենք գնացինք Աստվածամոր տաճարը, սուրբ Հովհաննես եկեղեցին, սուրբ Անտոնիոս եկեղեցին և մնացած բոլոր եկեղեցիները, որտեղ հնդուլգենցիա էր վաճառվում: Ես այլևս ոչինչ չէի գնում, իսկ Պանուրգը համբուրում էր բոլոր մասունքները և ամեն տեղ հնդուլգենցիաներ էր գնում:

Վերադառնալիս Պանուրգը ինձ քաշեց տարավ գինետուն և ցույց տվեց տասներկու հաստ փողով լիքը քսակներ:

— Տեր իմ աստված, — զարմացած ասացի ես, — որտեղի՞ց է այդքան հարստությունը:

— Այս հարստությունը, — ասաց Պանուրգը, — իմ ձեռքն է անցել վարդապետներից: Չէ՞ որ ես ձեզ ասում էի, որ շուտով որքան ուզեմ դրամ կունենամ: Նկատո՞ւմ էիր արդյոք, որ ամեն անգամ գանձանակի մեջ գցում էի մի-մի դեմի:

— Ոչ, չեմ նկատել, — ասացի ես:

— Այ, բանն էլ հենց այդ է, — ծիծաղելով ասաց Պանուրգը: — Ես այնպիսի ճարպկությամբ եմ կատարում այդ գործը, որ հնդուլգենցիան ծախողին թվում է, որ ավելի մեծ փող եմ գցել գանձակը, հետևապես ձախ ձեռքով վերցնում եմ մանր փողեր՝ մեկ, երկու, և ինչքան քեֆս ուզում է դեմի: Եվ բոլոր եկեղեցիներում ես այդպես եմ վարվում:

— Բայց, սիրելի Պանուրգ, ձեր արածը գողություն է:

— Ով գիտի, — ծիծաղեց Պանուրգը, — իսկ դուք կարծում եք, որ վարդապետները այդ փողերը արդար աշխատանքո՞վ են դատում: Միավվում եք:

— Բացի այդ, — ավելացրեց Պանուրգը, — պետք է իմանաք, որ այդ վարդապետների հետ ես չվերջացրած հաշիվներ ունեմ: Դուք, երևի, չգիտեք, որ ես Մերստոս պապին բժշկել եմ չարորակ ուռուցքից: Այդ ուռուցքը ամբողջ կյանքում տանջել է նրան և քիչ էր մնում նա դրանից բոլորովին կաղանար: Այդ բժշկության համար պապն ինձ պարգևատրեց տարեկան հազար հինգ հարյուր ֆրանկ թոշակով: Ահա այդ թոշակն է, որ ինքս ինձ վճարում եմ իմ սեփական ձեռքով: Կուզեք հավատացեք, կուզեք մի հավատացեք, բայց այդ դրամները ինձ շատ ու շատ պետք կգան:

Գլուխ V

Այն մասին, թե ինչպես մի անգլիացի Պանտագրյուելին բանավեճի է հրավիրում

Եվ ահա մի օր Պանտագրյուելը որոշեց ստուգել իր գիտելիքները: Այդ նպատակով նա հրամայեց բոլոր փողոցների խաչմերուկներում կախել իր թեզերը գիտության ամենակնճոտ հարցերի մասին: Այդ եղանակով Պանտագրյուելը բանավեճի էր հրավիրում քաղաքի բոլոր գիտնականներին ու իմաստուններին:

Առաջին բանավեճը տեղի ունեցավ Դյու Ֆեր փողոցում: Պանտագրյուելը դուրս եկավ բոլոր դեկանների,^[46] մագիստրների^[47] ու ճարտասանների դեմ և բոլորին լեզվակոխ արեց:

Երկրորդ բանավեճը սարքեցին Սորբոնում աստվածաբանների դեմ: Բանավեճը տևեց մի շաբաթ, և այդ բանավեճին ներկա էին լինում թագավորի պալատականները, բոլոր դիվանատների պետերը, խորհրդականները, քահանաները: Եվ պետք է ասել, որ դրանց մեծամասնությունը վարպետ վիճաբանողներ և գրագետ մարդիկ էին: Բայց, չնայած նրանց բժախնդրությանը, Պանտագրյուելը բոլորին լեզվակոխ արեց ու ապացուցեց, որ նրանք իր համեմատությամբ դմբոներ ու տխմար արարածներն են:

Դրանից հետո ամբողջ քաղաքը Պանտագրյուելի զարմանալի գիտուն մարդ լինելու մասին էր խոսում: Նույնիսկ լվացարարները, խոհարարուհիներն ու աման լվացողները մատով էին ցույց տալիս նրան ու միմյանց ասում.

— Տեսեք, այդ նա է:

Այդ ժամանակ մի գիտնական մարդ՝ Տոումաստ^[48] անունով, որի ականջին էր հասել Պանտագրյուելի զարմանահրաշ գիտության և փառքի մեծ համբավը, Անգլիայից եկավ տեսակցելու և խոսելու նրա հետ, որպեսզի իմանա, իսկապե՞ս Պանտագրյուելը այդպիսի մեծ գիտնական է, ինչպես խոսում են նրա մասին: Պանտագրյուելին ներկայանալիս նա մնաց ապշած, տեսնելով նրա արտասովոր հասակը: Բայց շուտով ուշքի եկավ և արտասանեց հետևյալ ճառը:

— Պարոն, ձեր զարմանալի իմաստության համբավը հասել է մինչև Անգլիայի ափերը, և այդ օրվանից սկսած ոչ մի անգլիացի իմաստուն այլևս հանգիստ քուն չունի: Բոլորի փափագն է տեսնել ձեզ, որ գիտության մի նոր լուսատու աստղ եք դարձել: Բոլորի ցանկությունն է սովորել ձեզնից բարոյական իմաստություն: Ահա ես էլ, լսելով ձեր զարմանալի գիտության մասին, թողեցի հայրենիքս, եկա այստեղ, որպեսզի ձեզ հետ խոսեմ մի քանի կնճռոտ հարցերի մասին: Եթե դուք լուծեք այդ հարցերը, այն ժամանակ թե՛ ես և թե՛ իմ ամբողջ ցեղը սերնդից սերունդ կլինենք ձեր հավատարիմ ստրուկները: Մի խոսքով, — շարունակեց Տոումաստը, — ես ձեզ հրավիրում եմ մի մեծ բանավեճի, որին պետք է ներկա լինեն այս քաղաքի բոլոր գիտնականները: Եվ ահա թե ինչ ձևով կցանկանայի վարել այդ բանավեճը: Մեկս մյուսին պատասխանելիս չպետք է երկար ճառեր արտասանենք, ինչպես անում են այստեղի խելոքները: Նույնիսկ չպետք է բարձր ոճով արտասանություններ անենք և վիճելիս զանազան թվեր մեջ բերենք: Մենք ոչ մի խոսք չպետք է արտասանենք: Մեր քննելիք հարցերը այնքան դժվար են, որ դրանք, միևնույն է, ոչ մի խոսքով չի կարելի արտահայտել: Մենք միմյանց հետ պետք է խոսենք նշաններով: Դա ամենալավ ձևը կլինի մեր բանավեճի: Ուրեմն, եթե հաճելի է ձերո՞ւ հոյակապությանը, մենք վաղը միմյանց կհանդիպենք առավոտյան ժամը յոթին Նավարայի^[49] մեծ դահլիճում:

— Պարո՛ն, — պատասխանեց Պանտագրյուելը, — ես մեծ սիրով կկատարեմ ձեր խնդիրը, որքան ուժերս կներեն: Եվ թեպետ ավելի շուտ ես ձեզնից պետք է սովորեմ, քան դուք ինձնից, բայց քանի որ դուք ինձ հետ համաձայն չեք, այդ ժամանակ մենք միասին կքննենք այդ հարցը և կպարզենք մեր տարակուսանքները: Ես էլ սրտանց ուրախ եմ, որ մենք նշաններով պետք է խոսենք և ոչ թե խոսքերով: Այն ժամանակ գոնե մեզ ոչ ոք չի հասկանա և մեզ չի խանգարի տխմար ծափահարություններով: Այդպես ուրեմն, վաղը ես կգամ բանավեճի: Միայն մի բան եմ խնդրում ձեզնից՝ գուր տեղը չվիճել և աղմուկ

չբարձրացնել: Մենք չենք փափագում մարդկանց հավանությանն արժանանալու, այլ ձգտում ենք միայն զուտ ճշմարտության:

— Պարո՛ն, — ասաց Տոումաստը, — շնորհակալ եմ ձեր բարեհաճ համաձայնության համար: Մնաք բարով:

— Մնաք բարով, — պատասխանեց Պանտագրյուելը:

Դուք, այս ճշմարիտ պատմության ընթերցողներդ, դժվար հասկանաք, թե ինչպիսի հուզմունքով անցկացրին այդ գիշերը Պանտագրյուելն ու Տոումաստը: Գոնե ինքը Տոումաստը խոստովանել էր այն հյուրանոցի սպասավորին, որտեղ իջևանել էր, թե ամբողջ գիշերը դողացրել է, ինչպես դողերոցքի ժամանակ:

— Կարծես Պանտագրյուելը կոկորդիցս բռնած խեղդում է ինձ, — ասել է Տոումաստը: — Խնդրում եմ մի քիչ սառը ջուր տվեք ինձ, որ ուշքս տեղը գա:

Գալով Պանտագրյուելին պետք է ասել, որ նա ամբողջ գիշերը նստած գրքեր էր կարդում, այնպես որ վերջ ի վերջո Պանուրգն ասաց նրան.

— Տեր իմ, դե՛ն գցեք գրքերը և գնացեք քնելու: Այդքան պարապելուց դուք անպատճառ կհիվանդանաք: Մի քիչ գինի խմեք և անհոգ ու հանգիստ պառկեք: Ամենևին մի անհանգստացեք, վաղը ես ինքս կվիճաբանեմ այդ խելոքի հետ և նրա քիթը բռնած ման կաձեմ:

— Ինչ եք ասում, Պանուրգ, իմ սիրելի բարեկամ, — ասաց Պանտագրյուելը: — Տոմաստը շատ գիտուն մարդ է, ինչպես կարող եք դուք նրան հաղթել:

— Դա իմ գործն է, — ասաց Պանուրգը: — Հավատացեք, որ այդ մեծախոսի հախիցը կգամ և բոլորի առաջ նրան ծաղրի առարկա կդարձնեմ:

Ամբողջ գիշերը Պանուրգը թուղթ էր խաղում մանկլավիկների հետ և քիչ էր մնում, որ իր վարտիքի կոճակներն էլ տարվի: Իսկ երբ լուսացավ, արթնացրեց Պանտագրյուելին, և նրանք երկուսով գնացին Նավարայի դահլիճը՝ բանավեճն սկսելու:

Գլուխ VI

Այն մասին, թե ինչպես Պանուրգը խայտառակում է անգլիացի գիտնականին

Բանավեճը լսելու էր եկել ամբողջ Փարիզը:

— Այս անգամ, — ասում էին փարիզեցիք, — Պանտագրյուելի բանը բուրդ է: Ոչ մի նշանակություն չունի, որ մինչև այժմ նա հաղթող է հանդիսացել: Տոումաստն էլ պակաս չի, նա գիտի թե իրեն ինչպես պետք է պաշտպանի:

Հենց որ Պանտագրյուելն ու Պանուրգը դահլիճ մտան, բոլոր գրչակիցները, մագիստրները ու դպրոցականները իրենց սովորության համաձայն սկսեցին բարձր ծափահարել:

— Մի աղմկեք, գրողի տարածներ, — որոտաձայն գոչեց Պանտագրյուելը, — եթե շարունակեք աղմկել, ձեր հիմար գլուխները կթոցնեն:

Այս որ ասաց, զարմանքից բոլորի բերանը բաց մնաց: Շատերը մինչև անգամ վախենում էին հազալ:

Այդ ժամանակ Պանուրգն առաջ անցավ և ասաց անգլիացուն.

— Ողորմած պարոն, ինչո՞ւ եք դուք եկել այստեղ, մեզ հետ վեճի բռնվելո՞ւ, թե իմ տիրոջից՝ Պանտագրյուելից իսկական իմաստություն սովորելու:

— Ողորմած տեր, — պատասխանեց Տոումաստը, — ես ոչ մի ցանկություն չունեմ ավելորդ հակաճառություններ անելու: Ես ցանկանում եմ միայն մի քանի կասկածելի հարցերի պատասխանները ստանալ:

— Այն ժամանակ, ես, նվաստս, — ասաց Պանուրգը, — իմ ուսուցիչ պարոն Պանտագրյուելի համեստ աշակերտս, հանձն եմ առնում փարատել ձեր բոլոր կասկածները: Թող պարոն Պանտագրյուելը լինի մեր նախագահը, իսկ մենք զբաղված կլինենք մեր գործով: Ընդունո՞ւմ եք իմ առաջարկը:

— Միանգամայն համաձայն եմ, — պատասխանեց Տոումաստը, — ուրեմն սկսենք:

Եվ ահա կատարյալ լռության մեջ անգլիացին ձեռքերը վեր բարձրացրեց և մատները իրար կպցնելով պտղունց կազմեց, հետո մատները չռեց, բարձր ծափ զարկեց և ձեռքերը առաջ մեկնեց, կարծես Պանուրգից մի բան էր աղերսում:

Ի պատասխան դրան Պանուրգը մեծ մատը քթի ծակը խոթեց, իսկ մնացած մատները արագությամբ շարժեց օդի մեջ:

— Իսկ եթե դուք... — ասաց անգլիացին:

— Ներեցեք, — ընդհատեց նրան Պանուրգը: — Լռեցեք, պարոն:

Այն ժամանակ անգլիացին այսպիսի մի նշան արեց՝ մատները ծալեց, բռունցք կազմեց, ձախ ձեռքը վեր բարձրացրեց և հետո աջ ձեռքի մեծ մատը կպցրեց ձախ ձեռքի ճկույթին:

Այդ ամենևին չգարմացրեց Պանուրգին: Նա հանեց գրպանից մի կտոր եզան կողոսկր և փայտի երկու փոքրիկ կտոր: Փայտի կտորները սեղմեց մատների արանքում և սկսեց դրանք չիկչիկացնել, ուրախ դեմքով նայելով անգլիացուն:

Փարիզեցիք այնպես կարծեցին, որ Պանուրգը բրետոնացի բորոտների ծաղրն է անում, որոնք նույնպես չիկչիկացնում են իրենց չիկչիկանները: Գուցե Պանուրգի կողմից դա մի ակնարկ էր, թե անգլիացին բորոտ է:

Սակայն անգլիացուն այդ ամենևին չվախեցրեց: Բռունցքները նա դեմ արեց Պանուրգի դեմքին ու միմյանց խփեց:

Պանուրգն առանց ոչ մի խոսք ասելու մատներից թզանշանի պես մի բան կազմեց և այդ նշանը ցույց տվեց անգլիացուն:

Անգլիացին գունատվեց մեռելի պես և շարժեց մատները որպես ձկան լողակներ:

Այն ժամանակ Պանուրգը ծափ տվեց, փչեց իր մատների վրա և կզակն առաջ մեկնած՝ հայացքը սևեռեց անգլիացու վրա:

Փարիզեցիք ոչինչ չէին հասկանում այդ նշաններից, սակայն այժմ գուշակեցին, որ Պանուրգը կարծես հարցնելիս լինի անգլիացուն՝ «Դե, հիմա ինչ կասես»:

Եվ իսկապես, Տոումաստը քրտնակոխ եղավ և խոր մտածմունքի մեջ ընկավ: Վերջապես նա կարծես մի բան հասկացավ, երկու ձեռքի մատները միմյանց մեջ անցկացրեց և այդպես որքան կարողացավ ձեռքերը վեր բարձրացրեց:

Որպես պատասխան Պանուրգը մեծ մատով շոշափեց իր ծնոտը և բերանը բացուխուփ անելով ատամները բարձր չխկչխկացրեց:

Տոումաստը սաստիկ հուզված՝ տեղից վեր թռավ: Քրտինքը թափվում էր նրա ճակատից, աչքերը շողվել էին: Նա աջ ձեռքը վեր բարձրացրեց, աջ ձեռքի մատներից պտղունց կազմեց, իսկ ձախ ձեռքը դրեց կրծքին և աղերսական հայացք ձգեց Պանուրգի վրա:

Պանուրգը բռնեց իր վարտիքը և որքան ուժ ուներ թափահարեց:

Տոումաստը թշերն ուռցրեց, կարծես ուզում էր փչել և փամփշտիկ արձակել:

Դրան էլ Պանուրգը պատասխանեց նրանով, որ բերանը կիսաբաց արեց, ապա ձեռքով բերանին խփեց, որից առաջանում էր մի տեսակ խուլ ձայն:

— Հա, հասկանում եմ, իսկ սրան ինչ կասեք, — ասաց Տոումաստը, և լեզուն կախ գցելով, սասկոդ այծի պես աչքերը պտտտեցրեց:

Այն ժամանակ Պանուրգը երկու կողմից ցուցամատները բերանը կոխելով ձգեց մինչև ականջները: Հետո բուրձ մատներով սեղմեց կոպերը և այլանդակորեն ծամածոված ռեխ ցույց տվեց Տոումաստին:

Տոումաստը այդ որ տեսավ, գլխարկը վերցրեց, քաղաքավարի շնորհակալություն հայնտեց Պանուրգին և դառնալով դեպի ժողովականները, ասաց.

— Մեծարգո պարոններ, դուք մի աննման գանձ ունեք ձեզ մոտ: Այդ գանձը պարոն Պանտագրյուելն է, որի համբավը ինձ բերեց այստեղ Անգլիայի խորքերից: Պետք է խոստովանեմ, որ մինչև այժմ թվում էր, թե մարդիկ չափազանցության մեջ էին ընկնում, երբ անչափ գովում ու գովաբանում էին պարոն Պանտագրյուելի զարմանալի գիտնական լինելը: Բայց այժմ տեսնում եմ, որ նրանք ոչ թե չափազանցում էին, այլ ընդհակառակը՝ սաստիկ նսեմացնում էին նրա արժանիքը: Հենց այս բուրձիս նրա աշակերտը հրաշալի կերպով լուծեց այն բոլոր կնճռոտ հարցերը, որ ես նրան առաջարկում էի և իմ աչքի առաջ բաց արեց իմաստության մի այնպիսի անդունդ, որ ես մնացի բոլորովին հիացած: Եվ եթե այդ կարողացավ անել նրա աշակերտը, հապա իմաստության ինչպիսի՛ գանձեր պիտի ցույց տար ինձ ինքը ուսուցիչը: Ըստ երևույթին, նրա գիտությունը աննկարագրելի մի բան է: Ժամանակին այսօրվա մեր բանավեճի մասին մի մեծ հատոր գիրք կգրեմ: Այդ գրքից դուք կիմանաք, թե ինչպիսի խորիմաստ հարցերի մասին էր այսօրվա մեր խոսակցությունը: Իսկ այժմ հայտնում եմ իմ շնորհակալությունը ինձ արած պատվի համար և սրանով վերջացնում եմ իմ խոսքը:

Բանավեճից հետո Պանտագրյուելը շքեղ ճաշկերույթ սարքեց և փառավորապես հյուրասիրեց Տոումաստին: Ախ, եթե միայն դուք իմանայիք, ինչպե՛ս էին խցանները դուրս թռչում շշերի բերաններից, ինչպե՛ս էին շշերը ձեռքից ձեռք անցնում, ինչպիսի՛

գրոռում-գոչումով էին հյուրերն ասում. «Էյ, դու, մանկլավիկ, այսինչ բանը դեսը բեր, լցրու, գրողի տարած, լիքը լցրու բաժակները»:

Իսկ ինչ վերաբերում է այն նշաններին, որոնցով խոսում էին բանավեճի ժամանակ, ես իհարկե կարող էի բացատրել ձեզ նրանց իմաստը, բայց ասում եմ, որ Տոմաստը այդ նշանների մասին Լոնդոնում մի ամբողջ գիրք է հրատարակելու: Երբ այդ գիրքը լույս կտեսնի, դուք ինքներդ կկարողանաք կարդալ և հանգամանորեն ամեն բան իմանալ: Իսկ մինչ այդ ավելի լավ է, որ ես լռեմ:

Գլուխ VII

Այն մասին, թե ինչպես Պանուրգը մտադրվում է ամուսնապ

Մյուս օրը Պանուրգը զուգված-զարդարված եկավ Պանտագրյուելի մոտ:

— Ի՞նչ է պատահել, Պանուրգ, — հարցրեց Պանտագրյուելը, — ինչո՞ւ ես այդպես զուգվել:

— Սատանա է մտել մեջս, — ասաց Պանուրգը, — ուզում եմ ամուսնանալ:

— Լավ եք անում, — նկատեց Պանտագրյուելը, — ուրախ եմ, թեև ճիշտն ասած, ոչ այնքան, որ ուրախությունից խելքս թոցնեմ:

— Բանն էլ հենց դրանում է, — ասաց Պանուրգը, — ով գիտի, թե ինչ տեսակ կին կլինի առաձու: Եթե բարի կին լինի, լավ, իսկ եթե բարի չլինի, ի՞նչ անեմ այն ժամանակ:

— Այո, դրա մասին պետք է մտածել, — ասաց Պանտագրյուելը:

— Իսկ դուք ի՞նչ խորհուրդ կտաք, — հարցրեց Պանուրգը:

— Եթե դուք հաստատ վճռել եք ամուսնանալ, ձեզ հակառակը համոզելը անօգուտ գործ կլինի, — ասաց Պանտագրյուելը:

— Ասենք, այդպես է, բայց ես, այնուամենայնիվ, չէի ցանկանա ամուսնանալ առանց ձեր բարի խորհրդի, — ասաց Պանուրգը:

— Համաձայն եմ, — ասաց Պանտագրյուելը, — խորհուրդ եմ տալիս ամուսնանալ:

— Բայց եթե դուք կարծում եք, որ լավը չամուսնանալն է, չեմ ամուսնանա, — ասաց Պանուրգը:

— Այն ժամանակ մի ամուսնացեք, — ասաց Պանտագրյուելը:

— Լավ, — ասաց Պանուրգը, — բայց մի՞թե դուք կամենում եք, որ ամբողջ կյանքումս կին չունենամ: Չէ՞ որ մենակ մարդը երբեք այնպես բախտավոր չի լինում, ինչպես ամուսնացած մարդը:

— Եթե այդպես է, այն ժամանակ, ի սեր աստծո, ամուսնացեք, — պատասխանեց Պանտագրյուելը:

— Իսկ եթե իմ կինը անպիտան կին լինի՞: Չէ՞ որ այն ժամանակ ամենադժբախտ մարդը կլինեմ աշխարհում, — ասաց Պանուրգը:

— Կնշանակի՞ չպետք է ամուսնանաք, — ասաց Պանտագրյուելը:

— Իսկ եթե ես ինձ համար մի ազնիվ կին ընտրե՞մ, — հարցրեց Պանուրգը:

— Այն ժամանակ, իհարկե, ամուսնացեք, — ասաց Պանտագրյուելը:

— Բայց ես լսել եմ, — ասաց Պանուրգը, — որ բոլոր ազնիվ կանայք ծեծում են իրենց ամուսիններին: Մի՞թե իմ կինն էլ ինձ կծեծի: Այդ կատարյալ խայտառակություն կլինի:

— Որ այդպես է՝ մի ամուսնացեք, — ասաց Պանտագրյուելը:

— Լավ, — ասաց Պանուրգը, — իսկ եթե ես հիվանդանամ, ինձ ո՞վ կխնամի: Չէ, առանց կնոջ բանս վատ կլինի: Շան պես կսատկեմ և ինձ օգնող չի լինի:

— Դե, այն ժամանակ, ի սեր աստծո, ամուսնացեք, — ասաց Պանտագրյուելը:

— Գիտեք, տեր իմ, ձեզ հասկանալը այնքան էլ հեշտ բան չի, մեկ ասում եք ամուսնացեք, մեկ՝ մի ամուսնացեք:

— Որովհետև ձեր հարցերի մեջ այնքան «իսկ եթե և եթե որ» կա, որ ես անկարող եմ ձեզ որևէ դրական խորհուրդ տալ, — ասաց Պանտագրյուելը: — Ամեն բան նրանից է կախված, թե ինչ տեսակ կին կլինի ձեր ընտրածը: Եթե լավ կին լինի, ամուսնացեք, ամուսնությունը լավ բան է:

— Գուցե և այդպես է, — ասաց Պանուրգը, — սակայն պետք է խոստովանեմ, ես նույնիսկ չեմ լսում, ինչի՞ մասին եք խոսում: Սոված փորը խուլ է լինում: Կես ժամ հետո ճաշ կտրվի, քաղցից գլուխս շշմել է: Գնանք ճաշելու, սուրբ հայր Ժան: Առաջ բացի վարդապետներից ու կանոնիկոսներից շատ քիչ մարդ էր ճաշում: Այն էլ պետք է ասենք, որ նրանք ուրիշ բան ու գործ չունեն, նրանց համար ամեն օր տոն էր: Դա դու ինձնից լավ գիտես, սուրբ հայր Ժան: Գնանք ուրեմն, սիրելի բարեկամ, ի սեր բոլոր սատանաների, գնանք: Իմ ստամոքսը քաղցից շան պես հաչում է: Նրա բերանը որևէ ապուր գցենք, որ հանգստանա: Գիտեմ, դու ավլի սիրում ես թանձր, յուղալի ապուր մեջը «հողագործի» մի մեծ կտոր:

— Հասկանում եմ, ինչ ես ուզում ասել, — պատասխանեց հայր սուրբ Ժանը, — դու էլ ես սկսել վանքերում ընդունված լեզվով խոսել: Վանքերում «հողագործ» են անվանում այն եզանը, որը մի ժամանակ վար է արել: Այդպիսի մի «հողագործը» բավական է ամբողջ միաբանությանը հրաշալի շիլայով կերակրելու համար: Պետք է ասեմ, որ մեր վանքերում բոլորս հետևում ենք հնուց մնացած մի սովորության՝ յուրաքանչյուր պատարագից առաջ մտնում ենք «մատուռը», այսինքն ավելի հասարակ լեզվով ասած՝ վանքի խոհանոցը: Խոհանոցում խնդրում, աղաչում ենք խոհարարներին շտապ կրակ անել կաթսաների տակ և տավարի միսը եփել: Դե գիտես էլի, որ յուրաքանչյուր վարդապետ գլխավորապես մի հոգս, մի ցանկություն ունի միայն՝ լավ ուտել: Վարդապետը հենց դրա համար էլ ապրում է աշխարհում, որ ինչքան քեֆն ուզում է ուտի: Դեհ, գնանք, Պանուրգ:

— Այ հիմա ես քեզ հասկացա, վանական սատանա, — բացականչեց Պանուրգը, — գնանք ուրեմն նախ խոհանոց, տեսնենք ճաշն ինչ վիճակում է: Ցտեսություն, պարոններ: Գնանք:

Գլուխ VIII

Այն մասին, թե ինչպես է Պանուրգը խորհրդակցում Պանգուի^[50] գուշակուհու հետ

Ճաշից հետո Պանտագրյուելը իր մոտ կանչեց Պանուրգին և ասաց.

— Ինչպես տեսնում եմ, Պանուրգ, դուք դեռ չգիտեք, պիտի ամուսնանա՞ք, թե ոչ: Լսեցեք, ինչ եմ ասում: Ասում են, Պանգուում, մեզանից ոչ հեռու, ապրում է մի պառավ կախարդ, որը գուշակում է ապագան և զանազան իմաստուն խորհուրդներ է տալիս: Էպիտեմոնին վերցրեք և գնացեք նրա մոտ: Տեսնենք, նա ձեզ ինչ խորհուրդ կտա:

Հետևյալ օրը Պանուրգն ու Էպիտեմոնը ճանապարհ ընկան: Նրանց ճամփորդությունը տևեց երեք օր: Չորրորդ օրը նրանց ցույց տվեցին կախարդուհու տունը: Կախարդուհին ապրում էր սարի գագաթին, ծխից սևացած մի փոքրիկ հյուղակում: Հյուղակը ծածկված էր ծղոտով, իսկ նրա վերևը սոսափում էր բարձր ու սաղարթախիտ թխկի:

Նրանք դուռը հրեցին ու ներս մտան հյուղակը: Օջախի մոտ նստած էր կեղտոտ ցնցոտիներ հագած մի գառամյալ պառավ:

— Վա՛հ, — բացականչեց Էպիտեմոնը, — ազնիվ խոսք, սա կատարյալ կախարդուհի է:

Պառավն իսկապես շատ նման էր կախարդուհու: Վաղուց արդեն նրա կուզը դուրս էր եկել, աչքերը ջրակալած էին, ատամների հետք անգամ չէր մնացել: Նա օջախի մոտ նստած եզան հին ոսկորներից ապուր էր եփում:

— Տեսե՛ք ի՛նչ ենք արել, — ասաց Էպիտեմոնը, — վախենում եմ, որ դրանից ոչ մի պատասխան չստանանք, որովհետև ամենազլխավորը աչքաթող ենք արել:

— Ես դրա մասին արդեն հոգացել եմ, — ասաց Պանուրգը, — իմ որսորդական պայուսակի մեջ մի բան կա պահված:

Այս խոսքերն ասելիս նա խոր գլուխ տվեց պառավին և նրա առաջ դրեց վեց ապխտած լեզու, մի մեծ կճուճ քաշովի, մի շիշ գինի և մի քսակ՝ լիքը նոր ոսկե դրամով:

Այնուհետև նա պատմեց պառավին, թե ինչու համար է եկել և քաղաքավարի խնդրեց մի խորհուրդ տալ իրեն՝ ամուսնանա, թե ոչ:

Պառավը որոշ ժամանակ լուռ մնաց: Անաստամ բերանով մի բան ծամելով, ընկավ մտածմունքի մեջ: Հետո նստեց շուռ տված տաշտի վրա, ձեռքն առավ երեք հին իլիկ, պտտեցրեց, շոշափեց դրանց ծայրերը և ընտրեց ամենասուր ծայրը: Այդ իլիկը նա սեղմեց ձեռքի մեջ, իսկ մյուս երկուսը զցեց հին սանդի մեջ:

Դրանից հետո նա առավ ճախարակը և ինն անգամ պտտեցրեց անիվը: Հետո բաց թողեց ձեռքի անիվը և դիտեց, թե նա ինչպես է պտտվում: Երբ անիվը կանգ առավ, կախարդուհին ոտից հանեց իր փայտե մաշիկը և քսակից երեք ոսկի: Ոսկիները նա դրեց ընկույզի երեք կճեպի մեջ և այդ բոլորը զցեց մի կավե թաղարի մեջ: Այդ բոլորը կատարելուց հետո շից մի կում գինի խմեց, տեղից վեր թռավ, հեծավ ավելին ու երեք

անագամ շրջան կատարեց օջախի շուրջը: Այդ միջոցին նա օջախի մեջ գցեց դափնու մի փոքրիկ ճյուղ և շարունակ նայում էր, թե ինչպես է վառվում:

Վերջը կախարդուհին մի քանի անհասկանալի խոսքեր արտասանեց ու նայեց Պանուրգին:

— Պատիվս վկա, — ասաց Պանուրգը, — զգում եմ, որ կախարդված եմ: Տեսեք, կարծես նա գինի խմելուց հետո ավելի է մեծացել: Եվ ինչո՞ւ է նա իր ծնոտը դողացնում: Ինչո՞ւ է ուսերը թոթվում: Ինչո՞ւ են նրա շրթունքները դողդողում ինչպես կապկի շրթունքներ, երբ նա խեցգետին է ուտում: Արդյոք նա սատանաներին չի՞ կանչում այստեղ: Աստված վկա, վախից քիչ է մնում մեռնեն: Սատանաներին տանել չեմ կարողանում: Նրանք ինձ գրգռում են, նրանցից զգվում եմ: Փախչենք այստեղից: Մնաք բարով, տիկին: Մեծապես շնորհակալ եմ մեզ արած շնորհի համար: Ես երբեք չեմ ամուսնանա: Ես հրաժարվում եմ ամուսնանալուց, թող գրողի ծոցը գնա ամուսնությունը:

Պանուրգը գնաց դեպի դուռը, բայց պառավը նրանից ավելի շուտ դուրս եկավ բակ՝ իլիկը ձեռքին: Բակում մի հարյուրամյա թխկի կար: Պառավը երեք անգամ թափահարեց ծառը, որից ութ տերև ընկավ գետին: Տերևները հավաքեց, իլիկով մի քանի խոսքեր խզմզեց նրանց վրա և շարտեց, որ քամին տանի:

Փնտրեցեք, եթե կարող եք, — ասաց պառավը, — գտեք, եթե կարող եք, այդ տերևների վրա գրված է ձեր բախտը:

Այդ ասելուց հետո կախարդուհին արագությամբ վազեց դեպի հյուղակը, բայց երբ շեմին հասավ, ետ դարձավ և Պանուրգին լեզու ցույց տվեց:

— Տո սա իսկական վիուկ է, — սարսափաց ասաց Պանուրգը, — սրանից պետք է հեռու փախչել:

Բայց Էպիտեմոնը վազեց տերևների ետևից: Քամին արդեն ցրիվ էր տվել նրանց զանազան կողմեր: Էպիտեմոնը մի կերպ կարողացավ դրանք գտնել խոտերի մեջ և իրենց նախկին կարգով դասավորել: Եվ ահա թե ինչ կար գրված այդ տերևների վրա:

Կկողոպտի		քեզ
Քո		կնիկը
Օր	ու	գիշեր
Կհայիոյի:		
Արյունդ		կծծի,
Կաշիդ		կքերթի,
Բայց ոչ ամբողջապես:		

Երկու բարեկամները տերևներն առած վերադարձան տուն և դրանք տվեցին Պանտագրյուելին, որ նրանց վրա գրածը կարդա:

— Ձեզ շատ եմ խղճում, — ասաց Պանտագրյուելը Պանուրգին, — կախարդուհին ասում է, որ ձեր կինը կկողոպտի, կծեծի և մինչև անգամ կխեղդի:

— Այդ գուշակությունը հասկանալու համար ավելի շատ խելք է պետք, քան ձերը, — պատասխանեց Պանուրգը: — Մի նեղացեք, որ այսպես եմ խոսում, ես մի քիչ բարկացած եմ: Կախարդուհին ինձ միայն զգուշացնում է, որ վատ կնոջ հետ չամուսնանամ և ուրիշ

ոչինչ: Վատ կլինը կարող է ինձ և կողոպտել, և ձեռել, հետևապես ես այդպիսի կին չպետք է առնեմ: Իսկ եթե ամուսնանամ լավ կնոջ հետ, այդպիսի բան երբեք չի լինի: Մի՞թե պարզ չի:

— Պանուրգ, ձեռք քաշեք ամուսնանալու մտադրությունից, — ասաց Էպիտեմոնը: — Եթե դուք կախարդին չեք հավատում, ես ձեզ մի ուրիշ խորհուրդ կտամ: Բուշար կղզուց ոչ շատ հեռու ապրում է նշանավոր գուշակող Հեր-Տրիպպան:^[51] Այդ մարդու մասին ասում են, որ նա իր հինգ մատի պես գիտի բոլոր գիտությունները, հատկապես աստղագիտությունն ու ձեռնահմայությունը: Նրան էլ տեսեք, և հետը խորհուրդ արեք ձեր գործի մասին:

— Ինքս անձամբ երբեք Հեր-Տրիպպային տեսած չկամ, — ասաց Պանուրգը, — բայց լսել եմ նրա մասին: Ասում են, մի գող նրա մառանից մի ուլ է գողացել այն ժամանակ, երբ նա խոսելիս է եղել թագավորի հետ զանազան բարձր նյութերի մասին: Այդ ինչպե՞ս կարող էր պատահել: Այդ նշանավոր իմաստունը, որ առանց ակնոցի տեսնում է այն ամենը, ինչ որ կատարվում է երկնքում ու երկրի վրա, որ գիտի անցյալի բոլոր դեպքերը և գուշակում է գալիք դեպքերը, ինչպե՞ս չի կարողացել տեսնել ողորմելի գողին, որ նրա քթի տակից գողացել տարել է ուլը: Մակայն համաձայն եմ: Եթե ուզում եք, նրա մոտ էլ կգնանք: Սովորելը միշտ լավ բան է:

Գլուխ IX

Այն մասին, թե ինչպես է Պանուրգը խորհուրդ հարցնում Հեր-Տրիպպայից

Հետևյալ օրը մեր բարեկամները գնացին Հեր-Տրիպպայի մոտ: Պանուրգը նվիրեց նրան մի գայլի մուշտակ, ոսկեգօծ սուր՝ թավշե պատյանով և հիսուն ոսկեդրամ: Այնուհետև Պանուրգն առանց այլևայլուցյան խոսեց նրա հետ իր գործի մասին:

Նախ և առաջ Հեր-Տրիպպան նայեց ուղիղ Պանուրգի երեսին և ասաց.

— Աշխարհում եղած բոլոր դատարկապորտներից ամենաթշվառ դատարկապորտի կերպարանքը քոնն է:

Հետո Պանուրգի աջ ձեռքը բոլոր կողմերից զննելուց հետո ավելացրեց.

— Այս գիծն ունենում եմ միայն դժբախտները:

Դրանից հետո Հեր-Տրիպպան վերցրեց գրատախատակը, մի քանի կետեր նկարեց նրա վրա և գծերով միացրեց իրար:

— Ոչ մի կասկած չկա, — ասաց նա, — որ բանդ վատ կլինի, եթե ամուսնանաս:

Այնուհետև հարցրեց Պանուրգից, թե երբ է ծնվել, ու բաց արեց երկնքի մեծ քարտեզը: Քարտեզը և մոլորակների դիրքը զննելուց հետո Հեր-Տրիպպան խոր հոգոց հանեց ու ավելացրեց.

— Ես սկզբից արդեն գուշակեցի, որ դու անբախտ պիտի լինես: Իսկ այժմ աստղերն ինձ ասում են, ծեծված կլինես քո կնոջից և կողոպտված մինչև շապիկդ: Բանդ շատ վատ է լինելու, խեղճ մարդ:

— Գրողը քեզ տանի, ցնդած ծերուկ, — ասաց Պանուրգը, — երբ բոլոր դժբախտները թափոր կազմեն, դու նրանց առաջին դրոշակակիրը կլինես:

Եվ դառնալով դեպի Էպիտեմոնը, Պանուրգն ավելացրեց.

— Տեսնո՞ւմ եք ձեր առջև կանգնած այդ քավթառած հիսուսիկին, որը պարծենում է, թե ամեն բան տեսնում ու հասկանում է, մինչդեռ ամենատղորմելի մի գող առանց դժվարության կարողացել է նրան հիմարեցնել ու կողոպտել: Այդ մարդը, որ հիմարների մեջ ամենահիմարն է, միաժամանակ պարծենկոտ է, ինքնավստահ և անտանելի, ինչպես տասնյոթ դևեր միասին վերցրած: Հեռանանք այստեղից: Թող այդ դիվահարը ինչքան ուզում է գլխիցը դուրս տա իր բարեկամ սատանաների հետ զրուցելիս: Երբեք չեմ հավատա, որ սատանաները համաձայն են ծառայելու այսպիսի մի խենթուկի:

— Եթե դուք ինձ չեք հավատում, — ասաց Հեր-Տրիպպան, — ես գուշակելու ուրիշ շատ ձևեր էլ գիտեմ, և մենք հեշտությամբ կարող ենք ստուգել ճշմարիտ եմ ասել ձեզ, թե ոչ: Օրինակ, ես կարող եմ գուշակություններ անել կրակով, օդով, ջրով, հայելիով, մազով, վարսակի այլուրով, ոսկրներով, պանրով, խնկով, իշի գլխով, մեղրամոմով, ծխով, կացնով, կավով, մոխրով, բույսերով, ձկներով, խոզերով, ոտանավորներով, թռչուններով: Եվ հավատացած եղեք, ինչ եղանակով էլ որ գուշակություն անեմ, միևնույն պատասխանը կստացվի:

— Գրողի ծողը կորիք, խենթուկ, — պատասխանեց Պանուրգը: — Թող երեսուն հազար սատանաներ վիզդ ոլորեն, դժոխքի ծնունդ: Շուտ տուն վերադառնաք մեր տիրոջ մոտ: Գիտեմ, նա շատ դժգոհ կլինի մեզանից, որ եկել ենք այս գիտնական դևի որջը: Սաստիկ գղջում եմ, որ եկել եմ այստեղ: Ծիշտ եմ ասում, դա ինձ գայրացրեց՝ իր կախարդությամբ: Գնանք, գնանք, այստեղից:

Երբ վերադարձան Պանտագրյուելին պատմեցին իրենց տեսածների ու լսածների մասին:

— Կարծում եմ, — ասաց Պանտագրյուելը, — որ այլևս ամենևին կարիք չկա, որ Պանուրգը գնա կախարդների ու գրբացների մոտ: Եկեք մի նոր բան հնարենք: Լսեցեք, ինչ եմ ասում: Ամենքը գիտեն, որ մարդ երեք բան ունի՝ խելք, մարմին և գույք: Մարդու բանականությունը պահպանում են աստվածաբանները, մարմինը՝ բժիշկները, իսկ գույքը՝ դատավորները: Եկեք եկող կիրակի մեզ մոտ ճաշի հրավիրենք մի աստվածաբան, մի բժիշկ և մի դատավոր: Տեսնենք, նրանք ինչ խորհուրդ կտան Պանուրգին:

— Ես գիտեմ, — ասաց Պանուրգը, — որ դրանից բան դուրս չի գա: Մի լավ մտածեք, տեսեք, ինչպես վատ է կառավարվում աշխարհը: Մենք հավատում ենք աստվածաբաններին, իսկ նրանք մեր բանականությունը լցնում են ամեն տեսակ ցնդաբանությունով: Մեր մարմինը պահպանում ու բուժում են բժիշկները, մինչդեռ այդ նույն բժիշկները իրենք երբեք չեն խմում այն դեղերը, որ խմեցնում են հիվանդներին: Ինչո՞ւ: Նրա համար, որ ամենևին չեն հավատում այդ դեղերին: Վերջապես, մեր գույքը պետք է պահպանեն դատավորները: Իսկ դատավորների բան ու գործն այն է միայն, որ կողոպտեն և հանգիստ չտան մեզ: Այսբանից հետո նրանց հետ ինչի՞ մասին պետք է խորհրդակցենք: Չէ, բարեկամ, — շարունակեց Պանուրգը, — եթե կարիք կա մեկի հետ խորհրդակցելու, ես կգերադասեմ խորհրդակցել ամենավերջին հիմարի հետ, քան թե այդ պարոնների հետ: Այն էլ պետք է ասեմ, որ կան հիմարներ, որոնք շատ իմաստուններից խելոք են: Չուր չեն շատ թագավորներ իրենց մոտ ծաղրածուներ պահում: Քիչ չի

պատահում, որ ծաղրածուները թագավորներին էլ են օգնում: Լսած կա՛ք, թե ինչպես մի անգամ Փարիզի նշանավոր ծաղրածու Ժոանը վճռել է երկու կռվողների դատը: Չգիտեք: Այն ժամանակ լսեցեք, պատմեմ ձեզ այդ նշանավոր պատմությունը:

Գլուխ X

Այն մասին, թե ինչպես Փարիզի նշանավոր ծաղրածու Ժոանը վճռում է երկու կռվողների դատը

Ամենքին հայտնի է, որ Փարիզում Փոքր Շատլեի մոտ կան մի քանի կրպակներ, որտեղ կարելի է կուշտ ուտել: Յուրաքանչյուր կրպակում կա մի կրակարան, որի վրա խոհարարները միս են տապակում կամ խորովում: Ես էլ առիթ եմ ունեցել այնտեղ տապակած մսի համը տեսնել, և հավատացնում եմ ձեզ, որ այդպես համեղ տապակած միս ոչ մի տեղ չեք գտնի:

Այնպես է պատահում, որ մի օր այդ կրպակներից մեկն է մտնում մի սոված բեռնակիր: Այդ բեռնակիրն աղքատ մարդ է լինում և տապակած միս գնելու դրամ չի ունենում: Մի մեծ կտոր հաց է լինում նրա կռնատակին: Բեռնակիրը հացը դնում է կրակարանի վերևը, որպեսզի մսի հոտը կայ՛ի հացին: Բեռնակիրը կարծում է, որ հացը դրանից ավելի համեղ կդառնա:

Խոհարարը չի խանգարում բեռնակիրին այդ բանն անելու, բայց երբ բեռնակիրը հացն ուտում վերջացնում է, խոհարարը բռնում է նրա օձիքից և պահանջում, որ տապակած մսի հոտի գինը վճարի:

— Խելքդ կորցրե՛լ ես, ինչ է, — ասում է բեռնակիրը, — չե՛ր ես քեզանից ոչ միս եմ գնել, և ոչ էլ քեզ մի վնաս պատճառել: Միևնույն է, քո տապակած մսի գոլորշին ծխնելույզով պետք է վեր բարձրանար ու ապարոյուն կորչեր: Ո՛վ է տեսել կամ լսել, որ տապակած մսի հոտը վաճառեն:

— Զեզ պես շատ աղքատներ են այստեղ թրև գալիս, — պատասխանում է խոհարարը, — ես պարտական չեմ նրանց բոլորին կերակրել այդ համեղ հոտով: Վճարիր դրամը, եթե ոչ պարանները ձեռքիցդ կխլեմ և այլևս չես կարող բեռնակրություն անել:

Բեռնակիրը մի փայտ է առնում ձեռքը և պատրաստվում է պաշտպանվելու:

Մեծ աղմուկ է բարձրանում: Աղմուկը մեծ բազմության է գրավում: Հայտնի, որ Փարիզը լիքն է պարապ-սարապ մարդկանցով, իսկ այդ պարապ բերանբացների համար ամենասիրելի բանը ուրիշների կռվին նայելն է:

Պատահամամբ նայողների մեջ է լինում Ժոանը, Փարիզի նշանավոր ծաղրածուն: Երբ խոհարարը նկատում է նրան, ասում է բեռնակիրին.

— Տեսնում եմ, դու քո կամքով փող տվողը չես: Այստեղ է գտնվում մեր ազնիվ Ժոանը, թող նա վճռի մեր դատը, համաձայն ես, թե ոչ:

— Ինչու չէ, համաձայն եմ, — ասում է բեռնակիրը:

Ծաղրածուին կանչում են ամբոխի միջից և բացատրում նրան բանի էությունը:

— Ինձ մի արծաթե փող տուր, — ասում է ծաղրածուն բեռնակրին:

Բեռնակիրը տալիս է նրան քսան սու արժողությամբ մի դրամ: Ժոանը մի քիչ խաղացնում է դրամը ձեռքին, հետո փորձում է ատամով, թե դրամը կեղծ չի արդյոք: Մոտեցնում է աչքին և նայում, դրամը լավ է կտրված, թե ոչ:

Ամբոխը խոր լռություն է պահպանում ու դիտում Ժոանին: Խոհարարն իրեն պահում է գոռոզ ու անմատչելի: Նա հաստատ համոզված է լինում, որ ծաղրածուն գործն իր օգտին կվճռի: Իսկ բեռնակիրը, ընդհակառակը, ոչ մի հույս չի ունենում: Արծաթե դրամը գրպանից արդեն դուրս էր թռել, իսկ նրա ունեցած-չունեցածն էլ այդ էր միայն:

Վերջապես ծաղրածուն դրամը գցում է շեմքի վրա: Դրամը գրնգոցով գլորվում է հատակի վրայով, բայց ծաղրածուն դրամը նորից բարձրացնում է ու գլորում: Դրամը դարձյալ գրնգում է: Այնուհետև ծաղրածուն իր էշի ականջներով թասակը քաշում է մինչև աչքերը, հագում, ինչպես վայել է իսկական դատավորին, ու հանդիսավոր կերպով արտասանում.

— Դատարանը որոշում է, որ բեռնակիրը, որը կերել է տապակած մսի հոտով թաթախված իր հացը, պետք է վճարի խոհարարին իր դրամի գրնգոցը, ուստի դատարանը հրամայում է, որ պարոն խոհարարը այդ գրնգոցը վերցնի իրեն, իսկ բեռնակիրը ետ ստանա իր դրամը: Այնուհետև կողմերը պետք է հեռանան առանց դատաստանական ծախքեր վճարելու:

Եվ բոլոր փարիզեցիք գտան, որ այդ վճիռը շատ արդար է: Գուցե ամբողջ Փարիզում չգտնվեր մի դատավոր, որ Ժոանից ավելի լավ վճռեր այդ գործը: Ինչպես տեսնում եք, կան հիմարներ, որոնք շատ խելոքների աղբյուր կտանեն ու ծարավ ետ կբերեն:

Գլուխ XI

Այն մասին, թե ինչպես է Պանուրգը խորհրդակցում ապուշ Տրիբուլեի⁵² հետ

— Եթե դուք հաստատ որոշել եք խորհրդակցել որևէ հիմարի հետ, — ասաց Պանուրգին Պանտագրյուելը, — ձեզ խորհուրդ կտայի ընտրել խեղկատակ Տրիբուլեին: Նա, կարծեմ, բառիս բուն իմաստով հիմար է:

— Միանգամայն համաձայն եմ, — ասաց Պանուրգը:

Տրիբուլեն ապրում էր Բլուայում. նրան կանչելու գնաց Պանտագրյուելի բարեկամներից մեկը, որի անունը Կարպալիմ էր: Կարպալիմը վերադարձավ երկու օր հետո և բերեց հիմարին:

Նախ և առաջ Պանուրգը նրան պարզեց սխեռով լիքը խոզի փուչիկ: Փուչիկը լավ փչաց էր և նրա միջի սխեռների շարժվելուց բարձր ձայն էր լսվում: Հետո Պանուրգն ընծայեց նրան լավ ոսկեգօծած, փայտե սուր, մի շիշ գինի և մի չափ կարմիր խնձոր:

Տրիբուլեն սուրը կապեց, խնձորների կեսը կերավ, խմեց ամբողջ գինին և սկսեց տնողել փուչիկը:

— Ինչքան հիմար է, — ասաց Պանուրգը, — իսկապես որ կատարելապես հիմար է: Կյանքումս շատ հիմարներ եմ տեսել, բայց սրա նմանը չեմ տեսել:

Այնուհետև գեղեցիկ և հաճոյական դարձվածքներով Պանուրգը պատմեց նրան իր գործի մասին: Նա դեռ իր վերջին խոսքը չասած, Տրիբուլեն որքան ուժ ուներ խփեց բռունցքով նրա մեջքին և ձեռքերը կոխեց ինչ-որ շշի մեջ:

— Աստված վկա, դու կատարյալ ապուշ ես, — ասաց Տրիբուլեն գլուխը տարուբերելով, — ամենատխմար մարդն ես, Բյուզանսից բերված պարկապուկ ես:

Այս խոսքերն ասելուց հետո Տրիբուլեն մի կողմ քաշվեց և զբաղվեց իր փուչիկով: Նրանից չկարողացան այլևս ոչ մի խոսք լսել:

— Բանից դուրս է գալիս, որ մեզ բոլորիս հիմարացրել են, — ասաց Պանուրգը: — Այ քեզ բան: Որ նա բոլորովին հիմար է, դա անկասկած է, բայց ես էլ նրանից խելոք չեմ վարվել, որ վճռել եմ խորհուրդ հարցնել նրանից:

— Դուք սխալվում եք, Պանուրգ, — ասաց Պանտագրյուլը, — իմ կարծիքով, Տրիբուլեն ձեզ շատ խելացի և օգտակար խորհուրդ տվեց: Նա ասաց, որ դուք հիմար եք, և այն էլ ինչպիսի հիմար՝ հիմարների թագավորը: Բայց նա ինչո՞ւ այդպես ասաց: Որովհետև դուք հասակով մարդ եք և ուզում եք ամուսնանալ: Հետո Տրիբուլեն հիշեց Բյուզանսից բերված պարկապուկի մասին: Այդ ի՞նչ է նշանակում: Այդ նշանակում է, որ ձեր ապագա կինը կլինի անխելք, շատախոս, կռվարար, ճղճղան ու անտանելի մի արարած, նման այն պարկապուկներին, որ նվագում են բյուզանացի գյուղացիները: Հետո ուշք դարձրեք այն բանի վրա, որ նա խփեց բռունցքով ձեր մեջքին: Դա շատ վատ նշան է: Ձեր կինը ձեզ կձենձի, սիրելի Պանուրգ:

— Ոչ, այդպես չէ, — ասաց Պանուրգը: — Ինչ անենք, որ Տրիբուլեն ինձ հիմար անվանեց: Մի՞թե չեն ասում, որ աշխարհն ամբողջապես հիմար բան է և բոլոր մարդիկ էլ հիմար են: Ես էլ այդ մարդկանցից մեկը: Ինչ վերաբերվում է Բյուզանսի պարկապուկին, դուք բոլորովին չեք հասկացել այդ ակնարկի միտքը: Ճշմարտախոս Տրիբուլեն լավ գիտի թե՛ իմ բնավորությունը և թե՛ իմ ճաշակը: Նա միայն ուզեց դրանով ասել, որ իմ կինը լինելու է ոչ թե պալատական մի տիկին, այլ մի շատ սովորական գյուղացի կին: Ի՞նչ վատ բան կա դրանում: Ինձ համար հազար անգամ ավելի հաճելի են սրտաբաց և հերարձակ հովվուհիները, քան թե զուգված ու զարդարված փարիզցի գեղեցկուհիները: Տրիբուլեն բռունցքով խփեց իմ մեջքին, բայց դա չարության նշան չէր նրա կողմից: Երևի նա կարծել է, թե մի տղայի հետ կատակ է անում: Չէ՞ որ նա անկեղծ ու անվնաս հիմար է, մեղք է նրա մասին վատ բան մտածելը: Ես նրան ամբողջ հոգով ներում եմ:

— Դուք մոռացել եք մի բան, — ասաց Կարպալիմը, — նա շիշը դրեց ձեր ձեռքի մեջ: Ի՞նչ է նշանակում այդ, դրանով նա ի՞նչ էր ուզում ասել:

— Երևի այն, որ Պանուրգի կինը հարբեցող կլինի, — ասաց Պանտագրյուլը:

— Ամենևին ոչ, — ասաց Պանուրգը, — չէ՞ որ շիշը դատարկ էր: Երդվում եմ սուրբ Ֆելիքսի ողնաշարով, որ այդ իմաստուն հիմարը, այդ սիրելին և բոլոր հիմարներից ամենախելոքը խորհուրդ է տալիս ինձ դիմել կախարդական Շշի պատգամախոսին: Եվ ես երդվում եմ, որ չեմ ամուսնանա, մինչև այդ նշանավոր պատգամախոսի մոտ չգնամ: Ես մի բարեկամ ունեմ, որ գիտի, թե որտեղ է ապրում այդ պատգամախոսը: Բոլորս միասին գնանք նրա մոտ: Հավատացեք ինձ, որ մենք զարմանալի բաներ կտեսնենք:

— Ուրախությամբ, — պատասխանեց Պանտագրյուելը, — բայց նախքան այդ վտանգավոր ճամփորդություն կատարելը...

— Ինչո՞ւ վտանգավոր, — ընդհատեց նրան Պանուրգը, — վտանգներն իրենք զանազան կողմ կփախչեն, հենց որ ինձ տեսնեն:

— Գուցե և այդպես է, — ասաց Պանտագրյուելը, — բայց և այնպես պետք է որոշ կարգադրություններ անել: Նախ և առաջ պետք է Տրիբուլեին վերադարձնել Բլուա, որտեղից եկել է:

Այդ իսկույններթ կատարվեց, և Պանտագրյուելը ընծայեց հիմարին ոսկե թելով նախշված շքեղ կերպասե վերարկու:

— Երկրորդ՝ մենք պետք է թույլտվություն խնդրենք մեր տիրոջից, այսինքն իմ ծնողից: Երրորդը՝ պետք է գտնենք մի լավ ուղեկցող ու թարգմանիչ:

— Ուղեկցող ու թարգմանիչ կլինի իմ բարեկամ Քսենոմանը,^[53] — ասաց Պանուրգը, — բացի այդ, մենք պետք է մտնենք Լապտերների Երկիրը և ձեռք բերենք այնտեղ Գիտական Լապտեր: Այդ Գիտական Լապտերը մեզ կտանի ուղիղ պատգամախոսի մոտ:

— Հետևապես, մեզ մնում է միայն թույլտվություն ստանալ իմ ծնողից, — ասաց Պանտագրյուելը:

Գլուխ XII

Այն մասին, թե ինչպես է Պանտագրյուելը ճանապարհորդություն կատարում կախարդական Շշի պատգամախոսին այցելելու համար

Գարգանտյուան նստած էր արքունիքի մեծ դահլիճում՝ ձեռքին երկու հաստ ծրար բռնած: Մի ծրարում զանազան խնդրագրեր, որոնց նա պատասխանել էր արդեն, մյուսում այն խնդրագրերն էին, որոնց նա դեռ չէր պատասխանել:

Հենց որ Պանտագրյուելը հայնտեց իր մտադրությունը, Գարգանտյուան անմիջապես ծրարները հանձնեց Ույրիխ Գայլեին, իսկ ինքը Պանտագրյուելին մի կողմ տարավ ու ասաց.

— Ես շատ գոհ եմ, սիրելի որդի, որ դու մտադիր ես այդպիսի մի ճամփորդություն կատարելու: Քո հասակում դա շատ օգտակար գործ է: Վերցրու հետդ Պանուրգին, Էպիտեմոնին, հայր Ժանին և ուրիշ ում կուզես: Իմ ծովային զինարանից վերցրու հետդ որքան ցանկանում ես դեկապետներ, նավաստիներ և թարգմանիչներ: Դրամ վերցրու իմ զանձարանից և հենց որ նպաստավոր քամի լինի, ճանապարհվիր:

Պանտագրյուելը հրաժեշտ տվեց հորը և իր բարեկամների հետ գնաց Տալասա^[54] նավահանգիստը: Նրանց հետ միասին նավահանգիստ եկավ նաև Պանուրգի բարեկամ Քսենոմանը, որ նշանավոր ճանապարհորդ էր, վաղուց սովորած ծովային ճամփորդության վտանգներին:

Երբ Պանտագրյուելը եկավ Տալասա նավահանգիստը, ճամփորդության համար պատրաստել տվեց տասներկու նավ: Նավաստիները, ղեկապետները, թարգմանիչները, արհեստավորները և զինվորականները արդեն պատրաստ էին նավ նստելու: Բարձեցին նավերի վրա ուտեստի պաշար, հրետանի, ռազմամթերք, հանդերանք, դրամ, կարճ ասած՝ ամեն բան, ինչ անհրաժեշտ էր ճամփորդության համար:

Երբ ամեն ինչ պատրաստ էր, ճամփորդները հավաքվեցին «Տալամեգա» նավը: Այսպես էր կոչվում Պանտագրյուելի գլխավոր նավը: «Տալամեգայի» նավախելում աչքի էր ընկնում մի մեծ ու հաստափոր շիշ, որի կեսը շինված էր արծաթից, կեսը՝ ոսկուց և զարդարված էր կարմրագույն էմալով: Այդ շիշը նշան էր, որ ճամփորդները գնում են Կախարդական Շշի պատգամախոսի մոտ:

Երկրորդ նավի ետնամասում աչքի էր զարնում մի հին լապտեր, որ վարպետորեն շինված էր փայլարից: Լապտերը ցույց էր տալիս, որ ճամփորդները պիտի մտնեն նաև Լապտերների Երկիր:

Երրորդ նավի վրա դրված էր ճենապակե գավաթ: Չորրորդ նավի վրա՝ երկկանթանի ոսկե սափոր: Հինգերորդ նավի վրա՝ հրաշալի շինված փայտե աման՝ զմրուխտներով զարդարված: Վեցերորդ նավի վրա՝ չորս տեսակ մետաղներից շինված վարդապետական մի տափաշիչ զինու համար: Յոթերորդի վրա՝ սև փայտից շինված և ոսկով զարդարած մի ձագար: Ութերորդի վրա՝ սևաթույր ոսկուց շինված բաժակ: Իններորդի վրա՝ ոսկե սկուտեղ: Տասներորդի վրա մի բաժակ՝ պարսկական ոճով: Տասնմեկերորդի վրա՝ ոսկե զամբյուղ, որով խաղող են կրում: Տաներկուերորդի վրա՝ ոսկե փոքրիկ տակառ՝ զարդարված հնդկական խոշոր մարգարիտներով:

Այս մեծաշուք նավատորմը տեսնողը կժպտար ու կհասկանար, որ այդ նավով ճամփորդողներն անշուշտ ուտելու և խմելու մեծ վարպետներ պիտի լինեն:

Եվ ահա բոլորը հավաքվեցին «Տալամեգա» նավի վրա: Այնտեղ տախտակամածի երկարությամբ շարված էին սեղաններ, որոնց վրա դրված էին զինի և ուտելիքներ: Պանտագրյուելը բարի երթի ճառ ասեց, ճանապարհորդները կուշտ կերան ու խմեցին: Հետևյալ օրը լուսաբացին ամբողջ նավատորմը խարխիսները բարձրացրեց ու բարենպաստ քամու օգնությամբ ճանապարհ ընկավ դեպի արձակ ծովը:

Գլուխ XIII

Այն մասին, թե ինչպես է Պանտագրյուելը փոստային աղավնի ուղարկում իր հոր մոտ

Երեք օր շարունակ ճանապարհորդները ցամաքի չհանդիպեցին: Չորրորդ օրը նրանք տեսան Մեդամոտի¹⁵¹ կղզին, որտեղ այդ ժամանակ մեծ տոնավաճառ կար: Յուրաքանչյուր տարի այստեղ էին գալիս հարուստ վաճառականներ Ասիայից և Աֆրիկայից ու բերում էին վաճառելու անհաշիվ ու անհամար օտարերկրյա ապրանքներ:

Պանտագրյուելն իր մարդկանցով ասի դուրս եկավ, և մինչդեռ նավաստիները խմելու ջրի պաշար էին վերցնում, գնաց տոնավաճառ՝ գորգեր ու նկարներ նայելու: Տեսակ-տեսակ զարմանալի բաներ տեսավ այնտեղ Պանտագրյուելը, բայց ամենից շատ

նրան դուր եկան այն գորգերը, որոնց վրա պատկերված էին հերոս Աքիլլեսի քաջագործությունները: Այդ գորգերը 78 հատ էին և նրանցից յուրաքանչյուրը չորս սաժեն երկարություն ուներ: Պանտագրյուելը հրամայեց անմիջապես գնել այդ գորգերը: Բացի գորգերից, նա գնեց նաև երեք մատղաշ միեղջյուր¹⁵⁶ և մի իշայծամ:

Երբ Պանտագրյուելը գնումներ էր կատարում, ծովի կողմից լավեցին թնդանոթի կրակոցներ և ուրախ աղաղակներ: Պանտագրյուելը վերադարձավ նավահանգիստ: Նա տեսավ, ինչպես է մոտենում «Խելիդոնը»,¹⁵⁷ իր հոր ամենաարագընթաց նավը: Նրա ետնամասում կախված էր մի ծովային ծիծեռնակ, որ ձուլված էր Կորնթոսի պղնձից: Պետք է ասել որ նավորդները խելիդոն են կոչում մի փոքրիկ ծովային ձկան, որ չղջիկի պես թևեր ունի: Այդ ձկնիկը ծովից դուրս է թռչում և կարող է ջրից մի սաժեն բարձրությամբ բավական մեծ տարածություն թռչել: Ահա այդ պատճառով էլ Գարգանտյուայի նավի անունը դրել էին «Խելիդոն», որովհետև թվում էր, որ այդ նավը ոչ թե լողում է, այլ ծիծեռնակի պես թռչում է ծովի վրայով:

«Խելիդոնով» էր եկել Մալիկորն անունով սուրհանդակը, որին Գարգանտյուան ուղարկել էր իմանալու իր որդու առողջությունը: Պանտագրյուելը ողորմաձաբար դիմավորեց սուրհանդակին:

— Բերե՛լ եք ձեզ հետ երկնային համբավաբեր Գոգալին,¹⁵⁸ — հարցրեց Պանտագրյուելը:

— Այո, տեր իմ, — պատասխանեց Մալիկորնը, — Գոգալը նստած է ահա այս զամբյուղի մեջ:

Դա Գարգանտյուայի աղավնաբնից վերցրած մի աղավնի էր: Այն ժամանակ, երբ Գարգանտյուայի նավատորմը պիտի ճանապարհ ընկներ, աղավնին թուխս էր նստել: Այժմ ճտերն արդեն ձվից դուրս էին եկել, և աղավնին սաստիկ կարոտում էր իր ձագերին:

Պանտագրյուելը հանեց աղավնուն վանդակից, սպիտակ ժապավեն կապեց նրա ոտքերից և առանց մի րոպե ուշացնելու ազատ արձակեց: Աղավնին, նետի պես սլանալով, ետ դարձավ և երկու ժամ անց արդեն իր բնում էր: Երբ Գարգանտյուան իմացավ, որ աղավնին վերադարձել է ոտքերին սպիտակ ժապավեն կապած, շատ ուրախացավ: Սպիտակ ժապավենը նշան էր, որ Պանտագրյուելը ողջ և առողջ է: Եթե Պանտագրյուելին որևէ դժբախտություն պատահած լիներ, աղավնուն ետ կուղարկեին սև ժապավեններով:

Այնուհետև Պանտագրյուելը երկար նամակ գրեց հորը և հանձնեց Մալիկորնին: Բացի այդ, Պանտագրյուելը հորը թանկագին ընծաներ ուղարկեց. մի ասիական իշայծամ՝ վրան կերպասե տապնակ գցած, 78 գորգ Աքիլլեսի կյանքը պատկերող նկարներով և երեք միեղջյուր՝ ոսկեթել մահուդե տապնակներով: Ապա յուրաքանչյուրը գնաց իր ճանապարհով՝ Մալիկորնը վերադարձավ Գարգանտյուայի մոտ, իսկ Պանտագրյուելն ու նրա բարեկամները շարունակեցին իրենց ճանապարհը:

Գլուխ XIV

Այն մասին, թե ինչպես է Պանտագրյուելը հանդիպում մի առևտրական նավի

Մեր նավարկության հինգերորդ օրը նկատեցինք մի առևտրական նավ, որը բոլոր առագաստները պարզած՝ գալիս էր ուղիղ մեր դիմաց: Երբ նավը մոտեցավ, Պանտագրյուելը խոսեց վաճառականների հետ: Նա հարցուփորձ էր անում, թե ինչ կա, ինչ չկա այդ կողմերում: Դրանք ֆրանցիացի վաճառականներ էին և գալիս էին Լապտերների Երկրից: Վաճառականների ասելով, Լապտերների երկրում ապրում են ուրախ լապտերավաճառները և իրենց քեֆին լապտերավառությամբ են պարապում: Լապտերավառները շատ ուրախ կլինեն, եթե Պանտագրյուելը գնա նրանց մոտ, մանավանդ որ այժմ նրանք պատրաստություն են տեսնում լապտերի տոնակատարության համար:

Ըստ որում, երբ Պանտագրյուելը հարցուփորձ էր անում վաճառականներին, Պանուրգը վեճ ունեցավ վաճառականներից մեկի հետ, որը գեր ոչխարների մի ամբողջ հոտ էր տանում: Այդ վաճառականը Տայլբուրգ քաղաքից էր և անունն էլ Հնդկահավիկ էր: Այդ Հնդկահավիկը, երբ Պանուրգին նկատեց, իր ընկերներին ցույց տալով ասաց.

— Մի այդ հիմարին նայեցեք, տեսեք ինչ լավ մոռլթ ունի:

— Հիմարն ինքդ ես, գրողը քեզ տանի, — պատասխանեց Պանուրգը: — Հիմարությունը թափվում է զարշեի ռեխիցդ: Քո կինը երևի ամեն կիրակի քեզ ծեծում է:

— Իմ կինը ամենաբարի կինն է ամբողջ Ֆրանսիայում, — ասաց վաճառականը: — Ես նրա համար ընձա եմ տանում տասնմեկ մատ երկարությամբ մարջանի մի ճյուղ: Բայց դու ի՞նչ գործ ունես իմ կնոջ հետ և ինչո՞ւ ես քիթդ ամեն տեղ խոթում: Ի՞նչ մարդ ես դու, պատասխանիր, սրիկա, եթե աստծուց երկյուղ ունես:

— Իսկ եթե քո կինը լավ կին է, ինչո՞ւ չես նստում տանը, այլ ծովերն ես չափչփում: Դե պատասխանիր, սատանայի զավակ:

— Ես քեզ սրախողխող կանեմ, ինչպես ոչխարի, — գոռաց վաճառականը և ձեռքը տարավ դեպի սուրբ: Բայց սուրն այնքան էր խոնավացել ծովային օդից, որ ամբողջապես ժանգոտել էր և ոչ մի կերպ չէր ուզում դուրս գալ պատյանից: Պանուրգի կողմից միջամտեց հայր սուրբ Ժանը և անշուշտ կսպաներ վաճառականին իր դաշույնով, եթե նավապետը չխնդրեր Պանտագրյուելին վերջ տալ այդ կռվին:

Պանտագրյուելը մի կերպ հաշտեցրեց կռվողներին: Պանուրգը սեղմեց վաճառականի ձեռքը, և նրանք երկուսը միասին խմեցին ի նշան հաշտության:

Բայց գործը դրանով չվերջացավ: Հենց որ կռիվը հանդարտեցրին, Պանուրգը հայր Ժանին և Էպիտեմոնին մի կողմ տանելով ասաց.

— Դուք հիմա մի զվարճալի բան կտեսնեք: Մենք մի լավ կծիծաղենք, եթե հանկարծ որևէ բան չխանգարի:

Եվ, դառնալով դեպի վաճառականը, խնդրեց որ նա իր ոչխարներից մեկը ծախի իրեն:

— Այ թե ի՞նչ գնորդ եմ գտել, — ծիծաղելով ասաց վաճառականը: — Չնեղանաք, բարեկամ, եթե ասեմ, որ դուք արտաքինից ավելի շատ նման եք ճանապարհներին թալան անողի, քան գնորդի: Հապա միայն ճիշտն ասեք, ի՞նչ կանեիք, եթե անտառում ձեր ձեռքը ընկներ մի մարդ, որի քսակում շատ դրամ լիներ: Հա՛, հա՛, հա՛, կարծում եմ, որ այդպիսի

մարդու բանը շատ վատ կլիներ: Ճիշտ չի՞ ասածս: Մի լավ նայեք սրան. բարեկամներ, իսկական ավագակի տեսք ունի:

— Համբերություն, — ասաց Պանուրգը, — խոսենք գործի մասին: Ծախեցեք ձեր ոչխարներից մեկը: Ինչքա՞ն կպահանջեք դրա համար:

— Ի՞նչ եք խոսում, բարեկամ, — ասաց վաճառականը, — չե՞ք տեսնում միթե, որ այս ոչխարները լւանտական երկարամազ ոչխարներ են:

— Ինչ էլ լինի, շատ եմ խնդրում նրանցից մեկը ծախեք ինձ, — ասաց Պանուրգը, — ձեզ կանխիկ ոսկի կվճարեմ:

— Հարևան, — ասաց վաճառականը, — լավ լսեցեք ինչ եմ ասում:

— Ծատ եմ խնդրում, — ասաց Պանուրգը:

— Կարծեմ ձեր անունը Ռոբին ոչխար է:

— Անվանեցեք ինձ, ինչպես կամենում եք, — ասաց Պանուրգը:

— Հա՛, հա՛, հա՛, — ծիծաղում է վաճառականը: — Նայեցեք այս ոչխարին, սրան էլ են Ռոբին ասում: Ռոբին՛, Ռոբին՛, Ռոբին՛:

— Բա՛-բա՛-բա՛ — մայեց ոչխարը:

— Լսո՞ւմ եք, ինչ գեղեցիկ ձայն ունի, — ասաց վաճառականը: — Լսեցեք ինչ եմ առաջարկում: Եկեք ձեզ դնենք կշեռքի մի նժարի վրա, իսկ իմ Ռոբինին՝ մյուս նժարի վրա: Գրագ կգամ, որ իմ ոչխարը ձեզանից ավելի ծանր կլինի:

— Համբերություն, — ասաց Պանուրգը: — Բարի եղեք, պարոն, ծախեցեք ինձ ձեր ոչխարներից մեկը, թեկուզ մի քիչ էլ վատը լինի:

— Միրելի բարեկամ, — ասաց վաճառականը, — այդ ոչխարների բրդից են պատրաստում Ռուանի նուրբ մահուղները:¹⁵⁹¹ Մովորական մահուղները դրանց համեմատությամբ հասարակ թաղիք են: Իմ ոչխարների կաշվից պատրաստում են տաճկական գեղեցիկ սեկը: Նրանց աղիքներից պատրաստում են լարեր ջուլթակների ու տավիղների համար: Հասկացա՞ք հիմա, թե ինչ բան են իմ ոչխարները:

— Եթե դուք բարեհաճեք ծախել ինձ մի ոչխար, — ասաց Պանուրգը, — ես ձեզ անչափ շնորհակալ կլինեմ: Տեսեք, ահա դրամը պատրաստ է: Ինչքա՞ն եք ուզում մեկ ոչխարի համար:

Եվ այս ասելիս Պանուրգը հանեց գրպանից ոսկե նոր դրամներով լիքը քսակը:

Գլուխ XV

Այն մասին, թե ինչպես է Պանուրգը ծովում ջրասույզ անում վաճառականին ու նրա ոչխարներին

— Իմ ազնիվ բարեկամ, — ասաց վաճառականը, — իմ ոչխարների միսը կարող են վայելել

միայն թագավորներն ու իշխանները: Նա այնքան հյուրավի է, այնքան քնքուշ, որ շաքարի պես հավվում է մարդու բերանում:

— Ինչ անենք, — ասաց Պանուրգը, — ես էլ ձեզ արքայի պես կվճարեմ, միայն ծախեցեք ինձ ձեր ոչխարներից մեկը:

— Չէ, բարեկամ, — ասաց վաճառականը, — տեսնում եմ, դուք դեռ լավ չեք հասկանում, թե սրանք ինչպիսի կենդանիներ են: Օրինակի համար վերցնենք հենց նրանց կոտոշները: Եթե այդ կոտոշները ծեծենք սանդի մեջ, մի արևոտ տեղ ցանենք և շուտ-շուտ ջրենք, մի քանի ամսից հետո հրաշալի ծներեկ կբուսնի: Էլ չեմ խոսում ոչխարի թիակի, գիստի մասին, կրծքի, երիկամի, յարդի և փորոտիքի մասին: Դուք չեք կարող նույնիսկ գնահատել այդ բաները ինչպես հարկն է: Դեռ այս էլ պետք է նկատի ունենալ, որ ոչխարի փուչիկից պատրաստում են հիանալի խաղագնդակ, կողերից՝ ինքնարձակ աղեղ՝ բալի կորիզներով կռունկներ սպանելու համար, իսկ գլխից՝ հրաշալի կերակուր շների համար:

— Կարիք չկա այդքան շողակրատելու, — ասաց նավապետը վաճառականին, — ոչխարը քոնն է, ծախում ես ծախի, չես ծախում, մի ծախի, բայց ավելորդություններիդ վերջ տուր:

— Շատ լավ, ես մի ոչխար կծախեմ, — ասաց վաճառականը, — միայն ձեզ հաճույք պատճառելու համար: Թող նա ինձ վճարի երեք ոսկեդրամ և թող ընտրի իր ուզածը:

— Շատ թանկ եք ուզում, — ասաց Պանուրգը, — մեր կողմերում այդ գնով հինգ-վեց ոչխար կարելի է գնել:

— Այ դու ավանակ, — ասաց վաճառականը, — մի՞թե չես հասկանում, որ իմ ոչխարներից ամենավատը չորս սովորական ոչխար արժի: Ասածս դատարկ գլուխդ մտա՞վ, թե ոչ: Տխմար արարած:

— Հանգստացեք, մեծապատիվ պարոն, — ասաց Պանուրգը, — շատ մի տաքացեք, ահա ստացեք ձեր փողը:

Պանուրգը վաճառականին վճարեց ոչխարի գինը, ջոկեց ամենամեծ ոչխարը, բարձրացրեց, դրեց մեջքին: Ոչխարը բարձր մայեց: Ամբողջ հոտը հետևեց նրա օրինակին, նույնպես բարձր մայեց:

— Գրողը տանի դրան, — ասաց վաճառականը, — այդ սրիկան ընտրեց ամենավաղ ոչխարը: Երևում է, որ ոչխարի լավն ու վատը հասկանում է զգվելին:

Իսկ Պանուրգն այդ ժամանակ առանց ոչ մի խոսք արտասանելու մոտեցավ նավի եզրին և իր գնած ոչխարը գցեց ծովը: Դա այնպես արագ ու անակնկալ կատարվեց, որ ես նույնիսկ չկարողացա տեսնել, թե ինչպես եղավ այդ: Մյուս բոլոր ոչխարները նույնպես մայելով և միմյանց հրելով մեկը մյուսի ետևից վազեցին ու ծովը թափվեցին, հետևելով առաջին ոչխարին: Նրանցից յուրաքանչյուրն աշխատում էր առաջինն իրեն գցել ծովը և ոչ մի հնար չէր լինում նրանց կանգնեցնելու: Երևի դուք գիտեք, որ ոչխարները սովորություն ունեն հետևելու իրենց առաջնորդին, ուր էլ որ նա տանի նրանց: Այժմ էլ նույնը պատահեց, հենց որ առաջնորդը ջրասույզ եղավ, մնացած բոլոր ոչխարներն շտապեցին հետևելու նրան, առանց իմանալու, թե ինչ է տեղի ունեցել: Չուր չեն ասում, որ ոչխարն ամենատխմար կենդանին է:

Սարսափահար եղած վաճառականը դես ու դեն էր վազվզում, որ կորստից փրկի իր ոչխարների հոտը, բայց գուր էին անցնում նրա ջանքերը: Ոչխարները մեկը մյուսի ետևից նավի եզրից թռչում էին ծովը և ջրասույզ լինում: Այն ժամանակ վաճառականը ամենալավ ոչխարի բրդից բռնած քարշ տալով տարավ դեպի նավի իջանցքը: Վաճառականը կարծում էր, որ մյուս ոչխարներն էլ կհետևեն նրան, և հոտը փրկված կլինի: Բայց պատահեց բոլորովին հակառակը: Դուրս եկավ, որ վաճառականի բռնած ոչխարն այնքան ուժեղ էր, որ իրեն վաճառականին էլ քարշ տվեց տարավ և նրա հետ միասին գցեց իրեն ծովի ալիքների մեջ: Այլևս ոչինչ չէր կարող փրկել խելագարված հոտը: Ոչխարները իրենց նետում էին ծովը, մինչև որ ջրասույզ եղավ ամբողջ հոտը:

— Մնացե՛լ է արդյոք գեթ մի ոչխար, — հարցրեց Պանուրզը: Երբ ոչխարների հոտից ոչ մի հետք չէր մնացել: — Շատ կուզեի իմանալ, որտեղ է այժմ մեր սիրելի Ռոբին ոչխարը: Ես ռազմական հին խաղ խաղացի վաճառականի գլխին: Իսկ դու ինչ կարծիքի ես, եղբայր ժան:

— Ինչ խոսք, որ դու լավ պատժեցիր վաճառականին, — ասաց հայր սուրբ ժանը, — բայց իմ կարծիքով մի բան միայն վատ եղավ, մեր փողերը գուր տեղը կորան:

— Թքել եմ փողի վրա, փողն ի՞նչ բան է, բայց փոխարենը ես մի լավ զվաճացա, — ասաց Պանուրզը: — Պետք է իմանաս, եղբայր ժան, որ երբեք անպատիժ չեմ թողնում ինձ վիրավորողին, ես այդ տեսակ բարեհոգիներից չեմ:

— Այն ժամանակ մի օր էլ դու ինքդ կրակի մեջ կընկնես, — պատասխանեց ժանը, — սատանաները շատ են սիրում քեզպեսներին, լավ հիշիր ասածս, բարեկամ:

Գլուխ XVI

Այն մասին, թե ինչպես է Պանտագրյուելը ժամանում Ազգականների կղզին

Նավարկության երրորդ օրը լուսաբացին մենք տեսանք մի եռանկյունի կղզի՝ Միցիլիային շատ նման: Այդ կղզին կոչվում էր Ազգականների կղզի: Այդ կղզու բոլոր բնակիչները իրար ազգական էին և շատ պարծենում էին դրանով: Չարմանալի էր նաև այն, որ նրանք երբեք չէին ասում «իմ հայրը», «իմ դուստրը», «իմ մայրը», ինչպես ասում են ամեն տեղ: Ազգականների կղզու բնակիչները տարօրինակ մականուններ ունեին:

— Բարև Օձաձուկ, — ողջունում էր ազգականներից մեկն իր հարևանին:

— Բարև Ծովացույ, — պատասխանում էր հարևանը:

— Ինչպես ես Գրասեղան, — հարցնում էր մեկ ուրիշը:

— Շատ լավ, Զերոց, իսկ դու ինչպե՞ս ես, — պատասխանում էր ընկերը:

Մի երրորդ այսպես էր ողջունում իր ազգականուհուն.

— Բարի լույս, Կացին:

— Բարի լույս, կացնի կոթ, — պատասխանում էր ազգականուհին: Փողոցով անցնելիս այսպիսի խոսակցություն էինք լսում.

- Բարև Հացամիջուկ:
- Բարև Հացակեղև:
- Չգիտե՞ս, ուր է գնացել Օդը:
- Չբռնելու է գնացել Կրակաքաշի հետ:

Կղզում գրոսնելուց հետո մենք մտանք մի պանդոկ ճաշելու: Այդ ժամանակ պանդոկում երեք հարսանիք կար: Մեր աչքի առաջ ջահել ու գեղեցիկ Տանձին մարդու էին տալիս Հոլանդական Պանրին, որի երեսին նշմարվում էր կարմրավուն աղվամազ: Մյուս դահլիճում Հին Կոշիկը ամուսնանում էր ջահել ու գեղեցիկ Բոտիի հետ: Պանտագրյուելին ասացին, որ ջահել Բոտին նրա համար է մարդու գնում Կոշիկին, որ Կոշիկին շատ ճարպ է քսված, որը կարող է պետք զալ տնտեսության մեջ: Երրորդ դահլիճում ջահել Գուլյան ամուսնանում էր պառավ Հողաթափի հետ: Ասում էին, որ Գուլյան պառավ Հողաթափին կնության է առնում միայն նրա համար, որ Հողաթափը զարդարված է ոսկով ու թանկագին քարերով:

Գլուխ XVII

Այն մասին, թե ինչպես է Պանտագրյուելը գալիս Դատամոլների կղզին

Հետևյալ օրը մենք հասանք Դատամոլների կղզին: Աներևակայելի կեղտոտ էր այդ կղզին: Դատամոլները մեզ ուտելու և խմելու ոչ մի բան չտվին: Գլուխները հազար անգամ խոնարհելով և անվերջանալի ծամածռություններով նրանք մեզ հայտնում էին, որ պատրաստ են դրամով մատուցել իրենց ծառայությունը: Թարգմանիչներից մեկը Պանտագրյուելին ասաց, որ դատամոլները իրենց ծեծել տալով են հաց վաստակում: Երբ երկար ժամանակ նրանցից մեկը ծեծ չի ուտում, քաղցից մեռնում է:

— Ծեծվելու գործը այսպես է կատարվում, — ասաց թարգմանիչը — երբ մի տերտեր, վարդապետ կամ վաշխառու ուզում է մեկին վնասել, նրան գցում է դատամոլի ճանկը: Դատամոլը քարշ է տալիս նրան դատարան, ենթարկում է հազար ու մի դատարանական քաշքշուկների և իր լկտիությամբ այնքան է իր գոհին համբերությունից հանում, որ վերջինս ճարը կտրած փայտն առնում ու դատամոլին մի լավ ծեծում է: Խեղճը դրա համար ենթարկվում է տուգանքի, իսկ դատամոլի ուզածն էլ հենց այդ է լինում: Դատամոլը դրանից հետո մի չորս ամսով հարստանում է և իր քեֆին ապրում:

- Այդ փորձանքից ազատվելու համար ես մի լավ միջոց գիտեմ, — ասաց Պանուրգը:
- Ի՞նչ միջոց, — հարցրեց Պանտագրյուելը:

— Լսեցեք ասեմ, — ասաց Պանուրգը: — Դե Բաշե անունով մի մարդ է լինում, որի օձիքից այնքան պինդ են բռնում դատամոլները, որ նրանցից ազատվելու ոչ մի միջոց չի լինում: Դե Բաշեն քաջ և վեհանձն մարդ է լինում, բայց դատամոլները նրան այնքան են տանջում, որ նա վճռում է ինչ էլ լինի նրանցից անպայման ազատվի: Մի օր ճաշի է հրավիրում իր մոտ հացթուխ Լուարին իր կնոջ հետ, իր բարեկամ քահանային և իր բոլոր ծառաներին ու ասում.

— Բարեկամներ, դուք տեսնում եք, թե ինչպես են հոգիս հանում ու ինձ տանջում այդ սրիկա դատամուկները: Ես վճռել եմ նրանցից ազատվել և խնդրում եմ ձեր օգնությունը: Հաջորդ կիրակի դուք, պարոն հացթուխ, և ձեր կինը երկուսով եկեք ինձ մոտ պսակի զգեստ հագած: Մենք ցույց կտանք, որ հարսանիք ենք անում: Դուք, տեր հայր, եկեք ինչպես հարկն է զգեստավորված, իսկ դուք, պարոն երաժիշտ, ձեզ հետ վերցրեք սրինգ ու թմբուկ: Դուք անշուշտ գիտեք, որ մեր հարսանիքներում սովորություն կա միմյանց թեթև ծեծել հարսանիքի հիշատակը հավերժացնելու համար: Այ հենց այդ սովորությունից մենք կօգտվենք դատամուկին մի լավ պատժելու համար: Երբ նորապսակները համբուրվեն, դուք բոլորը թեթևակի իրար բամփեցեք, իսկ երբ հերթը հասնի դատամուկին, այն ժամանակ ազատություն տվեք ձեր բռունցքներին: Շատ եմ խնդրում, ծեծեցեք նրան որքան ուժ ունեք: Ահա տալիս եմ ձեզ կաշեպատ երկաթի նոր ձեռնոցներ: Հագցրեք ձեռքներիդ և որքան կարող եք շատ ծեծեք այդ սրիկային: Որքան շատ ծեծեք, այնքան մեծ բավականություն կպատճառեք ինձ:

Հետևյալ կիրակի օրը, նրանց սպասածի համաձայն, դե Բաշեի մոտ եկավ հաստիկ ու կարմրաթուշ դատամուկը: Դռնապանն իսկույն ճանաչեց նրան, նրա ձեռքին կտավե տոպրակի մեջ դատական ծանուցագրեր տեսնելով: Դռնապանը քաղաքավարությամբ բարևեց դատամուկին և իսկույն զանգը խփեց, որ իմաց տա դատամուկի գալը: Հացուխն և նրա կինը իսկույն հագան պսակի զգեստը և քահանայի հետ ներս մտան ընդհանուր դահլիճը: Դատամուկին հրավիրեցին սեղանի մոտ այն ժամանակ, երբ բոլորը հագնում էին երկաթե ձեռնոցները: Դատամուկին հյուրասիրում էին և գինի խմեցնում:

«Շատ լավ ժամանակ եք եկել դուք, — ասում էին դատամուկին, — մեզ մոտ այսօր հարսանիք կա, խնդրում ենք, կերեք, խմեք, ուրախացեք»:

Հենց որ դատամուկը մի քիչ խմեց, նրան հրավիրեցին ընդհանուր դահլիճ, որտեղ ամեն ինչ արդեն պատրաստ էր: Երբ հերթը բռունցքներին հասավ, դատամուկին այնպես դմփեցին, որ նա իր օրում չէր տեսել: Ամենից շատ ծեծեց տեր հայրը, որին Հարված էին ասում՝ սաստիկ ուժեղ լինելու պատճառով: Մեծարգո Հարվածը իր շուրջառի ծայրով ծածկել էր երկաթե ձեռնոցը և այնպիսի հարվածներ էր հասցնում դատամուկին, որ նրա կողերից ութը ջարդեց: Երբ ծեծն ուտելուց հետո դատամուկը տուն վերադարձավ, նրա ամբողջ մարմինը հարվածներից խայտաբղետ էր դարձել, և այն գնալն էր, որ գնաց ու այլևս չերևաց:

— Գուցե ավելի լավ կլիներ, եթե հենց իրեն՝ տերտերին ծեծած լինեին այդ ձեռնոցներով, — ասաց Էպիտեմոնը: — Ի՞նչ մեղք են գործել այդ խեղճ դատամուկները: Գուցե նրանք ամենևին վատ մարդիկ չեն:

— Այ հիմա մենք դա փորձով կհմանանք, — ասաց եղբայր Ժանը:

Այս խոսքերն ասելիս նա գրպանից հանեց ոսկիներով լի իր քսակը և ասաց բարձրաբայն.

— Է՛յ, ո՞վ է ցանկանում մի ոսկի դրամ աշխատել մի լավ քոթուկ ուտելու համար:

— Ես, ես, ես, — գոչեցին դատամուկները: — Քոթակեցեք մեզ, պարոններ, որքան ցանկանում եք, միայն թե դրամ տվեք:

Հայր սուրբ Ժանն ընտրեց մի կարմրերես դատամուկ և ասաց նրան, որ առաջ գա: Դատամուկների ամբոխը նախանձից տրտնջաց: Առանձնապես անբավական էր մի

բարձրահասակ ու նիհար դատամուկ, որ մի գիտնական մարդ էր և հարգանք էր վայելում եկեղեցական դատարանում:

— Ինչի՞ նման է այս, — տրտնջալով ասում էր նա, — այս Կարմիր Մռուլթը բոլոր մուշտարիներին մեր ձեռքից խլում է: Ինչո՞ւ պետք է երեսուն հարվածից քսանութը նրան բաժին հասնի: Մենք դարձյալ ծեծից զուրկ պետք է մնանք:

Ժան վարդապետը Կարմիր Մռուլթին այնքան ծեծեց, որ ձեռքերը թուլացան: Դրանից հետո նա խոստացած ոսկե դրամը տվեց դատամուկին, իսկ այդ ապուշը, որի մարմնի վրա առողջ տեղ չէր մնացել, իրեն սաստիկ երջանիկ էր զգում կերած ծեծի համար:

— Է՛յ, պարոն սատանայապետ, — ասում էին Ժանին մնացած դատամուկները, — չէի՞ք ցանկանա արդյոք մեզանից մեկին էլ այդպիսի քոթակի արժանացնել, մենք պատրաստ ենք վճարից մի բան էլ պակասեցնել: Մեզանից մեկին էլ ընտրեցեք:

— Գնացեք կորեք, լրբեր, — աղաղակեց Կարմիր Մռուլթը — ես չեմ թողնի, որ մուշտարիներին ինձանից խլեք: Նրանք ինձ են ընտրել և ոչ ձեզ: Ձեզ բոլորիդ դատի եմ կանչում, գրողի արարածներ, ձեզ դատարաններում այնքան քարշ տամ, որ հոգիներդ դուրս գա:

— Պարոն սատանա, — ավելացրեց նա, դառնալով դեպի հայր սուրբ Ժանը, — դուք անշուշտ ոչ մի կասկած չունեք այժմ, որ ես իմ գործը հիանալի գիտեմ, շատ եմ խնդրում, ինձ մեկ էլ ծեծեցեք: Ես համաձայն եմ կես գին ստանալու: Հավատացեք, դա շատ էժան է:

Մյուս դատամուկները շրջապատել էին Պանուրգին, Էպիտեմոնին ու Գիմնաստին և իրենց ծառայությունն էին առաջարկում նրանց: Դատամուկները այնպիսի աներեսությամբ էին կպել մեզանից, այնպես էին մեր զահլաները տանում, որ մենք ստիպված եղանք շուտով վերադառնալ նավը և հեռանալ այդ զզվելի կղզուց:

Գլուխ XIII

Այն մասին, թե ինչպես փոթորիկ բարձրացավ ծովի վրա

Պանտագրյուելը նստած էր նավում մտահոգված ու տրտում: Նավապետը այքը չէր հեռացնում հողմացույցից, տեսնելու համար, թե ինչպես է պտտվում: Հողմացույցը լավ բան չէր գուշակում: Նշաններից երևում էր, որ փոթորիկ է լինելու: Նավապետը պատվիրեց նավաստիներին պատրաստ և աչալուրջ լինել: Կայմի առագաստները իջեցրին, թողեցին միայն երկու կողմերի առագաստները:

Ծովը հանկարծ բարձրացավ ու մոնչաց: Ահագին ալիքները խփում էին նավի կողերին: Ահռելի ուժով փչեց հյուսիս-արևելյան քամին և այնպիսի շաչ ու շառաչ բարձրացրեց կայմաձողի մեջ, որ մարդու ականջ էր խլանում: Ամպերի գոռոցից դորդում էր երկինքը, փայլատակում էր կայծակը, տեղում էր անձրևը: Հանկարծ մուլթը պատեց ամեն կողմ և միայն կայծակն էր երբեմն լուսավորում փոթորկող ու մոլեգնած ծովը:

Պանուրգը ահից ու սարսափից իրեն կորցրած պազել էր մի տեղ:

— Ողորմած աստված, — ասում էր նա, — այս ալիքները կբշեն ու մեզ ծովը կզգեն: Բարեկամներ, ինձ մի քիչ քացախ տվեք, խմեմ, երկյուղից ես քրտնակոխ եմ եղել: Վայ մեզ, առագաստները ծվեն-ծվեն են եղել, թոկերը կտրատվում են, կայմերը կտորատվում: Ավանդ, ավանդ, ամեն ինչ կորած է: Մի ճար արեք ինձ, թողեք որ ես թաքնվեմ ճաղերի ետևում: Տեսեք, ձեր լապտերը վայր ընկավ: Լսո՛ւմ եք, ինչպես է ճաքում դեկը: Երևի արդեն կտորվել է: Ավանդ, այս ինչ փորձանք եկավ մեր գլխին: Պարոն դեկապետ, նայեք կողմնացույցին և դատեք, թե ո՞ր կողմից է փչում այս անհիժված քամին: Ազնիվ խոսք, ես սարսափից մեռնում եմ: Վա՛յ, վա՛յ, փրկեցեք ինձ, ես խեղդվում եմ:

Այն ժամանակ, երբ Պանուրգը հեծում ու ողբում էր, Պանտագրյուելը նավապետի խորհրդով մոտեցավ գլխավոր կայմին և երկու ձեռքով պինդ բռնեց նրանից: Եղբայր Ժանը, Էպիտեմոնը, Պոնոկրատը և մյուսները հանեցին իրենց բանկոնները և սկսեցին օգնել նավաստիներին: Միայն Պանուրգն էր, որ ոչինչ չէր անում: Նա կուչ եկած նստել էր տախտակամածում և դառնագին լալիս էր:

— Աստված վկա, մեր Պանուրգը կատարյալ մոզի է, — ասաց Ժանը:

— Է՛յ, լալկան Պանուրգ, աղմկարար Պանուրգ, ի՞նչ ես պագել, կարծես կավից շինած խրտվիլակ լինես, շուտ եկ մեզ օգնի:

— Վա՛յ, վա՛յ, եղբայր Ժան, սիրելի բարեկամ, ես խեղդվում եմ, ջրի տակն եմ գնում, — պատասխանում էր Պանուրգը: — Վայ ինձ, վերջս հասել է: Միրելի բարեկամներ, տեսեք, տեսեք կոշիկներին մեջ արդեն ջուր է լցվել: Ա՛խ, այս զարհուրմար ալիքը... Ո՛հ, ո՛հ, ես ուզում էի ասել, այս աստծու պատիժ ալիքը մեր նավը ջրասույգ կանի: Հայր սուրբ Ժան, հայր իմ, խոստովանեցրու ինձ: Ահա ես ծունկ չորած ասում եմ՝ հայր մեր, որ երկինս...

— Արի մեզ օգնի, շատ լսկոտ, — գոռաց Ժանը, — քեզ եմ ասում, կգաս թե չէ, սատանի բաժին:

— Լավ է սատանայի անուն չտաք, — լալագին ասում է Պանուրգը, առանց տեղից շարժվելու: — Վաղը որքան կուզես, բայց այսօր ոչ: Վա՛յ, այս ի՞նչ է, նավի մեջ ջուր է լցվում: Տեսեք, տեսեք, մենք ջրասույգ ենք լինում: Խոստանում եմ ձեր վանքին մի զանգ նվիրել, թե ողջ-առողջ ցամաք դուրս գամ: Միրելի բարեկամներ, ուզում եմ կտակս գրել:

— Այ դու հազար սատանաների բաժին դառնաս, սրիկա, — ասաց Ժանը, — ժամանակ է գտել կտակի մասին մտածելու, երբ բոլորս պետք է, որքան ուժ ունենք, աշխատենք: Գիմնաստ, սիրելիս, եկ այստեղ, նավի ետին մասը: Աստված վկա, այս անտեր ալիքը մեզ խորտակելու է: Տեսար, լապտերն էլ հանգավ: Երևում է, որ բոլորս էլ սատանայի բաժին ենք դառնալու:

— Վա՛յ, մենք կորանք, — լաց էր լինում Պանուրգը, — ես ծովի ջուր կուլ տվի, ինքան աղի է, ես խեղդվում եմ, ես մեռնում եմ, օգնեցեք, սիրելի բարեկամներ:

— Եթե ձայնդ չկտրես, ողորմելի արարած, ես քեզ շնածկներին բաժին կդարձնեմ, — ասաց Ժանը: — Աստված վկա, լավ կլինի դրան ծովը զգենք: Էյ, դեկավար, մի վախենա, բարեկամ: Տո այս ինչ կայծակ էր, կարծես բոլոր դևերը կտրել են իրենց շղթաները:

— Մի երդվիր, Ժան, սիրելի բարեկամ, — աղաչում էր Պանուրգը, — մեծ մեղք է երդում ուտելը, մենք բոլորս ջրասույգ կլինենք քեզ պես մեղսագործի պատճառով:

— Սա խելքը բոլորովին կորցրել է, — ասաց Ժանը, — ինչո՞ւ չես մեզ օգնում, իշու ձագ, ի՞նչ ես տեղումդ պինդ նստել ու փնթփնթում, աստված վկա, եթե կենդանի մնամ, այդ ծույլ անասունին այնպես կքոթակեն, որ մինչև կյանքի վերջը չի մոռանա: Յունգա, սիրելիս, եկ այստեղ: Պինդ կաց տեղումդ, մինչև այս ծովային հանգույցը վերջացնեն: Պոնոկրատ, հոգիս, հեռացիր այդտեղից, կարող ես վնասվել: Չգույշ, զգույշ, Էպիտեմոն, կրնկնես: Աստված իմ, ի՞նչ պատահեց այնտեղ: Նավաքիթը ջարդուփշուր եղավ:

— Վա՛յ-վա՛յ-վա՛յ, — լսվում էր Պանուրգի ձայնը, — ոչ երկինքն էմ տեսնում, ոչ գետինը, չորս կողմը միայն ջուր է: Ախ, մեկ էլ լինեմ Փարիզում կարկանդակավաճառ Ինոկենտիոսի նախշած խանութում կամ Սելիեում, վանքի այգում: Ղեկապետ, չէի՞ք կարող արդյոք ինձ ավի դուրս բերել: Ես ձեզ կվճարեի իմ ունեցած ամբողջ դրամը: Սիրելի բարեկամներ, եթե մենք անկարող ենք նավահանգիստ մտնել, գոնե կանգ առնենք որևէ մի հեռակայանում: Բոլոր խարխսիներն իջեցրեք: Անգին բարեկամ, աղաչում եմ, իջեցրեք խորաչափը, գուցե այստեղ շատ խոր չի:

— Բռնիր դեկը, — բղավեց ղեկապետը, — ամրացրու առջևի կայմի առագաստի պարանը: Պարզեցեք առագաստերն այնպես, որ նավն անշարժ մնա: Թողեք ղեկալծակը:

— Մի՞թե գործը դրան է հասել, — ասաց Պանտագրյուելը: — Ողորմած տեր, դու փրկիր և ազատիր մեզ:

— Պարզել առագաստները, շուտով, նավը կանգնեցնել, — գոչեց ղեկապետը, — այժմ հրաշքը միայն կարող է մեզ փրկել:

— Ծուտ արեք, դևի զավակներ, կանգնեցրեք նավը, — աղաղակում էր Ժանը, — ինձ մի կում գինի տվեք: Միևնույն է, գինին էլ այժմ սատանայի բաժին է դառնալու: Որտե՞ղ է իմ սրվակը: Ա՛յ քեզ կայծակ: Այսօր երևի սատանաները մե՛ծ տոնախմբություն ունեն:

— Վա՛յ ինձ, — հեծեծում է Պանուրգը, — Ժան վարդապետ, — դու քո հոգին կորստի ես մատնում: Վայ ինձ, վայ ինձ, ես ջրասույզ եմ լինում: Թույլ տվեք մի փոքրիկ կտակ կազմեմ...

— Դու գառանցում ես, — ասաց նրան Ժանը, — ինչ լավ կլինի, որ դու էլ քո կտակն էլ սատանաների բաժին դառնաք: Մի՞թե դու կարծում ես, որ մեր նավը կանգնած է նավահանգստում: Չե՞ս տեսնում, հիմար, ոչ մի հնար չկա այստեղից ազատվելու: Այսօր սատանաները երևի քե՛ֆ են սարքել ծովի վրա:

Հենց այդ բոպեին լսվեց Պանտագրյուելի աղիողորմ ձայնը.

— Տեր, դու փրկիր մեզ, մենք կործանվում ենք:

Վա՛յ, վա՛յ, — կրկնում էր շարունակ Պանուրգը:

Գլուխ XIX

Այն մասին, թե ինչպես փոթորիկը վերջանալուց հետո Պանուրգը նորից ուրախ մարդ է դառնում

Երբ սարսափը համակել էր բոլորին և նավում սաստիկ իրարանցում էր տիրում, Պանտագրյուելը հանկարծ բարձրաձայն գոչեց.

— Ցամա՛ք, ցամա՛ք: Ես ցամաք եմ տեսնում: Արիացեք, տղերք, մենք մոտ ենք նավահանգստին: Տեսեք, երկինքն էլ է պարզվում:

— Պարզե՛լ առագաստները, — գոչեց նավապետը, — դեկավարեցեք:

— Կատարված է, — պատասխանեցին նավաստիները:

— Նայեցեք, նայեցեք, — գոչեց Էպիտեմոնը, — ահա լավ երևում է ցամաքը: Տեսեք, ինչպես է վառվում փարոսի կրակը: Նավահանգստում շատ ժողովուրդ կա:

— Պտույտ տուր հրվանդանի մոտով, — հրամայեց նավապետը:

— Կատարված է, — պատասխանեցին նավաստիները:

— Ահա տեսեք, հսկիչ նավեր են գալիս մեզ օգնելու, — ասաց նավապետը: — Արիացեք, տղերք:

— Ոսկե խոսքեր եմ լսում, — ասաց Պանուրգը, — արիացեք տղերք, արիացեք:

— Այ դու սատանայի աղբ, — ասաց Ժան վարդապետը, — երդվում եմ, որ քեզ մի կաթիլ գինի չեմ տա: Գիմնաստ, սիրելիս, բեր ինձ համար մի փարչ գինի, մի քիչ էլ հետը խոզապուխտ ու հաց:

— Տեսեք, ահա և հսկիչ նավերը, — ասաց Պանտագրյուելը, — ես շատ լավ տեսնում եմ: Երկու բեռնանավակներ են, երեք գալերներ, հինգ անգլիական նավեր, չորս գոնդոլներ և վեց ֆրեգատներ: Բայց ո՞վ է, որ այդպես սուգ ու շիվան է բարձրացրել: Չէ՞ որ մեզ այլևս ոչ մի վտանգ չի սպառնում:

— Այդ Պանուրգն է հորթի դողով բռնվել, — ասաց Ժանը:

— Սուտ եք ասում, — բացականչեց Պանուրգը: — Ամեն բան գնում է իր կարգով: Խնդրում եմ, ինձ ամենից առաջ ցամաք դուրս բերեք: Այնտեղ մի քանի գործեր ունեմ անելու: Թողեք ես ձեզ օգնեմ: Տվեք այդ պարանը ես փաթաթեմ: Դուք կարծում եք ես վախեցա՞: Ամենևին: Ճիշտ է, այն ալիքը որ նավի վրայով մի ծայրից անցավ մյուսը, ինձ մի վայրկյան շփոթեցրեց, բայց միայն մի վայրկյան: Պարզեցեք առագաստները: Եղբայր Ժան, ի՞նչ եք ձեռքներդ ծալած նստել: Ի՞նչ գինի խմելու ժամանակ է: Է՛յ, նավաստիներ, մի քիչ արագ շարժվեցեք: Այ, այդպես: Հիմա որ գործը լավ է գնում:

— Եթե ես քեզ պես աշխատեի, — ասաց եղբայր Ժանը, — վանքի այգին ամենևին գոյություն չէր ունենա:

— Այս ինչ եմ տեսնում, շարունակում է Պանուրգը, — եղբայր Ժանը բոլորովին անգործ նստած է: Այ, թե ով է դատարկապորտը: Մինչդեռ ես քրտնաթոր ախատում եմ և օգնում այդ հրաշալի նավաստուն: Ասացեք բարեկամ, այս նավի տախտակների հաստությունը որքա՞ն կլինի:

— Տախտակամածի հաստությունը երկու մատ է, — պատասխանեց նավաստին:

— Տեր, ողորմա մեզ, կնշանակի մենք երկու մատ ենք հեռու եղել մահից: Հա՛, հա՛, հա՛, երևի ձեր սիրտը ճաքել է մահից, սիրելիս: Իսկ ես ոչ մի բանից չեմ վախենում: Հենց դրա

համար էլ ինձ Պանուրգ Անվախ եմ անվանում: Արիացեք, պարոններ, արիացեք: Խնդրեմ իջեցրեք սանդուղքը, որ ես ափ դուրս գամ: Էլ, մակույկը մոտ բերեք, դարձյալ իմ օգնության կարիքն ունեք: Ես եզան պես եմ աշխատել, բայց խնդրում եմ, չինայեք ինձ: Մարդս հենց նրա համար է ստեղծված, որ աշխատի: Բոլոր դատարկապորտները սրիկաներ են: Ուշք մի դարձրեք Ժան վարդապետի վրա, նա վախից քիչ է մնում մեռնի:

— Չէ, բարեկամ, — ասաց Ժանը, եթե կա մեկը, որ այսօր վախից քիչ էր մնում մեռնի, հենց դու ես, որ կաս: Բայց պետք է ասեմ, որ բոլորովին գուր է քո վախը: Քեզ վիճակված չի ջրում խեղդվել: Քեզ անշուշտ կկախեն կամ կենդանի կայրեն: Պարոններ, ձեզնից ով ուզում է անձրևի թիկնոց ունենալ, թող Պանուրգի կաշին մաշկի ու նրանով ծածկվի: Երդվում եմ կարգովս, երբեք չեք թրջվի: Բացի այդ, եթե ջուրն էլ ընկնեք, չեք խեղդվի: Պանուրգի կաշին ջրից չի վախենում:

— Լա՛վ, թողնենք այդ, — ասաց Պանուրգը: — Այդպիսի փոթորկի ժամանակ մարդ ակամայից մի քիչ կշփոթվի, դա մեղք չի: Մի ուրիշ բանի մասին եմ ուզում խոսել և ձեզ նախազգուշացնել: Դուք երևի հիշում եք իմ խոստումը, որ եթե փոթորկից ողջ-ամողջ ազատվեմ, մի գանգ նվիրեմ ձեր վանքին: Խնդրում եմ նկատի ունենալ, որ խոսքս ոչ թե մեծ գանգի մասին էր, որ կախում են գանգակատանը, այլ փոքրիկ գանգակի մասին, ավելի ճիշտ բոժոժի մասին՝ վանքի ձիու վզից կախելու համար: Մի սիրուն ու փոքրիկ բոժոժ, որ կախված կլինի ձիու վզից և ման գալիս կգնգնգա: Նախազգուշացնում եմ ձեզ, որ հետո ոչ մի թյուրիմացություն չպատահի:

— Այ դու սրիկա, — ասաց Էպիտեմոնը, — այ դու անամոթ, լկտի սրիկա: Դուք, պարոններ, տեսած կա՞ք մի ուրիշ այդպիսի սրիկայի: Նա խաբել է նույնիսկ աստծուն:

Գլուխ XX

Այն մասին, թե ինչպես են մեռնում հերոսները Մակրեոնների⁶⁰ կղզում

Նավը վերջապես հասավ ափին, և մենք տանջված ու սոված ափ դուրս եկանք: Պանտագրյուելն իր մարդկանց մեկ-մեկ ստուգեց ու հրամայեց տալ նրանց նոր շորեր: Դրանից հետո ափ դուրս բերին ուտեղենի պաշարը և մի շքեղ խնջույք սարքեցին: Փռաավոր կերպով կերան ու խմեցին: Տեղացիները նույնպես բավականաչափ մթերքներ բերեցին նրանց համար: Պանտագրյուելն իր կողմից նրանց հարուստ ընծաներ տվեց:

Ճաշից հետո Պանտագրյուելը կարգադրեց զբաղվել նավերի նորոգումով: Տեղացիները ցանկություն հայտնեցին օգնելու: Նրանց մեջ շատ աստղծագործներ կային, երկաթագործներ, դարբիններ, և նրանք բոլորն էլ շատ լավ վարպետներ էին: Բոլորը գործի անցան: Աշխատանքը եռում էր:

Այն կղզին, որի ափին մենք խարիսխ գցեցինք, կոչվում էր Մակրիոնների կղզի: Դա մի շատ մեծ կղզի էր, բայց բնակիչներն ապրում էին միայն ծովափում, երեք մեծ նավահանգիստներում: Կղզու միջին մասն ամբողջովին ծածկված էր խիտ ու վայրի անտառով:

Մի տարիքավոր Մակրոբ (այդպես էին տեղացիները կոչում իրենց պետին) մեզ ցույց տվեց կղզում եղած բոլոր նշանավոր բաները: Անմարդաբնակ ու ստվերախիտ անտառում մենք տեսանք մի քանի հին ու ավերակ տաճարներ: Մի քանի բուրգեր ու դամբարաններ, որոնց վրա կային հին արձանագրություններ: Այնտեղ կային հիերոգլիֆներով գրված արձանագրություններ, կային և արաբական տառերով ու սլավոնական տառերով արձանագրություններ:

Երբ Էպիտեմոնը արտագրում էր այդ արձանագրությունները որպես հիշատակ պահելու համար, ծերունի Մակրոբը հարցուփորձ էր անում Պանտագրյուելին, թե ինչպես է կարողացել նա այդպիսի փոթորկին իր նավերը բերել հասցնել նավահանգիստ:

— Ինքը բախտը մեզ օգնեց, — ասաց Պանտագրյուելը: — Մենք վաճառականներ չենք, որոնք շրջագայում են ծովերում փող վաստակելու համար: Գո՛ւցե հենց դրա համար բախտը մեզ խնայեց: Գուցե դուք ասեք մեզ, շարունակեց Պանտագրյուելը, — այդ ի՞նչ էր պատահել ծովին, որտեղի՞ց են գալիս այդ փոթորիկները, հաճա՞խ են պատահում արդյոք այդպիսի փոթորիկներ այս կողմերում:

— Սիրելի բարեկամներ, — պատասխանեց Մակրոբը, — դուք գտնվում եք այժմ այն կղզիներից մեկում, որոնք հին ժամանակներում հայտնի էին իրենց հարստությամբ և հզորությամբ, իսկ այժմ, ինչպես տեսնում եք, աղքատացել են և անկման աստիճանի հասել: Այդ մուրճ ու լայնատարած անտառում, որ դուք այստեղից տեսնում եք, ապրում են հին իմաստուններ և հերոսներ, որոնք այժմ կատարյալ զառամության են հասել: Երբ նրանց մոտ ամեն ինչ կարգին է, ծովն էլ հանդարտ է լինում և ամենուրեք հրաշալի եղանակ է անում: Բայց երբ նրանցից մեկը վախճանվում է, այն ժամանակ լսում ենք անտառից հուսակտուր աղաղակներ, լինում են երկրաշարժեր, հրդեհներ, հիվանդություններ, իսկ ծովում սկսվում է զարհուրելի փոթորիկ, որ դուք ձեր աչքով տեսաք:

— Ամեն մի այդպիսի իմաստունի կարելի է համեմատել ջահի հետ, — ասաց Պանտագրյուելը: — Քանի ջահը վառվում է, նա լույս է տալիս անխտիր բոլորին, և մարդիկ գոհ են ու շնորհակալ: Բայց հենց որ ջահը հանգչում է, չորս կողմը այնպիսի սարսափելի ծխահոտ է տարածվում, որ մարդիկ չեն իմանում, ինչպես ազատվեն նրանից:

— Դա ինձ համար անհասկանալի է, — ասաց Ժանը, — մի՞թե մեծ մարդիկ մեռնում են: Ինձ այնպես է թվում, որ նրանք անմահ են: Իսկ եթե նրանք մահանում էլ են, դա լինում է միայն խոր ծերության ժամանակ: Ծերությունից մեռնում են նույնիսկ աստվածները: Չուր չեն դրա մասին գրում հին գրքերում:

— Ես էլ եմ կարդացել դրա մասին մի առասպել, — ասաց Պանտագրյուելը: — Մի անգամ զանազան ապրանքներով բեռնավորված առևտրական մի նավ Հունաստանից ուղևորվում է Իտալիա: Երբ նավն անցնելիս է լինում Թունիսի մոտով, հողմը դադարում է, և ճանապարհորդներին ծովային հոսանքը տանում է դեպի Պակսոս կղզին: Արդեն երեկո է լինում: Ճանապարհորդներից մի քանիսը ընթրելիս են լինում, մյուսները պառկում են քնելու: Հանկարծ մի կղզուց լսվում է մի բարձր ձայն՝ «Ֆամո՛ւս»: Ճանապարհորդները ասի ու սարսափի մեջ են ընկնում: Ֆամուսը նավի դեկապետն է լինում և ծագումով եգիպտացի: «Ֆամո՛ւս», — կանչում է ձայնը երկրորդ անգամ: Ոչ ոք պատասխան չի տալիս: Բոլորը լուռ են մնում և երկյուղից դողում են: Այն ժամանակ ձայնը լսվում է երրորդ անգամ, և այնպես ուժեղ, որ նման է լինում որոտի դղրդունի: Այդ ժամանակ Ֆամուսն

առաջ է անցնում և ասում՝ «Ես այստեղ եմ, ի՞նչ եք ցանկանում, ո՞վ եք դուք»: Չայնը հրամայում է Ֆամուսին հայտարարել բոլոր ազգերին, որ մեծ աստված Պանը⁶¹ մեռել է: Այդ խոսքերը լսելուց հետո բոլոր նավաստիները սաստիկ վախեցած, խորհրդակցում էին իրար հետ, թե ինչպես վարվեն, լռեն, թե հայտնեն ինչպես հրամայված է: Սակայն Ֆամուսը վճռել էր, եթե ինքը ողջ և առողջ նավահանգիստ հասնի, անպատճառ կկատարի հրամանը: Առանց փորձանքի գալիս են նավահանգիստ: Այդտեղ Ֆամուսը նավի աջ կողմում կանգնած և երեսը դեպի ավիը դարձրած հայտարարում է, որ մեծ աստված Պանը մեռել է: Նա իր խոսքը վերջացրած չի լինում, երբ ավից լսվում է լացի ու ողբի ձայն, ախու՜վախ և բարձրաձայն հեկեկանք: Այդ լուրը շուտով հասնում է Հռոմ: Հռոմեացոց կայսր Տիրերիոսը կանչում է իր մոտ Ֆամուսին, լսում նրա պատմությունը և հավատում նրա ասածներին:

Պանտագրյուելին առասպելը պատմելուց հետո լռեց, խոր մտածմունքի մեջ ընկավ և գլուխը կախեց: Շուտով նկատեցինք, որ արցունքի կաթիլները ջայլամի ձվի մեծությամբ թափվում էին նրա աչքերից: Թող աստված ինձ սպանի, եթե ասածներիս մեջ մի սուտ խոսք կա:

Գլուխ XXI

Այն մասին, թե ինչպես է Պանտագրյուելին անցնում Գաղտնաձածուկ կղզու մոտով, որտեղ թագավորում էր մեծ Պասը

Երբ նավերը վերանորոգեցին և պարենի նոր պաշար վերցրին, մենք հրաժեշտ տվինք մակրեոններին և շարունակեցինք մեր ճանապարհը: Երկինքը ջինջ էր և եղանակը հրաշալի: Կեսօրին մոտ Քսենոմանը հորիզոնում մի մեծ կղզի նկատեց:

— Դա գաղտնաձածուկ կղզին է, որտեղ թագավորում է Մեծ Պասը, — ասաց Քսենոմանը:

— Ես կուզեի տեսնել այդ կղզին, — ասաց Պանտագրյուելը, — կարելի՞ է արդյոք այդ կողմում կանգ առնել:

— Տեր իմ, — ասաց Քսենոմանը, — խորհուրդ չեմ տա այդ կղզում կանգ առնել: Նախ դրա համար մենք պետք է մեծ շրջան կատարենք, երկրորդը՝ այնտեղ ոչ մի հետաքրքիր բան չկա տեսնելու, իսկ Մեծ Պասը տաղտկալի ու տհաճ թագավոր է:

— Որ այդպես է, — ասաց Պանտագրյուելը, — պատմեցեք մեզ ձեր իմացածը նրա մասին:

— Ուրախությամբ, — ասաց Քսենոմանը: — Պետք է ասեմ, որ այդ թագավորը չափազանց շատ է ուտում սիսեռ, տառեխ և մանանեխ: Անխնա ծեծում է փոքր երեխաներին: Մշտապես հետը ման է ածում մի ամբողջ բեռ ինդուլգենցիա: Առավոտից մինչև երեկո երեխայի պես թնգթնգում է: Երբեք չի գնում հարսանիք: Ճաշին ուտում է միայն բակլա, խխունջ և կանաչ սալաթ: Այդ է պատճառը, որ նա կմախքից էլ վատթար տեսք ունի: Մենք նրա մասին դեռ ուրիշ բաներ էլ կիմանանք, երբ կանցնենք Մոսայ կղզու մոտով, որտեղ ապրում են Մսե Երշիկները: Պետք է իմանաք, որ Մսե Երշիկները Մեծ

Պասի ռիսերին թշնամիներն են: Նրանք մշտապես պատերազմում են Մեծ Պասի հետ: Եվ եթե նրանց օգնելիս չլիներ Ուրախ Բարիկենդանը, որ նրանց հովանավորողն է ու հարևանը, այն ժամաակ այդ սրիկա Պասը բոլոր երշիկներին կկոտորեր և ոչ մեկին կենդանի չէր թողնի:

— Տես թե ինչ անզգամ է եղել այդ Մեծ Պասը, — բացականչեց ժամ վարդապետը: — Այն էլ ո՛ւմ դեմ պատերազմել, հրաշալի Մսե Երշիկների դեմ: Վերադառնանք, բարեկամներ, և այդ զգվելի արարածի բուրդը զգենք:

— Պատերազմ մղել Պասի դեմ, — բացականչեց Պանուրզը, — ոչ, բարեկամներ, ես այդքան էլ հիմար չեմ: Եթե այդպիսի բան անենք, մենք կընկնենք Պասի ու Երշիկների արանքը ճիշտ այնպես, ինչպես մուրճի ու զնդանի արանքը: Պետք չէ: Գնանք մեր ճանապարհով: Ընդունեցեք մեր հարգանքը, պարոն Մեծ Պաս: Հեռանանք, հեռանանք այստեղից:

— Դուք շատ լավ նկարագրեցիք, թե ինչպես է Մեծ Պասն անցկացնում իր ժամանակը, — ասաց Պանտագրյուելը Քսենոմանին, — այժմ պատմեցեք, թե ինչպիսին է նրա արտաքին տեսքը:

— Դա դժվար գործ չէ, — պատասխանեց Քսենոմանը: — Լսեցեք:

Ծոծրակը		ասես		մի		լապտեր,
Եղունգները՝			որպես			խցանահան,
Ոտքերը՝			կիթառի			նման,
Գարշապարները՝			ժայռի			կտորներ,
Ծնկները՝			որպես			նստարաններ:
Երբ թքում է՝	լիքը	կողովներ	են	դուրս	զալիս,	
Երբ խնչում է՝	աղի	օձաձկներ	են	դուրս	զալիս,	
Երբ լալիս է,	ձեթով	բրաձկներ	են	դուրս	զալիս,	
Երբ փռշտում է՝		մանանեխով		լիքը	բանկաներ,	
Երբ հորանջում է՝		սիսեռապուրով		լիքը	կճուճներ,	
Երբ խռոցնում է՝		չոր	բակլայով		արկղեր,	
Երբ հառաչում է՝		ինդուլգենցիայի			փաթեթներ,	

Երբ հայիոյում է՝ մարտ ամսվա կատուներ:

— Եվ ամենագարմանալին այն է, — շարունակեց Քսենոմանը, — որ այդ սրիկան իր կողմն է գրավել բոլոր հիմարներին, անխելքներին և բանականությունից զուրկ մարդկանց: Բացի այդ, նրանց շնորհիվ, լույս աշխարհ են եկել անհամար տխմարներ, կեղծապաշտներ, սուտ ճգնավորներ, կեղծաբարոներ, երեսպաշտներ և ամեն տեսակի հրեշավոր և այլանդակ արարածներ: Ո՛չ, մենք շատ լավ արինք, — վերջացրեց իր խոսքը Քսենոմոնը, — որ չգնացինք այդ կեղծ սրբի մոտ: Չգուշացեք Մեծ Պասից, խեղճ մարդիկ: Չգուշացեք, որ նրա ճանկը չընկնեք:

Գլուխ XXII

Այն մասին, թե ինչպես է Պանտագրյուելը սպանում ծովային Վիշապ Օձին

Ուղիղ կեսօրին հորիզոնում երևաց Մռայլ կղզին: Կղզուց ոչ հեռու Պանտագրյուելը նկատեց մի վիթխարի ծովային Օձ, որ փնջացնելով լողում էր դեպի ճանապարհորդները: Նրա երախից բարձրանում էր ջրի բարձր սյուն: Կարծես դա մի ահագին ջրվեժ լիներ, որ թափվում էր ժայռի գագաթից և կարող էր տակովն անել նավերը, ինչպես ընկույզի կնեպներ:

«Տալամեգում» հենց այդ ժամանակ հնչեցին ազդարարող փողերը: Ազդանշանը տալուն պես նավերը տաք երկրներ թռչող կռունկների պես եռանկյունի կազմեցին: Եռանկյունու գագաթին կանգնեց «Տալամեգը»: Նավակազմը պատրաստվում էր կռվի:

Ժան վարդապետը ռմբաձիգների հետ միասին նոր էր դիրք բռնել նավի աջ կողմում, երբ Պանուրգը առաջվանից ավելի բարձր սկսեց աղաղակել.

— Վա՛յ, այս ինչ նոր փորձանք եկավ մեր գլխին: Այդ հրեշը մեր նավերը դեղահաբի պես կուլ կտա: Տեսե՛ք, թե ինչ զարհուրելի բան է, վա՛յ մեզ, կորած ենք:

— Մի վախենա, — ասաց Պանտագրյուելը, — ես նրան հավի ճտի պես կսպանեմ:

— Տեր, դու փրկիր մեզ, — ասաց Պանուրգը, — ինչպես չվախենամ, երբ այդ հրեշը մեզ այսքան մոտ է:

— Ի՞նչ անենք որ մոտ է, — ասաց Պանտագրյուելը. — Ժան վարդապետը երեկ գուշակել է ձեր ապագա բախտը: Ջուրը ձեզ չի կործանի, ընդհակառակը, նա ձեզ ամեն փորձանքից կփրկի:

— Էհ, ինչ եք ասում, — պատասխանում է Պանուրգը, — իսկ եթե Ժան վարդապետը հանկարծ սխալված լինի: Վայ ինձ, Օձը բոլորովին մոտեցել է: Տեսե՛ք, տեսե՛ք, Օձը: Օ՛հ, ինչ սարսափելի, ինչ զզվելի է: Ինչքա՛ն մարդ խեղդած կլինես, զզվելի հրեշ: Տեսնել չեմ ուզում քեզ, զզվելի արարած: Գրողի ծոցը գնա, չքվիր:

Երբ օձը լողալով մոտեցավ նավերին, սկսեց տակառներով ջուր թափել նրանց վրա: Նետեր, նիզակներ, սրեր, բրեր ամեն կողմից հարվածում էին Օձին: Ժան վարդապետը ջանք չէր խնայում նրան հարվածելու: Հրետանին անընդհատ դղրդալով կրակում էր Օձի վրա: Բայց այդ բոլորը զուր էր անցնում: Թնդանոթի ռումբերն անհետանում էին նրա կաշվի մեջ, առանց հրեշին որևէ վնաս հասցնելու:

Այն ժամանակ Պանտագրյուելը վճռեց, որ հասել է ժամը, երբ ինքը պետք է ասպարեզ դուրս գա: Նա իր հասակով մեկ ուղղվեց, կանգնեց և ցույց տվեց իր շնորհքը:

Ասում են, որ շրջմուխ Կոմոդը, հռոմեացոց կայսրը, այնպես լավ նետ էր արձակում, որ նրա արձակած նետերը անցնում էին երեխաների մատների արանքով առանց նրանց վնասելու: Պատմում են, նույնպես, որ հնում ֆրանսիացիք շատ լավ նետաձիգներ են եղել: Որսի գնալուց առաջ նրանք նետերի ծայրին քում էին մի տեսակ անուշահոտ նյութ, որից սպանված անասունի միսը ավելի համեղ էր դառնում: Լավ նետաձիգների մեծ համբավ են ունեցել նաև հին սկյութացիներ: Մի անգամ դեսպան են ուղարկում նրանք պարսից Դարեհ թագավորի մոտ: Դեսպանը առանց մի խոսք ասելու դնում է թագավորի առաջ մի թռչուն, մի գորտ, մի մուկ և հինգ նետ: «Ի՞նչ է նշանակում այդ», հարցնում է Դարեհը: Դեսպանը պատասխանում է, թե իրեն արգելված է խոսել: Դարեղը զարմանքից շվարել է, չի իմացել ինչ ասի: Այն ժամանակ նրա զորավարներից մեկը գտնում է այդ հանելուկի միտքը:

«Սկյութացիք, — ասում է նա, — իրենց բերած նվերով ուզում են ասել մեզ՝ «Եթե պարսիկները թռչունների պես օդում չեն թռչում, եթե մկների պես գետնի տակ չեն թաքնվում և գորտերի պես ջրի տակ չեն սուզվում, այն ժամանակ նրանք բոլոր կկոտորվեն սկյութացիների նետերից»:

Ոչ ոք չէր կարող հավասարվել Պանտագրյուելին նետ արձակելու և տեղ նետելու արվեստի մեջ: Իր ահագին տեղերով հազար քայլ հեռավորությունից նա բաց էր անում ոստրեի խեցին: Հեռվից արձակած նետով առանց ճրագը հանգցնելու կտրում էր պատրույզի այրուքը: Հեռվից մեկը մյուսի ետևից արձակած նետերով շրջում էր Ժան վարդապետի աղոթագրքի էջերը, և այդ անում էր այնպիսի ճարակությամբ, որ մի մազաչափ անգամ չէր փչացնում թուղթը:

Այժմ էլ Պանտագրյուելի շեշտակի նետած տեղը ծակեց Օձի երկու ծնոտն ու լեզուն: Տեղը խրված մնաց ծնոտների մեջ, և Օձն այլևս անկարող եղավ բերանը բանալ, որպեսզի ջուր ցայտի:

Այնուհետև Պանտագրյուելը երկու տեղերի դիպուկ հարվածով հանեց հրեշի աչքերը: Եվ բոլորը տեսան, թե ինչպես այդ երեք եղջյուրանի Օձը, կուրացած ու կիսակենդան, գալարվում էր ծովի մեջ: Հրեշին վերջնականապես սպանելու համար Պանտագրյուելը դարձնալ հիսուն նետ արձակեց Օձի վրա, և բոլոր նետերը խրվեցին նրա մեջ: Սատկող Օձը շուռ եկավ մեջքի վրա և, ինչպես մի հսկայական օձասար, լողաց հոսանքի ուղղությամբ:

Գլուխ XXIII

Այն մասին, թե ինչպես է Պանտագրյուելը իջնում Մռայլ կղզին՝ Մսե Երշիկների նախկին բնակատեղին

«Տալամեգի» թիավարները սպանված օձին ափ դուրս բերին: Նրանք որոշել էին սպանված հրեշին մաս-մաս կտրատել՝ երկկամուռի յուղը հանելու համար: Ափ իջավ նաև Պանտագրյուելը: Այստեղ մի մեծ ու գեղեցիկ անտառի եզրին, որտեղ հոսում էր մի վճիտ գետակ, մենք օջախներ վառեցինք, ճաշ պատրաստելու համար: Երբ կերակուրը պատրաստ էր, Ժան վարդապետը զանգը խփեց: Նավաստիներն իսկույն սեղանները շարեցին և ճաշասարքը շարեցին սեղանների վրա: Ճաշին Պանտագրյուելը նկատեց, թե ինչպես մի քանի փոքրիկ կենդանիներ առանց ձայն հանելու վազեցին անտառի եզրով և բարձրացան ամենաբարձր ծառերը:

— Այդ ի՞նչ կենդանիներ են, — հարցրեց նա Քսենոմանին: — Հեռվից նրանք կարծես կնգուղ կամ կղաքիս լինեն:

— Դրանք Մսե Երշիկներ են, — պատասխանեց Քսենոմոնը: — Մենք Մռայլ կղզում ենք, որի մասին ես ձեզ ասել եմ: Այստեղ են բնակվում Մսե Երշիկները, որոնք մահացու պատերազմ են մղում Մեծ Պասի դեմ: Այժմ, հավանորեն, նրանք վախեցել են մեր թնդանոթաձգությունից և ծովափ են ուղարկել իրենց հետախույզներին:

— Բայց չի՞ կարելի արդյոք, նրանց հաշտեցնել, — հարցրեց Պանտագրյուելը: — Ես ուրախությամբ կգբաղվեի այդ հարցով, որպեսզի վերջ տամ արյունահեղությանը:

— Այդ անկարելի բան է: Չորս տարի սրանից առաջ ես այս կողմերում էի և փորձեցի նրանց հաշտեցնել: Գործն սկզբում հաջող գնաց: Կազմեցին խաղաղության դաշնագիրը: Մնում էր միայն ստորագրել դաշնագիրը: Բայց հենց այդ ժամանակ Մեծ Պասը համառեց: Նա համաձայն էր հաշտվելու Մսե երշիկների հետ, բայց չէր ուզում ճանաչել Վայրի Երշիկներին և Լեռնային Նրբերշիկներին: Իսկ պետք է ասել, որ Վայրի Երշիկները և Լեռնային Նրբերշիկները Մսե Երշիկների լավագույն դաշնակիցներն են: Եվ այդպիսով ոչինչ դուրս չեկավ: Ճիշտ է, թշնամիները կարծես մի քիչ մեղմացան, բայց երբ Երշիկներն իրենց ժողովում Պասը պիղծ հայտարարեցին և Պասի բոլոր դաշնակիցներին վճռեցին իրենց երկրից դուրս վռնդել, այն ժամանակ Մեծ Պասը սաստիկ կատաղեց, և թշնամությունը նրանց միջև ավելի բորբոքվեց: Ոչ, այժմ ոչինչ չի կարելի անել: Ավելի հեշտ է կատվին մկների հետ հաշտեցնել, քան Պասը Մսի երշիկների հետ:

Այդ ժամանակ Ժան վարդապետը նկատեց, որ քսանհինգ կամ երեսուն երիտասարդ ու բարեկազմ Երշիկներ նավահանգստի կողմից գնում են դեպի քաղաք:

— Հանկարծ որևէ թյուրիմացություն չծագի, — ասաց Ժան վարդապետը Պանտագրյուելին: — Այդ պատվարժան Երշիկները, ով գիտի, կարող են ձեզ դնել Պասի տեղ, թեև դուք մի մազաչափ անգամ նման չեք նրան: Բավական է, որքան քեֆ արինք, պատրաստվենք պաշտպանվելու:

— Այո, լավ կլինի պատրաստվենք, — ասաց Քսենոմոնը: — Երշիկները շատ նենգամիտ մարդիկ են, և երբեք չի կարելի իմանալ, թե մտքներում ինչ կա:

Պանտագրյուելը վեր կացավ տեղից և գնաց տեսնելու, ինչ է կատարվում անտառում: Շուտով նա վերադարձավ և մեզ ասաց, որ դարանի է հանդիպել: Դարանակալները նստած էին եղել անտառում, մեր ճամբարից դեպի ձախ, և բոլորն էլ մեծ-մեծ և յուղալի Երշիկներ են եղել: Աջ կողմից, կես վերստ հեռու մեր ճամբարից, փողերի, պարկապզուկների ու թմբուկների նվագակցությամբ դեպի մեզ էր գալիս Երշիկների մի ամբողջ գումարտակ: Պանտագրյուելը հաշվեց տեսավ, որ գումարտակում յոթանասունութ զորոշակ կար, և դրանից եզրակացրեց, որ քառասուն հազարից ոչ պակաս մարդիկ կան: Նրանց հպարտ քայլվածքից ու առնական կերպարանքից երևում էր, որ եկողները փորձված ու կոփված ռազմիկներ են: Առաջին շարքերը ոտքից մինչև գլուխ զինված էին և ձեռքներում բռնել էին երկար ու սրածայր տեգեր: Չորրի երկու կողմից գնում էին Վայրի Երշիկների, հաստիկ Պաշտետների և Լեռնային Նրբերշիկների ամբոխներ: Դրանք բոլորը բարձրահասակ, ռազմասեր ու վայրագ կղզիաբնակներ էին:

Պանտագրյուելը սաստիկ անհանգստացավ և զինվորական խորհուրդ հրավիրեց: Խորհուրդը որոշեց մարտի պատրաստ լինել:

Պանտագրյուելը հրամայեց «Գինու Թաս» և «Խաղողի Չամբյուղ» նավերից զորք դուրս բերել կղզի: «Գինու թասի հրամանատարն էր այդ ժամանակ կապիտան Փոր Թափողը, իսկ «Խաղողի Չամբյուղի» հրամանատարն էր կապիտան Երշիկագործ կրտսերը:

— Թողեք ես գնամ զինվորներին կանչեմ, — առաջարկեց Պանուրգը, — Գիմնաստը ամեն րոպե կարող է ձեզ պետք գալ:

— Երդվում եմ իմ մահակով, — ասաց Ժան վարդապետը, — դու ուզում ես կովից գլուխդ ազատել, խաբեբա: Ասենք, շատ էլ մեծ բան չէինք կորցնի, պետք է միայն լաց լինես ու գլխիդ վայ տաս, մեր գահլեն տանես:

— Ոչ, ոչ, անպատճառ կվերադառնամ, — պատասխանեց Պանուրգը, — միայն հրամայեցեք, որ այդ զգվելի Երշիկները չմտնեն մեր նավերը: Այն ժամանակ, երբ դուք պատերազմելիս լինեք, ես կաղաչեմ աստծուն, որ նա ձեզ հաղթություն տա:

— Գրողի ծոցը, կորիք, վախկոտ, — ասաց Էպիտեմոնը: — Մենք, իհարկե, մեզ կպաշտպանենք, եթե Երշիկները հարձակվեն մեզ վրա: Չուր չի, որ մեր քաջարի կապիտաններին կոչում են Փոր Թափող և Երշիկագործ: Նրանք Երշիկների հախից կգան:

Շուտով եկան կապիտաններն իրենց ջոկատներով: Պանտագրյուելը մի կարճ ճառ ասաց գորբին: Նա կապիտաններին ասաց, որ իրենք առաջինը չհարձակվեն: Չինվորները նույնպես այն ժամանակ պիտի կովեն, եթե Երշիկները առաջինը հարձակվեն նրանց վրա: Նշանաբանը պիտի լինի «Բարիկենդան»:

Գլուխ XXIV

Այն մասին, թե ինչպես էին Պանտագրյուելի խոհարարները կովում Մսե Երշիկների հետ

Ինչո՞ւ եք ասում կոճտացնում, դատարկապորտներ, երբ կարդում եք իմ այս ճշգրիտ պատմությունը: Գուցե չե՞ք հավատում, որ ամեն ինչ պատահել է հենց այնպես, ինչպես ես պատմում եմ: Այդ, իհարկե, ձեր գործն է: Ուզում եք հավատացեք, չեք ուզում, զնացեք ինքներդ նայեցեք: Այդ բոլորը կատարվել է Մռայլ կղզում: Տեսնում եք, ես չեմ թաքցնում, թե որտեղ է կատարվել այդ բոլորը: Իսկ որ Երշիկներն ապրում են այնտեղ, դրա մասին ոչ մի կասկած լինել չի կարող:

Լավ հիշեցեք, թե ինչ է ասված սուրբ գրքում: Հիշո՞ւմ եք արդյոք, թե ինչպես է օձը գայթակղել Եվային, որ ուտի արգելված խնձորը: Իսկ գիտե՞ք արդյոք, որ այդ օձը նման է եղել Երշիկի: Դեռ դա բավական չի, մի քանի հոգևոր ճեմարաններում մինչև օրս էլ սովորեցնում են, որ այդ օձը իսկական երշիկ է եղել և նրան անվանել են Շտիֆալ:

Կամ օրինակի համար ասենք, զվիցերացիք: Նրանք այժմ կովող ու համարձակ ժողովուրդ են:¹⁶² Բայց ո՞վ գիտի, գուցե նրանք էլ են մի ժամանակ Երշիկներ եղել: Երաշխավորել չեմ կարող:

Եթե, հարգելի պարոններ, այս բոլոր ասածներս ձեզ չեն համոզում, չե՞իք բարեհաճի արդյոք գնալ որևէ ծովափնյա գյուղ և տեղեկանալ այնտեղ, ինչպիսին են լինում հուշկապարիկները: Ասում են, որ հին ժամանակներում, ձկնորսները հաճախ էին նրանց բռնում ուռկանով: Եվ այդ հուշկապարիկները կիսով չափ կանայք էին, կիսով չափ՝ Երշիկ: Այդ բոլորին հայտնի է: Չուր տեղը ասում մի կրճտացրեք և հավատացեք, որ այս գրքում հնարովի ոչ մի խոսք չկա:

Բայց շարունակենք մեր պատմությունը:

Երբ Ժան վարդապետը տեսավ Երշիկների հարձակումը, ասաց՝

— Օհո՛, տեսնում եմ, որ թունդ կռիվ է լինելու: Ավելի լավ կլինի, բարեկամներ, որ դուք վերադառնաք նավերը: Ես իմ մարդկանցով այդ գործի հախիցը կգամ:

— Բայց դուք ի՞նչ մարդիկ ունեք, — հարցրեց Պանտագրյուելը:

— Լավ հիշեցեք, — ասաց Ժան վարդապետը: — Հիշո՞ւմ եք, երբ Նաբուգոդոնոսոր թագավորը պաշարել էր Երուսաղեմը, նա գործին հրամանատար էր կարգել իր խոհարար Նաբուգարդանին:

— Լավ, հետո ի՞նչ, — հարցրեց Պանտագրյուելը:

— Այն, որ ինձ էլ այնպես է թվում, — ասաց Ժան վարդապետը, որ մեր խոհարարները մեզանից ավելի լավ կանեն այդ Երշիկների դատաստանը: Չէ՛ որ նրանք առաջ էլ զբաղվելիս են եղել այդպիսի գործով: Աստված վկա, ես իմ հրամանատարության տակ եմ առնում մեր բոլոր խոհարարներին:

Վարվեցեք, ինչպես գիտեք, — ասաց Պանտագրյուելը, — ինձ դուր է գալիս ձեր միտքը: Ես կմնամ այստեղ և կդիտեմ, թե ինչով կվերջանա ձեր խոհարարային ճակատամարտը:

Ժան վարդապետն անմիջապես գնաց դեպի շարժական խոհանոցները:

— Տղերք, — ասաց նա խոհարարներին, — ես ուզում եմ անջնջելի փառքով պսակել ձեր ճակատը: Այսօր դուք չտեսնված սխրագործություններ պիտի կատարեք: Կեցցեն խոհանոցային հերոսները: Գնանք պատերազմելու: Գնանք պատերազմելու այդ անիծված Երշիկների դեմ: Ես կլինեմ ձեր կապիտանը: Իսմենք, բարեկամներ, աստված միշտ համարձակների հետ է լինում:

— Կապիտան, — պատասխանեցին խոհարարները, — մեզ հաճելի է լսել ձեր խոսքերը: Պատրաստ ենք ծառայելու ձեզ: Ձեր հրամանատարությամբ մեռնելն էլ սարսափելի չէ:

— Ինչո՞ւ մեռնել, — ասաց Ժան վարդապետը, — թող մեռնեն Երշիկները, և ոչ մենք: Ուրեմն, ռազմաշարքեր կազմեցեք: Մեր նշանաբանը կլինի՝ «Նաբուգարդան»:

Ժան վարդապետի կարգադրությամբ ինժեներները գերաններից մի ահագին խոզ շինեցին: Դա մի զարմանալի ռազմական մեքենա էր, որը կարողանում էր ահագին քարեր և մեծ պողպատե նետեր արձակել թշնամիների վրա: Խոզի ներսում հեշտությամբ տեղավորվում էին երկու հարյուր զինվոր:

Երբ խոզը պատրաստ էր, նրան դուրս բերեցին արձակ դաշտ: Այնուհետև խոզի մեջ մտան բոլոր խոհարարները: Ամենավերջինը մտավ ինքը Ժան վարդապետը և դուռը ներսից երկաթե փականով պինդ փակեց:

Իսկ Երշիկները հա մոտենում ու մոտենում էին: Վերջապես նրանք այնքան մոտեցան, որ պարզ երևում էր, թե ինչպես են ճոճում իրենց նիզակները:

Նրանց դեմ գնաց Գիմնաստը: Նա հեռվից գլուխ տվեց Երշիկներին և որքան ուժ ուներ գոռաց.

— Կանգնեցե՛ք: Մենք բոլորս էլ ձեր լավ բարեկամներն ենք: Մենք ձեր դաշնակից Բարիկենդանի հետ խոսքներս մեկ ենք արել:

Այդ խոսքերը լսելուն պես Գիմնաստի վրա հարձակվեց մի հաստ Լյարդերշիկ և կամեցավ բռնել նրա կոկորդից:

— Ախ, այդպես հա՛, — ասաց Գիմնաստը, մերկացրեց իր սուրը և Երշիկին երկու կտոր արեց: Պետք էր տեսնել, թե նա որքան էր յուղալի: Կհավատաք եթե ասեմ, որ նրա փորի վրա չորս մատ հաստությամբ ճարպ կար:

Սսե Երշիկները հարձակվեցին Գիմնաստի վրա և գետին գլորեցին նրան: Նրան օգնության հասավ Պանտագրյուելն իր իր զինվորներով: Բոլորն իրար խառնվեցին: Փոր Թափողը կտտորում էր Երշիկներին: Կրտսեր Երշիկագործը կտտորում էր Նրբերշիկներին: Պանտագրյուելը ներքևից կտրում էր նրանց ծնկները: Իսկ Ժան վարդապետը խոզի ներսում թաքնված հանգիստ դիտում էր արյունահեղ կտտորածը:

Հանկարծ մի սարսափելի աղմուկ լսվեց: Այդ դարան մտած Նրբերշիկների ջոկատն էր, որ անակնակալ հարձակում գործեց Պանտագրյուելի վրա: Այդ ժամանակ Ժան վարդապետն էլ դուռը բաց արեց և խոզի մեջից դուրս եկավ իր խմբով: Օդի մեջ երևացին տապակներ, թավաներ, շերեփներ, ունելիներ, կնուններ, հավանգներ, կրակքաշներ ու կրակխառնիչներ: Խոհարարները շարքեր կազմեցին և գրոհեցին Նրբերշիկների վրա, կոկորդներում որքան ուժ կար աղաղակելով.

— Նաբուզարդա՛ն, Նաբուզարդա՛ն:

Նրբերշիկների ջոկատում խուճապ առաջացավ: Երբ Երշիկները նկատեցին, որ թշնամիներն օգնական ուժեր ստացան, այնպես փախուստի դիմեցին, կարծես նրանց ետևից սատանաներ էին վազում: Ժան վարդապետը նրանց այնպես էր մորթոտում, ինչպես հավի ճուտերի: Խոհարարները նույնպես նրանից ետ չէին մնում: Մարդու մեղք էր գալիս, երբ տեսնում էր, որ ամբողջ դաշտը ծածկված է մեռած Երշիկներով: Այդ օրն անշուշտ Երշիկների ամբողջ ցեղը կոչնչանար, եթե ինքը ճակատագիրը օգնության չհասներ ու չխնայեր նրանց: Ուզում եք հավատացեք, չեք ուզում միք հավատա, բայց հենց այդ ժամանակ հյուսիսից թռավ եկավ մի ահագին թևավոր վարագ: Նրա թևերը նման էին հողմադացի թևերի, բուրդը վառ կարմիր էր, ինչպես կարմրաթևիկ թռչունի գույնը, ականջները՝ կանաչ, ինչպես գմբուխտ, ատամները դեղին, ինչպես տպագիռն, ոտքերը՝ թափանցիկ, ինչպես ադամանդ, և այնպես գեղեցիկ, ինչպես սագի թաթերը:

Եվ թեպետ բոլորովին պարզ եղանակ էր, բայց այդ ժամանակ այնպիսի մի որոտ սկսվեց, որ բոլոր զինվորները ահուդողի մեջ ընկան: Ինչ վերաբերում է Երշիկներին, նրանք բոլորը գենքերը վայր դրին և հրեշի առաջ ծունկ չորեցին: Նրանք ոչ մի խոսք չէին արտասանում, այլ միայն ձեռքները մեկնում էին դեպի հրեշը, ինչպես անում են աղոթելիս:

Ժան վարժապետը շարունակում էր կտտորել Երշիկներին և շամփուրի վրա քաշել: Այդ ժամանակ Պանտագրյուելը հրամայեց փողեր հնչեցնել և ավարտի նշան տալ: Երբ փողերը հնչեցին, կռիվը վերջացավ:

Իսկ հրեշը մի քանի անգամ թռավ ռազմադաշտի վրայով և ցած նետեց քսանյոթ տակառ մանանեխ: Դրանից հետո նա վեր բարձրացավ և անտեսանելի դարձավ անընդհատ գոչելով՝

— Բարիկենդա՛ն, բարիկենդա՛ն, բարիկենդա՛ն:

Գլուխ XXV

Այն մասին, թե ինչպես է Պանտագրյուելը բանակցություններ վարում Երշիկների թագուհու հետ

Հրեշը թռավ գնաց և այլևս չերևաց: Երկու բանակները լուռ կանգնած էին դեմ առ դեմ և չգիտեին ինչ անեն: Այն ժամանակ Պանտագրյուելը ցանկացավ բանակցություններ սկսել Երշիկների թագուհու հետ, որ դրոշակների մոտ նստած էր իր կառքում:

Թագուհին դուրս եկավ կառքից, սիրալիք բարևեց Պանտագրյուելին, ներողություն խնդրեց նրանից: Պարզվում էր, որ հետախույզները նրան ասել էին, որպես թե Մսե Երշիկների դարավոր թշնամի Մեծ Պասը մտել է կղզին, և դա է եղել պատճառը, որ Երշիկները հարձակվել են Պանտագրյուելի վրա: Թագուհին վերջացրեց իր խոսքը խնդրելով, որ Պանտագրյուելն իրենց ընդունի որպես հպատակ: Ի նշան իր բարեկամության նա խոստացավ յուրաքանչյուր տարի Պանտագրյուելին ուղարկել յոթանասուն հազար արքայական Մեծ Երշիկ՝ ճաշից առաջ ուտելու համար:

Թագուհին կատարեց իր խոստումը և հենց հետևյալ օրը Գարգանտյուային վեց նավ արքայական Մսե Երշիկներ ուղարկեց: Գարգանտյուան իր կողմից այդ նավերն ուղարկեց Փարիզի թագավորին: Բայց հայտնի չէ, թե ինչու (գուցե կլիմայի փոփոխության, կամ մանանեխի պակասության պատճառով) համարյա բոլոր Երշիկները մեռան նախքան կարժանանային մատուցված լինելու թագավորական սեղանին: Թագավորի հրամանի համաձայն նրանց բոլորին թաղեցին Փարիզի այն մասում, որ մինչև օրս էլ կոչվում է «Երշիկների պողոտա»:^[63]

Պանտագրյուելը քաղաքավարությամբ շնորհակալություն հայտնեց թագուհուն, ներեց իրեն հասցրած բոլոր վիրավորանքները և նրան մի փոքրիկ սադափե դանակ նվիրեց: Հետո նա հարցուփորձ արեց թագուհուն հրեշի մասին, թե որտեղից նա հայտնվեց և ինչու ցած նետեց մանանեխով լիքը տակառները: Թագուհին պատասխանեց, որ Երշիկների ամբողջ ցեղի հիմնադիրն ու նախահայրը Մեծ Վարագն է: Ինչպես հայտնի է, Երշիկը շինում են խոզի մսից, այդ պատճառով էլ վարագը նրանց նախահայրն է համարվում: Ինչ վերաբերում է մանանեխին, նա ամենալավ դեղն է վիրավոր Երշիկների համար: Վիրավոր Երշիկները մանանեխից անմիջապես առողջանում են, իսկ մեռածները հարություն առնում:

Այնուհետև Պանտագրյուելը հրաժեշտ տվեց թագուհուն և վերադարձավ իր նավը: Փայտե խոզը նույնպես դրին տախտակամածի վրա: Եվ ահա ամբողջ նավատորմը դանդաղ հեռանում էր ավերից և գնում նորանոր արկածների հանդիպելու:

Գլուխ XXVI

Այն մասին, թե ինչպես է Պանտագրյուելը հասնում Քամոտ կղզին

Երկու օր Պանտագրյուելը չհանդիպեց ոչ մի արկածի: Երրորդ օրը մենք ավի դուրս եկանք Քամոտ կղզին և այն, ինչ տեսանք անտեղ, մեզ չափազանց զարմացրեց: Բանից պարզվեց, որ այդ կղզու բնակիչները կերակրվում են միայն քամի կուլ տալով: Բացի քամուց նրանք

ուրիշ բան ոչ ուտում են, ոչ խմում: Տների փոխարեն շինում են մեծ-մեծ հողմացույցներ: Պարտեզներում մի տեսակ խոտ են ցանում, որ կոչվում է «Թեթևսոլիկ»:

Հասարակ ժողովուրդը սնվում է փուքսերով ու հովհարներով: Հարուստներն ապրում են հողմադացներով: Երբ նրանք խրախճանք են սարքում, սեղաններն անմիջապես դնում են հողմադացի թևերի տակ և հետո ինչքան քեֆներն ուզում է քամի են կուլ տալիս: Ճաշին սովորաբար նրանց վեճը լինում է այն մասին, թե որ քամին է ավելի համեղ: Մեկը գովում է հարավային քամին, մյուսը՝ հարավ-արևմտյան քամին, երրորդը՝ հարավ-արևելյանը և այլն:

Հիվանդներին այդ կղզում բուժում են միջանցիկ քամիով:

Կղզում շրջագայելիս տեսանք երեք ուռած մարդկանց, որոնք գնում էին ագռավների թռիչքը դիտելու: Ասում են, որ այդ թռչուններն էլ միայն քամով են ապրում, այդ պատճառով անչափ շատ կան կղզում:

Ինչպես մենք զբոսնելու գնալիս հետներս նախաճաշիկ ենք վերցնում, այնպես էլ այստեղի բնակիչները կապում են իրենց գոտուց գեղեցիկ տկճորներ: Հենց որ մեկը ուտելու պահանջ է զգում, օգտվում է տկճորից և ուզածին չափ համեղ օդ է ստանում:

Պանտագրյուելին դա շատ դուր եկավ:

— Որքան հեշտ է ձեզ համար այս կղզում ապրելը, — ասաց նա կղզու պետին: — Քամու համար, իհարկե, վճարել հարկավոր չէ: Բավական է, որ քամին փչի և ձեր ճաշը պատրաստ է:

— Ո՛չ, — ասաց պետը, — մենք էլ մեր ցավերն ունենք: Պատահում է, որ ճաշի ժամանակ հանկարծ անձրև է գալիս, և քամին դադարում է: Այն ժամանակ մենք չենք իմանում, ինչից պատրաստենք մեր կերակուրը: Բայց այդ դեռ բոլորը չէ, — շարունակեց պետը, — լինում են և ավելի մեծ դժբախտություններ: Պետք է իմանաք, որ մեզանից ոչ շատ հեռու Եռուզեռ կղզում ապրում է Բրենգնարիլ անունով մի հսկա: Այդ հսկան ամեն տարի հիվանդանում է փորացավով և բժիշկների խորհրդով գալիս է մեր կղզին բժշկվելու: Այստեղ նա դեղահատի փոխարեն կուլ է տալիս մեր հողմադացները, որ նա շատ է սիրում: Այդպիսով նա մեզ այնպիսի աղքատության մեջ է զգում, որ շատերը քաղցից մեռնում են:

— Բայց ինչպե՞ս եք դուք ձեզ պաշտպանում այդ հսկայից, — հարցրեց Պանտագրյուելը:

— Մեկ անգամ, — ասաց կղզու պետը, — մեզ խորհուրդ տվին նրա գալուց առաջ մեծ քանակությամբ հավեր ու աքլորներ լցնել մեր հողմադացների մեջ: Մենք այդպես էլ արինք: Հսկան եկավ և միանգամից բոլորին կուլ տվեց: Եվ քիչ մնաց մեռնի: Աքլորներն աղմուկ էին բարձրացրել նրա փորում, հավերը գժվածի նման դեսուդեն էին թռել: Դրանից հսկան ուշագնաց եղավ և այնպիսի ջղաձգություններ սկսվեցին, կարծես նրա փորը օձ էր մտել:

— Իսկ ինչպե՞ս նա առողջացավ այդ հիվանդությունից, — հարցրեց Պանտագրյուելը:

— Բժիշկը նրան խորհուրդ տվեց, — ասաց պետը, — որպես դեղահաբ աղվեսներ կուլ տալ: Աղվեսները խեղդեցին բոլոր հավերին ու աքլորներին, բայց հետո ցանկություն չունեցան նրա փորից դուրս գալու: Այն ժամանակ հսկան որպես դեղահաբ կուլ տվեց որսկան շներ: Շները բռնեցին բոլոր աղվեսներին, և հսկան առողջացավ: Ահա այս եղավ մեր դժբախտությունը:

— Է՛լ մի տխրեք, բարեկամներ, — ասաց Քսենոմանը, — հսկա Բրենգնաբիրը այլևս ձեզ չի անհանգստացնի: Անցյալ տարի ես Եռուզեռ կղզում էի և իմացա, որ հողմադացներ կուլ տվող հսկա Բրենգնաբիրը վախճանվել է: Նա խեղդամահ է եղել մի կտոր թարմ յուղից, որ բժիշկների խորհրդով ցանկացել է կուլ տալ վառած վառարանի մոտ:

Գլուխ XXVII

Այն մասին, թե ինչպես է Պանտագրյուելը գալիս Պապեֆիզների կղզին

Հետևյալ առավոտ մենք ափ իջանք Պապեֆիզների կղզում, որի բնակիչները մի ժամանակ եղել են հարուստ, ազատ և կոչվել են Խնդակյացներ: Այժմ այս ժողովուրդն աղքատ է, դժբախտ ու Պապիմաններից բոլորովին թալանված ու մերկացրած: Այդ այսպես է պատահել: Մի անգամ մի մեծ տոն օր Խնդակյացները գնում են հարևան Պապիմանիա կղզին, որտեղ մեծ հանդես կար: Սովորություն է եղել այդ հանդեսում ցուցադրել Հռոմի պապի մեծադիր պատկերը: Այդ պատկերը տեսնելիս Խնդակյացներից մեկը չի կարողանում իրեն զսպել և թզանշան է ցույց տալիս: Դրա վրեժը լուծելու համար մի քանի օր հետո պապիմանները հարձակվում են Խնդակյացների կղզու վրա և կոտորում բոլոր տղամարդկանց: Այդ ժամանակից սկսած կղզին բոլորովին ամայանում է: Կենդանի մնացած փոքրաթիվ Խնդակյացները դառնում են Պապիմանների ստրուկը և կրում Պապեֆիզ անունը, այսինքն՝ պապին թզանշան ցույց տվող: Ամեն տարի նրանց գլխից անպակաս են լինում կարկուտը, փոթորիկը, ժանտախտը և ամեն տեսակ այլ դժբախտություններ:^[64]

Այդ աղքատությունը տեսնելուց հետո մենք վճռեցինք երկար չմնալ կղզում: Հետաքրքրության համար մտանք միայն մի փոքրիկ կիսակործան մատուռ, որը շինված էր ծովափում՝ ծովին բոլորովին մոտ: Մատուռում տեսանք ջրով լիքը մկրտության մի ահագին ավազան: Ավազանում մի մարդ կար պառկած: Նա ամբողջովին ծածկված էր ջրով, միայն քթի ծայրն էր ջրից դուրս ցցված՝ շունչ քաշելու համար: Ավազանի շուրջը կանգնած էին երեք պատերներ, որոնք կարդում էին ձեռքներում բռնած աղոթագրքերը՝ ավազանում պառկած մարդուն չարքերից փրկելու համար:

— Աստված իմ, — ասաց Պանտագրյուելը, — այս ի՞նչ կատակերգություն է, ի՞նչ եք ուզում այս խեղճ մարդուց:

Որպես պատասխան Պանտագրյուելին պատմեցին հետևյալ զարմանալի պատմությունը:

Գլուխ XXVIII

Այն մասին, թե ինչպես մի Պապեֆիզ խաբում է սատանային

Մի անգամ մի Պապեֆիզ (հենց այն, որ այժմ պառկած էր կնունքի ավազանում) վարելիս

է լինում իր արտը՝ հաճար ցանելու համար: Այդ նույն ժամանակ մի շահել սատանա թույլտվություն է խնդրում գլխավոր դեկից երկիրն իջնելու և գնում է Պապեֆիզների կղզին ու այնտեղ զանազան գծություններ անում: Այդ սատանան շատ անպետք է լինում: Նա չի կարողանում ոչ ամալի պես որոտալ, ոչ կարկուտ բերել ու հացը փչացնել: Նրա ձեռքից հազիվ էր գալիս երբեմն կաղամբ կամ մաղաղանոս փչացնելը: Այն էլ ասենք, որ նա անգրագետ էր և շատ քիչ բանի մասին հասկացողություն ուներ:

Սատանան վազում գալիս է կղզին, տեսնում գյուղացուն ու հարցնում.

— Այդ ի՞նչ ես անում, բարեկամ:

— Չե՛ս տեսնում, — պատասխանում է գյուղացին, — հաճար եմ ցանում: Ուզում եմ եկող տարվա ապրուստի մի քիչ պաշար պատրաստել:

— Շատ լավ ես անում, — ասում է սատանան, — բայց չե՞ որ դաշտը քոնը չէ: Այն օրվանից սկսած, երբ դուք պապին թզանշան ցույց տվիք, ձեր հողը մեզ, սատանաներիս է պատկանում: Բայց այդ մի կողմ թողնենք, ես ինքս վարուցանք անող չեմ, ուստի խնդրեմ շարունակես քո աշխատանքը: Բայց երբ հնձի ժամանակը գա, մենք պետք է կես անենք:

— Ինչ արած, — պատասխանեց գյուղացին, — եթե պետք է կես անել, թող քո ասածը լինի:

— Ես այդպես եմ կարծում, — ասում է սատանան, — մեզնից մեկը կվերցնի այն, ինչ որ անած կլինի հողի երեսին, իսկ մյուսն այն, ինչ որ կմնա հողի տակ: Ընտրողը ես պիտի լինեմ, որովհետև հին ազնվատոհմ սատանա եմ, իսկ դու՝ մի հասարակ գյուղացի: Ես ընտրում եմ այն, ինչ որ մնացած կլինի հողի տակ: Ե՛րբ է լինելու հունձը:

— Հուլիս ամսին, — պատասխանում է գյուղացին:

— Ուրեմն իմացիր, որ հուլիս ամսին կվերադառնամ, — ասում է սատանան, — իսկ հիմա կգնամ վարդապետների և ուրիշ զանազան սրիկաների գլխին խաղեր խաղալու: Աշխատիր, գյուղացի, աշխատիր: Ցտեսություն:

Հուլիսի կեսին սատանան նորից է գալիս, հետը բերելով փոքրիկ սատանաների ու չարքերի մի ամբողջ զորախումբ:

— Գյուղացի բարեկամ, — ասում է նա, — բարով, հազար բարի, ինչպե՛ս ես ապրում: Դեհ, արի բերքը կիսենք:

— Լավ, կիսենք, — պատասխանում է գյուղացին:

Գյուղացին հաճարը հնձում է, կալտում, քամում, լցնում պարկերի մեջ ու տանում շուկա ծախելու: Իսկ սատանաները հողից հանում են բոլոր արմատները, խտիտ-խտիտ կապում և նույնպես տանում են ծախելու:

Գյուղացին ծախում վերջացնում է իր հաճարը, դրամը լցնում է գոտուց կախված հին կոշիկի մեջ և ուրախ կանգնած նայում է:

Իսկ սատանաները ոչ միայն ոչինչ չկարողացան ծախել, այլև ծաղրի առարկա դարձան ամբողջ շուկայում: Նրանք ամոթից ուզում էին գետինը մտնել:

Երբ շուկան փակվեց, սատանան ասաց գյուղացուն:

— Այս անգամ, գյուղացի բարեկամ, դու ինձ խաբեցիր, բայց իմացիր, որ մյուս անգամ դա քեզ չի հաջողվի:

— Պարոն սատանա, — պատասխանում է գյուղացին, — ինչպե՞ս կարող էի ես ձեզ խաբել: Չէ՞ որ դուք եղաք ընտրողը: Իհարկե, դուք դեռ ջահել եք ու անփորձ: Դուք հույս ունեիք հողի միջից հանել իմ ցանած բոլոր սերմերը: Բայց չգիտեիք, որ այս սերմերը կանեն ու նոր հաճար կտան, որ ես արդեն ծախեցի: Ինչպես տեսնում եք, ընտրությունը դուք եք արել և վատ ընտրություն եք կատարել:

— Լավ, բավական է դուրս տաս, — ասաց սատանան: — Եկող տարի ի՞նչ պիտի ցանես:

— Ինչպես իսկական հողագործ, նույն արտում եկող տարի ես պետք է շաղգամ ցանեմ, — պատասխանում է գյուղացին:

— Շատ լավ, — ասաց սատանան: — Որքան կարող ես շատ ցանի շաղգամ: Ես կպաշտպանեմ արտը կարկուտից ու փոթորկից: Միայն իմացիր, այս անգամ ես կվերցնեմ այն, ինչ որ անած կլինի գետնի երեսին, իսկ ինչ կմնա հողի մեջ, վերցրու քեզ: Աշխատիր, գյուղացի, աշխատիր: Իսկ այժմ ես կգնամ գայթակղելու հերետիկոսներին: Ասում են, եթե նրանց լավ խորովեն, հիանալի խորոված կդառնան: Հենց այսօր էլ պարոն դևը փորում ծակոցներ է գգում: Այդ տեսակ համեղ կերակուրը նրա փորին շատ կօգնի:

Երբ հնձի ժամանակը եկավ, սատանան նորից երևաց՝ հետն առած պալատական սատանաների մի ամբողջ զորախումբ: Բերքը դարձյալ կես արին: Սատանաները կտրեցին շաղգամի փրերը, իսկ գյուղացին հողից հանեց խոշոր ու հրաշալի շաղգամները և լցրեց պարկերի մեջ: Այնուհետև բոլորը միասին գնացին շուկա:

Շաղգամը գյուղացուց իսկույն գնեցին, իսկ սատանաների վրա ավելի թունդ ծիծաղեցին:

— Է՛յ, հողագործ, — ասաց սատանան, — տեսնում եմ, որ դու ինձ նորից խաբեցիր: Ես ուզում եմ քեզ հետ էլ, քո արտի հետ էլ հաշիվներս մաքրել: Քեզ մենամարտի եմ կանչում: Մենք միմյանց կքորենք եղունգներով, ով ում շատ քորի, նա էլ թող հաղթող համարվի: Հաղթողին պիտի պատկանի ամբողջ արտը: Մի շաբաթ հետո կգբաղվենք դրանով, իսկ առայժմ ես կգնամ գայթակղելու դատամուկներին ու դատարանի աստիճանավորներին: Ծիշտ է, նրանք արդեն մեզ հայտարարել են, որ իրենք բոլորը դևին են պատկանում, բայց դևը նրանց շատ էլ չի սիրում: Մովորաբար դևը նրանց ուղարկում է սատանաներին, որոնք նրա խոհանոցում սևագործ աշխատանք են կատարում, իսկ իրեն համար պահում է միայն լավ աղ դրամներին: Պետք է քեզ ասեմ, որ դևը շատ լավ է իմանում կերակուրների լավն ու վատը: Նախաճաշ անելիս նա վարդապետներ է ուտում և ասում է, որ շատ համեղ են: Առաջ նա սիրում էր նախաճաշելիս աշակերտներ ուտել, իսկ այժմ ուսումնարաններում աշակերտների գլուխն այնպես են խճողում կրոնով, որ նրանց մոտենալը շատ դժվար է: Ծաշին դևին մատուցում են փաստաբաններ և այլ սրիկաներ, որոնք կողոպտում են աղքատ մարդկանց: Ընթրիքի համար գործ են ածում վաճառականներին, վաշխառուներին և նման կողոպտիչներին: Աշխատիր, հողագործ, աշխատիր: Մի շաբաթ հետո մենք կտեսնվենք:

Գյուղացին տուն վերադարձավ մտախոհ և տրտում: Կինը շատ անհանգստացավ: Մտածեց՝ չինի թե նրան կողոպտել են շուկայում: Բայց ոչ, տեսավ, որ քսակը լիքն է դրամով: Սակայն ինչո՞ւ է նա այդպես տխուր:

Գյուղացին նրան ամեն ինչ պատմեց:

— Ամենևին մի վախենա, — ասաց կինը, — ոչինչ էլ չի լինի: Ես արդեն գիտեմ, թե ինչպես պետք է սատանայի հախիցը գամ:

— Իհարկե, ես կարող եմ զիջել նրան իմ արտը առանց մրցման, — ասաց գյուղացին:

— Դատարկ բաներ մի խոսիր, — պատասխանեց կինը, — դու ամեն բան թող ինձ ու տեղդ հանգիստ նստի: Դու ասում էիր, որ դա ջահել ու անփորձ սատանա է, այնպես չէ՞: Ես կստիպեմ նրան, որ վերադարձնի մեզ մեր արտը և մեզ հանգիստ թողնի: Եթե նա ծեր սատանա լիներ, մեր բանը ավելի դժվար կլիներ:

Հենց նույն օրը, երբ Պանտագրյուելը եկավ Պապեֆիզների կղզին, սատանան երրորդ անգամ պետք է գար գյուղացու մոտ: Առավոտյան վաղ, դեռ լույսն ու մութը իրարից չբաժանված, գյուղացին խոստովանեց, հաղորդվեց և քահանայի խորհրդով թաքնվեց այն մկրտության ավազանի մեջ, որտեղ նրան տեսավ Պանտագրյուելը:

Այն միջոցին, երբ Պանտագրյուելին պատմում էին տարօրինակ պատմությունը, լուր բերին, որ կինը իրոք վարպետորեն խաբել է սատանային, և արտը մնացել է գյուղացուն:

Դա այսպես է պատահել: Նախօրյակին կինը մի ոչխար է մորթել, հանել է փորոտիքն ու պահել: Հետևյալ օրը եկել է սատանան:

— Էյ, հողագործ, — գոչում է նա, — դուրս արի փորձենք, տեսնենք ում եղունգներն են ավելի սուր:

Պատասխանող չի լինում: Սատանան առանց քաշվելու ներս է մտնում սենյակ: Տեսնում է հատակին պառկած է կինը և տնքում է:

— Ի՞նչ է պատահել, — հարցնում է սատանան: — Իսկ որտե՞ղ է հողագործը:

— Ա՛խ, — պատասխանում է կինը, — այդ անիծվածն ինձ սպանեց: Ա՛խ, դու ստոր արարած, դահիճ, գազան, քո պատճառով է, որ ես մեռնում եմ:

Բայց ի՞նչ է արել նա քեզ, — հարցրեց սատանան, — ասա ինձ առանց վախենալու, ես նրան ցույց կտամ:

— Այ, տես թե ինչ, — ասում է կինը: — Դուք պայման եք դրել միմյանց քորելու, և նա այսօր փորձի համար իր ճկույթով ինձ մի փոքր չանգռեց և տես, թե ինձ ինչ օրը գցեց, ամբողջ փորոտիքս դուրս է թափվել:

Այս խոսքերի վրա կինը վերցնում է ոչխարի փորոտիքը և շարտում է սատանայի առաջ:

— Իսկ հիմա, — ավելացնում է նա, — այդ անիծվածը գնացել է դարբնոց, որ եղունգներն ավելի սրի: Ձեր բանը բուրդ է, պարոն սատանա: Ազատեցեք ձեր գլուխը, քանի շուտ է: Փախեք, ասում եմ ձեզ, նա որտեղ որ է կվերադառնա:

Երբ սատանան փորոտիքը տեսավ, սաստիկ վախեցավ ու անհետացավ: Այդ օրվանից սկսած նա այլևս չերևաց, և գյուղացին հանգիստ սրտով աշխատում է իր արտում:

Երբ Պանտագրյուելը մինչև վերջ լսեց այդ պատմությունը, հրամայեց իր գանձարանից տասնութ հազար ոսկի նվիրել տնից-տեղից գրկված Պապեֆիզներին: Դրանից հետո մենք վերադարձանք մեր նավերը, խորհելով մարդկանց դժբախտության և մարդկային անիրավության մասին:

Գլուխ XXIX

Այն մասին, թե ինչպես է Պանտագրյուելը գալիս Պապիմանների կղզի

Պապեֆիզների ավերված կղզին թողնելուց հետո մենք շարունակեցինք մեր ճանապարհը: Մի արևոտ ու պայծառ օր էր, երբ հանկարծ մեր աչքերի առաջ ներկայացավ Հռոմի պապի երկրպագուների՝ Պապիմանների երանելի կղզին: Հենց որ մեր նավերը նավահանգիստ մտան, մի նավակ հեռացավ ափից և դեպի մեզ եկավ: Նավակում չորս մարդ կար: Նրանցից մեկը վերարկուով էր և կեղտոտ կոշիկներով, մյուսը բազեպանի հագուստով էր՝ մի թռչունի խրտվիլակ ձեռքին բռնած: Երրորդը դատապաշտպան էր: Նրա ուսից կախ էր արած դատական ծանուցագրերով լեփ-լեցուն մի մեծ տոպրակ: Չորրորդը կարծես այգեգործ լիներ Օռլեանի մոտերքից: Նա հագել էր գեղեցիկ քաթանե կոշիկներ, ձեռքից կախած մի կողով, իսկ գոտու տակ խրել էր մի փայլուն մանգաղ:

Կղզիաբնակները մոտեցան մեր նավերին և որքան կարող էին բարձր գոռացին.

— Տեսե՛ր էք դուք նրան, օտարականներ, տեսե՛ր էք նրան, թե ոչ:

— Ո՛ւմ, — հարցրեց Պանտագրյուելը:

— Նրան իրեն, — եղավ պատասխանը:

— Բայց ո՞վ է այդ, — հարցրեց Ժան վարդապետը: — Երդվում եմ ինչով կուզեք, նա շատ կփոշմաներ, եթե իմ ձեռքն ընկներ:

Ժան վարդապետը կարծում էր, թե կղզիաբնակները հարցնում են որևէ մի փախստական ավազակի մասին:

— Ինչպես թե ո՞վ, — զարմացած ասացին կղզիաբնակները: — Դուք օտարականներդ մի՞թե չգիտեք ով է միակը:

— Բարեկամներ, — ասաց Էպիտեմոնը, — մենք միմյանց չենք հասկանում, պարզ ասացեք, ինդրեմ, ո՞ւմ մասին է ձեր խոսքը:

— Մենք խոսում ենք նրա մասին, ով կա, — պատասխանեցին նրանք, — տեսե՛ղ եք դուք երբևիցե նրան:

— Եկեղեցին մեզ սովորեցնում է, — ասաց Պանտագրյուելը, — որ նա, ով կա, աստված է: Մենք աստծուն, իհարկե, չենք տեսել:

— Մենք խոսում ենք ոչ թե երկնային աստծու մասին, — պատասխանեցին կղզիաբնակները, — մենք խոսում ենք երկրային աստծու մասին: Տեսե՛ղ եք նրան թե ոչ:

— Երդվում եմ պատվովս, — ասաց Կապրալիմը, նրանք հռոմի պապի մասին են հարցնում:

— Այո, ճիշտ է, — ասաց Պանուրգը, — ես մեկի տեղը երեք պապ եմ տեսել, բայց ճիշտն ասած դրանից ոչ մի օգուտ չեմ տեսել:

— Ինչպես թե երեք պապ, — զարմացած հարցրին կղզիաբնակները, — մեր դեկրետալիաներում ասված է, որ միայն մի կենդանի պապ է լինում:

— Իհարկե, — պատասխանեց Պանուրգը, — ամեն անգամ ես միայն մի պապ եմ տեսել կենդանի, բայց ընդամենը տեսել եմ երեք պապ, որովհետև իմ օրոք երեք պապ են միմյանց հաջորդել:

— Ո՞վ երանելի մարդիկ, — գոչեցին կղզիաբնակները: — Ո՞վ բաղձալի և ավելի քան փափագելի հյուրեր: Բարով, հազար բարով եք եկել:

Այս ասելով կղզիաբնակները ծունկ չոքեցին մեր առաջ և համբուրում էին մեր ոտքերը: Որքան աշխատում էինք թույլ չտալ նրանց մեզ այդպիսի հարգանք մատուցել, որքան ասում էինք, թե այդպիսի մեծարանքների գուցե արժանի է միայն պապը, սակայն իզուր:

— Ո՛չ, ո՛չ, — ասում էին կղզիաբնակները: — Եթե շնորհ բերի մեզ մոտ ինքը սրբազնագույն հայրը, — մենք նրա համար այնպիսի հանդիպում կսարքենք, որ ոչ ոք տեսած չլինի, ոչ էլ լսած: Մենք այդ արդեն որոշել ենք: Մենք կհամբուրենք պապի հետույքը, որովհետև պապն անշուշտ հետույք ունի: Դրա մասին գրված է մեր դեկրետալիաների մեջ: Մենք այդ շատ լավ գիտենք: Որովհետև եթե կա պապ, կնշանակի նա ունի և հետույք: Եթե աշխարհում գոյություն չունենային հետույքները, նշանակում է չէին լինի և պապերը:

Այդ միջոցին Պանտագրյուելը կամացուկ հարցրեց նավակավարին, թե ո՞վքեր են այդ պարոնները: Նավակավարը պատասխանեց, թե դրանք կղզում ապրող չորս

դասակարգերի ներկայացուցիչներ են: Միաժամանակ նավակավարն ավելացրեց, որ նրանք մեզ լավ կընդունեն և կհյուրասիրեն, որովհետև մենք տեսել ենք իրեն՝ սրբազնագույն պապին:

— Հրաշք է սա, այսպիսի բան ես տեսած չկամ, — ասաց Պանուրգը, — մինչև այսօր պապին տեսնելս ինձ ոչ մի օգուտ չի տվել, իսկ այժմ բանից դուրս է գալիս, որ օգուտ կա, այն էլ մեծ օգուտ:

Հենց որ մենք ափ դուրս եկանք, դեպի մեզ շարժվեց կղզիաբնակների մի ակազին թափոր:

— Սրանք տեսել են նրան, սրանք տեսել են նրան, սրանք տեսել են նրան, — բարձրաձայն հայտարարում էին չորս դասակարգերի ներկայացուցիչները:

— Ո՛վ երջանիկ մարդիկ, երանի ձեզ, — աղաղակում էր ժողովուրդը, ձեռքերը վեր բարձրացնելով դեպի երկինք:

Այս աղաղակները շարունակվեցին քառորդ ժամի չափ: Հետո շտապով եկավ տեղական ուսումնարանի մագիստրոսը իր մանկավարժներով, վերակացուներով ու ծեծել տվեց բոլոր աշակերտներին: Այդպես էին անում մի ժամանակ Փարիզում՝ ավազակներին կախելու ժամանակ: Կարծում էին, որ եթե հանցավորին կախելիս աշակերտներին կարգին ծեծեն, այդ նրանց համար լավ խրատ կլինի:

Պանտագրյուելը բարկացած ասաց.

— Է՛յ, պարոններ, եթե երեխաներին ծեծելը չդադարեցնեք, ես կհեռանամ այստեղից:

Պանտագրյուելի որոտաձայն արտասանած խոսքերը շշմեցնող տպավորություն թողեցին բոլորի վրա:

— Մի՞թե պապին տեսնողներն այդպիսի հսկաներ են դառնում, — հարցրեց իր ուսուցչից մի փոքրիկ սապատավոր երեխա:

— Ախ, ափսոս, որ պապին մինչև այսօր չեմ տեսել:

Ամբոխի աղմուկի ու աղաղակների ձայնը վերջապես հասավ կղզու առաջնորդ եպիսկոպոս Հոմենացի ականջին, և նա էլ եկավ: Հոմենացը նստած էր կանաչագույն տապանկով ծածկված ջորու վրա և նրա ետևից գնում էին նրան սպասավորող սարկավազները, որոնք ձեռքներին բռնած տանում էին խաչեր, խաչվառներ, ամպիոպանիներ, ջահեր, ցողամաններ:

Երբ եպիսկոպոսը մոտեցավ մեզ, ասաց, որ Պապիմանների ամբողջ կղզին մեծ անհամբերությամբ սպասում է պապի գալուն: Իսկ մինչև այդ բախտավոր օրը այն ճամփորդները, որոնք իրենց աչքով տեսել են պապին, մեծ պատիվներով կընդունվեն այստեղ:

Այսպես խոսելով, Հոմենացը նույնպես ուզեց համբուրել մեր ոտքերը, բայց այժմ մենք կտրականապես մերժեցինք և չցանկացանք այդ մեծարանքն ընդունել:

Գլուխ XXX

Այն մասին, թե ինչպես է Պապիմանների եպիսկոպոս Հոմենացը ցույց տալիս Պանտագրյուելին երկնքից վայր ընկած դեկրետալիաները¹⁶³

— Մեր սրբազան դեկրետալիաները, — ասաց Հոմենաց եպիսկոպոսը, — պատվիրում են մեզ նախքան գինետուն գնալը՝ եկեղեցի գնալ: Որպեսզի այդ գեղեցիկ որոշումից չշեղվենք, եկեք նախ գնանք եկեղեցի, հետո կգնանք խրախճանքի:

— Ի՞նչ եմ ասել լավ խոսքին, — ասաց սուրբ հայր Ժանը, — այն ժամանակ, սրբազան հայր, դուք գնացեք առջևից, իսկ մենք կհետևենք ձեզ: Վաղուց է եկեղեցում չենք եղել: Ուրախությամբ կգնամ եկեղեցի, դրանից իմ ախորժակը շատ լավ կբացվի:

Եկեղեցի մտնելիս նկատեցինք մի մեծ ոսկեգոծ գիրք, որ զարդարված էր հազվագյուտ ու թանկագին քարերով՝ սուտակներով, գմբուխտներով, ադամանդներով ու մարգարիտներով: Գիրքը երկու հաստ ոսկե շղթաներով կախված էր եկեղեցու բարձր առաստաղից:

Մենք հիացած նայում էինք այդ զարմանալի գրքին: Իսկ Պանտագրյուելը շնորհիվ իր բարձր հասակի կարողանում էր ձեռքով շոշափել և այս ու այն կողմ դարձնելով, լավ նայել: Հետո Պանտագրյուելը մեզ հավատացնում էր, որ գիրքը շոշափելուց հետո ձեռքերում սաստիկ քոր է զգացել և մեծ ցանկություն է ունեցել սպասավորներից մեկին ծեծել, բայց, իհարկե, ոչ եկեղեցական կոչում ունեցող սպասավորի:

— Սուրբ գրքի մեջ ասված է, — ասաց մեզ եպիսկոպոսը, — որ աստված իր ձեռքով է գրել հրեաների համար տաար պատվիրանները և հանձնել Մովսեսին: Նույնպես և այն դեկրետալիաները, որ դուք այստեղ տեսնում եք, գրված են Քերովբեի ձեռքով: Բայց դուք օտարերկրացի մարդիկ եք, հավանորեն չեք հավատա ասածիս:

— Բայց դա չափազանցություն չէ՞, — ասաց Պանուրգը:

— Եվ պետք է ձեզ ասեմ, — շարունակեց եպիսկոպոսը, — որ այդ դեկրետալիաները իսկապես որ երկնքից են իջել: Դուք, որ ձեր աչքով տեսել եք պապին, կարող եք նայել նրանց վրա որքան կամենաք և նույնիսկ համբուրել, եթե ցանկանաք: Բայց նախ պետք է երեք օր պաս պահեք և ձեր բոլոր մեղքերը քավեք:

— Լսեցեք ինչ եմ ասում, սրբազան հայր, — ասաց Պանուրգը, — մենք շատ դեկրետալիաներ ենք տեսել, և՛ թղթի վրա գրված, և՛ մագաղաթի վրա գրված, և՛ ձեռագիր, և՛ տպագիր, ուստի առանձին կարիք չկա մեզ մանրամասն ցույց տալ այդ դեկրետալիաները: Մեզ համար բավական է և ձեր բարի ցանկությունը, մենք շատ շնորհակալ ենք դրա համար:

— Բայց այս դեկրետալիաները գրված են հրեշտակի ձեռքով, — ասաց Հոմենացը, — միայն այս դեկրետալիաներն են իսկական, մնացած բոլորը միայն պատճեններ են: Իսնդրում եմ, մի հոգացեք իմ մասին: Ասացեք միայն, կցանկանայի՞ք արդյոք խոստովանել և պաս պահել միմիայն երեք գեղեցիկ, կարճ և աստվածային օր:

— Խոստովանելու դեմ ոչինչ չունենք, համաձայն ենք, — ասաց Պանուրգը, — բայց այժմ պասի հետ գլուխ չունենք: Առանց այն էլ մենք ծովի վրա այնքան պաս ենք պահել, որ սարդերը մեր ատամները պատել են ոստայնով: Լավ նայեք Ժան վարդապետին, տեսեք ինչ օրն է ընկել, ասես տաար օր ծոմ է պահել:

— Նա ճիշտ է ասում, —ասաց ժան վարդապետը, — ես այնքան պաս եմ պահել, որ կուզս դուրս է եկել:

— Դեհ, մտնենք եկեղեցի, — ասաց Հոմենացը, — և ներողամիտ եղեք, որ ձեզ համար չենք երգելու պատարագի հրաշալի երգերը: Կեսօրվա ժամն արդեն անցել է, իսկ սրբազան դեկրետալիաները թույլ չեն տալիս կեսօրից հետո պատարագ մատուցանել, ուզում եմ ասել լիակատար պատարագ՝ երգեցողությամբ, բայց կմատուցանեն ձեզ համար կարճ, առանց երգեցողության պատարագ կամ այսպես կոչված չոր պատարագ:

— Ես կգերադասեի լավ գինով մի քիչ թացացրածը, — ասաց Պանուրզը, — դեհ, սկսեցեք, միայն կարճ կտրեք:

— Ինչ վատ բան է, երբ մարդու անհիմն վերջնական դատարկ է լինում: Եթե ես նախաճաշած լինեի, տանելի կլինեի, բայց դե ինչ արած, — ասաց ժան վարդապետը, — պետք է քաղաքավարի լինենք և համբերությամբ լսենք այս պատարագը:

Պատարագը վերջացնելուց հետո Հոմենացը մոտեցավ գլխավոր սեղանին և արկղերից հանեց բանալիների մի մեծ կապոց: Հետո մոտեցավ երկաթե հաստ վանդակով պինդ ծածկված պատուհանին և բաց արեց երեսուներկու կողպեք և տասնչորս սողնակ: Այնուհետև նա խորհրդավոր կերպով ծածկվեց մի բաց տոպրակով և վանդակը բաց արեց: Վանդակի ետևում կախված էր այ գույնի մետաքսե վարագույր: Հոմենացը մի կողմ քաշեց վարագույրը: Պատուհանի փոխարեն վարագույրի ետևում կախված էր մի պատկեր՝ ըստ իս բավական վատ նկարված: Հոմենացն իր գավազանի ծայրը դիպցրեց պատկերին, դրանով հասկացնելով մեզ, որ համբուրենք պատկերի ծայրը:

— Ի՞նչ եք կարծում, — հարցրեց նա, — այս ո՞ւմ պատկերն է:

— Ինձ թվում է, որ պապի պատկերն է, — ասաց Պանտագրյուելը: — Այդ երևում է խույրից⁶⁶ և նրա զգեստից:

— Ճիշտ եք ասում, — ասաց Հոմենացը, — սա երկրային աստծու պատկերն է, որին հույս ունենք մի օր տեսնել մեր երկրում: Ո՛վ երջանիկ և բաղձալի բոպե: Եվ որքան բախտավոր եք դուք, որ արժանացել եք ձեր աչքերով տեսնել երկրային աստծուն: Բավական է, մի անգամ նայել նրա պատկերին, որ կատարյալ թողություն ստանաս այն բոլոր մեղքերիդ համար, որ հիշում ես, իսկ որոնք չես հիշում, նրանց մի երրորդի համար: Ահա թե ինչո՞ւ ենք մենք տեսնում այս պատկերը միայն մեծ տոներին:

Պանտագրյուելը զարմացավ, որ այդպիսի մի չնչին պատկերի մեջ այդքան մեծ աստվածային ուժ կա պարունակված:

— Այդ ինձ հիշեցնում է մի դեպք, որ պատահել է մեզ մոտ Մելիեում, — ասաց ժան վարդապետը: — Մի անգամ հիվանդանոցում մի մեծ տոն օր մուրացիկները մեկը մյուսի առաջ պարծենում էին, թե իրենցից ո՞վ է ավելի շատ փող հավաքել: Մեկն ասում էր, որ ինքը ողորմություն է ստացել վեց արծաթ դրամ, երկրորդը՝ երկու սու, երրորդը՝ յոթը, վերջապես չորրորդը, որ մի աժդահա մարդ էր ժահրակալած և վերքերով ծածկված ոտքով, պարծենում էր, որ երեք ոսկի է աշխատել: «Իհարկե կաշխատես, — ասացին նրան ընկերները, — դա քեզ համար դժվար բան չի, որովհետև քո ոտքը աստվածային ոտք է, նրա մեջ աստվածային գորություն կա, որը դեպի իրեն է ձգում դրամները»:

— Երբ դուք մտադիր եք լինում մեզ այդպիսի առակներ պատմելու, — ասաց Պանտագրյուելը, — այն ժամանակ նեղություն քաշեք ձեզ հետ մի լազան ման ածել: Քիչ էր մնում սիրտ թափելի քո պատմությունը լսելիս: Առհասարակ վարդապետները սիրում են կեղտոտ բաների մասին երկար պատմություններ անել: Բայց շատ եմ խնդրում, այդ պատմությունները ձեզ համար պահեցեք և վանքի շրջապատից դուրս մի բերեք:

— Ինձ թվում է, — ասաց Պանուրգը, — որ սա հին պապերից մեկի պատկերն է: Այժմյան պապերին ես տեսել եմ գլխներին սաղավարտ դրած: Այն ժամանակ, երբ ողջ աշխարհում թագավորում էր կատարյալ հանգստություն ու խաղաղություն, միայն պապերն էին դաժան ու արյունահեղ պատերազմներ մղում:

— Բայց չէ՞ որ նրանք պատերազմում էին ապստամբների, հերետիկոսների և ամեն տեսակ բողոքականների հետ, որոնք չեն ուզում ճանաչել մեր բարի ու երկրային աստծուն, — ասաց Հոմենացը: — Պապերին դա ոչ միայն չի արգելված, այլև հրաման է տրված դեկրետալիաներով: Պապը պարտավոր է հրով ու սրով զսպելու կայսրերին, թագավորներին, դուքսերին և իշխաններին, եթե նրանք մի մազաչափ անգամ շեղվեն նրա հրամաններից: Պապը պետք է նրանց անխնա ոչնչացնի:

— Բայց դուք, տեղացիներդ, հերետիկոսներ հո չե՞ք, — ասաց Պանուրգը, — դուք որ կաք, իհարկե, ընտրովի քրիստոնյաներ եք:

— Այո, ճիշտ է ձեր ասածը, — ասաց Հոմենացը, — այդ պատճառով էլ մենք փրկված կլինենք, իսկ այժմ օրինաձ ջուր վերցնեն և գնանք ճաշելու:

Գլուխ XXXI

Չրույց դեկրետալիաների գործած հրաշքների մասին

Այժմ ձեզ պետք է ասեն, չարանճիներ, որ այն ժամանակ, երբ Հոմենացը մեզ համար չոր պատարագ էր մատուցանում, երեք եկեղեցական սպասավորներ շրջում էին եկեղեցում մի-մի ահագին կոնք ձեռքներին բռնած և բարձրաձայն կանչում էին.

— Չմոռանաք այն բախտավորներին, որոնք տեսել են նրան երես առ երես:

Եվ ծխականներից յուրաքանչյուրը գցում էր կոնքի մեջ պղնձե և արծաթե դրամներ: Վերջ ի վերջո բոլոր կոնքերը լցվեցին դրամով: Եկեղեցուց դուրս գալիս, Հոմենացն ասաց, որ այդ դրամով մեզ համար շքեղ խնջույք պիտի սարքեն: Եվ իսկապես մեզ փառավոր ճաշ տվին:

Ճաշի ժամանակ իմ ուշադրությունը գրավեց երկու բան: Առաջինն այն էր, որ մեզ համար պատրաստած բոլոր մսե կերակուրները՝ վայրի այծերը, խոճկորները, աղավնիները, ճագարները, հնդկահավերը լցված էին առանձին պապիմանական խճողակով: Երկրորդը՝ կերակուրները մեզ մատուցում էին սպիտակ ու երկայն զգեստ հագած չքնաղ ու խարտյաշ աղջիկներ: Դրանք այս երկրի հարսնացուներն էին: Նրանց մազերը հյուսված էին կերպասե ժապավեններով և զարդարված վարդերով, մեխակով և ուրիշ ծաղիկներով: Առաջին կերակուրը մատուցելուց հետո մեզ համար մի երգ երգեցին ի

պատիվ սրբազան դեկրետալիաների և խոր ռեվերանս անելով, մեր առջև մի-մի գավաթ գինի դրին:

— Մոնսինիոր, — ասաց Հոմենացը Պանտագրյուելին, — ամբողջ սրտով խմում եմ ձեր կենացը:

Եվ գավաթը դատարկելուց հետո ավելացրեց.

— Ո՛վ աստվածային դեկրետալիաներ, ձեր շնորհիվ է, որ մեր գինին այսքան համեղ է:

— Առանց դրան էլ գինին լավ կլիներ, — ասաց Պանուրգը:

— Ո՛վ աստվածային դեկրետալիաներ, — շարունակեց Հոմենացը, — որքա՛ն դուք անհրաժեշտ եք մեզ՝ խեղճ մահկանացուներիս համար փշով ու տատասկով ծածկված այս աշխարհում: Ե՛րբ, ե՛րբ վերջապես պիտի գան այն երջանիկ ժամանակները, երբ մարդիկ միայն ձեզ կարդան և մի կողմ շարտեն ամեն տեսակ ուսում ու գիտություն: Չէ՞ որ սրբազան դեկրետալիաները պետք է կարդալ օր ու գիշեր, պետք է ամենայն ջանասիրությամբ ուսումնասիրել դրանք, արյուն ու մարմին դարձնել և խորապես դրոշմել ուղեղի մեջ, մեր ամբողջ էության մեջ: Եվ այն ժամանակ միայն երջանկությունը կթագավորի աշխարհում:

— Վահ, գահլա տարավ այս տխմար արարածը... կներեք, ուզում էի ասել այդ անիծված խճողակը փորիս մեջ խանգարում առաջացրեց, — ասաց Էպիտեմոնը: — Ստիպված եմ դուրս գալ, եթե ոչ բանս վատ կլինի:

— Այն ժամանակ ոչ կարկուտ կլինի, ոչ սառնամանիք և առհասարակ ոչ մի աղետ, — շարունակեց Հոմենացը բոլորովին հանգիստ ու անվրդով: — Օ՛, որպիսի առատություն կլինի այն ժամանակ աշխարհում ամեն տեսակ բարիքների: Օ՛, որպիսի անխախտ խաղաղություն կթագավորի տիեզերքում: Կվերջանան բոլոր պատերազմները, սպանությունները, կողոպուտները, բացի, իհարկե, այն պատերազմներից, որոնք մղվում են հերետիկոսների և խռովարարների դեմ, որոնց անխնա պետք է կոտորել: Մարդ պետք է դեկրետալիաներում միայն մի փոքրիկ հողված կամ հենց կես հողված կարդա, որ նրա հոգում բոցավառվի աստվածային սիրո զգացումը դեպի իր մերձավորը, եթե նա, իհարկե, հերետիկոս չի:

— Ոսկի խոսքեր են, — ասաց Պանուրգը, — բայց ինչ մեղքս թաքցնեմ, հավատալս չի գալիս: Մի անգամ դեկրետալիաներից առիթ ունեցա կարդալու մի գլուխ: Դրանից այնպիսի փորկապություն ստացա, որ չորս օր ստամոքսս չէր աշխատում:

— Գո՛ւցե դուք որևէ մեղք եք գործել, — ասաց Հոմենացը:

— Դրա նման մի դեպք էլ Մանսում է եղել, — ասաց Ժան վարդապետը: — Այնտեղի դեղավաճառ Ֆրանսուա Կորնյուն իր պատրաստած դեղերը փաթաթելիս է եղել հին դեկրետալիաների մեջ, և զարմանալի բան, բոլոր դեղերը մինչև մյուս օրը փչանում էին:

— Պատի՛ժ և պատուհաս աստվածային, — ասաց Հոմենացը, — ինչպես է համարձակվել նա այդպիսի սրբազան ձեռագրերը գործածել աշխարհիկ չնչին բաների համար:

— Փարիզում, — ասաց Պոնոկրատը, — դերձակ Գրոնիեն հին դեկրետալիաներից ձևակներ էր պատրաստում, և թող ես մարդու գավակ չլինեմ, եթե այդ ձևակներով ձևած զգեստները մի բանի պետք են եկել: Երբ Գրոնիեն ցանկացել է այդ ձևակներով վեղար

ձևել, կանացի շրջագգեստ է դուրս եկել: Շապկի տեղ լայնեզր գլխարկ է ձևել: Բաճկոնի փոխարեն ֆես է ստացվել: Ցանկացել է բաճկոն ձևել, վառարանի պես մի բան է դուրս եկել: Իսկ երբ դերձակի օգնականները քանդել են բաճկոնի աստառը, դուրս է եկել իսկ և իսկ շագանակ խորովելու մի տապակ: Բանն այնտեղ է հասնում, որ դերձակին դատի են ենթարկում և պահանջում վճարել իր փչացրած կտորեղենի գինը: Այժմ Գրոնիեն հացի կարոտ աղքատ է:

— Պատիժ և պատուհաս աստվածային, — ասաց Հոմենացը:

— Կայուզակում, — ասաց Գիմնաստը, — պարոն դ'Էտիսակը մի նշանաբան շինեց: Նրա ծառան պատառոտում էր հին դեկրետալիաները և մաքուր բոլորը օգտագործում նշաններ պատրաստելու համար: Եվ զարմանալի բան, ոչ մի նետաձիգ չի կարողանում խփել նշանին: Բոլոր արձակված նետերն անցնում էին նշանի կողքից: Մանսորնեն ավազը, որ հետևում էր արձակված նետերին պարզ տեսնում է, որ երբ նետերը պետք է խրվեին նշանի մեջ, մեկ սաժենի չափ ետ էին թռչում մի կողմ:

— Դա հրա՛շք է, — բացականչեց Հոմենացը, — իսկական հրա՛շք: Հայր մատակարար, գինի տուր: Խմում եմ բոլորիդ կենացը: Տեսնում եմ բոլորդ էլ լավ քրիստոնյաներ եք:

Այս խոսքերը լսելիս աղջիկներն իրար երես էին նայում ու ծիծաղում, իսկ Ժան վարդապետն այնպես փոթկացրեց, կարծես ուզում էր ձիու պես խրխնջալ:

— Բայց ավելի զարմանալին այն է, — ասաց Գիմնաստը, — որ երբ նշանները փոխվեցին, բոլորն էլ շատ լավ նշան էին խփում և ոչ ոք չէր վրիպում:

— Բայց լսեցեք, թե ինչ եղավ Լանդերոսում, — ասաց Եվդեմոնը: — Ժան Դելիֆի հարսանիքին մենք մի շատ զվարճալի դիմակահանդես սարքեցինք: Իմ դպրոցական ընկերները ձեռք էին բերել բաց մանուշակագույն սպիտակ լիվրեններ և ծիծաղելի մորուքներ էին կացրել երեսներին: Բայց դիմակներ չունեինք: Մենք էլ վերցրինք հին դեկրետալիաները և նրանցից դիմակներ շինեցինք մեզ համար, անցքեր բանալով երեք տեղից՝ մեկը քթի, երկուսը աչքերի համար: Եվ զարմանալի բան, երբ դիմակահանդեսը վերջացավ և դիմակները հանեցինք, բոլորս սարսափած մնացինք: Բոլորիս կերպարանքն այնքան այլանդակվել էր, որ սատանայի երես էր դարձել, և այդ բոլորի պատճառը ձեր դեկրետալիաներն էին: Մեկի երեսը ծածկվել էր պզուկներով, մյուսինը քոստով էր, երրորդինը՝ բորոտով, չորրորդը ծաղիկ էր հանել: Բանից դուրս եկավ, որ ամենից քիչ տուժել էր նա, որի բոլոր ատամները թափվել էին:

— Հրա՛շք է, հրա՛շք, — բացականչեց Հոմենասը, — կատարյալ հրա՛շք:

— Սպասեցեք, — ասաց Եվդեմոնը, — ամեն բանի վերջն է գովելի: Իմ երկու քույրերը, Կատերինան և Ռենեն, մի անգամ ուզեցել են իրենց նոր լվացած ու օսլայած օձիքներն ու մանժետները արդուկել: Այդ ժամանակ մեր տանը եղել է հաստ կազմով հին դեկրետալիաների մի ծանր գիրք: Իմ քույրերը վերցրել են իրենց օձիքները դրել են այդ դեկրետալիաների մեջ: Եվ երդվում եմ աստծով...

— Սպասեցեք, — ասաց Հոմենացը, — ո՞ր աստծով ես երդվում:

— Մեկ է աստված, — ասաց Եվդեմոնը:

— Երկնքում մեկ է, իհարկե, — ասաց Հոմենացը, — իսկ երկրում մի՞թե չկա մի ուրիշը:

— Կներեք, — ասաց Եվդեմոնը, — հենց դրա՛ մասին է, որ ես մոռացել էի: Ուրեմն երդվում եմ երկրային աստծով, այսինքն պապով, որ իմ քույրերի ամբողջ սպիտակեղենը՝ կրծքակալը, մանժետները, օձիքները՝ բոլորը սևացել, դարձել էին մուր:

— Հրա՛շք է, — ասաց Հոմենացը: — Հայր մատակարար, գինի տուր մեզ և լավ հիշիր գեղեցիկ պատմությունները:

— Ինձ համար ամենից ուշագրավն այն է, — ասաց Եվդեմոնը, — թե ինչպես է պապը կարողանում իր դեկրետալիաների միջոցով յուրաքանչյուր տարի դուրս կորզել Ֆրանսիայից չորս հարյուր հազար ոսկե դուկատ: Այ սա է իսկական հրաշքը:

— Դրանք դատարկ բաներ են, — ասաց Հոմենացը, — չպետք է մոռանալ, որ Ֆրանսիան միակ երկիրն է, որ կերակրում է պապին: Բայց և այնպես, ցույց տվեք մի ուրիշ այսպիսի գիրք, որ կարողանար դեպի ինքը ձգել այդչափ ոսկի: Չեք գտնի այդպիսի գիրք: Չի եղել և չի կարող լինել աշխարհում մի ուրիշ այդպիսի գիրք: Եվ տեսեք, որ այդ անհիծված հերետիկոսները ոչ ճանաչում, ոչ էլ կարդում են այդ գիրքը: Պետք է դրանց բոլորին այրել, հոշոտել, ջրախեղդ անել, կախել, ցցի վրա նստեցնել, քառատել, կտոր-կտոր անել, խորովել, խաշել, եփել կաթսայի մեջ, ողջ-ողջ մաշկել, հերետիկոսները հազար անգամ ավելի վատ են, քան մարդասպաններն ու ավազակները: Աղաչում, պաղատում եմ ձեզ, սիրելի բարեկամներ, — շարունակեց Հոմենացը, — ուրիշ ոչ մի բանի մի հավատացեք, ոչ մի բան մի մտածեք, ոչինչ մի արեք, բացի նրանից, ինչ-որ ասված է մեր մեր սրբազան դեկրետալիաների մեջ: Այդպես վարվելով դուք կարժանանաք փառքի, պատվի, հարստության: Ամենքը ձեզ կհարգեն և ձեզանից կվախենան: Իմացեք, որ դեկրետալիաների բոլոր երկրպագուները՝ դեկրետալիստները, ամենալավ մարդիկ են աշխարհում: Եթե ուզում եք լավ թագավոր կամ գորավար ունենալ, ընտրեցեք դեկրետալիստի: Ուզում եք այնպիսի մի մարդ ունենալ, որ կարողանա ժողովրդին երկյուղի տակ պահել և հնազանդ պահել, դարձյալ ասում եմ, վերցրեք դեկրետալիստի: Ի՞նչն է պատճառը, որ մի քանի երկրներում ժողովուրդը խռովություններ և ապստամբություններ է սարքում: Այն, որ այդ երկրներում կառավարիչները դեկրետալիստներ չեն: Իսկ որ իմանաք, որքան բարիքներ են խոստանում մեզ դեկրետալիստները: Օրինակ՝ բոլոր համալսարաններն իրենց գերբի վրա ներկայացնում են մի մեծ գիրք: Ի՞նչ էք կարծում, դա ինչ գիրք է:

— Չգիտեմ, — ասաց Պանտագրյուելը, — ես երբեք չեմ նայել այդ նշանակներին:

— Դրանք դեկրետալիաներ են, — ասաց Հոմենացը: — Առանց այդ դեկրետալիաների աներևակայելի և անհասկանալի բան կլինեք ամեն մի գիտություն: Ի՞նչ է, չէի՞ք սպասում: Հա՛, հա՛, հա՛:

Այս խոսքերից հետո Հոմենացն սկսեց գկրտալ, բխկալ, հռհռալ և բերնից փսլինք թափել չորս կողմը:

— Կեցցե՛, — բարձրաձայն աղաղակեց Էպիտեմոնը, — ով հրաշալի, ով հրաշագործ, ով սքանչելի դեկրետալիաներ:

— Հայր մատակարար, գինի հասցրու, շուտ, — ասաց Հոմենացը: — Աղջիկներ, մի՞րգ մատուցեք: Այդպես ուրեմն, ես ձեզ ասում եմ, որ եթե դուք հարգեք ու պատվեք միմյանց դեկրետալիաները, դուք հարուստ ու բախտավոր կլինեք: Բացի այդ, իմացեք, որ դուք բախտավոր կլինեք մյուս աշխարհում, որի բանալիները մեր պարոն պապի ձեռքին են

գտնվում: Ո՛վ տեր, որին ես պաշտում եմ, բայց որին ես դեռ չեմ տեսել, ողորմած եղիր դեպի մեզ այժմ և հավիտյան: Հրաման տուր, որ մենք ոչ մի պակասություն չքաշենք, և որ սատանան չտիրանա մեր հոգուն: Քեզ է պատկանում իշխանությունը՝ ազատելու մեզ սատանայից, որովհետև ամեն ինչ կընթանա այնպես, ինչպես դու կցանկանաս:

Այս ասելիս Հոմենացը ջերմ արտասուքներ էր թափում, ծեծում էր կուրծքը և համբուրում խաչաձևած մատները:

— Մյաո՛ւ, մյաո՛ւ, մյաո՛ւ, — աղաղակեցին ժան վարդապետն ու Պանուրգը, անձեռոցիկով ծածկելով երեսները և այնպես ցույց տալով, իբր արտասուքներն են սրբում:

Այդ միջոցին աղջիկները դարձյալ գինի մատուցեցին և բերին մուրաբայով լիքը ամաններ: Խնջույքը կամաց-կամաց աշխուժացավ և միայն Հոմենացն էր շարունակում թաշկինակով սրբել գինուց պղծած իր աչքերը:

Ճաշից հետո մենք հրաժեշտ տվինք Հոմենացին և նրան խոստացանք գնալ Հռոմ՝ պապին խնդրելու, որ շուտով նա այցելության գա իր երկրպագուներին: Այնուհետև Պանտագրյուելը լավ պարգևատրեց աղջիկներին և վերադարձավ իր նավը:

Գլուխ XXXII

Այն մասին, թե ինչպես Պանտագրյուելը բաց ծովում զանազան հալված խոսքեր է լսում

Մենք լողում էինք բաց ծովում և միմյանց հետ ուրախ զրուցում: Հանկարծ Պանտագրյուելը ոտքի կանգնեց և նայեց չորս կողմը:

— Ընկերներ, դուք ոչինչ չե՞ք լսում, — հարցրեց նա: — Ինձ այնպես է թվում, որ օդում մի քանի մարդ խոսում են միմյանց հետ: Սակայն ես ոչ ոքի չեմ տեսնում: Հապա մի ականջ դրեք:

Մենք ականջ դրինք: Ավելի լավ լսելու համար ձեռքներս մոտեցրինք ականջներիս: Բայց ոչ մի ձայն չսեցինք:

Պանտագրյուելը, սակայն, պնդում էր, որ ինքը լսում է օդի մեջ տղամարդկանց ու կանանց ձայներ: Վերջ ի վերջո մեզ էլ այնպես թվաց, որ մի ձայն ենք լսում: Բայց գուցե մեր ականջներն են ձայն տալիս:

Բայց քանի շատ էինք ականջ դնում, այնքան ավելի պարզ էինք ինչ-որ ձայներ լսում: Վերջապես որոշակի խոսքեր լսեցինք ու ձիու խրխնջոց:

Հասկանալի է, որ վախեցանք: Ոչ որ չկար մեր չորս կողմը, միայն մենք էինք բաց ծովում, միևնույն ժամանակ մեր կողքին խոսում էին ինչ-որ անհայտ մարդիկ. ովքե՞ր էին, ի՞նչ մարդիկ էին, ոչինչ չէինք հասկանում:

— Սատանաների թակարդի մեջ ենք ընկել, ինչ է, — գոչեց Պանուրգը: — Չլինի՞ մեզ վրա ծիծաղում են, թե իսկապես դարանի մեջ ենք ընկել: Ժան վարդապետ, որտե՞ղ ես, սիրելիս, կանգնիր կողքիս, շատ եմ խնդրում: Որտե՞ղ է քո սուրբ: Փորձիր տես, հեշտությամբ դո՛ւրս է գալիս պատյանից, թե ոչ: Սուրդ բոլորովին ժանգոտած է: Մենք

կորած ենք: Լսո՞ւմ եք թնդանոթների ձայնը: Փախչենք այստեղից: Ես դա վախենալուց չեմ ասում: Ես ոչ մի բանից չեմ վախենում, բացի վտանգից: Փախչենք այստեղից, որքան կարելի է շուտ: Ղեկապետ, ետ դարձրու նավը, փուչ կենդանի: Միննույն է, մենք նրանց դիմադրել չենք կարող: Նրանք մեզանից տասն անգամ ավելի են: Բացի այդ, նրանք այստեղ իրենց տանն են, իսկ մեզ այս վայրն անձանոթ է: Նրանք մեզ կկոտորեն: Փախչենք այստեղից: Գոնե որքան կարելի է շուտ հեռանանք այստեղից:

— Ո՞վ է այստեղ փախուստի մասին խոսողը, — ասաց Պանտագրյուելը: Պետք է նախ իմանալ, թե սրանք ինչ մարդիկ են: Կարող է հանկարծ պատահել, որ մեր մարդիկ լինեն: Սակայն ես ոչինչ չեմ նկատում, թեպետ հարյուր մղոն հեռավորությամբ տեսնում եմ շուրջս: Չլինի՞ դրանք սառած խոսքեր են:

— Ինչպե՞ս թե սառած խոսքեր, — հարցրեց Էպիտեմոնը:

— Ասում են, որ սառը երկրներում խոսքերը սառչում են օդում, — ասաց Պանտագրյուելը: — Դրա մասին ես կարդացել եմ մի հին իմաստուն գրքում: Այստեղ գուցե հենց այն տեղն է, որտեղ խոսքերը հալչում են:

— Միք անհանգստանա, տեր իմ, — ասաց Պանտագրյուելին նավապետը, — հենց այստեղ է գտնվում Սառուցյալ օվկիանոսի սահմանը, որտեղ անցյալ ձմեռ կատաղի կռիվ է եղել արիմասպիցիների և նեֆիդատների^[67] միջև: Կռվողների աղաղակներն ու հարվածները, զենքերի շառաչունը, ձիերի խրխնջոցը, ճակատամարտի սարսափելի գոռում-գոչումը, — այդ բոլորը սառել մնացել է օդում, և միայն այժմ, երբ եկել է գարունը, այդ ձայները կամաց-կամաց հալվում են ու լսելի դառնում:

— Դա կարող է ճիշտ լինել, — ասաց Պանուրգը: — Եկեք որոնենք, տեսնենք, կարո՞ղ ենք այստեղ չհաված խոսքեր գտնել:

— Ահա և այդ խոսքերը, — ասաց Պանտագրյուելը և տախտակամածի վրա մի բուռ չհաված խոսքեր գցեց, որոնք նման էին գույնգույն սառը շաքարի:

Նրանց մեջ կային կարմիր, կապույտ, դեղին, կանաչ և ոսկեգօծ խոսքեր: Մեր ձեռքի մեջ տաքանալուց, նրանք ձյան պես հալվում էին, և մենք լսում էինք նրանց, թեև իմաստը չէինք հասկանում: Բավականին մեծ մի խոսք, երբ Ժան վարդապետը ձեռքերի մեջ տաքացրեց, ինչպես շագանակը, երբ նրան գցում են եռացրած ջրի մեջ:

— Իր ժամանակին դա ֆայկոնետի^[68] կրակոց է եղել, — ասաց հայր սուրբ Ժանը:

Դրանից հետո Պանտագրյուելը դարձյալ բռնեց երկու-երեք բուռ սառած խոսքեր: Նրանց մեջ բավական շատ կային հայհոյանքներ և ծաղրական խոսքեր: Նավապետն ասաց, որ դրանք երբեմն իրենք իրենց վերադառնում, մտնում են այն կոկորդները, որտեղից դուրս են եկել, և ծակում են այդ կոկորդները: Խոսքերը հալչելիս մենք լսում էինք.

— Հիպ, հիպ, հիպ: Խիս, տիխ տորոշ: Բրեդեդեն, բրեդեդակ: Ֆրը, ֆրը, ֆրը: Բու, բու, բու: Տրաք, տրաք: Օն, օն, դուուն: Գոգ, մագոգ:^[69]

Եվ շատ ուրիշ անհասկանալի խոսքեր:

Մենք հասկացանք, որ դրանք բոլորը ռազմի աղաղակներ են և ձիերի խրխնջոց: Մյուս, ավելի մեծ խոսքերը հալչելիս այնպիսի ձայն էին հանում, ասես փող են փչում: Չեք կարող երևակայել, թե ինչպես էր այդ բոլորը մեզ զվարճացնում: Ես ուզեցի մի քանի հայհոյական խոսքեր պահել, որպես հիշատակ և դրեցի դրանք ձիթապտղի յուղի մեջ, որ չհալչեն: Բայց

Պանտագրյուելն ասաց, որ միտք չունի հայիոյանքները պահել, քանի որ նավում ինչքան ուզես հայիոյանք կլսես: Ես համաձայնեցի Պանտագրյուելի հետ և իմ հավաքած հայիոյանքները ծովը գցեցի:

Գլուխ XXXIII

Այն մասին, թե ինչպես է Պանտագրյուելը ասի դուրս գալիս Գաստեր^[20] իշխանի կղզին

Հենց նույն օրը Պանտագրյուելը ասի դուրս եկավ Գաստեր իշխանի կղզին: Այդ անբերրի ու քարքարոտ կղզին ծովից այնպես էր բարձրանում, ինչպես մի ահագին ժայռ: Մենք բավական շատ քրտնեցինք, մինչև հասանք կղզու գագաթը: Բայց գագաթը մի սքանչելի վայր էր: Ամեն կողմ տեսնում էինք արգավանդ դաշտեր, կանաչագեղ պարտեզներ և այդ բոլորն այնքան գեղեցիկ էր, որ ինձ թվում էր, թե դա երկրային մի դրախտ է:

Իսկ այդ կղզու տնօրեն Գաստեր իշխանը խստաբարո և համառ մի տիրակալ էր: Նրան չէր կարելի ոչ խաբել և ոչ էլ խոսքով համոզել: Նա ոչ ոքի չէր լսում: Նա ստիպում էր անմիջապես կատարել իր բոլոր կարգադրությունները և թույլ չէր տալիս մի բոպե անգամ հետաձգել: Նավապետը մեզ պատմեց, որ մի անգամ Մարմնի Մասերի պետությունն ապստամբում է Գաստերի դեմ և չի ցանկանում նրան հնազադվել: Բայց շուտով Մարմնի Մասերի խելքը գլուխն է գալիս, և նրանք ներկայանում են Գաստերին ու ներում խնդրում: Այլ կերպ չէր էլ կարող լինել: Այլապես նրանք բոլորը քաղցից կմեռնեին:

Որպես շնորհակալություն հնազանդության համար Գաստերն էլ իր կողմից աշխարհին ծառայություն է մատուցում: Գեղարվեստ է հորինում, մեքենաներ է հնարում, արհեստներ և զանազան կատարելագործություններ է մտցնում կյանքի մեջ: Նրա հետ միասին ապրում է բարեհոգի տիկին Պենիան, կամ այլ կերպ ասած՝ Կարիքը: Որտեղ ոտք է դնում այդ բարեհոգի տիկինը, այնտեղ կատարյալ անկարգություն է տիրում՝ փակվում են պառլամենտները, ժողովուրդը չի հնազանդվում հրամաններին և բոլորը մի կողմ են փախչում, որ չընկնեն տիկին կարիքի ճանկը:

Գաստեր իշխանի ապարանքում մենք տեսանք շատ որովայնախոսներ ու որովայնամոլներ: Որովայնախոսներն անդուրեկան և չարահոգի կախարդներ էին, որոնք շարունակ միմյանց նախանձում և միմյանց հետ կռվում էին: Իսկ գալով որկրամոլներին, նրանք մշտապես ման էին գալիս մեծ-մեծ խմբերով և ոչ մի ժամանակ ոչինչ չէին անում: Նրանք բոլորը մի բանից էին վախենում՝ որ հանկարծ չնիհարեն: Գաստեր իշխանին նրանք իրենց աստվածն էին համարում: Ծառայում և պաշտում են նրան ու ամեն բանից ավելի՝ նրան են սիրում աշխարհում:

Մինչ մենք նայում էինք որովայնամոլներին, զանգը խփեցին, և ամբողջ ժողովուրդը կանգնեց շարքով ու մի ահագին շարք կազմեց: Այդ շարքի մեջ յուրաքանչյուրը կանգնեց իր տեղում, համաձայն իր աստիճանի, կոչման և դիրքի: Ամենից առաջ կանգնեցին անվանի մարդիկ, իսկ որոնք աստիճանով մի քիչ ցած էին, կանգնեցին նրանց ետևից: Մարդկանց այդ շարքն անցավ Գաստեր իշխանի առջև, ինչպես զորահանդեսի ժամանակ: Ծարքի առջևից գնում էր մի գեր ու մեծափոր երիտասարդ և տանում էր փայտի վրա ամրացրած Մեծ շատակերի կիսարձանը: Դա բանջարանոցի խրտվիլակի պես այլանդակ

մի բան էր: Նրա աչքերը փորից մեծ էին, գլուխն ամբողջ մարմնից ավելի հաստ էր, ծնոտները մեծ էին ու լայն, որոնց վրա երկու շարք պինդ ատամներ կային: Այն փայտը, որի վրա տանում էին կիսարձանը, մեջտեղի մասում դատարկ էր և այդտեղ բարակ պարան կար: Երբ մեծափոր երիտասարդը քաշում էր այդ պարանից, շատակերի ծնոտները միմյանց էին զարնվում և սաստիկ չիչխկում, ինչպես մի ահագին ընկույզարդիչ:

Որովայնամոլների ետևից գնում էին մեծ թվով ծառաներ՝ ձեռքներին բռնած թաղարներ ու զամբյուղներ: Անճոռնի օրհներգեր երգելով, նրանք Մեծ շատակերին կերակրում էին երշիկով, նրբերշիկով, ապուրով, ապխտած լեզվով, խոզապուխտով և աղ դրած մսով: Այնուհետև նրա բերանն էին դնում պաշտետ, խոզի կոտլետներ, տապակած կաքավներ, նապաստակներ, լորեր և ամեն տեսակի այլ թռչուններ: Իսկ դրանից հետո ամեն տեսակ բանջարեղեն, թխվածքներ, մուրաբաներ, տորթեր, կրեմներ: Հետո դարձյալ զինի, որ կերակուրը կոկորդում չմնա:

Երբ Պանտագրյուելը տեսավ այդ զգվելի զոհաբերությունները, այնպես զայրացավ, որ որոշեց անմիջապես վերադառնալ նավ: Էպիտեմոնը մեծ դժվարությամբ կարողացավ նրան համոզել, որ մնա և տեսնի, թե ինչով է վերջանում այս կատակերգությունը:

Բայց թափորն անցավ իր տիրակալի առջևից, և նա դարձավ անտեսանելի: Այն ժամանակ Պանտագրյուելն սկսեց դիտել հենց իրեն՝ Գաստեր իշխանին: Եվ ահա թե ինչ իմացավ Պանտագրյուելը նրա մասին:

Իրեն կերակրելու համար Գաստերը նախ և առաջ հնարել է երկրագործությունը, այսինքն հողը մշակելու արվեստը, որպեսզի հացահատիկ ստանան: Դրանից հետո նա հնարել է ռազմական արվեստը, որպեսզի հացը պաշտպանի թշնամիներից: Այնուհետև նա հորինել է ջրաղացներ, հողմաղացներ և հազար ու մի ուրիշ մեքենաներ, որպեսզի հացահատիկն աղա, որպեսզի հացը համեղ դարձնի, կրակը, որպեսզի հացը թխի, ժամացույցը, որպեսզի իմանա, որքան ժամանակ է հարկավոր, որ հացը թխվի:

Պատահել է, որ մի որևէ երկրում հացահատիկը բերք չի տվել: Գաստերը միջոցներ է հնարել, հացահատիկը մի երկրից մյուս երկիրը փոխադրել: Նա հնարել է սայլն ու բեռնասայլը: Այնտեղ, որտեղ եղել են ծովեր ու գետեր, նա հնարել է զանազան տեսակի նավեր հացը ջրի վրայով տեղափոխելու համար:

Եղել են այնպիսի տարիներ, որ երաշտի պատճառով ցանած հացահատիկը չորացել է և չի ծլել: Կամ ընդհակառակը, եղանակը չափազանց անձրևային է եղել և հացահատիկը փտել է հողի մեջ: Պատահել է, որ կարկուտը փչացրել է ցանքը: Հենց մեր գալուց առաջ Գաստերը միջոց էր գտել իր ցանկացած ժամանակ անձրև բերելու կամ անձրևը խափանելու, երբ պետք չի եղել անձրև:

Պատահում էր և մի ուրիշ դժբախտություն՝ թալանչիներն ու ավազակները գողանում էին դաշտերից հացահատիկները: Դրա դեմ էլ Գաստերը գտել է քաղաքներ, ամրոցներ և դղյակներ կառուցելու արվեստը՝ հացը պահպանելու համար: Թալանչիներին ջարդելու ու ոչնչացնելու համար նա գտել է օտարների բերդերը վերցնելու եղանակը՝ պարսպակործան մեքենաների ու բարանների օգնությամբ: Այնուհետև ժամանակ անցնելուց հետո նա հնարել է թնդանոթը, բոմբարդը և մորտիրո, որոնք արձակում են երկաթե, կապարե և պղնձե արկեր: Այդ արկերից շատերն ավելի ծանր են լինում, քան ամենաձանր գնդանը: Արձակվում են դրանք վառողի ուժով, որ ավելի սարսափելի բան է, քան որոտն ու կայծակը, որովհետև մեծ քանակությամբ մարդիկ է կոտորում:

Բայց այնպես էլ է պատահել, որ Գաստերն ինքն է պաշարված եղել թշնամիներով: Այն ժամանակ նա միջոցներ է հնարել իր բերդերը ռմբակոծությունից պաշտպանելու և թշնամու արկերը օդի մեջ պահելու համար: Օրինակ, նա այսպիսի մի փորձ է արել: Բրոնզե մեծ թնդանոթի մեջ լցրել է ծծումբը հանած և մի փոքր քափուր խառնած վառող, երկաթի մի մեծ արկ և քսանմեկ հատ կոտորակ, որոնցից մի քանիսը կյոր են եղել, մյուսներն արտասավաձև: Հետո թնդանոթից տասնվեց քայլ հեռու և ուղիղ նրա բերանի դիմաց Գաստերը կանգնեցրել է իր մանկլավիկներից մեկին, իսկ մանկլավիկի ու թնդանոթի մեջտեղում կախ է արել մի մեծ մագնիս: Դրանից հետո նա թնդանոթն արձակել է: Թնդանոթից արձակված արկն ու կոտորակները պետք է տեղնուտեղը սպանեին մանկլավիկին, բայց երբ նրանք մոտեցել են մագնիսին, իսկույն կորցրել են իրենց ուժը և սկսել են պտտվել մագնիսի շուրջը և դրանցից ոչ մեկը չի հասել մինչև մանկլավիկը:

Բացի այդ գյուտերից, Գաստեր իշխանն արել է նաև ուրիշ շատ գյուտեր, և այդ ժամանակվանից սկսած նրա հզորությունը դարձել է անսասան:

Գլուխ XXXIV

Այն մասին, թե ինչպես է Պանտագրյուելը քամի բարձրացնում Խանեֆ^[71] կղզու մոտերքում

Հետևյալ օրը մենք հասանք Խանեֆ կղզին: Բայց մոտենալ կղզուն չկարողացանք, որովհետև ամենևին քամի չկար: Օրորվելով մի կողմից դեպի մյուսը, մեր նավը հազիվհազ շարժվում էր տեղից, թեև բոլոր առագաստները պարզված էին:

Մենք բոլորս մռայլ ու գայրացած նստած էինք տախտակամածին և ամենևին իրար հետ չէինք խոսում: Պանտագրյուելը ցանցանոհի մեջ պառկած ննջում էր: Էպիտեմոնն զբաղված էր աստրոլյաբիայով:^[72] Ժան վարդապետը գնացել էր խոհանոց՝ տեսնելու, թե ինչպես են այնտեղ գնում գործերը: Պանուրզը օճառի պղպջակներ էր թողնում: Պոնոկրատը խուտուտ էր ածում իր կոնաստակը, որպեսզի ծիծաղի: Կարապալիմը ընկույզի կեղևից մի գեղեցիկ ու չորսթևանի հողմադաց էր շինում: Քսենոմանը նորոգում էր մի հին լապտեր:

Այդ ժամանակ Ժան վարդապետը խոհանոցից վերադարձավ ու տեսավ, որ Պանտագրյուելը արթնացել է:

— Այս ինչ պատիժ է, ասաց Ժանը, — մի հնար չկա՞ քամի բարձրացնելու, որ տեղներիցս շարժվենք:

— Ոչ, դու այն ասա, — ասաց Պանուրզը, — ի՞նչ անեմ, որ այս անիծված տաղտկությունից ազատվեմ:

— Ինձ էլ մի միջոց ցույց տուր, — ոտքի կանգնելով ասաց Գիմնաստը, — որ աչքերս չսևանան:

— Իսկ ի՞նձ, — իրեն քորելով ավելացրեց Պոնոկրատը, — ինչպես ազատվեմ այս անիծված քնից:

— Սիրելի բարեկամներ, — ասաց Պանտագրյուելը, — ձեր բոլոր հարցերին միայն մի պատասխան կա: Բայց քանի որ սոված փորով չի կարելի գիտություն սովորել, ուստի մենք չպետք է խոսենք, այլ գործենք:

Այս ասելիս Պանտագրյուելը ձգեց ճաշի զանգի պարանը, իսկ Ժան վարդապետը դարձյալ վազեց խոհանոց:

— Ի՞նչ մարդիկ են ապրում այս կղզում, — հարցրեց Պանտագրյուելը փոքր-ինչ լռելուց հետո:

— Այստեղ ապրում են ամեն տեսակի երեսպաշտներ, կեղծ բարեպաշտներ, կեղծ սրբեր և սուտ ճգնավորներ, — պատասխանեց Քսենոմանը: — Նրանք ոչ մի աշխատանքով չեն զբաղվում և ապրում են միայն ճանապարհորդներից ստացած ողորմությամբ:

— Որ այդպես է, ես այնտեղ չեմ գնա, — ասաց Պանուրգը, — կեղծավորներ, կեղծ բարեպաշտներ ու սուտ ճգնավորներ, թող գրողը ձեզ բոլորիդ տանի և ջհանդամը չքվեր:

Այդ ժամանակ սպասավորները սեղանները շարժեցին, սփռոցներ փռեցին, բերին գավաթներ, սկավառակներ ու թասեր: Ժան վարդապետը հացթուխների օգնությամբ սեղանների վրա դրեց խոզապուխտով լցրած չորս ահագին կարկանդակ, որոնք այնքան մեծ էին, կարծես չորս բուրգերով ամրոցներ լինեին:

Աստծուն է հայտնի, թե որքան կերանք ու խմեցինք: Մենք դեռ միրգը չկերած՝ բարձրացավ հյուսիս-արևելյան քամին, որից մեր առագաստները փքվեցին: Մենք ուրախ աղաղակներ բարձրացրինք, երբ մեր նավը շարժվեց տեղից և առաջ լողաց, ակոսելով փրփրակալած ջուրը:

Երբ պտուղներ մատուցեցին, Պանտագրյուելը հարցրեց.

— Ի՞նչ էք կարծում, բարեկամներ, իմ սոված պատասխանը ձեզ օգնեց թե ոչ:

— Այո, — ասաց Պանուրգը, — երդվում եմ, որ այլևս չեմ ձանձրանում:

— Իմ աչքերն էլ այլևս չեն սևանում, — ասաց Գիմնաստը:

— Իմ քունն էլ բոլորովին փախավ, — ավելացրեց Պոնոկրատը:

— Եվ այն էլ ի՞նչ քամի բարձրացրինք մենք, — ասաց Պանտագրյուելը: Մի տեսեք, ինչպես են ուռել առագաստները: Քանի մենք ինքներս մռայլ ու տաղտկալի տրամադրության մեջ էինք, միաժամանակ տաղտկություն էր տիրում բնության մեջ: Բայց հենց որ մեր տրամադրությունը լավացավ, բնությունն էլ մեզ հետ ուրախացավ: Բարձրացնենք ուրեմն մեր գավաթները և թող հեռու կորչի մեզանից տաղտկությունը:

Գլուխ XXXV

Այն մասին, թե ինչպես Պանուրգը նավի կատու Ռոդիկիարդուսին սատանայի տեղ է ընդունում

Բարենպաստ քամին և ուրախ գրույցները շարունակվում էին, երբ Պանտագրյուելը նկատեց հեռվում մի լեռնոտ երկիր:

— Այդ ի՞նչ կղզի է, — հարցրեց նա Քսենոմանին:

— Դա սրիկանների կղզին է, — ասաց Քսենոմանը: — Այդտեղ ապրողները բոլորը գողեր ու ավազակներ են: Չարժե այդ կղզին մտնել, բայց այդտեղ ավի մոտ մի հրաշալի աղբյուր կա, իսկ աղբյուրի շուրջը՝ մի մեծ անտառ: Մեր նավակազմը կարող է ջրի ու վառելիքի պաշար վերցնել:

— Շատ եմ խնդրում, չմտնենք այդ կղզին, — ասաց Պանուրգը, — այդտեղ ապրողները մարդակերներից էլ վատ են, նրանք մեզ ողջ-ողջ կուտեն: Լսո՞ւմ եք, ինչպես են նրանք ահազանգում: Բայց գուցե դա ինձ թվում է միայն: Հեռանանք, հեռանանք այստեղից:

— Մենք պետք է անպատճառ ավի դուրս գանք, — ասաց Ժան վարդապետը, — հակառակ դեպքում երբեք չենք հանգստանա նավով ճանապարհորդելուց: Ավազակներից չպետք է վախենալ, մենք նրանց բոլորին կկոտորենք: Դեհ, շուտ արեք, մոտեցեք ավին:

— Այդ սատանա վարդապետը ոչ մի բանից չի վախենում, — ասաց Պանուրգը: — Մի քիչ էլ պետք է ուրիշների մասին մտածել, մենք էլ քեզ պես մեր գլխիցը հո ձեռք չենք քաշել: Այստեղ բոլորը հո քեզ պես գիժ չեն: Շատ եմ խնդրում, պարոններ, այդ կղզում ավի մի իջեք: Ականջ մի դրեք վարդապետին, նա ինքն էլ չի հասկանում, թե ինչ է խոսում:

— Գրողի ծոցը գնա, անպիտան վախկոտ, — ասաց Ժանը, — վախից քիչ է մնում լուծես: Եթե այդքան սիրտդ դող է ընկել, ավի մի դուրս գա, մի ծակ գտիր, մեջը մտիր:

Այդ որ լսեց, Պանուրգն անմիջապես մտավ նկուղը և թաքնվեց պաքսիմատների պարկերի արանքում:

— Լսեցեք, ինչ եմ ասում, — ասաց Ժան վարդապետը, — այն ժամանակ, երբ մեր տղերքը զբաղված կլինեն նավի ջրի պաշար փոխադրելով, չէ՞իք ցանկանա արդյոք մի քիչ զվարճանալ: Եկեք բոլոր թնդանոթները միանգամից կրակենք: Ա՛յ թե զվարճալի բան կլինի:

— Համաձայն եմ, — պատասխանեց Պանտագրյուելը, — կանչեցեք այստեղ գլխավոր ռմբաձիգին:

Ռմբաձիգը եկավ, լցրեց թնդանոթը և կրակեց: Կրակոցի ձայնը լսելուն պես մյուս նավերն էլ սկսեցին կրակել իրենց թնդանոթները: Այնպիսի դրդոց բարձրացավ, որ սպուշ կտրած Պանուրգը շապկանց դուրս վազեց նկուղից: Աջ ձեռքով նա բռնել էր նավի կատվին՝ Ռոդիլյարդուսին, որը ճանկերով կախ էր ընկել նրա շապկից և կապիկի պես շարժում էր ծնոտները:

— Փրկեցեք ինձ, — բղավում էր նա, — հենց այս րոպեիս տեսա սատանաների մի ամբողջ ռհմակ: Երևի այսօր սատանաները հարսանիք են սարքել: Տեսեք ի՞նչ ծուխ է բարձրացել:

Այս ասելիս Պանուրգը ցույց տվեց թնդանոթներից առաջացած ծուխը, որ պատել էր բոլոր նավերը:

Բոլորը ծիծաղեցին, բայց Ժան վարդապետը քիթը բռնեց և ցույց տվեց Պանուրգի շապիկը: Պանտագրյուելը նկատեց, որ Պանուրգի ամբողջ շապիկն ապականված է, իսկ մարմինը ճանկոտված է և արյունոտ:

— Պանուրգ, սիրելիս, — ասաց Պանտագրյուելը, հագիվ պահելով ծիծաղը, — ինչո՞ւ ես այդ կատվին այդպես պինդ բռնել:

— Ինչպե՞ս թե կատվին, — զարմացած հարցրեց Պանուրզը, — գրողը սրան տանի, ես էլ կարծել եմ, թե սատանա է կախ ընկել շապկիցս: Նա իմ ամբողջ մարմինը ճանկոռտել է:

Այս ասելով նա կատվին շարտեց տախտակամածի վրա:

— Գնացեք շուտով այստեղից, — ասաց Պանտագրյուելը, — մաքրվեցեք և նոր շապիկ հագեք:

— Չլինի՞ դուք կարծում եք, որ վախեցել եմ, — ասաց Պանուրզը, — ամենևին ոչ: Այս բոլորը ծիծաղելի է ինձ համար: Ի՞նչ անենք, որ շապիկս կեղտոտված է, բայց ես ամենևին չեմ վախեցել: Պանուրզը ոչ մի բանից չի վախենում, բացի վտանգից: Այդպես եմ ես: Հիմա խմենք:

Գլուխ XXXVI

Այն մասին, թե ինչպես է Պանտագրյուելը հասնում Հնչուն կղզին

Երեք օր լողում էինք առանց արկածի: Չորրորդ օրը հեռվում երևաց մի ցամաք: Նավապետը մեզ ասաց, որ դա Հնչուն կղզին է: Կղզու կողմից շարունակ լսվում էր խառնաշփոթ մի աղմուկ: Կարելի էր կարծել, որ այնտեղ միաժամանակ խփում են մեծ, միջակ ու փոքր զանգեր, ինչպես անում են Փարիզում, Նանտում և ուրիշ մեծ քաղաքներում մեծ տոներին: Եվ քանի մոտենում էինք կղզուն, այնքան պարզ էինք լսում այդ զանգահարությունը:

— Կարծես այս կղզուց թռել հեռացել է մեղուների մի պարս, — ասաց Պանտագրյուելը, — ու նրանց ետ բերելու համար ծեծում են կաթսաներ և ուրիշ անոթներ: Մի լավ ականջ դրեք:

Երբ մենք ավելի մոտեցանք կղզուն, զանգերի ձայնի հետ միաժամանակ լսեցինք և անընդմեջ երգեցողություն: Ակներև էր, որ տեղացիներն էին երգում: Կղզու մոտ Պանտագրյուելը նկատեց մի փոքրիկ ժայռ: Ժայռի ստորոտում կար փոքրիկ պարտեզով շրջապատված մի խրճիթ: Պանտագրյուելը որոշեց մտնել այդ խրճիթը:

Խրճիթում մենք տեսանք մի բարեհոգի ճգնավորի՝ Բրագիբյուս անունով, որը մեզ շատ տարօրինակ կերպով հյուրասիրեց. նա մեզ ստիպեց ամբողջ չորս օր պաս պահել: Ճգնավորը հայտնեց, որ այլ կերպ չեն թողնի մեզ կղզին մտնել, որովհետև այժմ այնտեղ տարվա չորս եղանակների պասն է:

— Չեմ հասկանում, դա ի՞նչ հանելուկ է, — ասաց Պանուրզը:

— Հավանորեն դա չորս քամիների պասն է: Չե՞ որ պաս պահողները քամիով են կերակրվում: Մի՞թե դուք ուրիշ բան ու գործ չունեք, բացի պաս պահելուց: Ճիշտն ասած, դա շատ ձանձրալի գործ է: Առանց պասի էլ մենք մեզ շատ լավ կզգայինք:

— Ո՛չ, — ասաց ճգնավորը, — այժմ անկարելի է պաս չպահել: Այդպես է մեր կարգը: Իսկ ով համաձայն չի մեր կարգին, նա հերետիկոս է, որին պետք է այրել խարույկի վրա:

— Է՛հ, հայրիկ, — ասաց Պանուրգը, — ծովի վրա ես ավելի շատ եմ վախենում ջրասույզ լինելուց, քան թե ցամաքում կրակի մեջ այրվելուց: Ինչ արած պաս էլ կպահենք: Պաս պահելն այնքան էլ դժվար բան չի: Անհամեմատ ավելի դժվար է այնպես անել, որ մարդու փորը քաղցից չզալարվի:

Այդպես ուրեմն, սկսեցինք պաս պահել: Ճիշտն ասած՝ պաս պահելն այնքան էլ հեշտ բան չէր: Առաջին օրը մենք պաս պահեցինք առանց հանգստանալու և առանց ժամկետի, երկրորդ օրը՝ անհմաստ ու անմիտ կերպով, երրորդ օրը՝ լեզուներս քարշ գցած, չորրորդ օրը պասը մեզ համար ոչ թե կյանքի, այլ մահու խնդիր էր: Այդպես էր այստեղի սովորությունը:

Երբ մեր պասը վերջացավ, ճգնավորը մեզ նամակ տվեց, ինչ-որ մի Ալբիան Կամաշի անունով, որը Հնչյուն կղզու եկեղեցու պահապանն էր: Դա մի շատ լավ ծերուկ էր, բոլորովին ճաղատ, մուգ կարմիր այտերով և մոխրագույն քթով: Երբ նա կարդաց նամակում, որ մենք պաս ենք պահել այնքան, որքան պահանջվում է, մեզ շատ լավ ընդունեց, հիանալի հյուրասիրեց և ցույց տվեց մեզ կղզու տեսարժան վայրերը:

Բանից պարզվեց, որ Հնչյուն կղզում բացառապես թռչուններ էին ապրում: Թռչունները մեծ էին, գեղեցիկ, չափազանց քաղաքավարի և շատ նման էին իմ հայրենակիցներին: Նրանք ուտում, խմում և քնում էին ճիշտ այնպես, ինչպես մարդիկ: Առաջին անգամ տեսնելիս կարելի էր կարծել, որ դրանք իսկապես մարդիկ են, բայց այդպես չէր: Ծերունին մեզ ասաց, որ դրանք ոչ քահանա են, ոչ աշխարհական: Նրանց փետուրները նույնպես տարօրինակ էին թվում մեզ՝ մի քանիսի փետուրներն սպիտակ էին, մյուսներինը՝ սև, ուրիշներինը՝ մոխրագույն կամ կարմիր: Կային թռչուններ, որոնց կեսը սև էր, կեսը՝ սպիտակ, կամ կեսը՝ սպիտակ, կեսը՝ բաց կապույտ: Նրանց արուերին անվանում էին կլերգ, մոնագ, պրետրագ, արբեգ, էվեգ, կարդենգ և վերջապես պապագ: Էզերին անվանում էին կլերգես, մոնագես, պրետրագես, արբեգես, էվեգես, կարդենգես, պապագես:

Մեզ շատ էր զարմացնում այն, որ ամբողջ կղզում միայն մի պապագ էր ապրում: Եկեղեցու պահապանն ասաց, որ այդպես է այստեղի սովորությունը: Պարզվեց, որ այստեղի թռչունները կարող են փոխակերպվել մի տեսակից մի այլ տեսակի, օրինակ՝ կլերգները կարող են դառնալ պրետրագներ և մոնագներ: Պրետրագները կարող են դառնալ էվեգներ՝ կարդենգներ: Կարդենգներից ընտրում են պապագ: Եվ ինչպես որ մեղուների փեթակում լինում է միայն մի մայր, իսկ աշխարհս լուսավորում է միայն մի արեգակ, այնպես էլ Հնչյուն կղզում կար միայն մի պապագ:^[73]

Ճիշտ է, 2660 ամիս սրանից առաջ կղզում հանկարծ հայտնվել են երկու պապագ: Բայց դա եղել է մի կատարյալ աղետ: Թռչունների մի մասը հարել է մի պապագին, մյուս մասը՝ մյուս պապագին: Թռչուններից մի քանիսը հանկարծ պապանձվում են և այլևս չեն երգում: Մյուսները թույլ չեն տալիս զանգերը խփել: Պապագների կողմնակիցները հարձակվում էին միմյանց վրա, կռվում էին իրար հետ և մշտապես գժտություն էր տիրում նրանց միջև: Երկուդ կար, որ կղզին կարող է մնալ առանց բնակիչների: Այս խառնակ ժամանակ օգնության են կանչում օտարերկրյա կայրների, թագավորների, դուքսերի, կոմսերի, բարոնների: Խաղաբարները եկան և կատարեցին իրենց գործը, բայց խառնակությունը վերջացավ միայն այն ժամանակ, երբ պապագներից մեկը մեռավ, և ամբողջ կղզում մնաց մի պապագ:

Մենք հարցրինք պահապանին, թե ի՞նչն է պատճառը, որ այդ թռչունները ամբողջ ժամանակ երգում են: Պահապանն ասաց, որ երգել նրանց հրամայում են զանգերը, որոնք կախված են նրանց վանդակների վերևում:

— Եթե ցանկանում եք, — ասաց նա, — ես կստիպեմ երգել այն մոնագներին, որոնց գլխներին վեղար կա:

— Շատ ցանկալի է, — ասացինք մենք:

Պահապանը վեց անգամ զանգը խփեց: Չանգի ձայնը որ լսեցին, վազելով եկան մոնագները և ձայները գլուխները զցեցին:

— Իսկ եթե ես զանգերը խփեմ, — ասաց Պանուրզը, — կերգե՞ն այ նրանք, որոնց փետուրները ապխտած ձկան գույն ունեն:

— Իհարկե, — պատասխանեց պահապանը:

Պանուրզը զանգերը խփեց, և այդ սպիտակ թռչուններն իսկապես երգեցին, բայց նրանց ձայնը խռպոտ էր և անդուրեկան: Պահապանը մեզ ասաց, որ այդ թռչունները կեղծ բարեպաշտներ են և բացի ձկներից ուրիշ բան չեն ուտում:

— Դուք մեզ բացատրեցիք, — ասաց Պանտագրյուելը պահապանին, — որ այդ թռչունները, կլերգներից սկսած, կարող են փոխակերպվել և մեկից մյուսը դառնալ: Բայց կլերգները որտեղի՞ց են առաջ եկել:

— Դրանք թռչում գալիս են մեզ մոտ ծովի մյուս կողմից, — ասաց պահապանը: — Նրանց մեծ մասը թռչում գալիս է մեզ մոտ մի մեծ ու զարմանալի երկրից, որը կոչվում է «Հաց չկա», մյուս մասը՝ ուրիշ երկրից, որ գտնվում է մեզնից դեպի հարավ և կոչվում է «Չափազանց շատ են նրանք»: Կլերգները թողնում են այնտեղ իրենց հայրերին, մայրերին ու բարեկամներին և մեծ երամներով թռչում են մեզ մոտ: Ասենք թե մի տան մեջ շատ երեխաներ կան: Եթե նրանցից յուրաքանչյուրին ընտանիքի ունեցվածքից մաս հանեն, այն ժամանակ ամբողջ տունը կավերվի: Այդ պատճառով ավելորդ երեխաներին ծնողներն ուղարկում են մեր կղզին: Հենց դրանք են կլերգները:

— Ինքնըստինքյան հասկանալի է, — շարունակեց պահապանը, — որ այդ մարդկանց մեծ մասը կաղեր են, կույրեր, սապատավորներ, ընդհանրապես ողորմելի արարածներ, որոնք գուր տեղը ծանրաբեռնում են երկիրը: Մովորաբար մայրերը սափրում են այդպիսի երեխաների գագաթի բոլոր մազերը և սափրելիս մրթմրթում ինչ-որ անհասկանալի աղոթքներ: Դրանից հետո երեխաները կլերգ են դառնում ու թռչում գալիս են մեզ մոտ: Չզիտեմ ինչպես բացատրեմ այն, որ դրանից հետո կլերգները մոռանում են տանը երգած իրենց սիրուն երգերը և երգում են միայն տաղտկալի և տխուր աղոթքներ: Եվ այնուհետև երիտասարդ թե ծեր՝ նրանք միշտ անիծում են իրենց ազգականներին նրա համար, որ իրենց թռչուն են դարձրել:

— Բայց ի՞նչն է խանգարում նրանց նորից թռչել և տուն վերադառնալ, — հարցրի ես:

— Ոմանք այդպես էլ անում են, — ասաց պահապանը, — բայց դրանց թիվը շատ քիչ է: Թռչելուց առաջ նրանք իրենց փետուրները հանում զցում են եղինջի մեջ:¹⁷⁴

Եվ իրոք, եղինջների մեջ նկատեցինք փետուրների մի փոքրիկ կույտ:

Դրանից հետո պահապանը մեզ տարավ մի մեծ ու զով ճաշարան:

— Գիտեմ, — ասաց նա, — որ Բրազիլիայում ճգնաժամը ձեռք չորս օր պատ է պահել տվել: Այստեղ, ընդհակառակը, չորս օր դուք անընդհատ կուտեք, կիմեք որքան սիրտներդ ուզի:
Հնարավոր չէ ասել, թե որքան կերանք ու խմեցինք այդ չորս օրվա ընթացքում:

Գլուխ XXXVII

Այն մասին, թե ինչպես եկեղեցու պահապանը ցույց տվեց մեզ հոշակավոր պապագին

Երբ մի քիչ կերանք, խմեցինք, Ժան վարդապետը այսպիսի հարց տվեց պահապանին.

— Այս կղզում կան թռչուններ, որոնք ոչ վարում են, ոչ ցանում և նրանց ամբողջ բան ու գործն այն է միայն, որ տեղից տեղ թռչեն և կոկորդիներում որքան ուժ կա երգե՞ն: Ո՞րտեղից եք ստանում այդքան բարիքները այսքանին կերակրելու համար:

— Աշխարհիս բոլոր երկրներից, — պատասխանեց պահապանը, — միայն հյուսիսային մի քանի երկրներ խոռվարարներ դուրս եկան, և նրանցից մենք այլևս ոչինչ չենք ստանում:^[75]

— Նրանք կզոջան, կտեսնեք, որ կզոջան, — ասաց Ժան վարդապետը, — լցրեք ձեր գավաթները, սիրելի բարեկամներ:

— Իսկ դուք ո՞րտեղացի եք, — հարցրեց պահապանը:

— Փրանսիացի, — ասաց Պանուրգը, — Տուրենից:^[76]

— Տուրենից մենք շատ բարիքներ ենք ստանում, — ասաց պահապանը: Ասում են, որ շուտով Տուրենի դուքսը ոչինչ չի ունենա ուտելու, որովհետև նրա բոլոր փասիանները, կաքավները, հնդկահավերը և ուրիշ թռչուններ ծառայում են որպես կեր մեր սրբազան թռչունների համար: Մի լավ նայեք այդ թառին, տեսեք, թե ինչ թռչուններ կան նստած: Նրանք բոլորն ուտում են Տուրենից ստացված բարիքները: Բայց և ինչպե՞ս են երգում, ոչ մի սոխակ նրանց չի հասնի: Դեհ, լցրեք, խմենք:

— Գրողը տանի ձեզ, — բացականչեց Պանուրգը, — քեֆը ձերն է, այժմ աշխարհում ձեզ պես ապրող չկա:

— Մյուս աշխարհում ավելի լավ կապրենք, — ասաց պահապանը, — խմում եմ ձեր կենացը:

Խնջույքի երրորդ օրը Պանտագրյուելը հայտնեց, որ անպատճառ ուզում է տեսնել պապագին:

— Դա այնքան էլ հեշտ բան չէ, — ասաց պահապանը, — պապագը չի սիրում մարդկանց աչքին երևալ: Սակայն ես մի կերպ այնպես կանեմ, որ դուք նրան տեսնեք:

Այս ասելուց հետո նա դուրս եկավ և թողեց մեզ, որ ճաշը վերջացնենք:

Քառորդ ժամ հետո պահապանը վերադարձավ և պատվիրեց մեզ, որ հետևենք իրեն: Գաղտագողի, առանց ձայն ու ծպտուն հանելու, նա մեզ տարավ մի շքեղ վանդակի մոտ,

որի մեջ նստած էր պապագր: Նրա հետ միասին նստած էին վանդակում երկու փոքրիկ կարդենգ և վեց մեծ ու գեր էվեգ:

— Ինչ հիմար կենդանի է, — ասաց Պանտագրյուելը պապագին նայելիս: — Իսկական ապուշ է:

— Ի սեր աստծո, կամաց խոսեցեք, — ասաց պահապանը, — պապագն ականջներ ունի:

— Բայց ճիշտ եմ ասում, իսկական ապուշի նման է:

— Իմացեք, վայն եկել է ձեզ տարել, եթե նա հանկարծ լսի ձեր պղծախոսությունը, — ասաց պահապանը: — Տեսնո՞ւմ եք, ինչպիսի ահագին ջրամբար է շինված նրա վանդակում: Այդ ջրամբարից դուրս կթռչեն որոտ ու կայծակ և ձեզ հարյուր կանգուն գետնի տակով կանեն: Չգույշ եղեք:

— Եթե այդպես է, այն ժամանակ ավելի լավ է գնանք քեֆ անելու, — ասաց Ժան վարդապետը:

Ճաշարան վերադառնալիս տեսանք կանաչ գլխով մի ծեր էվեգ: Էվեգը ծառի ստվերում պառկած էր: Նրա կողքին նստած էր մի ջահել արբեգես և անընդհատ երգում էր:

— Այ քեզ բա՛ն, — ասաց Պանուրգը, — արբեգեսի հոգին դուրս է գալիս երգելով, իսկ այս հիմար ծերունին խոնփացնելով քնած է և ամենևին հոգը չէ: Սպասեցեք, ես նրան կստիպեմ, որ երգի:

Այդ ասելով Պանուրգը խփեց վանդակի վերևում կախված զանգին: Էվեգը շարունակում էր խոնփացնել:

— Տեսնում ես այս քավթառին, տեղից էլ չի շարժվում, — բարկացած ասաց Պանուրգը, — ես քեզ կստիպեմ երգել:

Պանուրգը մի քար վերցրեց և գնաց դեպի վանդակը:

— Սպասիր, — գոչեց պահապանը, — կանգնիր քեզ ասում են: Եթե ցանկություն ունես մեկին սպանելու, այն ժամանակ սպանիր ում կուզես՝ թագավորին, կայսրին, նույնիսկ երկնային հրեշտակին, պապագն այդ բոլորը քեզ կների: Բայց վայ քեզ, եթե դու ձեռք տաս այս սրբազան թռչուններից մեկն ու մեկին: Ոչ միայն դու կկորչես, այլև քո բոլոր ազգականները և ծանոթները կդժբախտանան: Լավ նայիր այդ ջրամբարին:

— Այն ժամանակ մեզ մի բան է մնում անելու, քեֆ անել, — ասաց Պանուրգը:

Երրորդ օրը ճաշից հետո պահապանը մեզ հրաժեշտ տվեց: Մենք նրան որպես հիշատակ մի գեղեցիկ դանակ նվիրեցինք: Ծերունին շատ զգացվեց և ինքն էլ իր կողմից մեծ քանակությամբ թարմ պաշարեղեն ուղարկեց մեր նավը: Բացի այդ, նա մեզանից խոսք առավ, որ վերադարձին դարձյալ այցելենք իրեն:

Գլուխ XXXVIII

Այն մասին, թե ինչպես այցելեցինք Երկաթե գործիքների և Խարդավանքի կղզիները

Լավ կուշտ կերած, ուրախ և գոհ սրտով շարունակեցինք մեր ճանապարհը: Երկու օր հետո մեր նավը կանգ առավ Երկաթե գործիքների կղզու մոտ: Դա մի ամայի և անմարդաբնակ կղզի էր՝ ամբողջապես ծածկված մեծ-մեծ ծառերով: Ծառերի վրա աճում էին բահեր, թիեր, մանգաղներ, գերանդիներ, սղոցներ, կացիներ, մկրատներ, ունեյիներ և արքաններ: Մի քանի ծառերի վրա էլ աճում էին սրեր, թրեր, դանակներ և սուսերներ:

Հենց որ մի փոքր շարժում էինք ծառերը, այդ բոլոր Երկաթե գործիքները թթի պես գետնին էին թափվում: Բացի այդ, վայր ընկնելիս նրանք ընկնում էին այնպիսի խոտերի վրա, որոնք կոչվում են «պատյան», և մինչև կոթը մտնում էին նրանց մեջ:

Իհարկե, պետք էր զգուշությամբ թափահարել ծառերը, այլապես այդ գործիքները կարող էին ընկել մարդու գլխի կամ կրծքի վրա և ծանր վիրավորել:

Մի քանի ծառերի տակ ես տարօրինակ խոտեր տեսա, որոնք նման էին տեգի, նիզակի, նետի, գեղարդի: Այդ խոտերը բարձրանում հասնում էին այն ծառերի բարձրությանը, որոնց վրա բուսնում էին երկաթե խայթերը: Խայթերն անմիջապես կաչում էին խոտերին, և այդ եղանակով ստացվում էին իսկական տեգեր և գեղարդներ:

Պարզ է, որ լինում էին հաճախ և սխալներ: Օրինակ՝ տեգը պատահում էր ոչ թե երկաթե խայթի վրա էր ընկնում, այլ սովորական ավելի, և պինդ կաչում էր նրան: Ուզեին չուզեին, դրանով պետք է բակն ավելին: Մի նիզակ էլ հանդիպում էր պարտեզի մկրատի: Այդ էլ գուր չէր անցնում: Այդ նիզակով կտրում էին ծառերի ավելորդ ճյուղերը: Գեղարդի կոթը պատահում էր երկաթե գերանդուն: Դա էլ էր պետք գալիս՝ այդ գերանդով խոտ էին հնձում:

Այդ բոլոր հրաշքները մեզ շատ էին զարմացնում: Բայց հետո երևաց, որ Խարդավանքի կղզին, որին մենք հասանք հետևյալ օրը, ավելի ևս հրաշալի էր: Այնտեղ մենք տեսանք երկու քառանկյունի ժայռ, որոնք զարմանալի նման էին խաղոսկրերի: Հեռվից նրանք այնպես էին փայլում, որ ես կարծում էի, թե դրանք սառցե ժայռեր են: Բայց նավապետը մեզ ասաց, որ դրանք խաղոսկրներ են, և նրանց չորս կողմն ապրում են թղթախաղի սարսափելի սատանաներ: Սատանաներից մեկին անվանում են Տուգ, մյուսին՝ Թագավոր, երրորդին՝ Վալետ, չորրորդին՝ Տասնոց, հինգերորդին՝ Իննանոց, և այլն: Երբ թուղթ խաղացողները խաղի ժամանակ գոչում էին «Տուգ, Վալետ, Ութանոց» և շրիկացնում էին խաղաթղթերը, այն ժամանակ սատանաները գլխապատառ թոչում գալիս էին նրանց մոտ: Իհարկե, սատանաները մշտապես թուղթ խաղացողների մոտ չէին գալիս: Կարող էր այնպես պատահել, որ նրանց արդեն կանչած լինեին ուրիշ տեղ:

Խարդավանքի կղզու մոտ շատ շատերն են կորել ու անհետացել: Այդ պատճառով մենք այդտեղ չմնացինք, և հենց որ համընթաց հողմն սկսեց, շարունակեցինք մեր ճանապարհը:

Գլուխ XXXIX

Այն մասին, թե ինչպես ընկանք Չնդան կղզին, որտեղ ապրում էր Մռռան Կատու՝ աղվամագով ծածկված կատուների մեծավորը^[77]

Շուտով մոտեցանք Չնդան կղզուն: Պանտագրյուելը չէր ուզում մտնել այդ կղզին, և լավ կաներ, որ չմտներ: Այդտեղ մենք շատ անախորժությունների հանդիպեցինք:

Բանն սկսվեց նրանից, որ մենք այնտեղ ծեծեցինք մի գարշելի բանասարկուի: Աղվամագով ծածկված կատուները մեզ շրջապատեցին և առանց մի խոսք ասելու հետները տարան:

Աղվամագով ծածկված կատուներն անտանելի ու նողկալի կենդանիներ են: Նրանց բուրդն անուժ է ոչ թե դեպի դուրս, այլ դեպի ներս: Նրանց ճանկերը երկար են ու սուր: Հեշտ է նրանց ճանկն ընկնել, բայց ազատվելը շատ դժվար է:

Ճանապարհին հանդիպեցինք մի մուրացիկի, որին ողորմություն տվինք:

— Աստված տա, որ դուք այստեղից ողջ-առողջ ազատվեք, իմ բարերարներ, — կամացուկ ու ծածուկ ասաց մուրացիկը: — Այդ կատուները բռնում են ու լափում ամեն բան, ինչ որ ճանկներն է ընկնում: Նրանք կախում են, այրում ու սպանում բոլորովին անմեղ մարդկանց, կողոպտում են նրանց ունեցած-չունեցածը և քանդում, խորտակում են անխտիր ամեն բան՝ թե լավը, թե վատը: Եվ այդ բոլորը նրանք անում են որպես թե մարդկային ցեղի բարօրության համար: Ա՛խ, ինչ լավ կլիներ, գտնվեր մեկը, որ նրանց դիմակազերծ աներ: Այն ժամանակ ոչ մի բան չէր կարող նրանց փրկել սարսափելի պատժից: Իմ հանգուցյալ հայրը հրամայել է ինձ այնքան կանգնել այստեղ, մինչև որ կայծակն այրի, մոխիր դարձնի այդ սրբապիղծներին: Պետք է իմանաք, որ մարդիկ այնքան են սովորել նրանց, որ չեն նկատում այլևս նրանց հանցագործությունները: Իսկ եթե նկատողներ էլ կան, նրանք չեն համարձակվում ձայն-ծպտուն հանել:

— Աստված վկա, դա ինձ ամենևին դուր չի գալիս, — ասաց Պանուրգը, — որքան կարելի է շուտ փախչենք այստեղից:

Բայց արդեն ուշ էր: Մենք արդեն գտնվում էինք բանտում, և դռնակը փակվեց մեր ետևից: Մեզ տարան մի այլանդակ հրեշի մոտ: Նրա ձեռքերն արյունոտ էին, աչքերը չարագուշակ փայլ ունեին, բերանից դուրս էին ցցված վարազի ժանիքներ, բայց ամենից սարսափելին նրա ճանկերն էին՝ երկար, սուր և արյունոտ:

Դա նշանավոր Մռռան Կատուն էր, աղվամագով ծածկված կատուների գլխավորը, Չնդան կղզու տերն ու տնօրենը:

Ինչ-որ մարդիկ, որոնց վրա կախված էին պարկեր ու պայուսակներ, հրամայեցին մեզ նստել մեղադրյալների նստարանին:

— Հարգելի բարեկամներ, — ասաց Պանուրգը, — ես կանգնած էլ լավ եմ զգում ինձ, այդ նստարանը շատ ցածր է ինձ համար:

— Նստիր և խելքիդ գոռ մի տուր, — ասացին նրան: — Հիմա գետինը ձեր ոտքերի տակ կպատռվի և բոլորիդ ողջ-ողջ կուլ կտա, եթե չպատասխանեք ինչպես հարկն է:

Նստեցինք:

— Այդպես, այդպես, այդպես, հենց այդպես, — ասաց Մռռան Կատուն խռպոտ ձայնով:

— Եթե խմեինք, կոկորդներս մի քիչ թացացնեինք, այ դա կլիներ իսկապես այդպես, — մրթմրթաց Պանուրգը ատամների արանքից:

— Լսեցեք, — ասաց Մռռան Կատուն՝

Սպիտակ Ծնվեց Եվ Մողաց, Նա Ու Ողջ Թե որքան արագաշարժ է հրեշը մեր:	տանը, տան ցատկեց թռավ ժողովուրդն	մի պատր սողաց	ինչպես նա ու դեպի էր	փայտոջի խափշիկ կերավ: թռավ: երկինք, անտառներով: գարմացել,
---	--	-------------------------	--------------------------------------	---

— Հենց այդպես, — շարունակեց Մոռան Կատուն, — լուծիր այս հանելուկը, ասա, թե ինչ է նշանակում, հենց այդպես:

— Ամենևին ոչ, — պատասխանեցի ես, — եթե ես որևէ մեղք ունենայի, այն ժամանակ կլուծեի ձեր հանելուկը, բայց ես ոչ մի մեղք չունեմ, ամենևին ոչ:

— Այդպես, այդպես, — ասաց Մոռան Կատուն, — կնշանակի դու ապուշ ես, կարծում ես, որ եթե մեղք չունես, մենք քեզ պետք է ազա՛տ արձակենք, հենց այդպե՛ս: Միավրվում ես, սիրելիս, մեր օրենքները սարդի ոստայնի պես մի բան են, հենց այդպես: Հասարակ ճանճերն ու փոքրիկ թիթեռնիկները հեշտությամբ են ընկնում այդ ոստայնի մեջ, հենց այդպես: Մեծ, վնասակար բառերը պատռում են ոստայնը ու թռչում-գնում են, հապա, այդպես: Այդ պատճառով մենք խոշոր ավազակներ չենք որսում, իսկ ձեզպեսները մեր ձեռքից չեն պրծնի, հենց այդպես:

— Էյ, պարոն սատանա, — ասաց Ժան վարդապետը, — այս մարդը ոչինչ չգիտի, ինչպե՛ս կարող է քեզ պատասխանել:

— Ո՛վ է այս կատաղած խենթի շղթան բաց արել, — գոչեց Մոռան Կատուն: — Այ քեզ չտեսնված բան, խոսում է, երբ նրան ոչինչ չեն հարցնում:

— Մուտ ես ասում, շան ձագ, — ինքն իրեն մրթմրթաց Ժան վարդապետը:

— Հենց այդպես, — ասաց Մոռան Կատուն, — այստեղ մենք մեր օրենքն ունենք, հենց այդպես: Այստեղ պատասխանում են այն, ինչ որ իրենք էլ չգիտեն, հենց այդպես: Այստեղ խոստովանում են այն, ինչ որ երբեք չեն գործել, այդպես: Այստեղ դատողություններ են անում բաների մասին, որ երբեք չեն սովորել, հենց այդպես: Հենց այդպես, հենց այդպես, այստեղ սագին ողջ-ողջ փետրահան են անում, իսկ սագը ծպտուն հանել չի համարձակվում, հենց այդպես: Իսկ դու, սրիկա, եթե դողերոցք ունես, կուզես թեկուզ պսակվիր դողիդ հետ, բայց լեզուդ քեզ քաշիր, հենդ այդպես:

— Այ դու դև, դևապետ, դևերի իշխան, — գոչեց Ժան վարդապետը, — ուրեմն դու ուզում ես ամուսնացնել վարդապետի՞ն, ինչպես տեսնում եմ, դու հերետիկոս ես:

Մոռան Կատուն այնպես ձևացրեց, թե չի լսել այդ խոսքերը:

— Հենց այդպես, հենց այդպես, — ասաց նա, դառնալով դեպի Պանուրգը, — իսկ դու պիտի շարունակե՛ս համառել և ոչի՞նչ չես ասի մեզ դրա մասին:

— Բանն էլ հենց այն է, — ասաց Պանուրգը, — այստեղ կարծես բոլորս էլ բռնված ենք ժանտախտով: Ես բոլորի փոխարեն կվճարեմ, միայն խնդրում եմ ազատ արձակեք մեզ այստեղից: Ես այլևս համբերել չեմ կարողանում այս գահրումար տեղում:

— Արձակե՛՛ր, — գոչեց Մոռան Կատուն, — երեք հարյուր տարի է այդպիսի դեպք չի եղել, հենց այդպես, որ մեկն ու մեկն այստեղից դուրս պրծնի առանց իր բուրդն այստեղ թողնելու, հաճախ և իր ամբողջ կաշին այստեղ թողնելու, հենց այդպես: Դու, դժբախտ արարած, հենց այդպես, և ավելի դժբախտ կլինես, եթե չուժես իմ հանելուկը, հենց այդպես, հենց այդպես:

— Իսկ այս սև ճիճուն, գրողը նրան տանի, — ասաց Պանուրգը, — որ դուրս է եկել սպիտակ բակլայից, գրողի տարած թիթեռնիկ է դարձել և բոլոր մարդկանց զարմանք պատճառել, գրողը նրան տանի:

Այս խոսքերն ասելիս Պանուրգը սենյակի մեջտեղը մի կաշվե հաստ քսակ շարտեց՝ մեջը լիքը ոսկե նոր դրամներ: Փողի հոտը որ առան, աղվամագով ծածկված կատուներն իրենց սուր-սուր ճանկերը կարծես մի-մի ջուրթակ դարձրին ու սկսեցին նվազել:

— Այդ ի՛նչ հրաշալի կերակուր է, — մլավեցին կատուները, — ինչքան հրաշալի էր այսօրվա դատաստանը, ինչքան համեղ ու լավ համեմված: Իսկույն երևում է, որ սրանք լավ տղերք են:

— Այդ փող է, — ասաց Պանուրգը, — այդ ոսկե դրամներ են, մի՞թե չեք տեսնում:

— Հենց այդպես, — ասաց Մոռան Կատուն, — դատաստանն այդ ընդունում է, հենց այդպես: Դուք ազատ եք, տղերք, հենց այդպես: Չէ՞ որ մենք էլ սևահոգի չենք, ինչպես թվում է ձեզ: Հենց այդպես:

Մեզ դուրս բերին Չնդանից և ճանապարհ դրին մինչև նավահանգիստ: Ճանապարհին մեզ զգուշացրին, որ մենք պետք է պարզև տանք նաև Մոռան Կատվի կնոջը և աղվամագով ծածկված մյուս կատուներին, հակառակ դեպքում մեզ նորից Չնդանը կտանեն:

— Լավ, — ասաց Ժան վարդապետը, — մենք մի կողմ կքաշվենք, որ մեր գանձը հաշվենք:

— Չմոռանաք և մեզ, մեղավորներին, — ասացին մեր ուղեկիցները:

— Միամիտ եղեք, — ասաց Ժան վարդապետը, — ձեր մասին էլ անպատճառ կհոգանք:

Գլուխ XL

Այն մասին, թե ինչպես Ժան վարդապետն ուզում էր կոտորել աղվամագով ծածկված կատուներին

Այն ժամանակ նավահանգստին մոտեցան վաթսուներթ գալերներ ու ֆրեգատներ: Նավերն ամբողջապես բեռնավորված էին ամեն տեսակ որսի կենդանիներով՝ նապաստակներով, աղավնիներով, վարազներով, այծյամներով, հորթերով, հավերով, բադերով, սագերով և ուրիշ կենդանիներով: Նույն նավերում կային նաև թավշի և ատլասի ահագին կտորներ:

— Այդ ի՞նչ բան է, — հարցրեց Ժան վարդապետը ճանապարհորդներին, — ո՞ւմ համար եք բերել այդ հարստությունը:

— Կաշառք է, — պատասխանեցին ճանապարհորդները: — Այդ բոլորը մենք բերել ենք Մոռան Կատվի, աղվամագով ծածկված էգ ու որձ կատուների համար:

— Դրանք ուրեմն կաշառքներո՞վ են ապրում, — գոչեց Ժանը: — Ախ, սրիկաներ, որքա՞ն մարդկանց տուն են քանդել դրանք իրենց ապօրինի տուրքերով:

— Ես երկու առաջարկ ունեմ, — ասաց Ժանը փոքր-ինչ լռելուց հետո: — Առաջինը՝ խլենք այդ ամբողջ մսեղեն ապրանքը: Պետք է խոստովանեմ, որ զգվել եմ աղ դրած մսից, որ ամեն օր ուտում ենք նավում, դրանից խանգարվում է իմ ստամոքսը: Երկրորդը՝ վերադառնանք Չնդանը և մորթոտենք բոլոր այդ դժոխքի ծնունդներին՝ աղվամագով ծածկված կատուներին:

— Ես էլ երբեք այնտեղ ոտք չեմ դնի, — ասաց Պանուրգը, — ես առհասարակ մի քիչ զգույշ մարդ եմ:

— Իսկապես ասած, — շարունակեց Ժան վարդապետը, — ինչի՞ նման է այս ճանապարհորդությունը: Մեր բան ու գործը միայն ուտելն ու խմելն է: Պետք է ասեմ, որ դա ամենևին իմ սրտովը չէ: Քունս չի տանում, եթե որևէ հերոսական գործ չեմ կատարում: Դեհ, ի՞նչ եք ասում, գնո՞ւմ ենք, թե ոչ: Հավատացնում եմ ձեզ, մենք հեշտությամբ նրանց հախից կգանք: Գնանք:

— Ես ոչ մի դեպքում այնտեղ չեմ գնա, — ասաց Պանուրգը: — Մինչև հիմա էլ չեմ հանգստացել մեր գլխին եկած այդ բոլոր արկածներից: Լավ լսի, ինչ եմ ասում, սանահեր ջան: Եթե դու ուզենաս ջհանդամի տակը գնալ, մի խոսք ասա ինձ միայն, և ես քեզ հետ կգնամ: Իսկ այժմ, երբ դու ուզում ես վերադառնալ աղվամագով ծածկված կատուների մոտ, ներիք ինձ, քո ուղեկիցը չեմ լինի: Իմ խոսքը հաստատ է, ինչպես ժայռե պատը:

— Այ դու ռազմիկ, — ասաց Ժանը ծիծաղելով: — Ասա խնդրեմ, ինչո՞ւ զցեցիր նրանց առաջ ոսկիներով լիքը քսակդ: Մի՞թե կարծում ես, ոսկիներ շատ ունենք: Մի քանի դրամ զցեիր առաջները բավական կլիներ:

— Ոչ, սխալվում ես, — ասաց Պանուրգը, — մի՞թե չէիր նկատում, որ Մոռան Կատվի առաջ դրված էր թավշե մի մեծ քսակ: Մոռանը շարունակ ձեռքում խաղացնում էր քսակն ու ասում՝ «Ոսկի, դեսն արի»: Պարզ է, թե ինչ էր նրա ուզածը, սանահեր: Եթե դու էլ իմ չափ ապրած լինեիր, այն ժամանակ ուրիշ կերպ կխոսեիր:

Իսկ մեզ ուղեկցող կատուներն սպասում էին պարզև ստանալու: Տեսնելով, որ մենք գնում ենք դեպի նավերը, նրանք շրջապատեցին մեզ և չէին ուզում թողնել, որ շարունակենք մեր ճանապարհը:

— Սուրբ Կիրակոս, Պետրոս, Մարկոս, — ասաց Ժանը: — Դուք դեռ այստե՞ղ եք, դիվանատան շներ: Քի՞չ եք ինձ զայրացրել, հիմա էլ մեր օձիքիցն եք կպել և հիմար պահանջներ եք անում: Կորեք, թե չէ, աստված վկա, այնպես քոթակ կտամ...

Եվ սուրը մերկացնելով հարձակվեց նրանց վրա: Կատուները ցրիվ եկան ու փախան զանազան կողմեր և այլևս չերևացին:

Հենց որ մենք մտանք նավը, Պանտագրյուելը հրամայեց խարիսխները բարձրացնել: Բայց այնպիսի սաստիկ քամի բարձրացավ, որ մենք շեղվեցինք ճանապարհից, և հոսանքը

մեզ ետ տարավ: Կայմի ծայրին նստած յունգան աղաղակեց, որ նորից տեսնում է Մռռան Կատվի բնակարանը:

— Նավապետ, սիրելի բարեկամ, — խելքը կորցրածի պես աղաղակում էր Պանուրգը, — սանձը դարձրու, սիրելիս, դարձրու սանձը, որ չվերադառնանք նորից այդ սարսափելի երկիրը: Այ քարուքանդ լինի դա:

Բայց քամին նորից ետ տարավ մեզ դեպի կղզին: Սակայն մենք այլևս կղզի չմտանք, այլ ապաստան գտանք բարձր ու մեծ ժայռերի վրա, կղզուց մի մղոն հեռու:

Գլուխ XLI

Այն մասին, թե ինչպես մեր նավը քիչ էր մնում խորտակվի

Հենց որ քամին մի փոքր հանդարտվեց, մենք նորից խարիսխները բարձրացրինք և ճանապարհ ընկանք: Բայց մոտավորապես քսաներեք մղոն անցելուց հետո հանկարծ սկսվեց մի այնպիսի մոլեգին մրրիկ, որ մեր նավը, ինչպես մի տաշեղ, այս ու այն կողմ էր ընկնում: Նավապետը հավատացնում էր, որ անհնար է այդ մրրիկի միջով անցնել, պետք է սպասենք, մինչև մրրիկն ինքն իրեն դադարի:

Սակայն մրրիկն այնքան երկար տևեց, որ մենք խնդրում էինք նավապետին մի կերպ անց կենա նրա միջով: Վերջապես նավապետը համաձայնեց: Պարզեցին բիզան-առագաստը, իսկ դեկն ուղղեցին համաձայն կողմնացույցի սլաքի: Մեր նավը ցնցվեց ու առաջ սլացավ, և կարճ ժամանակից հետո մենք դուրս եկանք մրրիկի շերտից:

Բայց պարզվեց, որ մենք կրակից պրծանք, բոցի մեջ ընկանք: Հազիվ երկու մղոն անցած լինեինք, երբ մեր նավերը հանկարծ իրենց առաջընթացի ամբողջ թափով խրվեցին ավազե ծանծաղուտների մեջ և կանգ առան:

Ամբողջ նավակազմի տրամադրությունը վատացավ: Նավի մեջ լսվում էր հողմի սուլոցը: Միայն Ժան վարդապետն էր, որ չէր վիստվում: Նա աշխատում էր մեզ հանգստացնել և հավատացնում էր, որ շուտով մեզ օգնության կհասնեն: Չուր չէ, որ նա մեր կայմի ծայրին նկատեց սուրբ Էլմի⁷⁸¹ կրակը: Ժան վարդապետի կարծիքով, դա լավ նշան էր:

Սակայն Պանուրգը շատ էլ չէր հավատում նշաններին:

— Ես խոսք կտամ երբեք չպսակվել, — ասում էր նա, — միայն թե ինձ ափ դուրս բերեն: Աստված վկա, ես չեմ ուզում ոչ սպասավորներ, ոչ ճանապարհորդներ, բավական է մի հասարակ ձի: Այդ ձիով ես տուն կհասնեմ և ձեր գալուստը շքեղ կդիմավորեմ:

Այդ բոլորին մեզ մի մեծ նավ մոտեցավ ծայրեծայր բեռնավորված թմբուկներով: Այդ տարօրինակ նավի ուղևորների մեջ ես նկատեցի իմ վաղեմի բարեկամ Անրի Կոտիրալին: Նրա գոտուց կախ էր ընկած էշի մի մեծ գլուխ, ձախ ձեռքում բռնած ուներ մի կեղտոտ ու ճարպոտ թասակ, իսկ աջ ձեռքում կաղամբի կոթ:

— Մի լավ նայիր այս կողմը, բարեկամ, — ձայն տվեց նա, թափահարելով էշի գլուխը, երբ տեսավ ինձ, — գիտե՞ս արդյոք, ինչ է սա: Սակայն դու ինչպես կարող ես իմանալ:

Նկատի ունեցիր, որ սա բնության անգուգական ու սքանչելի ստեղծագործություն է: Մրանից ես հրաշագործ դեղ պիտի պատրաստեմ, որը ամեն մի մետաղ ոսկի կդարձնի:¹⁷⁹¹ Այս, — նա ցույց տվեց իր թասակը, — իմ դոկտորական գլխարկն է,¹⁸⁰¹ իսկ այս, — նա ցույց տվեց կաղամբի կոթը, — նշանավոր լուսնի խոտն է:¹⁸¹¹ Սա ինձ հարկավոր կլինի կախարդական մի դեղ պատրաստելու համար:

— Ո՛րտեղից եք գալիս և ո՛ւր եք գնում, — հարցրի ես:

— Մենք Խելքի Տոպրակների կղզուց ենք գալիս, — պատասխանեց Անրին, — գնում ենք Ֆրանսիա, Տուրեն: Մենք այժմ այնպես խելքի տոպրակներ ենք դարձել, որոնց նմանը աշխարհում ոչ որ չի տեսել:

— Իսկ տախտակամածի վրա եղած մարդիկ ո՞վքեր են, — հարցրի ես:

— Դրանք երգիչներ են, երաժիշտներ են, ոտանավոր թխողներ են, աստղագետներ են և ուրիշ գիտնական մարդիկ, — պատասխանեց նա: — Դրանք բոլորը գալիս են Խելքի Տոպրակների կղզուց և ունեն լավ հանձնարարականներ:

— Քանի որ դուք բոլորդ էլ այդպիսի խելքի տոպրակներ եք, — ասաց Պանուրգը, — հասպա ինչո՞ւ չեք մտածում մեր նավի մասին և դուրս չեք քաշում մեզ ծանծաղուտից:

— Մենք էլ հենց ուզում էինք այդ անել, — ասաց Անրի Կոտիրալը, — այս բոպեխս մենք ձեզ կօգնենք:

Եվ նա հրամայեց ծակել 7532810 մեծ թմբուկների տակը: Դրանից հետո խելքի տոպրակները թմբուկները ծակված կողմով կապեցին մեր նավին ու մեզ բուքսիրի վերցրին: Մի գորեղ հրումով մեզ ծանծաղուտից դուրս քաշեցին: Թմբուկները խուլ որոտում էին, խիճը ճթթթում էր, նավաստիները ծղրտում էին այս ու այն կողմից, և այդ բոլորը մեզ թվում էր մի հրաշալի երաժշտություն: Մեր նավն ազատված էր:

Որպես շնորհակալություն մեզ մատուցած ծառայության՝ նրանց թմբուկները լցրինք երշիկներով ու նրբերշիկներով և նրանց տախտակամածը փոխադրեցինք վաթսուներկու տակառ գինի: Բայց այդ բոպեխս ջրի մեջ երևաց մի մեծ կետ և ջրի մի ահագին սյունով հեղեղեց նրանց տախտակամածը: Ջուրը լցվեց թմբուկների մեջ և ոտից մինչև գլուխ թրջեց խելքի տոպրակներին:

Նորից մրրիկ սկսվեց, և մեր նավերը ցրիվ եկան զանազան կողմեր: Նավապետը վճռեց լողալ հոսանքի ուղղությամբ և այլևս ուշ չէր դարձնում մեր խորհուրդներին: Նրա միտքն այն էր, որ որքան կարելի է շուտ հասնի Խելքի Տոպրակների կղզին:

Գլուխ XLII

Այն մասին, թե ինչպես ժամանեցինք Խելքի Տոպրակների երկիրը

Երրորդ օրը եղանակը պարզվեց, և մենք ողջ ու առողջ մտանք Դատարկ նավահանգիստը, որ մոտ էր Խելքի Տոպրակների թագուհու պալատին: Ափին մեր դեմ

դուրս եկավ զհնվորների մի մեծ ջոկատ, որ պահպանում էր զհնանոցը: Սկզբում մենք նրանցից մի փոքր վախեցանք, որովհետև նրանք մեզ կանգնեցրին ու զինաթափ արին:

— Ի՞նչ մարդիկ եք և ո՞րտեղից եք, — կոպտաբար ու բարձրաձայն հարցրին նրանք:

— Եղբայրներ, — ասաց Պանուրզը, — մենք տուրենցի ենք, եկել ենք Ֆրանսիայից և ուզում ենք մեր հարգանքը հայտնել ձեր թագուհուն: Մենք հասարակ գյուղացի մարդիկ ենք և մեր սիրտը բաց է բոլորի առաջ:

— Դե, այդպես ասեք, որ իմանանք, — ասացին զհնվորները, — Տուրենից շատերն են գալիս այստեղ, և ով ասես գալիս է: Նրանք բոլորը սրտաբաց ապուշների նման էին երևում մեր աչքին: Բայց ուրիշ տեղերից գալիս են մեզ մոտ այնպիսի սրիկաներ, որոնք մեզ տեսնելուն պես սկսում են հռչակալ: Բայց ձեր բանն ուրիշ է: Բարով եք եկել:

Այս խոսքերից հետո զհնվորները գրկախառնեցին մեզ հետ և մեզ տարան պալատ՝ իրենց թագուհու մոտ: Ճանապարհին պահակախմբի պետն ուզեց խոսել Պանտագրյուելի հետ, բայց նրա հասակը չէր հասնում մինչև Պանտագրյուելի ականջը, այդ պատճառով նա հրամայեց մեծ սանդուղք բերել, որի վրա բարձրանալով, ասաց Պանտագրյուելին.

— Եթե մեր թագուհին կամենար մեզ հսկաներ դարձնել, մենք էլ մեր հասակով ձեզանից պակաս չէինք լինի: Շատ հավանական է, որ նա հենց այդպես էլ անի, երբ նրան այդ հաճելի կլինի:

Թագավորական պալատի առաջին սրահում մենք տեսանք մեծ թվով հիվանդներ: Կային այդտեղ ժանտախտավորներ, բորոտներ, թունավորվածներ, խուլեր, կույրեր: Եվ դրանք բոլորն առանձին խմբեր կազմած նստել էին, կարծես մի բանի էին սպասում:

Երկրորդ սրահում պահակախմբի պետը ցույց տվեց մեզ մի ջահել ու սիրունիկ տիկնոջ: Ճիշտ է, նա առնվազը ութ հարյուր տարեկան կլիներ, բայց և այնպես նա այնքան գեղեցիկ էր, այնքան շքեղ հագնված, որ տեսնողը նրան շատ ջահել կին կհամարեր:

— Ահա մեր թագուհին, — ասաց պետը: — Նա զբաղված է: Ուշ դարձրեք, թե նա ինչ պիտի անի: Ասում են, ձեր երկում կան այնպիսի թագավորներ, որոնք մի քանի հիվանդություններ բժշկում են միայն ձեռքի հպումով:^[82] Իսկ մեր թագուհին առանց բացառության բժշկում է բոլոր հիվանդությունները: Թե ինչպես, այդ դուք իսկույն կտեսնեք:

Պետը դեռ իր խոսքը չվերջացրած՝ թագուհին նստեց բարձր ու գեղեցիկ երգեհոնի առաջ և նշան արեց պալատական իշխաններին: Այդ նշանի համաձայն իշխանները դահլիճ բերին բորոտների խումբը: Թագուհին նրանց համար ինչ-որ մի երգ նվագեց, և բորոտները միանգամից բժշկվեցին իրենց հիվանդությունից: Հետո ներս բերին թունավորվածներին: Թագուհին նրանց համար ուրիշ եղանակ նվագեց: Նրանք էլ բոլորը բուժվեցին: Նույն եղանակով թագուհին բուժեց կույրերին, խուլերին, համրերին և նույնիսկ խելագարներին: Այս բոլորը մեզ այնպիսի հիացմունք պատճառեց, որ ընկանք գետնի վրա և ոչ մի խոսք չկարողացանք արտասանել:

Թագուհին մոտեցավ Պանտագրյուելին և ձեռքին բռնած կարմիր վարդերի փնջով կամացուկ խփեց նրան: Մենք սթափվեցինք ու ոտքի կանգնեցինք: Դրանից հետո թագուհին մեզ հետ խոսեց մետաքսե խոսքերով, որովհետև նրա յուրաքանչյուր խոսքը կարծես հյուսված լիներ մետաքսե ամենանուրբ թելերից:

Ազնվության այն շողշողումը, որ ամեն կողմից պատել է ձեզ, հարկադրում է ինձ կարծելու, որ դուք ազնիվ ու բարեմիտ մարդիկ եք: Ուստի ես, այստեղ իշխողս, չեմ կարող ինձ զսպել, որ չասեմ ձեզ՝ «Բարով, բարով, հազար բարով եք եկել:

— Ես գիտուն մարդ չեմ, — ասաց ինձ Պանուրգը, — եթե ցանկանում եք, դուք պատասխանեցեք:

Բայց ես չպատասխանեցի: Չպատասխանեց և Պանտագրյուելը: Մեր լեզուները կարծես կապ ընկան, երբ լսեցինք այդ սերնետը ճառը:

— Տեսնելով ձեր լռությունը, — ասաց թագուհին, — ես գալիս եմ այն եզրակացության, որ դուք հետևողներ եք լռակյաց իմաստունների ուսմունքին, որովհետև լռության մեջ դուք տեսնում եք մի ինչ-որ աստվածային բան:¹⁸³ Համենայն դեպս, ես կամենում եմ հայտնել իմ շնորհակալությունը ձեզ՝ ձեր ցույց տված ուշադրության համար դեպի ինձ և իմ ժողովուրդը:

Ճառը վերջացնելուց հետո թագուհին ասաց իր պալատականներին.

— Խոհարարներ, տարեք Պանագեան:¹⁸⁴

Խոհարարները մեզ ասացին, որ մենք պետք է ներողամիտ լինենք դեպի թագուհին, որ մեզ իր մոտ չի հրավիրում ճաշի: Բանն այն է, որ թագուհին ոչինչ չի ուտում, բացի Մտացածին հնարանքներից, Խոհերից, Երազանքներից, Հանելուկներից, Առաջարկություններից և դրանց նման ուրիշ կերակուրներից: Այդ բոլոր կերակուրները չեն կարող հագեցնել մեր ախորժակը, ուստի մեզ ուրիշ կերակուրներ կտան, այնպիսի կերակուրներ, որ ուտում են սովորական մարդիկ:

Եվ մեզ տարան սեղանատուն ու հրաշալի ճաշ տվին: Ասում են, որ մեծ աստված Յուպիտերը մի այծի դաբադած մորթու վրա գրել է այն ամենը, ինչ որ կատարվում է աշխարհում: Երդվում եմ, սիրելի բարեկամներ, որ տասնույթ մորթիների վրա անկարելի կլինի գրել այն հրաշալի կերակուրների անունները, որ մեզ մատուցեցին ճաշին, եթե գրելու լինեին անգամ չափազանց մանր տառերով:

Ճաշին Պանտագրյուելը միտք էր անում, թե ինչ բան է Պանագեան, թագուհին ինչու ասաց. «Խոհարարներ, տարեք Պանագեան»: Պանտագրյուելը որոշեց, որ դա պայմանական նշան էր խնջույքն սկսելու: Այդ խոսքերով թագուհին պատվիրում էր մատուցել կերակուրները:

Գլուխ XLIII

Այն մասին, թե ինչպիսի հրաշալիքներ տեսանք մենք Խելքի Տոպրակի երկրում

Ճաշից հետո իշխանները տարան մեզ պալատը ցույց տալու: Այդտեղ տեսանք բազմաթիվ թագավորական գիտնականների, որոնք զբաղված էին իրենց զարմանալի գիտություններով: Այդ գիտնականների շնորհքն ինձ այնպես զարմացրեց, որ մինչև օրս էլ նրանց հիշելիս հիանում եմ:

Օրինակ՝ այնտեղ մի խելքի տոպրակ տեսա, որ բժշկում էր տենդով հիվանդների: Նա հիվանդի գոտուց, ձախ կողմից, կապում էր աղվեսի պոչ, և տենդը բոլորովին անցնում էր:

Երկրորդ իմաստունը մի զարմանալի մեքենայի օգնությամբ տները լուսամուտներից դուրս էր նետում: Ասում էին, որ դա շատ լավ գործ է, որովհետև դրանից հետո տների մեջ եղած վտանգը մաքրվում էր:

Այնուհետև տեսանք մի մարդու, որ ծերերին երիտասարդ էր դարձնում: Նրա մոտ հավաքվել էին բազմաթիվ պառավ կանայք, անատամ, խորշոմած երեսով, մազերն սպիտակած, հիվանդոտ և ճպոռտ աչքերով: Ասում էին, որ այդ իմաստունը դարձնում է նրանց տասնվեց տարեկան սիրունիկ աղջիկներ: Պառավները նորից դառնում էին ջահել, կարմրաթշիկ և ուրախ աղջիկներ, միայն նրանց գարշապարներն ավելի կարճանում էին, քան եղել էին երիտասարդության ժամանակ: Այդ պատճառով ասում են, ջահելացած պառավները չեն կարողանում երկար ժամանակ կանգնած մնալ:

Պալատի շուրջը նույնպես եռում էր աշխատանքը:

Ես տեսա, թե ինչպես մի քանի խելքի տոպրակներ հին զամբյուղի տակով տրորում էին մի նեգրի փորը: Դրանից հետո նեգրը սպիտակ մարդ էր դառնում:

Մի քանիսն ուռկաններով քամի էին բռնում, հետո խեցգետին որսում:

Մյուսները թրիքի միջից միջատներ էին հավաքում ու դրանից հրաշալի կերակուր պատրաստում:

Ես տեսա մի խելքի տոպրակ, որը կրակը կտրում էր դանակով, միզափամփուշտից հրաշալի լապտերներ էր շինում, իսկ ամպերից՝ երկաթե վառարաններ:

Կային և այնպիսիները, որոնք ոչնչից մի մեծ բան էին շինում, հետո այդ մեծ բանը դարձյալ ոչինչ դարձնում:

Մի բարձր աշտարակի ծայրին տեսա երկու խելքի տոպրակներ՝ սպառազինված ասպետական բոլոր զենքերով: Մեզ ասացին, որ նրանք պահպանում էին լուսինը գայլերի հարձակումից:

Այս զարմանահրաշ գրադմունքները դիտելը տևեց մինչև երեկո, երբ երկնակամարի վրա երևաց երեկոյան պայծառ աստղը: Նորից երևաց թագուհին իր փայլուն շքախմբով:

— Ինչպես տեսնում եմ, — ասաց նա Պանտագրյուելին, — ձեզ և ձեր ուղեկիցներին մեծ զարմանք ենք պատճառել այն փորձերը, որ կատարում են իմ հպատակները: Սակայն մի վախեցեք և հանգիստ սրտով շարունակեցեք դիտել այն բոլորը, ինչ որ կատարվում է իմ տան մեջ: Կամաց-կամաց դուք կազատվեք ձեր տգիտությունից և այնպիսի բաներ կսովորեք, որ մինչև այսօր չեք իմացել: Ի նշան ձեր նկատմամբ ունեցած իմ բարեհաճ վերաբերմունքի, ես տալիս եմ ձեզ պալատական խորհրդականների կոչում: Ձեր անունները կնշանակվեն իմ պալատականների ցուցակում:

Մենք շնորհակալություն հայտնեցինք թագուհուն և ընդունեցինք այդ պատվավոր կոչումը:

Երեկոյան մեզ հրավիրեցին թագուհու մոտ ընթրելու: Ընթրիքի ժամանակ թագուհին ոչինչ չէր ուտում, բացի աստվածային ամբրոզիայից, և ոչինչ չէր խմում, բացի աստվածային նեկտարից:¹⁸⁵¹ Բայց իշխաններին, պալատական տիկիներին և մեզ հյուրասիրեցին այնպիսի հազվագյուտ կերակուրներով, որ մենք երբեք չէինք կերել:

Ընթրիքի վերջում նրանց համար, ովքեր դեռ լավ չէին կշտացել, սեղանի վրա դրին ահագին կաթսայի չափ մի մեծ աման: Այդ ամանի մեջ ինչ ասես կար՝ այծեմիկ, սիսեռից պատրաստված ռազու, տապակած միս, խոզապուխտ և մեծ քանակությամբ մրգեղեն: Այդ բոլորը չափազանց համեղ բաներ էին, բայց ես ոչ մի բանի ձեռք չտվի, որովհետև այնքան կուշտ էի, որ փորս ճաքում էր: Ամանի տակին՝ խաղաթղթեր, շախմատ, տամախաղի տուփ, զառեր ինչպես նաև ոսկե դրամներով լիքը թասեր: Այդ դրամները խաղացողների համար էին:

Ամանի բոլորովին տակին կային թամբած և թավշե տապնակով ծածկված ջորիներ, ձիեր, որոնց վրա կային տղամարդկանց ու կանանց թամբեր և մի քանի շքեղաշուք կառքեր նրանց համար, ովքեր ցանկություն կունենան կառքով զբոսնելու թարմ օդում:

Բայց ամենից շատ ինձ զարմացնում էր ինքը թագուհին: Ընթրիքի ժամանակ նա ոչինչ չէր ծամում: Կերակուրները նրա համար ծամում էին նշանակված հատուկ պալատականները: Նրանց բերանի խոռոչը պատած էր ոսկե թելիկներով, հրաշալի աստասով, իսկ ատամները շինված էին փղոսկրից: Ծամած կերակուրը լցնում էին թագուհու փորը ոսկե խողովակի միջով: Այդպես էր այստեղի սովորությունը:

Ընթրիքից հետո շախմատախաղի շքեղ պարահանդես սարքեցին:

Դահլիճի հատակը ծածկեցին թավշե մեծ գորգով, որի վրա ասեղնագործված էին սպիտակ և դեղին գույնի քառակուսիներ:

Երբ գորգը փռեցին, դահլիճը դարձավ շախմատի մի ահագին տախտակ:

Լսվեց երաժշտություն, և դահլիճ մտան երեսուներկու երիտասարդներ, որոնք ներկայացնում էին շախմատի ֆիգուրներ: Նրանցից տասնվեցը հագել էին ոսկե զգեստ, տասնվեցը՝ արծաթե զգեստ: Ֆիգուրները կանգնեցին իրենց տեղերում և սկսվեց մի չտեսնված շախմատախաղի զինախաղ, որ միաժամանակ նման էր և պարի: Երաժշտության նվագի համաձայն ֆիգուրներն անցնում էին մի քառակուսուց մյուսը, մեկ առաջ էին խաղում, մեկ ետ նահանջում, աշխատելով գերի վերցնել հակառակ կողմի թագավորին: Երբ մեկը գերի էր վերցնում հակառակորդին, նախ և առաջ ողջունում էր նրան, ապա կամացուկ խփում էր նրա ձեռքին: Հակառակորդը հեռանում էր ռազմադաշտից, իսկ հաղթողը բռնում էր նրա տեղը:

Մենք այնպես էին տարվել այդ կենդանի զինախաղով, որ չնկատեցինք թագուհու անհետանալը: Պալատական իշխանների միջոցով հայտնելով նրան մեր ողջույնը, մենք վերադարձանք մեր նավերը, և հետևյալ օրը լուսաբացին շարունակեցինք ճանապարհը:

Գլուխ XLIV

Այն մասին, թե ինչպես է Պանուրզը գրուցում մի վարդապետի հետ Սանդալի կղզում

Երկու օր հետո մենք հասանք Սանդալի կղզին: Այդ կղզու Բենիոս անունով թագավորը լավ կոնձաբանություն անելուց հետո մեզ տարավ ցույց տալու այն նոր վանքը, որ նա

կառուցել էր վարդապետների համար: Այստեղի վարդապետները կոչվում էին ֆրեդոններ, այսինքն՝ երգողներ, որովհետև շատ լավ էին երգում և միշտ գեղգեղելով:

Վանքում մենք երկար չմնացինք, բայց իմացանք, թե ինչով են զբաղվում վարդապետները ամբողջ շաբաթվա ընթացքում: Նրանց զբաղմունքները շատ էլ դժվար չեն: Կիրակի օրերը նրանք ծեծում են իրար, երկուշաբթի օրը թրխկացնելով խփում են իրար քթի, երեքշաբթի օրերը չանգռոտում են իրար, չորեքշաբթի օրերը իրար քիթ են սրբում, հինգշաբթի օրերը բլոճներ են հանում իրար քթից, ուրբաթ օրերը խուտուտ են ածում միմյանց թևատակերը, իսկ շաբաթ օրերը միմյանց ծեծում պարաններով:

Պանուրգն զբաղված էր միայն այդ արժանապատիվ ֆրեդոնների երեսները դիտելով: Վերջ ի վերջո նա ընտրեց վարագի պես մի գեր ֆրեդոնի, քաշեց նրա թևից, մի կողմ տարավ և նրանց միջև հետևյալ հետաքրքիր խոսակցությունը տեղի ունեցավ:

Պանուրգ: Ֆրեդոն, հայր սուրբ, ֆրեդոնական, ֆրեդոնիկս, ի՞նչ կա ձեր խոհանոցում:

Ֆրեդոն: Կրակ:

Պանուրգ: Ի՞նչն է պահպանում կրակը:

Ֆրեդոն: Փայտը:

Պանուրգ: Ինչպիսի՞ փայտը:

Ֆրեդոն: Չոր փայտը:

Պանուրգ: Ինչի՞ փայտը:

Ֆրեդոն: Կարմրածառի փայտը:

Պանուրգ: Իսկ ինչպե՞ս են ձեզ կերակրում:

Ֆրեդոն: Լավ:

Պանուրգ: Ի՞նչ եք ուտում:

— Ֆրեդոն: Հաց:

Պանուրգ: Ինչպիսի՞ հաց:

Ֆրեդոն: Սև հաց:

Պանուրգ: Է՞լ ինչ:

Ֆրեդոն: Միս:

Պանուրգ: Ինչպիսի՞ միս:

Ֆրեդոն: Տապակած:

Պանուրգ: Իսկ ջրալի կերակուր ուտո՞ւմ եք:

Ֆրեդոն: Այն էլ ինչպես:

Պանուրգ: Իսկ թխվածքնե՞ր:

Ֆրեդոն: Իհարկե:

Պանուրգ: Իսկ ձուկ ուտո՞ւմ եք:

Ֆրեդոն: Ուտում ենք:

Պանուրգ: Ինչպիսի՞ ձուկ:

Ֆրեդոն: Սառը ձուկ:

Պանուրգ: Է՛լ ինչ եք ուտում:

Ֆրեդոն: Չու:

Պանուրգ: Իսկ ինչպիսի՞ ձու եք ուտում:

Ֆրեդոն: Եփած:

Պանուրգ: Ես հարցնում եմ, ինչպե՞ս եփած:

Ֆրեդոն: Պինդ եփած:

Պանուրգ: Եվ ա՞յդ է միայն ձեր կերածը:

Ֆրեդոն: Ոչ:

Պանուրգ: Ուրիշ էլ ի՞նչ են տալիս ձեզ:

Ֆրեդոն: Խոզի միս:

Պանուրգ: Էլ ի՞նչ:

Ֆրեդոն: Էզ սագի միս:

Պանուրգ: Դրանից բացի էլ ի՞նչ:

Ֆրեդոն: Որձ սագի միս:

Պանուրգ: Էլ ի՞նչ:

Ֆրեդոն: Աքլորի միս:

Պանուրգ: Ի՞նչ տեսակ ստուսով:

Ֆրեդոն: Աղի ստուսով:

Պանուրգ: Իսկ ճաշից հետո ի՞նչ են տալիս:

Ֆրեդոն: Բրնձից պատրաստած որևէ բան:

Պանուրգ: Էլ ի՞նչ:

Ֆրեդոն: Սրգեղեն:

Պանուրգ: Ի՞նչ տեսակ:

Ֆրեդոն: Լավը:

Պանուրգ: Իսկ ինչպե՞ս եք խմում:

Ֆրեդոն: Հանույքով:

Պանուրգ: Ի՞նչ եք խմում:

Ֆրեդոն: Գինի:

Պանուրգ: Ի՞նչ տեսակ:

Ֆրեդոն: Սպիտակ:

Պանուրգ: Իսկ ձմե՞ռը:

Ֆրեդոն: Թու՛նդ:

Պանուրգ: Իսկ գարնա՞նը:

Ֆրեդոն: Առողջարար:

Պանուրգ: Իսկ ամռա՞նը:

Ֆրեդոն: Թարմ գինի:

— Տեսեք, — ասաց Պանուրգը, — այս ողորմելի ֆրեդոնիկն այնքան է հաստացել, որ կարողանում է արտասանել միայն կարճ ու միավանկ բառեր:

— Բայց այդ նույն ֆրեդոնիկը ոչխարի ամբողջ բուրդ մի բռնելով կխաչտի, — ասաց Ժան վարդապետը:

— Ինչպես վայել է վարդապետին, — ավելացրեց Էպիտեմոնը:

— Իսկ ի՞նչ կասեիք դուք այս մարդու մասին, իմ սիրելի ֆրեդոն, — հարցրեց Պանուրգը, — ո՞վ է իմանում, հերետիկոս չի՞ արդյոք:

Ֆրեդոն: Հերետիկոս է:

Պանուրգ: Ուրեմն նրան պետք է այրել:

Ֆրեդոն: Պետք է այրել:

Պանուրգ: Եվ որքան կարելի է շո՛ւտ:

Ֆրեդոն: Իհարկե:

Պանուրգ: Առանց խորովելո՞ւ:

Ֆրեդոն: Առանց խորովու:

Պանուրգ: Իսկ ինչպե՞ս:

Ֆրեդոն: Ողջ-ողջ:

Պանուրգ: Նա ձեզ շա՞տ բարկացրեց:

Ֆրեդոն: Այո, շա՛տ:

Պանուրգ: Ո՞վ է նա ձեր կարծիքով:

Ֆրեդոն: Խենթի մեկը:

Պանուրգ: Իսկ ուրիշներին դուք այրե՞լ եք:

Ֆրեդոն: Շատերին:

Պանուրգ: Նրա՞նք էլ հերետիկոսներ էին:

Ֆրեդոն: Ավելի պակաս, քան սա:

Պանուրգ: Եվ դուք չե՞ք ներել նրանց:

Ֆրեդոն: Ոչ:

Պանուրգ: Դարձյա՛լ պետք է այրել:

Ֆրեդոն: Այո:

— Չեմ հասկանում, — ասաց Էպիտեմոնը, — ի՞նչ բավականություն եք ստանում, որ երկար ու բարակ գրույց եք անում այդ կեղտոտ վարդապետի հետ:

— Աստված վկա, նա ինձ շատ է դուր գալիս, — ասաց Պանուրգը: — Ես ուրախությամբ կտանեի նրան Գարգանտյուլայի մոտ: Երբ ես ամուսնանամ, նա իմ կնոջ մոտ ծաղրածու կլինի:

— Եվ կնոջդ կատարյալ հրեշ կդարձնի, — ավելացրեց Էպիտեմոնը ծիծաղելով: — Խեղճ Պանուրգ, ուղտի պոչը ավելի շուտ գետնին կհասնի, քան թե դու լավ կնոջ կհանդիպես:

Գլուխ XLV

Այն մասին, թե ինչպես էինք լողում Լապտերների երկիրը և ինչ տեսանք այնտեղ

Սանդալի կղզուց հեռանալով՝ ճանապարհ ընկանք դեպի Լապտերների երկիրը: Ճանապարհին մտանք Խոդոս կղզին և եղանք «Ասում են» կղզում: Խոդոս կղզին նշանավոր է նրանով, որ այնտեղ բոլոր ճանապարհները շարժուն են: Ճանապարհներն այնպես են շարժվում կղզու վրա, ինչպես ման են գալիս կենդանիները՝ լայնությամբ, երկարությամբ և ամեն ուղղությամբ: Երբ ճանապարհորդները հարցնում են.

— Ո՞ւր է տանում այս ճանապարհը:

Պատասխանում են.

— Եկեղեցի, քաղաք, դեպի գետ:

Եվ ճանապարհորդները, առանց որևէ ջանք գործ դնելու, ընտրում են համապատասխան ճանապարհը, որը նրանց տանում է այնտեղ, որտեղ պետք է:

Այդ է պատճառը, որ կղզում բավականին շատացել են պարապ-սարապ մարդիկ և թափառաշրջիկները: Դրանց բան ու գործն այն է միայն, որ շարժվում են մի տեղից մյուսը: Խեղճ ճանապարհները նրանցից շատ են վախենում, և ամեն կերպ աշխատում են մի կերպ խույս տալ նրանցից:

Այդ կղզում ես տեսա դեպի Բուրժ տանող ճանապարհը: Ճանապարհը գնում էր համաչափ քայլերով: Բայց հենց որ երևացին սայլապաններն իրենց ծանր սայլերով, ճանապարհը գլուխն առավ ու նրանցից փախավ առանց ետ նայելու: Նա վախեցավ ձիերի սմբակներից:

Վերադառնալիս մենք տեսանք մի թափառաշրջիկի, որին տանում էին պահակները: Բանից պարզվեց, որ այդ թափառաշրջիկն օր ու գիշեր թափառելիս է եղել մեծ ճանապարհին և կոտրել է նրա կողը: Այժմ այդ թափառաշրջիկի բանը վատ կլինի:

«Ասում են» կղզում մենք լսում էինք մի տարօրինակ աղմուկ: Թվում էր, թե մոտերքում աշխատում է մի ջրաղաց կամ հողմաղաց, որի անընդմեջ դղրդյունը լսվում էր չորս կողմը: Երբ մի քիչ առաջ գնացինք, հանդիպեցինք մի կարճիկ, կուզիկ և չափազանց այլանդակ ձիուկի: Նրան կոչում էին «Ասում են»: Նրա բերանը հասնում էր մինչև ականջները, իսկ բերանում յոթ լեզու կար: Նրա յոթ լեզուները միաժամանակ անդադար շաղակրատում էին, և լեզուներից յուրաքանչյուրը շաղակրատում էր մի առանձին եղանակով, ոչ այնպես, ինչպես մյուսները: Բացի այդ, «Ասում են»-ը շատ ականջներ ուներ գլխին և ամբողջ մարմնի վրա: Բայց այքեր չուներ, և ոտքերն անշարժ էին:

«Ասում են»-ի շուրջը մեծ բազմություն էր հավաքվել: Բոլորն ականջ էին դնում, թե ինչ է ասում նա, և նրանից խելք ու գիտություն էին սովորում: Մեկի ձեռքին տեսա տիեզերքի մի մեծ քարտեզ: Նա բացատրում էր քարտեզը և այսպես, և այնպես, խոսում, դատողություններ էր անում ամենազարմանալի բաների մասին, հիմնվելով միայն «ասեկոսների» վրա: Մյուսները բերանբաց լսում էին նրան և մի քանի ժամից հետո իրենք էլ դառնում էին մի-մի գիտնական: Որպեսզի մարդ իրոք իմանա թեկուզ մի հարյուրերորդը այն բանի, ինչ որ նրանք իմանում էին մի քանի ժամում, բավական չէր լինի մարդկային ամբողջ կյանքը: Բայց նրանք այժմ ամեն բան գիտեին և «լսածով» դատողություն էին անում ամեն բանի մասին:

Ինձ թվում էր, որ մարդկանց մեջ ես տեսա հին գրողներից ու իմաստուններից շատերին: Թաքնվելով գորգի ետևում, նրանք գրում էին գեղեցիկ գրքեր բուրգերի մասին, հսկաների մասին, գանձանների մասին, մարդակերների մասին, և ուրիշ ինչի մասին ասես, և միշտ միայն «լսածով»:

Ճանապարհ ընկանք «Ասում են» կղզուց և չորս օր նավարկելուց հետո մոտեցանք Լապտերների կղզուն:^[86] Դեռ կղզուն չմոտեցած՝ տեսանք ծովում շատ շարժուն կրակներ: Ես կարծում էի, թե դրանք լուսատու ձկներ են՝ նման իմ հայրենիքի լուսատուիկներին: Բայց նավապետն ասաց, որ դրանք լապտերներն են գիշերապահ ոստիկանների, որոնք պահպանում են այս երկրի սահմանները:

Շատ չանցած մենք մտանք Լապտերների նավահանգիստը: Ահագին Փարոսները պայծառ լույսով լուսավորում էին Լապտերների նավահանգիստը: Մենք բացատրեցինք Փարոսներին, թե ինչ է մեր ճամբորդության նպատակը, և նրանք հանձն առան մեզ ներկայացնելու իրենց թագուհուն:

Անհնար է պատմել, թե որքան լավ ընդունեց մեզ թագուհին: Պանուրգը ողջունեց թագուհուն Լապտերների լեզվով և խնդրեց մի լավ ուղեկցող տալ, որ մեզ առաջնորդի Շշի պատգամախոսի մոտ: Թագուհին մեզ հրավիրեց ընթրիքի: Այնտեղ մենք ինքներս պետք է ուղեկցող ընտրեինք պալատական լապտերների միջից:

Եկավ ընթրիքի ժամը: Թագուհին առաջինը սեղան նստեց, իսկ նրանից հետո մնացած բոլոր Լապտերները՝ համաձայն իրենց աստիճանի ու դիրքի: Թագուհու շորը լեռնային բյուրեղից էր՝ զարդարված խոշոր ադամանդներով: Ականավոր Լապտերներից ոմանք ապակե հագուստ էին հագել, ոմանք՝ փայլարե հագուստ, մնացածները եղջուրե, թղթե և մոմյաթե:

Ընթրիքին մատուցեցին վառված մեծ-մեծ մոմեր: Թագուհուն մատուցեցին ծայրը կարմիր մի մեծ սպիտակ մեղրամոմ: Ականավոր լապտերներին մատուցեցին

ճարպամուկներ, մնացածներին ընկույզից պատրաստած մուկներ: Եվ որքան պայծառ էր
Լապտերների լույսն ընթրիքից հետո: Պարզ երևում էր, որ նրանք շատ կուշտ են:

Ընթրիքից հետո մենք որպես ուղեկցող ընտրեցինք մի հրաշալի և ամենաբարձր որակի
Լապտեր, և, թագուհուն շնորհակալություն հայտնելով, շարունակեցինք մեր
ճանապարհը:

Գլուխ XLVI

Այն մասին, թե ինչպես եկանք կախարդական Շշի պատգամախոսի մոտ

Մեր իմաստուն Լապտերի օգնությամբ վերջապես հասանք վաղուց ցանկացած
կախարդական Շշի կղզին: Երբ ափ դուրս եկանք, Պանուրզը, թռչկոտելով մի ոտքի վրա,
Պանտագրյուելին ասաց.

— Վերջապես վերջացան մեր հոգսերը, այսօր մենք գտանք այն, ինչ որոնում էինք,
ենթարկելով մեզ հազար ու մի վտանգի:

Այդ ժամանակ առաջ անցավ Լապտերը և մեզ տարավ մի հրաշալի այգու միջով: Ավելի
գեղեցիկ այգի կյանքումս չէի տեսել: Այստեղ կային ամեն տեսակի խաղողի վազեր՝
Մուսկատի, Ֆալերնի, Անժուի, Կորսիկայի... Լապտերը մեզ հրամայեց խաղողի երեքական
հատիկ ուտել և մի-մի կանաչ ոստ առնել ձեռքներս:

Այգին վերջանում էր մի բարձր ու գեղեցիկ կամարով: Դրանից հետո ճանապարհը
տանում էր դեպի ստորերկրյա տաճարը: Տաճարի դռան մոտ մեզ հանդիպեց պարոն
Թունդին, որ կախարդական Շշի նահանգապետն էր և շրջապատված էր մեծ
պահակախմբով: Պահակախումբը կազմված էր ֆրանսիական փոքրիկ շշերից: Երբ
նահանգապետը նկատեց, որ ձեռքներումս բռնած ունենք մի-մի կանաչ ոստ, հրամայեց
մեզ տանել իշխանուհի Բակրյուկի մոտ, որ այստեղի կառավարչուհին էր և կախարդական
Շշի պալատական տիկինը:

Եվ ահա մենք մի շքեղ սանդուղքով իջանք գետնի տակ: Եթե չլինեք մեր հրաշալի
Լապտերը, մենք անշուշտ կկորցնեինք ճանապարհը: Բայց Լապտերի պայծառ լույսը
օգնում էր մեզ իջնել սանդուղքի աստիճաններով և անցնել սանդուղքի բազմաթիվ
պտույտներով:

Երբ հասանք յոթանասուներորդ աստիճանին, Պանուրզը հանկարծ սաստիկ վախեցավ:

— Տիկին, — ասաց նա դառնալով դեպի Լապտերը, — ավելի լավ չէր լինի արդյոք, որ ետ
գնայիք, աստված վկա, վախից քիչ է մնում սիրտս ճաքի: Համաձայն եմ երբեք
չամուսնանալ: Դուք շատ չարչարանք կրեցիք իմ պատճառով, աստված ձեզ փոխարենը
կհատուցի: Ես էլ ապերախտ չեմ լինի, եթե միայն ողջ-առողջ դուրս գամ այս անիծված
քարանձավից: Շատ եմ խնդրում, ետ գնանք: Ինձ այնպես է թվում, որ դժոխքը երախը բաց
է արել, ուզում է ինձ կուլ տալ: Շուտով սատանաներն էլ կերևան: Ժան վարդապետ,
որտե՞ղ ես դու, սիրելիս: Սիրելիս, հաստափորիկս, մի հեռացիր ինձնից: Վերցրե՛ր ես սուրդ,
թե ոչ: Հակառակի պես հետս ոչ մի գենք չեմ վերցրել: Ետ դառնանք:

— Մի վախեցիր, ես այստեղ եմ, — ասաց Ժան վարդապետը: — Ես քո օձիքից այնպես պինդ եմ բռնել, որ քսան սատանա էլ գան, քեզ իմ ձեռքից խլել չեն կարող: Ճիշտ է, գենք չեմ վերցրել հետս, բայց ի՞նչ կարիք կա գենքի: Մենք հո դժոխք չենք իջնում: Էշի գլուխ, մենք քեզ ամուսնացնել ենք ուզում:

— Դու ինքդ կարող ես ամուսնանալ դողերոցքի հետ, — պատասխանեց Պանուրգը: — Մռռան Կատուն վաղուց արդեն քեզ համար հարսնացու է գտել:

Բայց այդ միջոցին ուղեցույց Լապտերը հրամայեց մեզ լռել:

— Դուք այնտեղ միանգամայն ապահով եք, — ասաց նա, — զուր չէ, որ ձեր ձեռքին մի-մի կանաչ ոստ կա:¹⁸⁷¹

— Որ այդպես է, առաջ գնանք, — ասաց Պանուրգը: — Առանց երկար ու բարակ մտածելու մտնենք այս դժոխքը: Երկու մահ չկա, մեկից էլ փրկություն չկա: Ճիշտն ասած, վաղուց է, ինչ երագում եմ կռվի մասին: Իսփիր, առաջ գնա, քաջությամբ ոչ ոքից պակաս չեմ: Ճշմարիտ է, սիրտս մի քիչ թուլանում է, բայց դրա պատճառը երևի հեղձուկ օդն է, ոչ թե երկուղը: Իսփիր, հարձակվիր, մի վախենա, ինձ Պանուրգ կասեն, քաջ Պանուրգ:

Պանուրգի վրա ծիծաղելով մենք ցած իջանք սանդուղքով և կանգ առանք մի փակ դռան առաջ: Դռները շինված էին հաստ պղնձից և զարդարված էմպե փոքրիկ նկարներով: Ոչ մի կողպեք ու փականք չկար, միայն մեջտեղում, որտեղ կպած էին դռան երկու փեղկերը, կախված էր մի գեղեցիկ, բակլայի մեծությամբ հնդկական աղամանդ, որ ամրացրած էր վեցանկյունանի ոսկե շրջանակի մեջ:

Այստեղ մեր գեղեցկուհի ուղեկցուհին մեզ ասաց, որ ինքն այլևս առաջ չի գնա, որովհետև մենք այժմ ոտք ենք դնում կախարդուհի Բակբյուկի թագավորությունը և պետք է հպատակվենք միայն նրան: Դրանից հետո նա վերցրեց շղթային ամրացրած աղամանդը, դրեց արծաթե մի փոսորակի մեջ, որ շինված էր դռան աջ կողմում, և մի կողմ քաշվեց:

Դռան երկու փեղկերն իրենք իրենց բացվեցին, թեև նրանց ոչ ոք չէր դիպել: Սովորաբար ծանր դռները բացվելիս ճռռում և անախորժ ձայն են հանում, իսկ այժմ նման բան չեղավ: Դուռը բացվեց հեշտ ու հանգիստ և բացվելիս քնքուշ ձայն հանեց, որ տարածվեց ամբողջ տաճարում և բարձրանալով մինչև բարձր կամարները, կամաց-կամաց նվազեց: Պանտագրյուելին իսկույն հասկացավ, թե ինչու է այդպես լինում: Դռան փեղկերը բացվելիս սահում էին փոքրիկ և լավ հղկած գլանակների վրայով, որոնք ամրացված էին փեղկերի ներքին մասում: Այդ գլանակները հարթ ու հավասար մարմարե հատակի վրա գլորվելիս հանում էին այն մեղ ձայնը, որը և զարմացրեց մեզ:

Բայց ինձ ամենից շատ զարմացրեց այն, որ դռները բացվեցին իրենք իրենց, առանց որևէ հպման: Իմանալու համար, թե ինչու է այդպես լինում, ես ուշադրությամբ տնտղեցի դռան երկու փեղկերը: Փեղկերի այն մասում, որտեղ նրանք ծածկվելիս կաչում են իրար, ես նկատեցի պողպատե երկու բարակ թիթեղներ, որոնք պարփակված էին կորնթական բրոնզի մեջ: Իսկ դռան դրանդիի վրա, այնտեղ, որտեղ դռան փեղկերը բացված ժամանակ հենվում են, կացված էին երկու մեծ ու լավ հղկված հնդկական մագնիսի կտորներ՝ ձեռնափի հաստությամբ: Հետևապես, երբ մեր գեղեցկուհի Լապտերը վերցրել է աղամանդը, որը փոխարինում է փականքին, մագնիսը ձգել է դեպի ինքը պողպատե թիթեղները, և դուռն ինքն իրեն բացվել է:

Թիրախներից մեկի վրա հին լատինական տառերով փորագրված էր հետևյալ մակագրությունը՝

Վախճանը պսակում է գործը:

Գլուխ XLVII

Այն մասին, թե ինչպես է կառուցվել ստորերկրյա տաճարը

Մեկ էլ տեսանք, որ մենք գտնվում ենք մի հոյակապ ստորերկրյա տաճարում: Այդպիսի տաճար, ես ոչ մի տեղ չէի տեսել: Ինձ առանձնապես զարմացրեց տաճարի հատակը: Արվեստի և ոչ մի գործ չէր կարող հավասարվել այդ հատակին: Ամբողջ հատակը խճանկար էր և կազմված էր փոքրիկ թանկագին քարերից, որոնք քառակուսու ձև ունեին: Քարերը լավ հղկված էին, և նրանցից յուրաքանչյուրը փայլում էր իրեն հատուկ փայլով՝ մեկը կարմրագույն հասպիս էր, մյուսը երփներանգ մարմար, երրորդը՝ ծիրանաքար, չորրորդը՝ գայլի աչք՝ ոսկեփայլ կայծակներով կամ ագաթ կաթնագույն երանգով, հինգերորդը շատ փայլուն քաղկեդոնաքար էր, վեցերորդը՝ կանաչագույն հասպիս, կարմիր ու դեղին երակներով:

Եվ այնպես վարպետորեն էին գուգակցված իրար այդ քարերը, որ կարծես մի ահագին խտիտ կանաչ տերևներ էին թափվել հատակի վրա: Այդ տերևների մեջ զանազան տեղերում երևում էին խիսունջներ, մի ուրիշ տեղ աչքի էր ընկնում մի մողես, մի քանի տեղերում էլ կարծես կույտ-կույտ պտուղներ ու հատապտուղներ են շաղ տվել: Եվ այս բոլորը կատարված էր այնպիսի վարպետությամբ, որ մենք ականա բարձրացնում էինք մեր ոտքերը, որպեսզի դեմ չառնեն ոստերի կույտերին, որոնք իրոք հարթ և հղկված նկարներ էին միայն:

Տաճարի պատերն ու կամարները ծածկված էին խճանկարներով: Կային այդտեղ ուրախ պարերի, արյունահեղ կռիվների, հաղթական թափորների և շատ ուրիշ նկարներ: Եվ չնայած նրան, որ տաճարը ստորերկրյա էր ու առանց պատուհանների, նկարները պայծառ լուսավորված էին: Դահլիճը լուսավորողը մի հրաշալի ջահ էր, որ կախված էր նրա մեջտեղում և իր շոյող լույսը տարածում էր ամբողջ շենքով մեկ:

Այդ ջահի կառուցվածքն ինձ այնքան զարմացրեց, որ մանրամասնորեն պիտի պատմեմ նրա մասին: Ինչպես ասված է, ջահը կախված էր տաճարի մեջտեղում: Այնտեղ, բարձր կամարի մեջտեղում ամրացված էր գունդ ոսկուց շինված մի օղակ՝ բռունցքի հաստությամբ: Այդ օղակից երեք ոսկե շղթաներով կախված էր մի կյոր ոսկե թիթեղ: Այդ թիթեղի մեջ չորս անցք էր բացված և յուրաքանչյուր անցքի մեջ մտցված էր մի-մի սնամեջ, բայց վերևի կողմից բաց գունդ՝ փոքրիկ լամպի պես մի բան: Այդ լամպերը շինված էին թանկագին քարերից. մեկը՝ մեղեսիկից, մյուսը՝ կարկեհանից, երրորդը՝ արևաքարից, չորրորդը՝ տպագիռնից: Նրանք բոլորը լիքն էին մի տեսակ կախարդական ջրով և պայծառ լույս էին արձակում:

Ոսկե թիթեղից երեք ուրիշ շղթաներով կախված էր մի այլ ահագին լամպ, որ շինված էր ամենամաքուր բյուրեղից: Նրա մեջ դրված էր մի բյուրեղյա սկուտեղ՝ մեջը լիքը նույն

այրվող ջրով: Լույսն անցնում էր բյուրեղի միջով, և այդ մեծ լամպն այնպես էր շողշողում, որ անհնար էր նրան նայել:

Դա մի զարմանալի գյուտ էր, բայց ավելի զարմանալին այն էր, որ բյուրեղյա լամպի վրա քանդակագործը քանդակել էր փայլուն ձիերի վրա նստած մերկ երեխաներ, որոնք կարծես կենդանի լինեին, որովհետև լույսն անցնում էր նրանց միջով ներսի կողմից և փայլվում ու փողփողում էր բյուրեղյա նկարների մեջ:

Գլուխ XLVIII

Այն մասին, թե ինչպես էինք խմում կախարդական շատրվանի ջուրը

Այն ժամանակ, երբ մենք դիտում էինք այդ հրաշալի տաճարը, մեր առաջ դուրս եկավ կախարդուհի Բակբյուկն իր շքախմբով: Միրալիթ ժպտալով՝ նա հրավիրեց մեզ տաճարի միջին մասը, որտեղ կար մի բարձր շատրվան, որ շինված էր թափանցիկ ալեբաստրից: Շատրվանի շուրջը յոթ սյուն կար: Առաջին սյունը շինված էր երկնագույն շափյուղից: Սյան գագաթին դրված էր Սատուրն աստծու արձանը՝ ձեռքին բռնած մի գերանդի:^[88] Սատուրնի ոտքերի մոտ կանգնած էր ոսկե կռունկ՝ հիանալի էմալով զարդարված: Երկրորդ սյունը շինված էր հակինթից և նրա վրա կանգնել էր Յուպիտերը՝ կրծքին մի ոսկե արծիվ,^[89] երրորդ սյունը շինված էր ադամանդից: Նա այնպես էր շողշողում, որ դժվար էր նրան նայել: Նրա վրա դրված էր Ֆեբ-Վալոնը՝ ամբողջապես ոսկուց ձուլած:^[90] Աջ ձեռքում Ֆեբը բռնած ուներ սպիտակ աքլոր: Չորրորդ վառ կարմիր սուտակե սյան վրա կանգնած էր Մարսը, պատերազմի աստվածը՝ ոտքերի մոտ մի առյուծ: Հինգերորդ՝ գմբուխտե սյան վրա կանգնած էր Վեներան, և նրա ոտքերի մոտ նստել էր մի գեղեցիկ աղավնի:^[91] Վեցերորդ ազաթե սյունը պսակում էր Մերկուրիոսը:^[92] Նրա ոտքերի մոտ նստած էր մի արագիլ: Յոթերորդ սյունը շինված էր թափանցիկ լուսնաքարից և նրա գագաթին դրված էր Լուսնի աստվածուհու արծաթե արձանը:

Այս յոթ սյուները, որոնք նվիրված էին յոթ երկնային մոլորակներին, միացած էին միմյանց հետ գեղեցիկ կամարներով: Կամարների վրա էր հենվում հոյակապ բյուրեղյա գմբեթը, որ ծառայում էր որպես տանիք շատրվանի համար: Գրեթե այնքան մաքուր և թափանցիկ էր, որ ես չնկատեցի նրա վրա ոչ մի խորդուբորդություն, ոչ մի միջներակ և ոչ մի բիծ: Նրա գագաթին, ուղիղ այն ջահի տակ, որ ես նկարագրել եմ, ամրացված էին երեք տանձաձև մարգարիտներ՝ ձեռնափի մեծությամբ: Մարգարիտները միացրած էին միմյանց շուշան ծաղկի նման: Այդ շուշանաձև մարգարիտների միջից դուրս էր եկել ջայլամի ձվի չափ կարկեհան, այնքան հրաշալի և այնքան պայծառ, որ նայել չէր լինում:

Շատրվանից ջուրը խփում էր երեք շիթով: Սադափե փողրակները, որոնց միջով հոսում էր ջուրը, պարուրաձև էին ու նման ահագին խխունջների և գտնվում էին ավազանի խորքում: Լսվում էր նրանց միջից, որպես երկրի խորքերից եկող ջրի հրաշալի ու միաժամանակ խուլ և ընդհատուն խոխոջումը:

Այդ միջոցին Բակբյուկը հրամայեց բերել սկահակներ, թասեր ու գավաթներ և առաջարկեց մեզ ճաշակել այդ հրաշալի շատրվանի ջուրը: Պետք է ասել, որ մենք այնքան էլ տխմար չէինք, որ հրաժարվեինք սիրալի առաջարկից: Ուստի մենք չթողեցինք, որ մեզ

երկար ու բարակ խնդրեն, ու իսկույններ մի-մի մեծ գավաթ խմեցինք այդ ջրից: Եվ մի րոպե չանցած զգացինք, որ մի զարմանալի փոփոխություն է կատարվել մեր մեջ: Մեր հոգնածությունն իսկույն անցավ, արագացավ մեր արյան շրջանառությունը, մեր այտերի վրա կարմրություն եկավ, մենք մեզ զգացինք առույգ, առողջ և առնվազն մի տասը տարով ջահելացած:

— Հավանո՞ւմ եք մեր կախարդական խմիչքը, — հարցրեց Բակբյուկը:

— Սա հրաշալի աղբյուրի ջուր է, — ասաց Պանտագրյուելը, — կյանքումս սրա նման զարմանալի ջուր խմած չկամ: Պետք է ասեմ, որ ոչ մի ջուր այնպես չի թարմացնում մարդուն, ինչպես այս ջուրը:

— Այժմ մի-մի գավաթ էլ խմեցեք, — ժպտալով ասաց Բակբյուկը, — և երևակայեցեք, որ խմում եք այն գինին, որ ձեզ ամենից շատ է դուր գալիս:

Մենք դարձյալ խմեցինք:

— Աստված վկա, — գոչեց Պանուրզը, — սա կամ Բոննի աննման գինի է, կամ թե ես ոչինչ չեմ հասկանում:

— Ազնիվ խոսք, — ասաց Ժան վարդապետը, — սա Գրավ տեսակի գինի է, ուրախացնող և պճպճան: Ի սեր աստծո, սովորեցրեք մեզ, ինչպես եք պատրաստում այս գինին:

— Ինձ թվում է, — ասաց Պանտագրյուելը, — սա Միրվոսի գինու տեսակիցն է: Ես հենց այդ գինու մասին էի մտածում խմելուց առաջ:

Գլուխ XLIX

Այն մասին, թե ինչպես էր խոսում Պանուրզը կախարդական Շշի պատգամախոսի հետ

— Ուրեմն դուք տեսնում եք ինչպիսի հրաշալի հատկություններ ունի այս ջուրը, — ասաց Բակբյուկը: — Ո՞վ է ձեզանից ուզում լսել կախարդական Շշի պատգամախոսին:

— Ես, ձեր խոնարհ սափորս, — պատասխանեց Պանուրզը:

— Միրելի բարեկամ, — պատասխանեց կախարդուհին, — ես միայն մի խրատ ունեմ ձեզ տալու՝ պատգամախոսին մոտենալիս մի ականջով միայն լսեք նրան:

Այնուհետև Բակբյուկը Պանուրզի վրա մի կանաչ գույնի վերարկու գցեց, գլխին գեղեցիկ սպիտակ գլխարկ դրեց, երեք անգամ նրա երեսը լվաց շատրվանի ջրով և ստիպեց երեք ուստյուն կատարել: Հետո ոսկե դռների միջով տարավ նրան մի շրջանաձև մատուռ, որ շինված էր փայլարից և զանազան թափանցիկ քարերից: Մատուռը պատուհաններ չուներ, բայց լուսավորված էր արևի պայծառ լույսով, որ թափանցում էր մատուռի կտուրի վերևում գտնվող ժայռի մեջ շինված բացվածքից: Մատուռի մեջտեղում կար մի յոթյոթանի ավազան՝ լիքը մաքուր ու վճիտ ջրով: Ավազանի մեջտեղում կիսով չափ ջրի մեջ դրված էր մի ահագին Շիշ, որ ձվաձև էր և շինված գեղեցիկ ու մաքուր բյուրեղապակուց:

Բակբյուկն ստիպեց Պանուրգին համբուրել ավազանի եզրը և երեք սրբազան պար պարել: Հետո Պանուրգին նստեցրեց հատակին, բաց արեց ու դրեց իր առաջ մի հաստ գիրք և ստիպեց երգել հետևյալ երգը`

Ով			դու			շիշ,
Որ						ծայրեծայր
Լի՛		քն		ես		զաղտնիքով,
Ունկնդրում						եմ
Մի						ականջով
Եվ		լում			եմ	քեզ:
Քո		վճիտ			ջրերի	մեջ
Չկա	ոչ	մի	ոխ		և	ոտտ,
Քեզ	եմ	կանչում	ես		փորձանքի	ժամին,
Չայն		տուր		ինձ		շատրվանից:
Ո՛վ			դու			շիշ,
Որ						ծայրեծայր
Լի՛քն			ես			զաղտնիքով:
Չգայուն						ականջով
Ունկնդրում						եմ
Եվ լում քեզ:						

Երբ երգը վերջացավ, Բակբյուկը չգիտեմ ինչ գցեց ավազանի մեջ, և հանկարծ ջուրը ծածկվեց պղպջակներով ու եռաց: Պանուրգը լուռ լում էր մի ականջով: Բակբյուկը ծունկ էր չոքել նրա մոտ: Հանկարծ Շշի միջից լսվեց մի աղմուկ, որ նման էր հորդ անձրևի ձայնին: Աղմուկը գնալով սաստկանում էր: Ահա աղմուկը բռնեց ամբողջ մատուռը, և Շշից դուրս թռավ «Տրինկ» խոսքը և միանգամից լռություն տիրեց:

— Շիշը ճաքել է, — գոչեց Պանուրգը, — աստված վկա՝ ճաքել է: Այդպես ճաքում են բյուրեղյա շշերը, երբ դնում են կրակի վրա:

— Միրելի բարեկամ, — ասաց Բակբյուկը, — շնորհակալ եղեք բախտից, դուք ստացել եք կախարդական Շշի խոսքը: Դա ամենից ճիշտ խոսքն է, որ ես երբևիցե լսել եմ: Վեր կացեք ուրեմն, գնանք տաճար, նայենք գրքերի մեջ, տեսնենք ինչ է նշանակում այդ խոսքը:

— Գնանք, — ասաց Պանուրգը, — շարժվեցեք: Որտե՞ղ է դուռը: Որտե՞ղ է գիրքը: Տեսնենք, ինչպես են մեկնաբանում այդ կախարդական խոսքը:

Գլուխ L

Այն մասին, թե ինչպես է Բակբյուկը մեկնաբանում կախարդական Շշի պատասխանը

Բակբյուկը բերեց Պանուրգին գլխավոր տաճարը և պահարանից հանեց մի մեծ արծաթե գիրք: Բաց արեց գիրքը, գտավ նրա մեջ իրեն հարկավոր գլուխը և ասաց.

— Լսեցեք ճանապարհորդներ, և լավ ուշք դարձրեք, թե ինչ եմ ասում: «Տրինկ» խոսքը մեծ խոսք է: Նա հայտնի է շատ ժողովուրդների և նշանակում է «Խմեցեք»: Ես, իհարկե, չեմ խոսում ընդհանրապես խմելու մասին, որովհետև առանց խմելու չի կարող ապրել ոչ

մարդ և ոչ անասուն: Իմ խոսքը ուրիշ խմելու մասին է, այն խմիչքի մասին, որ մենք պետք է ներծծենք յուրաքանչյուր օր և յուրաքանչյուր ժամ, որին պետք է ձգտենք անդադար և որը պետք է աշխատենք ձեռք բերել, որպեսզի նրանով կարողանանք թարմացնել մեր սիրտն ու մեր ուղեղը, նրանով դառնանք ուժեղ, հզոր, արդար և գործունյա: Դուք անշուշտ գուշակած կլինեք արդեն, թե ինչ խմիչքի մասին է իմ խոսքը: Ես խոսում եմ աշխարհումս գոյություն ունեցող բոլոր իրերի ամենաստույգ գիտության մասին: Միայն այդպիսի գիտությունը ձեզ լույս աշխարհի կհանի տգիտության անդունդից, կազատի ձեզ նախապաշարումներից ու սնապարծությունից, բաց կանի ձեր աչքերը, և դուք կվերածվեք մի նոր ու զարմանալի կյանք վարելու համար: Ինչպես այն կախարդական ջուրը, որ դուք խմեցիք մեր շատրվանից, ճշմարիտ գիտությունը կդարձնի ձեզ առույգ և առողջ, դուրս կվանի ձեզանից հոգնածությունն ու տաղտկությունը, դուրս կքշի հիվանդությունները և կսովորեցնի ձեզ իշխել բնության խորհրդավոր և անըմբռնելի ուժերի վրա:

Բայց չկարծեք, դուք, օտարականներ, որ ճշմարիտ գիտության ուղին դյուրին է և անվտանգ: Ինչպես նախքան կախարդական Շշին հասնելը դուք պետք է երկար թափառեիք անեզր ծովերում, այնպես էլ երկար ժամանակ ահագին աշխատանք պետք է թափեք, որպեսզի հասնեք ճշմարիտ գիտության ավերին: Դուք դարձյալ պետք է ձեզ համար ուղեցույց ունենաք լուսատու լապտերը՝ սքանչելի ու բարի գիտությունը, որը կփարատի ձեզ շրջապատող խավարը և ցույց կտա ուղիղ ճանապարհը: Ինչպես դուք այժմ իջել եք մեր ստորերկրյա խորհրդավոր աշխարհը, նույնպես և պետք է իջնեք դուք ձեզ համար անհասկանալի ու անհայտ իրերի աշխարհը, իրեր, որոնց իսկական իմաստը դեռ երկար ժամանակ հասկանալի չի լինի ձեզ: Չափազանց սխալվում են ձեր փիլիսոփաները, երբ գանգատվում են, թե հին մարդիկ ամեն բանի մասին արդեն գրել վերջացրել են և իրենց համար ասելու այլևս ոչինչ չի մնացել: Այն, ինչ որ երկրի ընդերքում է, այն, ինչ որ գոյություն ունի ծովերում ու գետերում, ինչ որ դուք տեսնում եք երկնքում, — այդ բոլորի մասին դուք դեռ՝ շատ քիչ բան գիտեք, այդ բոլորը դեռ մշուշի մեջ է ձեզ համար, որովհետև ճշմարիտ գիտությունը դեռ շատ հեռու է ձեզանից:

— Իսկ ի՞նչ կասեք դուք իմ ամուսնության մասին, — հարցրեց Պանուրգը, — իմ կինը ինձ կծեծի՞ թե ոչ:

— Սիրելի բարեկամ, — ասաց ժպտալով Բակբյուկը, — երբ դուք կանգնած լինեք ճշմարիտ, այլ ոչ սուտ գիտության ճանապարհի վրա, այն ժամանակ դուք հեշտությամբ կկարողանաք տարբերել վատ մարդուն լավ մարդուց: Հուսով եմ, որ այն ժամանակ էլ դուք կկարողանաք կին ընտրել ձեզ համար ձեր ճաշակի համաձայն:

— Դժվար թե կարելի լինի ավելին ասել, քան ասաց այս բարի կախարդուհին, — ասաց Պանտագրյուելը, — ես էլ ձեզ նույն էի ասում, երբ դուք առաջին անգամ խոսեցիք ինձ հետ այդ հարցի մասին:

— Տրինկ, — ասաց Ժան վարդապետը, — տրինկ: Իսկ այժմ խոսենք այն բանի մասին, թե ինչպես շնորհակալ լինենք տանտերերին:

— Հանգիստ եղեք այդ մասին, — ասաց Բակբյուկը, — բավական է, որ դուք մեզանից գոհ եք: Կխնդրեի միայն, որ ձեր անունները գրեք այս գրքում:

Այս խոսքերն ասելիս մի գեղեցիկ գիրք բաց արեց նա: Մենք թելադրեցինք, և իմաստուններից մեկը ինչ-որ բան գրեց ոսկե գրիչով: Հենց այդ ժամանակ Բակբյուկը երեք մեծ տիկ լցրեց կախարդական ջրով և մեր ձեռքը տալով ասաց.

— Վերադարձեք ձեր երկիրը, բարեկամներ, և վկայեցեք, որ գետնի ընդերքում բավական հարստություններ և զարմանալի իրեր կան թաքնված: Երբ նավ նստեք, այս տիկերից քիչ-քիչ ջուր բաց թողեք: Այդ ջուրը գոլորշիանալով, կդառնա թեթև համընթաց քամի, որի օգնությամբ դուք ուղիղ գծով կդառնաք մինչև Տալմոնդուայի Օլոն նավահանգիստը: Չմոռանաք միայն այդ քամին ուղղել ձեր առագաստների վրա ոսկե փուքսի միջոցով, որը սրինգի ձև ունի և դրված է տիկերի հետ միասին: Այն ժամանակ դուք միշտ ապահով կլինեք, և ոչ մի փոթորիկ ձեզ չի սպառնա: Ձեր նավերը կգտնեք բոլորովին պատրաստ: Նրանց վրա բեռնված է այն ամենը, ինչ որ ձեզ անհրաժեշտ է ձեր վերադարձի համար: Ձեր այստեղ եղած ժամանակ ես այդ բոլորի մասին հոգացել եմ: Գնացեք ուրեմն, բարեկամներ, ուրախ սրտով և տարեք այս նամակն ու հանձնեք ձեր տիրոջը՝ Գարգանդուային, հայտնեք մեր ողջույնը նրան, նույնպես և նրա մերձավորներին ու հպատակներին:

Այս խոսքերն ասելիս Բակբյուկը հանձնեց մեզ կնքված նամակը և, մեր հավերժ երախտագիտության հավաստիացումները լսելուց հետո, մեզ առաջնորդեց դեպի վեր: Անցնելով այդ ծաղկալից, պտղավետ ու սքանչելի կղզու միջով, ինչպիսին է և մեր հայրենի Տուրենը, մենք դուրս եկանք վերջապես ծովափ: Արեգակն արդեն բարձրանում էր հորիզոնում և սփռում իր ոսկեշող լույսը մեր նավերի վրա:

1. ↑ Ըստ հին հունական դիցաբանության, Սիլենը եղել է գինեգործության և այգեգործության աստված Դիոնիսի դաստիարակը և մշտական ուղեկիցը: Սիլենին միշտ պատկերում էին ճաղատ, հաստիկ ու հարբած ծերուկի տեսքով:
2. ↑ Գրանգուզիե ֆրանսերեն նշանակում է «մեծ կոկորդ»: Գրանգուզիեի կնոջ անունը՝ Գարգամել, նույնպես նշանակում է «կոկորդ»: Այդ երկու անունները ցույց են տալիս, որ հսկան և նրա կինը հայտնի շատակեր են եղել:
3. ↑ Դը գրան տյուա նշանակում է՝ «ինչ մեծ կոկորդ ունես»:
4. ↑ Պենանսակ նշանակում է՝ «Հացը՝ պարկի մեջ»: Որպես ծաղր այդպես էին Ֆրանսիայում անվանում շատ աղքատ մարդկանց:
5. ↑ Ֆրանրեպա նշանակում է՝ անվճար ճաշ: Ֆրանսերեն դարձվածքը՝ «անվճար ճաշ ուտել», — նշանակում է «ճաշել, առանց կերածի համար վճարելու»:
6. ↑ Մետր ֆրանսերեն նշանակում է ուսուցիչ: Գարգանտյուայի ուսուցչի անունը բաղկացած է աստվածաշնչային երկու անուններից՝ Տյուբալ, որն ըստ աստվածաշնչային առասպելաբանության Կայենի սերնդին է պատկանում և եղել է մետաղագործության հիմնադիրը, և Օլոֆերն, որը Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագավորի գորավարներից մեկի անունն է:
7. ↑ Մակեդոնիայի թագավոր Ֆիլիպ 2-ի (379—336 մթ. առաջ) որդի Ալեքսանդրը, (356—323 մթ.առաջ) մեծագույն աշխարհակալներից մեկն է:
8. ↑ Արիստոտելը (384—322 մթ. առաջ) խոշորագույն հույն գիտնականներից և փիլիսոփաներից մեկն է: Ճիշտ է, որ Ֆիլիպը հրավիրել էր նրան Մակեդոնիա որպես թագաժառանգի դաստիարակ:
9. ↑ Պոնկրատ հուներեն նշանակում է «անխոնջ», «ուժեղ»:
10. ↑ Եվդեմոն հունարեն նշանակում է «բախտավոր»:
11. ↑ Յիցերոն, Մարկոս Տուլիոս (106—46 մթ. առաջ) հին հռոմեական հռետոր, քաղաքական գործիչ և փիլիսոփա: Նրա ճառերը համարվում էին հռետորական արվեստի և կյանքի լատիներենի կատարելության օրինակ:
12. ↑ Երկրորդ գլխում Ռարլեն քննադատում է միջնադարյան կրթությունը, որը դեռևս իշխում էր նրա ժամանակ, և հին ձևի կրթությունը հակադրում էր նոր մանկավարժությանը: Միջին դարերում կրթությունը լիովին գտնվում էր հոգևորականության ձեռքում: Բացառապես կրոնական բնույթ ուներ: Ահա հենց այդպես էր կրթում Գարգանտյուային Տյուբալ Օլոֆերնը (դրանով է բացատրվում նրա աստվածաշնչային անունը): Բոլորովին այլ համոզմունքի տեր էր Գարգանտյուայի մյուս ուսուցիչը՝ Պոնկրատը: Պանկրատը ժամանակակից մանկավարժ էր: Նա իր սաներին սովորեցնում էր աշխատել թե ֆիզիկապես և թե մտավորապես (սրանից էլ առաջացել է նրա անունը):
13. ↑ Լանգեդոկը Ֆրանսիայի հարավային նահանգներից մեկն է: Լանգեդոկի այծերի ականջները կախ են ընկած, մինչդեռ սովորական այծերի ականջները վեր են ցցված և սրածայր են:

14. ↑ Նեյ աշտարակը մեկն է Փարիզի չորս մեծ աշտարակներից, ավերվել է XVII դարում:
15. ↑ Յանտուսի ճառը ծաղրական նմանողություն է միջնադարյան փիլիսոփաների դատողություններին: Ռաբլեն ծաղրում է միջնադարյան այն փիլիսոփաներին, որոնք ամենապարզ հարցերը դարձնում էին վերամբարձ ու վերացական խնդիրներ:
16. ↑ Ավետարանական հայտնի դարձվածք է:
17. ↑ Միջին դարերում մեղքերի թողություն կարելի էր գնել դրամով: Եկեղեցիներում և վանքերում ծախվում էին այսպես կոչված ինդուլգենցիաներ, որոնք մի տեսակ շնորհագրեր էին: Դրանցում նշված էին լինում այն մեղքերը, որոնց համար թողություն կարող էր ստանալ գնորդը:
18. ↑ Պեկրոշոլ (Պիկրոխոլ) հուներեն նշանակում է «ոյուրագրգիռ», «չար»:
19. ↑ Տրեպելյու ֆրանսերեն նշանակում է «քրջոտ», «մուրացիկ»:
20. ↑ Տուկդիլիոն ֆրանսերեն նշանակում է «պարծենկոտ», «սնապարծ»:
21. ↑ Բոմբարդ` հին թնդանոթ, որը լցնում էին քարե ռումբերով:
22. ↑ Մորտիր` կարճ և մեծ տրամաչափի թնդանոթ, որի արձակած ռումբերը աղեղնաձև էին սլանում օդի մեջ, այդ պատճառով կարողնում էին ամենաբարձր պարիսպների վրայից անցնել և հարվածել հակառակորդին:
23. ↑ Բագիլիկ` XVI դարի թնդանոթ, որի արձակած ռումբերը երկաթից էին և 75 ֆունտ ծանրություն ունեին: Այս թնդանոթը բագիլիկ անունն էր կրում, որովհետև նրա վրա կար առասպելական հրեշի` բագիլիկի նկարը: Դա մի օձ էր, որի գլխի մաշկի ծալքերը թագի ձև ունեին: Ըստ հին ավանդության, բագիլիկի միայն հայացքն սպանում էր մարդկանց ու կենդանիներին, իսկ նրա սուլոցը բոլորին փախուստի էր մատնում:
24. ↑ Տուրնեմուլ ֆրանսերեն նշանակում է «ջրադացքար դարձնող» (անշնորհք, ծանրաշարժ):
25. ↑ Գրատել ֆրանսերեն նշանակում է «քոսոտ», «զգվելի»:
26. ↑ Թագավորի ներկայությամբ գլխարկ կրելու իրավունք ունեին միայն ամենաբարձր անձինք: Երբ Պիկրոշոլը թույլ էր տալիս իր մերձավորներին գլխարկները չհանել, դրանով ուզում էր ցույց տալ, որ գոհ է նրանցից:
27. ↑ Բարբարոսա (Կարմրամորուս): Ալժիրի տիրակալ Կայիր Էդգինի մականունն էր (1476—1546):
28. ↑ Կաթոլիկական սովորության համաձայն պապին ներկայանալիս պետք է համբուրեին նրա հողաթափը:
29. ↑ Երուսաղեմի տանարն ըստ Աստվածաշնչի ավանդության կառուցել է եբրանեցիների թագավոր Սողոմոնը:
30. ↑ Եխեֆրոն հունարեն նշանակում է «զգույշ», «խելամիտ»:

31. ↑ ամբողջ արևմտյան Եվրոպայում մինչև XVIII դարը ռուսական պետությունը կոչվում էր Մոսկվա կամ Մոսկովիտիա, իսկ ռուսներին կոչում էին մոսկովցիներ»
32. ↑ Այն գլուխներում, որտեղ նկարագրված է Գրանգուզիեի մղած պատերազմը Պիկրոշոլի դեմ, Ռարլեն ծաղրում է դատաստանական գործը, որը սկսել էր նրա հայր Անտուան Ռարլեն իր հարևան կալվածատեր Սենտ-Մարտի դեմ:
33. ↑ Միջին դարերում շատ ընդունված էր ուխտ գնալ սուրբ վայրերը:
34. ↑ Կասսիա՝ լոբազգիների մի տեսակ է՝ ալեքսանդրիական տերև անունով:
35. ↑ Վեղարը գլխի ծածկոց է, որ գործ են ածում վարդապետները:
36. ↑ Ուրար՝ դիպակե երկար ժապավեն, որը որպես գոտի կապում են սարկավագները ժամերգության ժամանակ:
37. ↑ Դիպտոդիե հունարեն նշանակում է մի երկիր, որի բնակիչները պապակվում են ծարավից:
38. ↑ Գրիպմինո նշանակում է հափշտակիչ:
39. ↑ Վերածնության դարաշրջանում համարյա յուրաքանչյուր արքունիքում կամ դոյակում պահում էին թզուկ ծաղրածուներ: Հնուց գոյություն է ունեցել այն ավանդույթը, թե թզուկները պատերազմ են մղում կռուներին դեմ:
40. ↑ Անարխա հունարեն նշանակում է «իշխանություն չունեցող», «իշխանությունից զուրկ»:
41. ↑ Սալմիզոնդեն է կոչվում զանազան տեսակի մսեղենից պատրաստված ռազուն:
42. ↑ Պանուրգ հունարեն նշանակում է «ձեռքիցը ամեն ինչ եկող», «ստահակ»:
43. ↑ Էպիտեմոն հունարեն նշանակում է «գիտակ», «իրագեկ»:
44. ↑ Շոտլանդերեն մի նախադասություն, որը նշանակում է. «Պարոն, եթե դուք այնքան ուժեղ եք բանականությամբ, որքան և հաղթանդամ եք մարմնով...»:
45. ↑ Բասկերեն լեզվով մի նախադասություն, որ նշանակում է. «Պարոն, յուրաքանչյուր հիվանդության դեմ մի դեղ կա»:
46. ↑ Դեկան կաթոլիկ եկեղեցում կոչվում էին այն անձինք, որոնք գլխավորում էին վանքի կամ մայր եկեղեցու վարչությունը: Հետագայում դեկան անունը հատկացրին ֆակուլտետների ղեկավարին:
47. ↑ Մագիստրոս լատիներեն նշանակում է «ուսուցիչ»: Միջին դարերում հաստատված «մագիստրոսի» գիտկան աստիճանը պահպանվել է մինչև այսօր:
48. ↑ Տոումաստ հունարեն նշանակում է «զարմանալի», «արժանի հիացմունքի»:
49. ↑ Նավարայի դահլիճ է կոչվում հանդիսարահը Նավարայի քոլեջի, որ հիմնել է Նավարայի թագուհի Ժաննան 1309 թվականին: Այդ դահլիճում էին լինում գիտական բանավեճերը:

50. ↑ Պանգու՝գյուղ Ֆրանսիայում Լաուրա գետի ափին: Այդ գյուղի շրջակայքում կա մի քարանձավ՝ հինավուրց նկարներով: Ժողովրդական ավանդության համաձայն, այստեղ է ապրելիս եղել Պանգուի գուշակուհին:
51. ↑ Հեր-Տրիպպա՝ XVI դարի նշանավոր գիտնական Հենրիխ Կորնելիուս Ագրիպայի (1485-1535) աղավաղված անունն է: Նա մի գիրք է գրել կախարդության մասին: Ագրիպային ժողովուրդը համարում էր կախարդ:
52. ↑ Տրիբուլե (1579-1536) Լյուդովիկոս XII-ի նշանավոր ծաղրածուն է: Վիկտոր Հյուգոն նկարագրել է նրան իր «Արքան զվարճանում է» դրամայում:
53. ↑ Քսենոման հունարեն նշանակում է «ճանապարհորդություններ սիրող»:
54. ↑ Տալասա հունարեն նշանակում է «ծով»:
55. ↑ Մեդամոսի հունարեն նշանակում է «ոչ մի տեղ»:
56. ↑ Միեղջույրը երևակայական գազան է, որի մասին Աստվածաշնչի մեջ է հիշատակվում:
57. ↑ Խելիդոն հունարեն նշանակում է «ծիծեռնակ»:
58. ↑ Գոգալ հին եբրայերեն նշանակում է «աղավնի»:
59. ↑ Ֆրանսիական Ռուան քաղաքը հայտնի էր իր մահուդով:
60. ↑ Մակրեոն հունարեն նշանակում է «ծերունի»:
61. ↑ Պանը ըստ հին հունական դիցաբանության՝ հոտերի և անասնապահության աստվածն էր: Նրան ներկայացնում էին որպես կիսամարդ և կիսակենդանի, այծի կնդակներով, երկար մորուքով ու եղջյուրներով:
62. ↑ XVI դարում զվիցերական (շվեյցարական) հետևակ զորքը համարվում էր լավագույնը Եվրոպայում և ծառայում էր եվրոպական բանակներում որպես վարձու զորք: Չվիցերացիներին վարձում էին նաև որպես արքունիքի պահապաններ (Հռոմի պապի պալատի պահակախումբը մինչև այսօր էլ կազմված է զվիցերացիներից): Մրանից է առաջացել ռուսերեն «շվեյցար» բառը, որ նշանակում է տան պահապան:
63. ↑ «Երշիկների պողոտա» անունով փողոց իսկապես եղել է Փարիզում մինչև 1676 թվականը:
64. ↑ Պապեֆիզներ բառացի նշանակում է «պապին ֆիզա (թզանշան) ցույց տվողներ»: Ռարլեն նկատի է ունեցել գծություններն ու պատերազմները բողոքականների ու կաթոլիկների միջև: Բողոքականությունը կամ ռեֆորմացիան իր զարգացման գագաթնակետին հասավ XVI դարում: Դա մի շարժում էր, որ ուղղված էր կաթոլիկ եկեղեցու դեմ:
65. ↑ Դեկրետալիաները պապի գրավոր պատասխաններն էին հավատացյալների հարցումներին: Դրանք եկեղեցական ժողովների որոշումների ուժ ունեին:
66. ↑ Խույր՝ Հռոմի պապի բարձր գլխարկը, որ թագի ձև ունի:

67. [↑](#) Արիմասպիցիները և նեֆիլիդատները առասպելական ազգեր են: Արիմասպիցիները միաջքանի մարդիկ էին, նեֆիլիդատները՝ «ամպերի վրա ման եկողներ»:
68. [↑](#) Ֆայկոնետ XVI-XVIII դարերի փոքրիկ թնդանոթներ, որոնցից արձակում էին կապարե ռումբեր:
69. [↑](#) Գոգ և մագոգ առասպելական ազգեր էին, որոնք ըստ Աստվածաշնչի ասարում էին Կովկասյան լեռներից դեպի հյուսիս ընկած երկրներում:
70. [↑](#) Գաստեր հունարեն նշանակում է «ստամոքս»:
71. [↑](#) Խանեֆ հին եբրաերեն նշանակում է «երեսպաշտություն»:
72. [↑](#) Աստրոլյաբիան անկյունաչափ գործիք է, որով միջին դարերում որոշում էին երկնային լուսատուների դիրքը: Այդ գործիքի օգնությամբ ծովագնացները աստղերով որոշում էին նավի տեղը ծովում:
73. [↑](#) Ռարլեն խոստում է այն եկեղեցական պառակտման մասին, որ եղավ 1380 թվականին, երբ միմյանց դեմ պայքարող երկու եկեղեցական կուսակցությունները միաժամանակ երկու պապ ընտրեցին՝ Ուրբանոս IV, որը գտնվում էր Հռոմում, և Կլիմենտ VII, որն ասարում էր Փրանսիայում՝ Ավինյոնում:
74. [↑](#) Փրանսերեն դարձվածքը՝ «ձգել վեղարը եղինջի մեջ», նշանակում է «վերարկուն հանել», կարգալույծ լինել, հրաժարվել հոգևոր կոչումից:
75. [↑](#) Կաթոլիկ եկեղեցին տուրք էր գանձում կաթոլիկություն դավանող բոլոր երկրներում: Այն հյուսիսային երկրները, որոնք հրաժարվում էին այդ տուրքը վճարել և ընդունել էին բողոքականություն, Սկանդինավիան, Գերմանիայի հյուսիսային մարզերը, Հոլանդիան և Անգլիան էին:
76. [↑](#) Ինքը Ռարլեն Տուրեն քաղաքից էր և Տուրենի եկամուտների մասին ասածների մեջ շատ դառը ճշմարտություն կա:
77. [↑](#) 39-րդ գլուխը մի երգիծանք է ուղղված ֆրանսիական դատավարության դեմ: «Աղվամագով ծածկված կատուներ է անվանում Ռարլեն պառլամենտների անդամներին: Պառլամենտներ էին կոչվում (մինչև 1789 թվի ֆրանսիական Մեծ հեղափոխությունը) այն գերագույն դատարանները, որոնց քննությանը ենթակա էին կրոնի և կառավարության դեմ գործած հանցանքները:
78. [↑](#) Սուրբ Էլմի կրակ: Երբ ամպրոպային ամպերը շատ ցածր են լինում՝ կայմերի ծայրերին երբեմն լույս է երևում: Դրանք էլեկտրական լույսեր են, որոնք առաջ են գալիս ամպրոպային ամպերից: Այդ լույսը ֆրանսիացի ծովագնացներն անվանում էին սուրբ Էլմի կրակներ:
79. [↑](#) Ռարլեն ծաղրում է միջնադարյան արքիմիա գիտությունը, որ փորձեր էր անում գտնելու «փիլիսոփայական քարը», այսինքն այն նյութը, որի հպումից ամեն մետաղ պետք է ոսկի դառնար:
80. [↑](#) Դոկտորը գիտական աստիճան է: Դոկտորները յուրատեսակ գլխարկներ էին դնում, որոնցով զանազանվում էին մյուսներից:

81. [↑](#) Լուսնի խոտը միջնադարյան արքիմիկոսների կարծիքով անհրաժեշտ էր «փիլիսոփայական քար» պատրաստելու համար:
82. [↑](#) Այն հավատը, թե հիվանդությունը կարելի է բուժել երաժշտությամբ, գոյություն է ունեցել հին ժամանակներից: Օրինակ, ըստ Աստվածաշնչի, Դավիթը տավից նվագելով բուժել է Սավուդ թագավորին:
83. [↑](#) «Լռության մեջ դուք տեսնում եք, մի ինչ-որ աստվածային բան»: Այս խոսքերն ասելիս Խելոքների թագուհին նկատի է ունեցել Պյութագորոս փիլիսոփայի հետևորդներին, որոնց կանոններից մեկը լռությունն էր:
84. [↑](#) Պանացեա նշանակում է համադարման՝ բոլոր հիվանդությունները բուժող դեղ:
85. [↑](#) Ամբրոզիա հունական դիցաբանության մեջ նշանակում է աստվածների կերակուր, որը տալիս էր նրանց մշտական երիտասարդություն և անմահություն: Նեկտարը աստվածների խմիչքն էր:
86. [↑](#) Լապտերների կղզի ասելով Ռարլեն այլաբանորեն ուզում է ասել իսկական գիտության, լուսավորության և արվեստների աշխարհ:
87. [↑](#) Կանառ ճյուղերը խաղաղ դիտավորությունների նշան էին, այդ պատճառով երկու պատերազմող կողմերի միջև խաղաղության բանակցություններ վարողները միշտ գնում էին թշնամու բանակը՝ ձեռքներին կանաչ ոստեր նռնած:
88. [↑](#) Սատուրնը անտիկ դիցաբանության մեջ ցանքի և հնձի աստվածն է: Նրան ներկայացնում էին գերանդին ձեռքին բռնած:
89. [↑](#) Լույսի, երկնքի և որոտի գերագույն աստված Յուպիտերի խորհրդանիշն արծիվն էր, որին սովորաբար ներկայացնում էին շանթը կտուցում բռնած:
90. [↑](#) Ֆեր-Ապոլոնը արեգակի և արվեստների աստվածն էր: Նրա խորհրդանիշն էր «արշալույսի երգիչ» աքաղաղը, որը երգով էր դիմավորում արեգակի ծագումը:
91. [↑](#) Վեներան սիրո և գեղեցկության աստվածուհին էր: Նրա խորհրդանիշը սպիտակ աղավնին էր:
92. [↑](#) Մերկուրիոսը անձրևի և առևտրի աստվածն էր, ինչպես և խաբեության ու գողության աստվածը, որը սուրհանդակի պաշտոն էր կատարում աստվածների մոտ: Նրա խորհրդանիշն էր արագիլը: